41

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտը
երախտագիտություն է հայտնում
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին սույն հատորի
հրատարակությանն աջակցելու համար

“Matenadaran” Mesrop Mashtots Institute
of Ancient Manuscripts
express its gratitude to
“JTI ARMENIA” CJSC for supporting the publication of this volume

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

“MATENADARAN” MESROP MASHTOTS INSTITUTE
OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
41

Yerevan – 2026

НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ
«МАТЕНАДАРАН» ИМ. МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
41

Ереван – 2026

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

41

Երևան – 2026

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ *Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Նազենի Ղարիբյան, Վահե Թորոսյան, Թեո վան Լինտ, Արմեն Մութաֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան, Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

«Բանբեր Մատենադարանի» 41, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ. Երևան, 2026, 248 էջ, ներդիր 8 էջ:

ISSN 1829-054X
DOI: 10.57155/ZLXY2347

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY
ИСТОРИЯ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

DOI: 10.57155/LRNH7613

«ՀԱՒԱՔԱՐԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՂԹԱՄԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Բանալի բառեր՝ *Աղթամար, կաթողիկոսարան, Մատենադարան, ձեռագիր, գրիչ, Վանա լիճ, Թովմա Արծրունի։*

Նախաբան

Աղթամարում 1824 թ. Ղազար գրչի ձեռքով ստեղծված «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց» բնագիրն այժմ գտնվում է ՄՄ 5467 ձեռագրում։ Այն Ս. Էջմիածնի մատենադարան է բերվել 1915 թ. ամռանը, և բնագիրը համապատասխան առաջաբանով հրատարակել է Մեսրոպ վրդ. Մաքսուդյանցը 1916 թ.[1]*։*

Ձեռագրի 54 թերթ զբաղեցնող այս բնագրի նախաբանում («նախերգանք», էջ 2ա-3բ) և վերջաբան-հիշատակարանում (էջ 52ա-54բ) գրիչը պատմում է իր և այդ երկի ստեղծման հանգամանքների մասին։ Նախաբանում ավելի համառոտ գրում է, որ ինքը եկեղեցական կարգի չարժանանալով՝ զբաղվել է նավավարությամբ, ապա եկել է Աղթամար կղզի և խնդրել, որ վանքի լուսարար Հովհաննես վարդապետն իր առաջ բացի «գրքատան» դռները, որտեղ ինքը գտել է երկու ձեռագիր, մեկը մագաղաթի վրա գրված, որը Գագիկ Թագավորի քարտուղար Թովմայի գրածն էր, որտեղ Աղթամարի պատմությունը հասնում էր մինչև Ոստանում նահատակված Զաքարիա կաթողիկոսի ժամանակը (այսինքն՝ 1369-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., karenmatevosian@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20 փետրվարի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 26 մարտի, 2026։

[1] **Մ. Մաքսուդեանց**, *Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց (Աղթամարայ)*, Ս. Էջմիածին, 1916։ Մեսրոպ Մաքսուդյանը (1876-1918) նաև բանասեր և թարգմանիչ է եղել։

1393 թթ.), իսկ մյուսը գրել էր Ներսես տիրացուն, որտեղ պատմությունը Զաքարիայի ժամանակից հասնում էր մինչև Նիկողայոս կաթողիկոս (այսինքն՝ 1743-1751 թթ.)։ Ղազարն այնուհետև նշում է, որ դժվարությամբ կարողացել է կարդալ երկաթագրով գրված առաջին գիրքը և, այդ բանն իմանալով, Հովհաննես կաթողիկոսը (Հովհաննես ե Շատախեցի, 1823-1843)՝ իրեն հանձնարարել է, որ այդ ամենն արտագրի ժամանակի համար ընթեռնելի գրով և ինքն էլ հանձն է առել կատարելու այդ գործը։

*Գրքի վերջաբանում զետեղված հիշատակարանում Ղազարն այդ ամենը վերապատմում է հավելյալ մանրամասներով, նաև նշում. «Արդ, ի թուականութեան Հայոց ՌՄՀԳ (1824)-ին յուլիսի ԻԱ (21)-ին եղև աւարտ փոքր տետրակիս, որ կոչի **Հաւաքարան անուանց կաթողիկոսաց**»[2]։*

Հայագիտական գրականության մեջ այս երկը հիշատակվում է համառոտ «Հաւաքարան» անունով և այն ուսումնասիրողներին ծանոթ է եղել մինչև էջմիածնում կատարված ամբողջական հրատարակությունը, քանի որ 1850-ականներին բնագիրն Աղթամարում ընդօրինակել է Մխիթարյան միաբան Ներսես վրդ. Սարգիսյանը, որի միջոցով այն ծանոթ է եղել Ղևոնդ Ալիշանին և Սուքիաս Էփրիկյանին։ Հետագայում դրանից օգտվել են Աղթամարի պատմությանն անդրադարձած վանեցի բանասեր Խաչատուր Լևոնյանը[3] և կաթողիկոսների գավազանագիրքը կազմած Ներսես Ակինյանը[4]։ Հարկ է նշել, որ թվարկված հեղինակներին «Հաւաքարան»-ը առաջին հերթին հետաքրքրել է Աղթամարի կաթողիկոսների ցանկի առումով, որը նաև անստույգ տվյալներ է պարունակում։ Ընդհանրապես, տեքստը կազմողը, թեև օգտվել է տարբեր աղբյուրներից, սակայն նյութին մոտեցել է բավականին ազատ, հատկապես կաթողիկոսների անվանացանկն անտեղի ուռճացնելով և 921-1824 թթ. ժամանակաշրջանում նշելով 111

---

[2] ՄՄ 5467, 52ա։ Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են։

[3] 1903 թ. հեղինակի ավարտած այդ աշխատությունը, որի ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվում, ամբողջական հրատարակությամբ լույս է տեսել ամիսներ առաջ՝ *Աղթամար եւ իւր կաթողիկոսութիւնը*, հետազոտութիւն **Խ. Լեւոնեանի** (1903, Վան), բնագրի ընդօրինակութիւն՝ **Ն. Զնփատարեան**, խմբագրում՝ **Խ. Կիւրեղեան-Պալըքճեան**, Ամսթէրտամ, 2025։

[4] Ներսես Ակինյանը նշել է նաև իրենից առաջ «Հաւաքարանին» անդրադարձածներին, համապատասխան հղումներով, տե՛ս **Ն. Ակինեան**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն*, Վիեննա, 1920, էջ 3-6։

անուն, ինչն էլ պատճառ է դարձել, որ «Հաւաքարան»-ը անարժանահավատ աղբյուր համարվի[5]*:*

Սակայն Աղթամարի կաթողիկոսների ցանկն այս բնագրում միայն մի հատված է կազմում, իսկ ընդհանուր առմամբ այն նաև ուշագրավ նյութեր է պարունակում: Այս առումով իրավացի է Հակոբ Անասյանը, երբ այս գործի մասին գրում է. «Պարունակությունը, որ է Աղթամարի և կաթողիկոսության պատմությունը սկզբից մինչև մեր ժամանակները, շատ ավելի ընդարձակ է, քան որ ցույց է տալիս տպագրի վերնագիրը, որը բացակայում է ձեռագրում և առնված է Ղազարի հիշատակարանից: Բնագիրը բաժանված է գլուխների, որոնցից երկուսը նույնն են Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության Դ դպրության է և Ը գլուխների հետ, բայց ավելի ընդարձակ խմբագրությամբ»[6]*:*

Պետք է նշել, որ անկախ թերություններից, «Հաւաքարան»-ը ուշագրավ սկզբնաղբյուր է Աղթամարի պատմության համար, սակայն նրա բովանդակությունն ու պարունակած տվյալների բնույթը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է որոշակի ուսումնասիրություն, ինչն էլ կփորձենք կատարել ստորև:

«Հաւաքարան»-ի գրիչ և հեղինակ-կազմող Ղազարի մասին

Մեր ուսումնասիրությունը սկսում ենք բնագրի հեղինակից, քանի որ ցանկացած նմանօրինակ երկի մասին կարծիք կազմելու համար հիմնական կողմնորոշիչներից մեկը գրողի ով լինելն է: «Հաւաքարան»-ի հեղինակին նախկինում միայն մակերեսային անդրադարձներ են եղել, հիմնված նրա երկու վկայության վրա: Առաջինը երկի նախաբանում է, որտեղ գրում է. «Աւդ ես՝ Ղազարս, զառածեալ մեղօք տարագրեալ յամենայն պատուիրանաց Աստուծոյ և զարտուղի սխալեալ ի յարհուռնակ(ան) շաւղէն իբրև զտկար ոք... աստ և անդ շրջիմ, ոչ գիտեմ որո՞վ և ո՞յր կեամ և իմս այսպէս անկարգ մնալով **ի գործ նաւավարութեան պատահեցա** ի կղզին յԱղթամարու և մտի ի շրեղափառ տաճարն Սուրբ Խաչին»[7]*: Այնուհետև ասում է, որ խնդրել է լուսարարին, որ իրեն թույլ տա օգտվելու վանքի գրատան ձեռագրերից և այլն: Այս հատվածում նախորդ հետազոտողների ուշադրությունն առաջին հերթին գրավել է Ղազարի նա-*

---

[5] Նույն տեղում, էջ 3: Մեր ժամանակի հեղինակներից Վրեժ Վարդանյանը Աղթամարի կաթողիկոսությանը նվիրված գրքում նշում է, որ ««Հաւաքարան»-ում «տեղ գտած տեղեկությունները մեծավ մասամբ վավերական չեն» (**Վ. Վարդանյան**, *Աղթամարի կաթողիկոսության պատմություն*, Ս. Էջմիածին, 2017, էջ 13):

[6] **Հ. Անասյան**, *Հայկական Մատենագիտություն, ե-ԺԸ դդ.*, ճ. Ա, Երևան, 1959, էջ 605:

[7] ՄՄ 5467, 2բ-3ա, **Մաթուզեանց**, նշվ. աշխ., էջ 3:

վավար լինելու հանգամանքը (որոշ հեղինակներ Ղազարին Նավավար մականունով են կոչում), և դա համարվել է ցուցիչն այն բանի, որ նա գիր ու գրականության հետ կապ չունեցող մեկն էր: Ն. Ակինյանն, օրինակ, նկատի ունենալով կաթողիկոսական անվանացանկի թերությունները, հեղինակի մասին ոչ առանց հեգնանքի գրում է. «Նաւավարութենէն-պատմագրութեան. ահա ըստ ամենայնի ինչ որ կընծայէ Հաւաքարանս...»[8]:

Իհարկե, Ղազարը, որը կազմել է այս բնագիրը որոշակի աղբյուրներից օգտվելով, հատակ նշելով դրանք (տե՛ս ստորև), շարադրանքը կազմել է համապատասխան գլուխներով, միաժամանակ գործն օժտել առաջաբանով ու վերջաբանով, ունի ինքնուրույն գրած հատվածներ և այլն, վկայում են այն մասին, որ նա կրթություն ստացած մարդ էր: Վերը բերված հատվածում կարևոր է նրա նշումն այն մասին, որ ինչ-որ պատճառով ինքը մնացել է առանց կարգի («այսպէս անկարգ մնալով»), այսինքն եկեղեցական կարգ՝ ձեռնադրություն չի ստացել:

Երկրորդ մեծ հատվածն իր մասին Ղազարը գրել է հիշատակարանում. «Փառ... անարժան և անպիտան Ղազար, որ եմ տրուպ ամենայն մարդկանց, մտօfu զառածեալս, մեղօf մածեալս և ի նմին թաւ(ալ)եալս Ղազարս եղկելիս: Աւդ... եղև աւարտ փոfr տետրակիս... մեղսամած ձեռամբ **Ղազար գրիչս՝ անուանբ և գործով**, որ եմ յաշխարհէն **Անձևացեաց**, ի գաւառէն **Փէշանդաշտայ**, ի յարգելի գիւղէն **յԱռեղու**, որդի տէր **Գրիգոր** fահանային և ի ցեղէն՝ **Խալիֆեանց**, ի տանէն ազատաց: Այլ այժմ եղեալ եմ իբրև զմուրացկան սահելով ի դրունս այլոց, ոչ կամովս եմ աղfատացեալ ի սէր փառաց Քրիստոսի, այլ ակամա ի դժուարութենէ ժամանակիս»[9]:

Ինչպես տեսնում ենք, Ղազարն այստեղ բավականաչափ տեղեկություններ է տալիս իր ծագման մասին: Տոհմանունը նկատի ունենալով՝ գրականության մեջ նրան նաև կոչում են Ղազար Խալիֆեանց[10], Խաչատուր Վանյանը կոչում է Ղազար Անձևացի[11]: Քահանայի որդի լինելը թույլ է տալիս ենթադրել, որ նա

---

8 **Ակինեան**, նշվ. աշխ., էջ 3:


9 ՄՄ 5467, 52ա, **Մաfուտեանց**, նշվ. աշխ., էջ 80-81: Ղազարը հիշատակ հայցող հիշատակագրություններ ունի նաև ձեռագրի այլ էջերում («Ղազար գծող սուրբ մատենիս», 14բ, «մեղաւոր գրիչս Ղազար», 22բ): Ձեռագրի ամենավերջին թերթին (55ա) նա մի մեծապատկեր փակագիր է թողել, որը բացել չի հաջողվել բնագրի հրատարակչին (**Մաfուտեանց**, նշվ. աշխ., էջ 85), մեզ նույնպես չհաջողվեց:

10 **Գ. Ստեփանյան**, *Կենսագրական բառարան*, հ. Բ, Երևան, 1981, էջ 38, **Լ. Թումանյան**, *Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները*, Երևան, 2019, էջ 130-131, **Ա. Սոխակյան**, *Հանրագիտակ Հայոց պատմության աղբյուրագիտության*, Երևան, 2019, էջ 465:

11 *Աղթամար եւ իւր կաթողիկոսութիւնը*, էջ 4, 168, 271:

պիտի կրթություն ստացած լիներ Վասպուրականի վանական դպրոցներից մեկում (հիշատակարանի ոճն էլ հուշում է այդ մասին), թերևս հենց Աղթամարում: Ուշագրավ է նաև այն, որ հիշատակարանում նա իրեն անվամբ և գործով գրիչ է համարում, ինչից կարելի է կարծել, որ նաև այլ ձեռագրեր է ընդօրինակել: Նման ենթադրության օգտին է խոսում նաև «Հաւաքարան»-ի ձեռագրի գրչությունը, որտեղ Ղազարը գրադաշտն առնում է կարմիր շրջագծի մեջ, գրում է բոլորգրով և նոտրգրով (նախաբան, հիշատակարան և որոշ հատվածներ), անվանաթերթերում օգտագործում է թռչնագիր սկզբնատառ, վերնագրերը և տնագլուխների սկզբնատառերը գրում է կարմիր թանաքով (նկ. 1): Այսինքն, գրչության արվեստին ծանոթ մարդ էր:

Նախորդ ուսումնասիրողները Ղազարի մասին գրելիս բավարարվել են այս երկու հատվածների տեղեկություններով: Սակայն հիշատակարանի շարունակության մեջ կա մի դրվագ, որը վերաբերում է Ղազարի պատվիրատու Հովհաննես ե Շատախեցու նախորդի՝ Հարություն կաթողիկոսի (հիշվում է 1818-ից, մահ. 1823) սպանությանը, և որի մասին նա գրում է որպես այդ ողբերգական դեպքի ականատես: Ղազարը գրում է, որ երբ կաթողիկոսը այցելել է Խրզանի Ս. Խաչ վանքը, գավառի բնակիչները նրան բողոքել են, որ վանահայրը երկու կին ունի, և կաթողիկոսը խիստ հան-



Նկ. 1. «Հաւաքարանի» առաջին էջը (ՄՄ 5467, 2ա)

դիմանել է վերջինիս: Դրանից դժգոհ մնացած վանահայրը երկու քուրդ է ուղարկել, որոնք ներխուժելով այն տունը, որտեղ կաթողիկոսը ճաշի էր նստած, հրացանի որոտացող կրակոցով սպանել են նրան, սենյակը լցվել է ծխով «և խաւար կալաւ զմեզ», գրում է Ղազարը (պետք է նկատի ունենալ, որ խոսքը 1823 թ. կիրառվող հրազենի մասին է) և ականատեսի անմիջականությամբ նշում նաև այլ ազգու մանրամասներ[12]*: Սա նշանակում է, որ այդ դեպքի ժամանակ Ղազարը կաթողիկոսի ուղեկիցներից մեկն է եղել: «Հաւաքարան»-ի նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս մի ենթադրություն անել այդ ժամանակ Ղազարի ունեցած կարգավիճակի մասին:*

Ձեռագրում նշված «երեք Ղազարների» խնդիրը

Դեռևս «Հաւաքարան»-ի հրատարակիչ Մեսրոպ վրդ. Մաքսուդյանցն իր առաջաբանում գրում է. «Հաւաքարանի ձեռագիրը պատկանում է Ղազար անուն մի գրչի, որ ինքն իրեն անուանում է «յոյժ տկար» և «անարհեստ»: Նա եղել է մի բարեպաշտ նաւավար, որ հազիւ գրել կարդալ է իմացել... Այս նաւավար Ղազարին չպետք է շփոթել մի ուրիշ Ղազարի հետ, որ եղել է աբեղայ, և որի գրչին է պատկանում գործիս վերջում ներմուծուած ոտանաւորներից մեկը — «Ամենայն ազինք՝ ակնարկեալ ի յիս...»: Սոյն ոտանաւորը... գրուած է մաքուր և կանոնաւոր հայերէնով և ուղղագրութիւնը զերծ է սխալներից»[13]*:*

Իրականում Ղազար աբեղան ձեռագրում երկու չափածո ունի: Հ. Անասյանն էլ նկատում է. «Բուն գրչի՝ նավավար Ղազարի հիշատակարանը գտնվում է 80-85 էջերում: Հատորում կան նաև Աղթամարի Ս. Խաչին նվիրված մի քանի անանուն, Գրիգոր Վանեցու և Ղազար Աբեղայի անունով տաղեր»[14]*:*

Ղազար Աբեղայի առաջին չափածոն (բուն գրչից ավելի մանրատառ է գրում) գտնվում է ձեռագրի 44բ-45բ էջերում, որի վերջում նա իրեն կոչում է

---

[12] Հատվածը հետևյալն է. «...այն շունն կատաղի իսկոյն փութով առաքեաց Ր (2) հուրթ, զի սպանցեն զհայրապետն: Աստանօր լամ զաղետալի՝ տես կաթողիկոսին իմոյ, զի նա միամտութեամբ ճաշակեր զճաշ երեկոյեան, ունէր զպատառն ի վերունակ աջոյն իւոյն, հարին հրացանաւ ի գլուխ գերունակ երջանկին, հեղաւ արիւն ի մէջ սենեակին, լցաւ տունն ծխով և մառախլով և խաւար կալաւ զմեզ, մինչ աւանդեաց զհոգին, մնաց պատառն ի մէջ ձեռին...» (ՄՄ 5467, 52բ-53ա, **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ 81-82): Իսկ բուն աշխատության մեջ՝ կաթողիկոսների անվանացանկում, Ղազարը նշում է Հարություն կաթողիկոսի նահատակության օրը (1823 թ. ավագ երկուշաբթի), ավելացնելով, թե սպանությունից հետո նրա մարմնի վրա լույս իջավ (ՄՄ 5467, 43բ):

[13] **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ ժ:

[14] **Հ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 606: Գրիգոր Վանեցու մի տաղը՝ գրության 1828 թ.-ի նշումով, ձեռագրի 51ա էջում է, իսկ մյուս երկուսը՝ «ԳՐԻԳՈՐ» ծայրակապով՝ ձեռագրի 1բ և 50բ էջերում:

«**Վշտակիր Ղազար աբեղայ**»։ *Երկրորդը գտնվում է հաջորդող էջում, որն ունի հետևյալ վերնագիրը.* «Բան տաղաչափական գովեստի ասացեալ **Ղազար վշտալի նուաստախոհ աբեղայի, եղբօր տիրացու Ղազարի**, ի վերայ լուսանկար, գերահիրաշ տաճարին ամենազօր կենսատու Սրբոյ Խաչին Քրիստոսի...»[15]։

Ստացվում է, որ այս ձեռագրում նշվում է նույն շրջանում Աղթամարում ապրող երեք նույնանուն մարդ՝ բուն գրիչ Ղազար նավավարը, տաղասաց Ղազար աբեղան և նրա եղբայր տիրացու Ղազարը։

Կարծում ենք, որ այս անսովոր պատկերը հետևյալ բացատրությունն ունի։ Հասկանալի է, որ երկու եղբայր նույն անունը չեն ունեցել, Ղազար աբեղայի ավազանի անունն այլ է եղել։ Բայց, միաժամանակ, տարօրինակ է թվում նրա նշումն այն մասին, որ ինքը տիրացու Ղազարի եղբայրն է։ Վերջինիս անձի նմանօրինակ կարևորումը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ այս տիրացու Ղազարը հենց «Նավավարն» է, այդ ձեռագրի գրիչն ու բնագրի կազմողը, այն մարդը, որն այդպես էլ եկեղեցական կարգի՝ ձեռնադրության չի արժանացել, ինչպես գրում է նախաբանում (մնացել է որպես սարկավագ-տիրացու)։ Նկատենք, որ Ղազար աբեղայի տաղերը ոչ թե գրվել են ձեռագրի վերջում, այլ նրա միջնամասում։ Այսինքն, բուն գրիչը՝ Ղազար նավավարը, որը նաև նյութերի հավաքողն ու բնագրի կազմողն էր, իր ձեռագրի շարադրանքում տեղ է հատկացրել Ղազար աբեղայի տաղերին, որն իր ձեռնադրյալ եղբայրն էր։ Վերջինս էլ, երկրորդ չափածոյի վերնագրում իր պարտքն է համարել նշել, որ ինքը տիրացու Ղազարի եղբայրն է։

Այս մեկնաբանության համատեքստում հասկանալի է դառնում նաև, թե ինչու է մեր ձեռագրի գրիչը Հարության կաթողիկոսին ուղեկցողների շարքում եղել նրա խիզան կատարած ճակատագրական այցի ժամանակ։ Նաև ավելի բացատրելի է դառնում, թե ինչու է Աղթամարի լուսարար Հովհաննես վարդապետը նրա առաջ բացել վանքի «գրքատան» դռները, իսկ Հովհաննես կաթողիկոսը նրան է վստահել հին ձեռագրերից տեղեկություններ ժողովելով Աղթամարի ու կաթողիկոսների մասին պատմող «Հաւաքարան»-ը կազմելը։ Այլ խոսքով ասած, Ղազարը ներսի մարդ է եղել, Աղթամարի սարկավագներից մեկը, որն ինչ-որ պատճառով չի արժանացել եկեղեցական կարգի՝ ձեռնադրության, և որոշել է իր հացը վաստակել ծովագնացությամբ՝ նավավարությամբ, որն ի դեպ, շատ կարևոր մի գործ էր այդ շրջանում, երբ Վանա լճի երեք մեծ կղզինե-

[15] ՄՄ 5467, 46ա, **Մաթոսդեանց**, նշվ. աշխ., էջ 72։

րում բազմանդամ միաբանությամբ վանքեր էին գործում: Ահավասիկ, այս պատկերը վերականգնելուց հետո ավելի հասկանալի են դառնում գրքի նախաբանում Ղազարի գրած խոսքերը, թե՝ «ես՝ Ղազարս, զառածեալ մեղօք տառագրեալ յամենայն պատուիրանաց Աստուծոյ և զարտուղի սխալեալ ի յարմունակ(ան) շաւղէն իբրև զտկար ոք... աստ և անդ շրջիմ, ոչ գիտեմ որո՞վ և ո՞յր կեամ և իմս **այսպէս անկարգ մնալով ի գործ նաւավարութեան պատահեցա**...»[16]:

Ղազարի հետագա ճակատագրի մասին մի տեղեկություն է հայտնում Խաչատուր Լևոնյանը, որն Աղթամարի մասին իր հետազոտությունը կատարել է շուրջ 1900-1903 թթ. և մեծապես օգտվել «Հաւաքարան»-ից: Նա գրում է, որ՝ «ըստ ծերունի քահանայի մը պատմութեան», հետագայում Ղազարը տեղում «չկարենալով իր ուսումնասիրական բուռն փափագը գոհացնել» մեկնում է Կ. Պոլիս և այնտեղ «դպրոց մտնելով՝ շատ կը յառաջադիմէ ու քանի մը լեզուներ կը սորվի, եւ վերջապէս հոն եղած դպրոցներէն միոյն մէջ ուսուցիչ կըլլայ... իր համբաւը օրէ օր մեծանալով, շատ մը նախանձորդներ կունենայ իր պաշտօնի թեկնածուներուն մէջ, որոնցմէ միոյն միջոցաւ թունաւորուելով կը մեռնի»[17]:

Ղազարի օգտագործած աղբյուրները


«Հաւաքարան»-ի մի շահեկան կողմը կարելի է համարել այն, որ հեղինակազմողը բավական մանրամասն նշում է իր երկու հիմնական աղբյուրները, իսկ ընթացքում տալիս է նաև այլ հեղինակների անուններ, միաժամանակ երկում ընդգրկել է Աղթամարի կաթողիկոսարանի դիվանից վերցված որոշ գրություններ:

Աղթամարի գրատանն իր ձեռքն անցած հիմնական սկզբնաղբյուրներ մագաղաթյա երկաթագիր մատյանի և Հովհաննես կաթողիկոսից այն դյուրընթեռնելի գրով ընդօրինակելու հանձնարարության մասին նա գրում է նախաբանում. «...աղեւսեցի բազում բանիւ ի լուսաւարէն, որոյ անուն տէր Յովանէս ճգնազգեաց վարդապետ, և նա եբաց զդուռն զգրաւատանն և իմս նայելով զամենայն գրեանս, գտի փոխրիկ գիրք մի, որ գրեալ կայր ի մէջ նորա զթիւ կաթողիկոսացն յԱղթամարու և զթագաւորիլն Գագկայ... մինչև ցտէր Ջահարիայն, որ նահատակեցաւ յՈստան Խաղաքին: ...Ասդ, առաջինն, որ ասացի... այն մագաղատի վերայ գրեալ էր նշանագրով երկաթագրով, գաւազանակերպ գրով, նշան գաւազանագրին է այս *(բերում է Ա և Բ տառերի գծապատ-

[16] ՄՄ 5467, 2բ-3ա, **Մախուդեանց**, նշվ. աշխ., էջ 3:
[17] *Աղթամար եւ իւր կաթողիկոսութիւնը*, էջ 168:

կերները – Կ. Մ): Արդ այս գրով գրեալ էր, զոր դժուարաւ ընթերնուլ ոմ կարէր, և իմս պատահեալ այն տետրակին յոյժ ուրախացա և ընթերցայ, և տեսնելով հայրապետին, հարկեաց ի վերայ իմ, թէ՝ գրեայ զսա այժմուս ժամանակի գրով, զի դիւրին լիցի առ ի ընթեռնուլ: Արդ, յանձն առի ակամայ, զի ոչ էի բաւական այդմ բանի»[18]:

Երկրորդ անգամ Ղազարն այդ ձեռագրի մասին, որոշ լրացուցիչ մանրամասներով, գրում է հիշատակարանում. «Առաջին հատորն մագաղատի վերայ գրեալ էր երկաթագրով նշանագրով, գաւազանակերպ գրով, որ ունի նշանս այս՝ Բ-բէն է (բերում է գծագրությունը – Կ. Մ.), Ա-այբ է, Գ-գիմ է, Դ-դա է, Ե-եչ է, Զ-զայ է: Արդ, առաջին գիրն այսպիսի գրով էր, ի Թումայ Բարտուղարէ, որ Բարտուղար էր Գագիկ արքային»[19] (նկ. 2): *Հասկանալի է, որ հեղինակը նկատի ունի 10-րդ դարում Թովմա Արծրունու գրած և Անանունի շարունակած «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկը: Սակայն այստեղ ևս երկու*



Նկ. 2. Ղազարի հիշատակարանի հատված (ՄՄ 5467, 53բ)

ուշագրավ հանգամանք կա. մեկն այն է, որ այդ երկի՝ մեր օրերը հասած հնագույն ընդօրինակությունը՝ գրված Աղթամարում՝ Դանիել հմուտ գրչի ձեռքով 1303 թ. Զաքարիա Ա կաթողիկոսի հանձնարարությամբ (այն նախատեսված էր Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի համար, սակայն վերջինիս մահ-

[18] ՄՄ 5467, 3ա-4բ, **Մաթուզեանց**, նշվ. աշխ., էջ 3-4:
[19] ՄՄ 5467, 53բ, **Մաթուզեանց**, նշվ. աշխ., էջ 83:

վան պատճառով ձեռագիրը մնացել է Աղթամարում), որն այժմ պահվում է Մատենադարանում, գրված է թղթի վրա, բոլորգիր գրատեսակով (ՄՄ 10451)[20]*, իսկ 1824 թ. Ղազարի ձեռքին, ըստ իր հավաստման, եղել է մագաղաթի վրա և երկաթագրով գրված օրինակ (բնականաբար, այն 1303 թ. ձեռագրից ավելի հին պետք է եղած լիներ)։ Երկրորդ հանգամանքը վերաբերում է այդ ձեռագրի գրչությանը, որի մասին միայն մոտավոր պատկերացում կարող ենք ունենալ Ղազարի արտանկարած մի քանի տառապատկերներից։ Դժվար է հավատալ, որ ողջ տեքստը կարող էր գրված լինել նման բարդ գծագրությամբ տառերով, հավանաբար այդպիսին են եղել տնագլուխների գլխատառերը։*

Ղազարի օգտագործած երկրորդ ձեռագիրը, որը նույնպես մեզ չի հասել, գրված է եղել 17-րդ դարում ապրած Ներսես սարկավագի ձեռքով (տիրացու Ներսես), որի մասին Ղազարը նախ գրում է նախաբանում, մագաղաթյա մատյանը նշելուց հետո՝ «նոյնպէս գտի տետրակ մի՝ ի Զաքարիայէն մինչև ցՆիկողայոս կաթողիկոսն»[21]։ *Իսկ հիշատակարանում նշում է նաև հեղինակին՝* «իսկ վերջին հատոր էր գրեալ տիրացու Ներսէսէ, էր այր յոյժ հռետոր ևս տեղեակ արտաքին փիլիսոփայական արհեստին, մանաւանդ երաժշտական արհեստին...»[22]։

Թովմա Արծրունու և նրան շարունակած Անանունի պատմության մեջ Աղթամարի կաթողիկոսների անվանացանկ չկա և չէր էլ կարող լինել, քանի որ այն գրվել է 10-րդ դարում, ուստի մեր կարծիքով գավազանագրքի հարցում Ղազարի սկզբնաղբյուրը հենց Ներսես սարկավագի աշխատությունն է եղել։ Իսկ հատկապես Անանունի պատմությունից Ղազարն իհարկե օգտվել է, անգամ մեջբերել է երկու ենթագլուխ, դրանցում որոշ հավելումներ անելով։

«Հավաքարան»-ի նախաբանում և հիշատակարանում իր նշած այս երկու աղբյուրներից բացի Ղազարը նաև այլ գրքեր է օգտագործել։ Հիշենք նրա խոսքերն այն մասին, որ վանքի «գրքատանը» նայել է «զամենայն գրեանս»[23]*։ Որոշ դեպքերի հետ կապված երկու հեղինակի նշում է անվանապես։*

---

[20] *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Գ, կազմեց **Ա. Մալխասյան**, Երևան, 2007, էջ 42։

[21] ՄՄ 5467, 3ա, **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 3։

[22] ՄՄ 5467, 53բ, **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 83։ Ներսեսի մասին Ղազարը պատմում է, հավանաբար տեղեկությունը քաղելով հենց վերջինիս գրածից, ըստ որի, նա Հովակիմ պատրիարքի ժամանակ եղել է Երուսաղեմում և իր փայլուն երգեցողության համար չեմ ընդունելության արժանացել ու վանքի համար նվերներ ստացել պատրիարքից։ «Հավաքարան»-ում նրա այցի համար նշված է ՌՃՂ (1741) թվականը, որը թերևս սխալ է, քանի որ Հովակիմը Երուսաղեմի պատրիարք է եղել 1775-1793 թթ.։

[23] ՄՄ 5467, 3ա, **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 3։

Աղթամարի մասին հնագույն վկայություն ունի Մովսես Խորենացին, պատմելով, որ Տիրան Արշակունի (338-350 թթ.) թագավորը մահվան է դատապարտել իր դեմ ընդվզած Զորա Ռշտունուն (դա կապված էր թագավորի հրամանով Հուսիկ կաթողիկոսի սպանության հետ), նաև հրամայել է ոչնչացնել նրա ընտանիքը, որի անդամներն ապաստանել էին Աղթամարում («զամուրն նոցին զԱղթամար»*)*[24]*: «Հավաքարան»-ի կազմողը վերապատմում է Զորա Ռշտունու և Աղթամարի հետ կապված դեպքը և վերջում ավելացնում.* «Տիրան... առաքեաց այլ զօրական, կողոպտեցին զտուն Զուրային, որ էր յԱղթամար, նոյնպէս և այլ բնակիչք յԱղթամարու, որք էին անդ: Զոր գրէ **Մովսէս Խորենացին** ի պատմութեան իւրոյ յաճախ բանիւք: Իսկ եթե ոչ հաւանեցէ որ պատմութեանս մերոյ ճառիս, **Մովսէսի** յաճախ ընդերձիր, լիովին գրեալ կայ ի պատմութիւն Զուրային»[25]:

Ղազարը Մովսես Խորենացուն հիշատակում է նաև ավելի վաղ ժամանակի մի դեպքի առիթով: Աղթամարը, որպես հնագույն քրիստոնեական կենտրոն ներկայացնելու միտումով նա հղում է անում Խորենացու պատմության մի հատվածին, որտեղ ասվում է, որ Տիգրան Մեծը Ռշտունյաց նախարար Բարզափրանին Հայոց զորքի հրամանատար կարգելով ուղարկում է Պաղեստին, որտեղից նա հրեա գերիներ է բերում, որոնց թվում՝ Հյուրկանոս քահանային, և բնակեցնում «ի քաղաքս Շամիրամայ»[26]*, որ Վանն է: Սակայն, հավանաբար Աղթամարում ավանդություն է ձևավորվել, որ այդ հրեաները՝ քահանայի հետ միասին, կղզում են հաստատվել: Մասնավորապես, Թովմա Արծրունու շարունակող Անանունն այն ենթագլխում, որտեղ գրում է կղզու պատմության մասին՝ մինչև Գագիկը, նշում է.* «ի Բազափրանայ ասի առեալ շինութիւն, որ զՊաղեստինացւոց աշխարհն հանդերձ Հիւրկանեաւ բահանայիւ գերեալ՝ ած բնակեցոյց յերկրիս մերում՝ սակայն ամենեբեան սոքա իբրեւ ի տաղաւարի, եւ կամ որպէս ի հուտս մրգապահաց բնակեցան յերեւելի յայնմիկ կղզւոջ կոչեցեալն Աղթամար, մինչեւ յաւուրս մեծի արքային Հայոց Գագկայ»[27]: *«Հավաքարան»-ի հեղինակը միավորում է այս երկու տվյալները.* «ի Բազափրանայ ասի առեալ շինութիւն յԱղթամարայ կղզոյն: Սա... գնաց յերկիրն պաղեստինացւոց և գե-

[24] **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց Մեծաց*, Մատենագիրք հայոց, հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2024-2026: Թովմա Արծրունին այս դեպքի մասին ոչինչ չի գրում:

[25] ՄՄ 5467, 8ա-9բ, **Մախուդեանց**, նշվ. աշխ., էջ 12:

[26] **Մովսես Խորենացի**, էջ 1879, 1882:

[27] **Թովմա Արծրունի և Անանուն**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Գիրք Ա, Անթիլիաս, 2010, էջ 287 էջ 287:

ռեաց երկիրն առհասարակ... ի նոցանէ զգեղեցիկս ընդ իւր բերաւ ի յերկիրն Հայոց... բնակեցուց ի կղզին յԱղթամարու հանդերձ Հիւրկանու բահանայիւ... Սա սկիզբն արար շինութեան հրաշալի կղզոյն, զոր յայտնապէս ծանուցանէ **Մովսէս Խորենացիւրն** մեր»[28]:

«Հավաքարան»-ի մեկ այլ հատվածում Ղազարը նշում է Սամուել պատմագրի անունը, երբ գրում է Սմբատ Ա Բագրատունու և Գագիկ Արծրունու մասին. «Ընդրոնեցաւ Սմբաթն, Գագիկ ճոխանա, և պսակեցաւ թագիւ արեւելական ի յոստիկանէ Յուսուփա, զոր ճշմարիտ պատմէ **Սամուէլ պատմագիրն**»[29]: *Խոսքը 12-րդ դարի ժամանակագիր Սամուել Անեցու մասին է, որին, բնականաբար, Թովմա Արծրունին չէր կարող հիշատակել, կամ նրանից օգտվել, ուստի հավանական է, որ Աղթամարում եղել է նաև Սամվել Անեցու ժամանակագրության մի օրինակ, որից օգտվել է Ղազարը*[30]*: Նրա ձեռքին է եղել նաև Թովմա Արծրունու և Անանունի պատմության մեզ հասած հնագույն օրինակում (ՄՄ 10451) պահպանված 12-րդ դարի կեսերին գրված մի արժեքավոր հիշատակարան, որը վերաբերում է Խեդենեկյան տոհմին (Արծրունիների մի ճյուղին), որտեղ նշվում են նաև 11-րդ դարի որոշ դեպքեր՝ Անիի գրավումը և սելջուկների՝ Վասպուրական կատարած արշավանքը, երբ անառիկ մնացին միայն Ամյուկ ամրոցը*[31] *և Աղթամարը: Հիշատակարանում, մասնավորապես ասվում է.* «Եւ... եկեալ էառ յաւարի զգաւառն Վասպուրական.... եւ ոչ մնաց տեղի ապաստանի Քրիստոնէից, **բայց միայն յանմատոյց ամրոցն Ամիւկ եւ յաստուածաբնակ կղզւոջն Աղթամար**»[32]: *«Հավաքարան»-ում այդ մասին կարդում ենք.* «Եւ զծովու բոլորս ամէն աւերեաց, **բայց Ամկու բերդն միայն մնաց, ևս անառիկն Աղթամար**, որ պարիսպն ամուր էր, չկարաց առնուլ...»[33]:

---

28 ՄՄ 5467, 4բ-5բ, **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ 6-7: Այնուհետև ասվում է, որ Հյուրկան բահանան կղզում «շինեաց տաճար Աստուծոյ», իսկ ավելի ուշ այստեղ եկավ Թադեոս առաքյալը՝ կղզիաբնակներին Քրիստոսի հարության և համբարձման ավետիսը տալով (նույն տեղում):

29 ՄՄ 5467, 9ա, **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ 13:

30 Սամվել Անեցին Սմբատ Ա Բագրատունու մահը հիշատակելով, Գագիկի թագադրվելու մասին ոչինչ չի գրում, սակայն նրա ժամանակագրության մեջ հետագայում հավելումներ են կատարվել, որոնցում նշվում է Գագիկի թագավորությունը (**Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, աշխատասիրությամբ ***Կ. Մաթևոսյանի***, Երևան, «Նաիրի», 2014, էջ 172):

31 Ամյուկը Վանա լճի արևելյան ափին գտնվող բարձր ժայռի վրա կառուցված անմատչելի ամրոց է:

32 **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 299:

33 ՄՄ 5467, էջ 23ա, **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ 35:

Այն, որ Ղազարը ծանոթ է եղել Աղթամարի գրատան ձեռագրերին և անգամ պատկերացում ունեցել առանձին գրիչների ու նրանց գրած ձեռագրերի մասին, երևում է այն տողերից, որ նա գրել է վերը հիշատակված բազմարդյուն Դանիել գրչի մասին, որի 1303 թ. ընդօրինակությամբ է մեզ հասել Թովմա Արծունու Պատմության հնագույն օրինակը. «Այլ և զարհիեպիսկոպոսն և **խոջ գրագիրն զտէր Դանիէլն, որ զբազումս լուսատրեաց պտղոյ մատամբ իւրով, մանաւանդ զաթոռս մեր՝ զՃառ զՍարգիս գիրքն և զՏարէգիրք, զԿոչումն ընծայութեան և զԹումա գիրքն**: Սոքա ամէն շնորհեաց յաթոռին»[34]:

Ղազարն օգտագործել է նաև դիվանական նյութեր համապատասխան գլուխներում, ինչպես՝ «Յաղագս ամենայն թեմիցն և վիճակիան մերոյ աթոռին յԱղթամարայ...», «Յաղագս մլքերաց և արտորայից, որք տուեալ են ի յաթոռիս Աղթամարայ յաւուրս տէր Նիկողայոս կաթողիկոսին յԱղթամարայ թվին ՌՃՂԱ (1742)», «Յաղագս կանոնից գիւղերաց, թէ որպէս կարգեալ է՝ այնպէս պարտ է առնել զնուէրն ի գիւղերացն» և այլն[35]*: Ձեռագրի մի հատվածում (էջ 34ա-38բ), մեջբերված են 18-րդ դարում վանքին կատարված հողային և գույքային նվիրատվությունների մասին գրություններ կամ դրանց հատվածները, որոնք անկասկած փաստագրական արժեք ունեն:*

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Ղազարն իր աշխատությունը կազմելիս զգալի թվով աղբյուրների վրա է հիմնվել: Սակայն իր առջև դրված նպատակից ելնելով, այն է՝ ցույց տալ Աղթամարի աթոռի հնագույն ծագումը և նշանավոր լինելը, որոշակի միտում է հանդես բերել, ինչը բնական է նման կարգի աշխատության պարագայում:

Աղթամարում կաթողիկոսական աթոռի հաստատումը

«Հավաքարան»-ի և միջնադարյան աղբյուրների տվյալների հիմնական հակասությունը վերաբերում է Աղթամարում կաթողիկոսական աթոռի հաստատման պատմությանը: Աղթամարի կաթողիկոսների անվանացանկը ձեռագրում զբաղեցնում է 40ա-43բ էջերը և սկսվում է Եղիշեի անունով, որն ըստ այս բնագրի, Գագիկ Արծրունու եղբորորդին էր և նրա աթոռակալությունը սկսվում է

---

[34] ՄՄ 5467, էջ 26բ-27ա, **Մաթևոսյանց**, նշվ. աշխ., էջ 40-41: Դանիել գրչի մասին հանգամանորեն տե՛ս **Լ. Թումանյան**, նշվ. աշխ., էջ 36-45:

[35] **Հ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 605-606: «Հավաքարան»-ի նյութերի ամբողջական ցանկը բերել է Հակոբ Անասյանը, ուստի մենք չենք կրկնում (տե՛ս նույն տեղում):

923 թվականից[36]: Սակայն դրանից առաջ էլ, աշխատության առաջին հատվածներից սկսած, առաջ է քաշվում այն միտքը, որ Աղթամարի աթոռը հիմնադրվել է Գագիկ Արծրունու ժամանակ, երբ նորակառույց Ս. Խաչ եկեղեցին օծելու համար այստեղ է եկել Գևորգ Գառնեցի կաթողիկոսը: Սա անախրոնիզմ է այն պատճառով, որ Գևորգ Գառնեցին աթոռակալել է 877-897 թթ., Գագիկը Վասպուրականի իշխան է դարձել 904 թ., թագավոր՝ 908 թ., Ս. Խաչ եկեղեցին էլ կառուցվել է ավելի ուշ՝ 921 թ.: Սակայն նաև պետք է նշել, որ Գևորգ Գառնեցի կաթողիկոսը կյանքի վերջում եկել է Վասպուրական, ստույգ հայտնի չէ, թե երբ և ինչ նպատակով, այստեղ էլ մահացել ու հուղարկավորվել է Վանի շրջանում գտնվող Ջորավանքում[37]:

Ի դեպ, նախորդ մտքից մի փոքր շեղվելով նկատենք, որ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու շինարարության սկզբի և ավարտի՝ 915 և 921 թթ., որ լայնորեն տարածված են գրականության մեջ[38], ծագում են հենց «Հավաքարան»-ից (այլ աղբյուրներում դրանք չեն նշվում). «Իսկ յորժամ սկսան, թուական Հայոց ԳՃԿԴ (915) էր», «Թուականութեանս Հայոց ԳՃՀ-ին (921) եղեւ շինումն մեծափառ Սուրբ Խաչ տաճարին, ի նոյն աւուրսն և նոյն ժամանակին եղև նաւակատիկ և ցնծութիւն յոյժ»[39]: *Մեկ այլ տեղում ասվում է, որ վեց տարի է տևել շինարարությունը և ավարտվել 921 թ.՝* «Եւ եղև զրաւ և աւարտ սրբոյ տաճարիս ի թուականն Հայոց էր ԳՃՀ (921), և ի Ջ (6) տարին յետոյ ազատեցան ի շինելոյ»[40]:

Այժմ շատ համառոտ անդրադառնանք Աղթամարի աթոռի ստեղծմանը՝ ըստ հնագույն աղբյուրների տվյալների, այնուհետև կանդրադառնանք «Հավաքարան»-ում նշվածին:

Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (898-929 թթ.) աթոռակալության վերջին շրջանում արաբներից խիստ հալածանքների է ենթարկ-

---

36 ՄՄ 5467, 40ա, **Մաթոսդեանց**, նշվ. աշխ., էջ 59: Կարելի է, իհարկե, ենթադրել, որ Գագիկի եղբորորդին կարող էր Վասպուրականի եպիսկոպոս կարգվել (ոչ թե կաթողիկոս), սակայն ցավոք այս անունը, տվյալ ժամանակաշրջանում այլ աղբյուրներից հայտնի չէ:

37 **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1180:

38 **Ստ. Մնացականյան**, *Աղթամար*, Երևան, 1983, էջ 33, Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 486, *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան*, Երևան, 2000, էջ 37, և այլն:

39 ՄՄ 5467, 10ա, 17ա, **Մաթոսդեանց**, նշվ. աշխ., էջ 24, 58: եկեղեցու կառուցման 916 թ. նշվում է Սամվել Անեցու ժամանակագրության մի հավելման մեջ (**Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 172):

40 ՄՄ 5467, 19ա:

վում և Դվինի կաթողիկոսարանից հեռանալով ապաստան փնտրում: Տարբեր տեղերում լինելուց հետո կաթողիկոսը 927 թ. տեղափոխվում է այդ ժամանակի առավել ապահով վայրը՝ Գագիկ Արծրունու թագավորության նստավայր Աղթամար կղզին և այստեղ ապրում կյանքի վերջին երկու տարին: Գագիկի համար կարևոր էր կաթողիկոսի Աղթամարում գտնվելը, քանի որ նրա եկեղեցական իշխանությունը տարածվում էր ողջ Հայաստանի և բոլոր հայերի վրա, ուստի այս պարագայում մեծանում էր նաև Արծրունի թագավորի կշիռը ողջ երկրում:

Հովհաննես Դրասխանակերտցին մահանում է 929 թ. և հուղարկավորվում Վասպուրականի Ջորավանքում, իսկ նրան հաջորդած երեք կաթողիկոսները նույնպես գահակալել են Աղթամարում, որը, փաստորեն, դառնում է Հայաստանի կաթողիկոսական նոր աթոռանիստ: Դրասխանակերտցու հաջորդներից Եղիշէ Ա Ռշտունու (938-946 թթ.) մասին հայտնի է, որ նա 938 թ. ուղեկցել է Գագիկ Արծրունուն արաբների դեմ կատարված ռազմերթի ընթացքում: Այս կաթողիկոսի ժամանակ Գագիկ Արծրունին Վանա լճի հարավում Իլի կամ Իլու բնակավայրում կառուցում է Քառասուն խորան Ս. Աստվածածին եկեղեցին և 939 թ. կաթողիկոսարանը տեղափոխում այնտեղ[41]: Հաջորդ կաթողիկոս Անանիա Ա Մոկացին (946-968 թթ.) հեռանում է Վասպուրականից, գնում Աբաս Բագրատունու մոտ՝ նախ մայրաքաղաք Կարս, ապա Շիրակի Արգինա ավան, իսկ նրա հաջորդները աթոռը փոխադրում են Բագրատունյաց նոր մայրաքաղաք Անի: Փաստորեն, Աղթամարը Հայաստանի կաթողիկոսական աթոռանիստ է եղել 927-939 թթ.՝ 12 տարի:

Աղթամար կղզին կրկին կաթողիկոսական նստավայր է դառնում 1113 թ., սակայն այս անգամ ոչ թե համահայկական նշանակությամբ, այլ միայն Վասպուրականի և Վանա լճի շրջակա գավառների համար: Գրիգոր Բ Վկայասերից (1066-1105 թթ.) սկսած աթոռի գահակալությունն անցել էր Պահլավունիների տոհմին, որի արդյունքում 1113 թ. կաթողիկոս է ընտրվում ընդամենը 17 տարեկան Գրիգոր Գ Պահլավունին (1113-1166 թթ.), իսկ Աղթամարում նստող Վասպուրականի Դավիթ Ա եպիսկոպոսը, որն Արծրունյաց տոհմից էր, նախաձեռնում է անկախ կաթողիկոսական ընտրություն և ձեռնադրվում կաթողիկոս: Նրա բերած հիմնավորումն այն էր, որ Աղթամարը գտնվում է բուն

[41] **Կ. Մաթեւոսեան**, «Իլու «Քառասուն խորան Ս. Աստուածածին» եկեղեցու կառուցման մասին», *ՀԱ*, 2011, էջ 409-418:

Հայաստանում[42]*, նախկինում եղել է կաթողիկոսական և թագավորական նստավայր (այդ ժամանակից սկսած Վասպուրականի կաթողիկոսական աթոռը գործում է մինչև 1895 թ.):*

«Հավաքարան»-ում այս պատմությունը ներկայացվում է առանձին գլխով, որոշակի խմբագրությամբ, Հովհաննես Դրասխանակերտցու անունը չի նշվում, դրա փոխարեն Աղթամարում հաստատված կաթողիկոսը Գևորգ Գառնեցին է: Նրա Վասպուրական գալը ներկայացվում է գեղարվեստական ոճով, Ոստանում կաթողիկոսին դիմավորում են Գագիկ թագավորը ավագանու և զորքի հետ, նաև՝ եղիշե արքեպիսկոպոսը, և միասին նավ նստելով մեկնում են Աղթամար, որտեղ մեծ շուքով կատարվում է եկեղեցու օծումը[43]*: Նշվում է, որ կաթողիկոսն իր հետ բերել էր Հայոց եկեղեցու սրբությունները՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը, գավազանը և այլն*[44]*: Ապա ասվում է ամենագլխավորը՝* «Եւ հաստատեցին զՍուրբ Խաչս յԱղթամարայ Աթոռ Լուսաւորչին և ամենայն Հայաստանեայց աշխարհի: Եւ եղև ցնծութիւն ուրախութիւն ամենայն աշխարհի: Եւ ետ ձեռնադրել Գագիկ զեղբօրորդին զտէր Եղիշէ՝ կաթողիկոս, և եղեւ յոյժ ուրախութիւն թագավորին»[45]:

Հետաքրքիր է, որ սրանից անմիջապես հետո նշվում է նաև Իլիում եկեղեցիների կառուցման մասին. «Ապա կեցեալ ժամանակ ինչ, շինեցին զԻլու եկեղեցին Սուրբ Աստուածածին և զԲրկիչն և զՍիոն՝ դուց վանի՝ զի բնակեսցին ի նմա յամառային ժամանակն՝ ԲՃ (200) անձն աբեղայ էին, թող միակեցուս և սարկաւագուս»[46]: *Այստեղ վկայակոչենք Իլիի վերաբերյալ Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ 939 թ. հատվածում արված մի հավելում, որտեղ ասվում է.* «**Ի տէր եղիսէէն էառ զԱղթամար Գագիկ եւ ետ նմա զԻլի**, շինեաց եւ կատարեաց անդ զեկեղեցին»[47]: *«Հավաքարան»-ի տեղեկությունը մասամբ հաստակեցնում և պատճառնաբանում է իրողությունը, նշելով կաթողի-*

---

[42] 1045 թ. բյուզանդացիները Անիի Բագրատունյաց թագավորությունը վերացնելով, լուծարեցին նաև կաթողիկոսարանը (1046 թ.), որից հետո Հայոց կաթողիկոսները ստիպված էին ժամանակավորապես աթոռակալել Բյուզանդական կայսրության տարբեր բնակավայրերում՝ Սեբաստիայում (Պետրոս Ա Գետադարձ), Թավբլուրում (Խաչիկ Ա Անեցի), Ծամնդավում (Գրիգոր Բ Վկայասեր): Վասպուրականի կաթողիկոսությունը ստեղծվեց նման անկայուն պայմաններում, երբ Հայոց կաթողիկոսական աթոռը գտնվում էր Մեծ Հայքի սահմաններից դուրս:

[43] ՄՄ 5467, 19ա-21բ, **Մաթոսդեանց**, նշվ. աշխ., էջ 28-32:

[44] Աղթամար բերված սրբությունների թվարկումը տե՛ս ՄՄ 5467, 20բ-21ա:

[45] ՄՄ 5467, 21բ, **Մաթոսդեանց**, նշվ. աշխ., էջ 32:

[46] Նույն տեղում:

[47] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 173:

կոսարանի անձնակազմի մեծաթիվ լինելը, որի անդամների կեցությունը դժվար պիտի լիներ ապահովել կղզում, ուստի դուրս են բերվում Աթամարից, և Իլին նրանց համար դառնում է «դրուց վանք» (կարծում ենք, ոչ միայն ամառային ժամանակի համար)։

Եթե ժամանակագրական անճշտությունը և Հովհաննես Դրասխանակերտցու անվան փոխարեն Գևորգ Գառնեցու հիշատակությունը մի կողմ թողնենք, ապա կաթողիկոսության՝ Աղթամարում հաստատվելու պատմությունը «Հավաքարան»-ում ընդհանուր գծերով ճիշտ է ներկայացվում։ Եղիշեի պատմական անձ լինելը նույնպես ակներև է, միայն թե նա կաթողիկոս է ձեռնադրվել ոչ թե Գևորգ Գառնեցու ձեռքով, այլ շատ ավելի ուշ (938 թ.)։ Աշխատության մեջ, սակայն, անտեսվում է հետագայում Հայոց կաթողիկոսների այլ վայրեր տեղափոխվելու իրողությունը։ Ավելին, Դավիթ Ա կաթողիկոսը, որը 1113 թ. հիմնադրեց Վասպուրականի աթոռը, «Հավաքարան»-ում համարվում է 993 թ. Սուրբ Գրիգոր Նարեկացու ձեռքով ձեռնադրված կաթողիկոս [48]։ Կարծում ենք, որ այս և մյուս անճշտությունները, որոնք տեղ են գտել սույն երկում, Աղթամարում գոյություն ունեցած ավանդական պատկերացումների ու զրույցների արդյունքն են, որոնց նպատակը տեղի կաթողիկոսական աթոռի մեծարումն ու փառաբանումն էր։ Հակված ենք կարծելու, որ Ղազարն ավելի հաճախ հանդես է գալիս որպես այդ գոյություն ունեցող տեսակետները փոխանցող, սակավ դեպքերում թերևս ինքն է ինչ-որ բան հորինում։

Ղազարը որպես խմբագրող և լրացնող

«Հավաքարան»-ում երկու ենթավերնագիր կա, որոնք քաղված են Թովմա Արծրունուն շարունակած Անանունի պատմությունից, սակայն գրիչը պարզապես չի ընդօրինակել, այլ խմբագրող-լրացնողի մոտեցում է հանդես բերել։ Որպես օրինակ բերենք այն հատվածը, որտեղ ասվում է, որ Ս. Խաչ եկեղեցին կառուցելու համար Գագիկ Արծրունին արաբական մի ցեղից գրավում է Կոտոմ բերդը և նրա «բագնաձև» կառույցը քանդելով՝ քարերը բերում է Աղթամարի եկեղեցին կառուցելու համար (գրչի միջամտությունները նշված են թավ տառերով)։

[48] ՄՄ 5467, 25ա, **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ 37-38։

Անանուն Արծրունի	Ղազարի ընդօրինակությունը
Եւ տեսեալ մերձ ի դրունս Ասրեստանի ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց, ի գեաւղն Կոտոմ կոչեցեալ, լինելով սեփհականաբար Ջուարիկն կոչեցեալ ազգի՝ սպառ սպուռ կորուսեալ ջնջէ զազգն, եւ զշինուածս ամրոցին ի հիմանց տապալեալ՝ զարհինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բագնաձեւ պղծալից յարկացն զտաճար փառաց[49]:	Եւ տեսեալ մէրձ ի դրունս Ասրեստանի ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց, **որ է Բաղէշու երկիրն,** ի գիւղն, **որ** Կոտոմ **կոչի, լինել անդ ազգ մի** Ջուարիկ **անուն** կոչեցեալ սպառ սպուռ կորուսեալ ջնջէ**աց** զազգն, և շինուածս ամրոցին ի հիմանէ **բակեաց և** տապալեա**ց: Եւ ապա** զարհինս նորա բարձեալ **ճավով** երէր ի վերայ ծովուն, **որ զՍուրբ Խաչս կամէր շինել,** փոխանակ բագնաձեւ պղծալից յարկի**ն՝** զտաճա**ռն** փառաց **շինեաց**[50]:

Ինչպես տեսնում ենք, Ղազարը նախ իր ժամանակի ընթերցողի համար պարզաբանել է, թե որտեղ է Ասորեստանի կողմերում գտնվող «Աղձնեաց իշխանատունը», գրելով, որ այն «Բաղէշու երկիրն» է, միաժամանակ ավելի պարզեցված ձևով վերաշարադրել է պատմիչի խոսքը:

«Հավաքարան»-ի մեկ այլ հատվածում Ղազարը մի նշում է արել, որը վկայում է նրա տեղեկացվածության մասին, ոչ միայն Վասպուրականի տեղանունների առումով: Ինչպես վերևում նշեցինք, Ղազարն օգտվել է նաև Թովմա Արծրունու և Անանունի պատմության հնագույն օրինակում պահպանված 12-րդ դարի կեսերին գրված մի արժեքավոր հիշատակարանից, որտեղ նշվում են նաև 11-րդ դարի դեպքեր, մասնավորապես՝ սելջուկների կողմից Անիի գրավումը: Այնտեղ ասվում է, որ Թշնամին «եկն եհաս ի մայրաքաղաքն Անի, եւ պաշարեաց զնա եւ առեալ մաշեաց ի սուր սուսերի. որ ի հեղմանէ արեանն որոգանէր երկիրն..., որ ասէին բազումք ի տեսողացն, թէ զտղայս դիացիկս թաւալ տալով արեանն ի գետն հասուցանէր, որ անցանէր ընդ դուռն քաղա-

[49] **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 290:
[50] ՄՄ 5467, 15բ-16ա:

ին»[51]: *Այս հատվածը որոշ խմբագրմամբ ներկայացնելով՝ Ղազարը վերջին մասում գրում է.* «Անի քաղաքին, էառ և սպանեաց... արիւն զԳ (3) տարեկան տղայն տարաւ **ի Հոռոմոսի գետն ձգեց**»[52]:

*Գրչի համար, իհարկե, ավելի հեշտ պիտի լիներ սկզբնաղբյուրի տողերը կրկնել՝ նշելով քաղաքի դռան մոտով անցնող գետը, բայց նա պարզաբանել է, որ այն **Հոռոմոսի** գետն էր: Հասկանալի է, որ խոսքն Ախուրյան գետի մասին է, որը երեք կողմից ոլորան է տալիս Հոռոմոսի նշանավոր վանքի շուրջը և դրանից հետո մոտավորապես 4 կմ հոսելով հասնում է Անի քաղաք: Ախուրյանը՝ «Հոռոմոսի գետ» անունով, այլ աղբյուրներում չի հանդիպում, ուստի կարելի է ենթադրել, որ Ղազարը կամ այժմ մեզ անծանոթ մի տեղում կարդացել է այդ անվանումը (գուցե՝ ինչ-որ մեկից լսել), կամ իմացել է Անի-Հոռոմոս հատվածի աշխարհագրությունը և դրա շնորհիվ է նման ճշգրտող հավելում արել:*

Որոշ հատվածներում Ղազարը նաև նշում է մարդկանց անուններ, որոնք ուրիշ աղբյուրներում չեն հանդիպում, ուստի այստեղ կանդրադառնանք դրանց:

Առաջինն այն հատվածում է, որտեղ ասվում է, թե Գագիկ արքան իր մոտ է հավաքում երկրի մեծամեծերին և հայտնում, որ որոշել է Աղթամարում ամուր քաղաք կառուցել, որը նաև ապաստան կլինի փախստականների համար: Անանունի պատմության մեջ թագավորի մոտ եկածների անուններ չեն տրվում, սակայն Ղազարի տեքստում կա այսպիսի լրացուցիչ տվյալ. «Յառաջ եկաց **Ղուկաս վարդապետն** և տէր **Մովսէս եպիսկոպոսն**, հանդերձ ամենայն զօրօքն, որ եկեալ էին ի տես թագաւորին, և ասացին. Բարի և իմաստուն խորհուրդ ես արարեր...»[53]: *Յավոք, այս ժամանակաշրջանի վերաբերյալ աղբյուրագիտական նյութը շատ աղքատիկ է, վասպուրականյան հիշատակարաններն ու վիմագրերը՝ նվազագույն, ուստի հնարավոր չէ նշված անձանց մասին այլ հիշատակություն գտնել (գոնե մեզ հայտնի չեն):*

Շատ ավելի ուշագրավ է Ղազարի նշումը Գագիկ Արծրունու կնոջ անվան մասին: Անանունի պատմության այն հատվածում, որտեղ խոսվում է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու հարավային կողմում թագավորի համար հատուկ օթյակի կառուցման մասին, Ղազարը մի հավելում է կատարել թագուհու վերաբերյալ:

---

51 **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 298:
52 ՄՄ 5467, 23ա, **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 35:
53 ՄՄ 5467, 11ա, **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 16:

Անանուն Արծրունի	Ղազարի ընդօրինակությունը
Դարձեալ եւ ի հարաւակողմ կուսէ խորանին ի վերայ դրան եկեղեցւոյն յօրինեալ է ի տեղի գահոյից, ի բարձանց ի խոնարհ կամարաձեւ աստիճանօք զէջսն ունելով, որպէս զի իցէ տեղի աղօթից թագաւորին զուսպ եւ զերծ ի մարդկանէ, որով ի միտս իւր եկեալ անզբաղապէս ընդ Աստուծոյ խօսեսցի[54]:	Դարձեալ եւ ի հարաւակողմ կուսէ խորանին ի վերայ դրան եկեղեցւոյն յօրինեալ է տեղի գահոյից, ի բարձանց ի խոնարհ կամարաձև աստիճանօք **ել և էջն, որ է** տեղի աղօթից թագաւորին **առանձին** ի մարդկանէ, որով ի միտս իւր եկեալ **անսբաղապէս** ընդ Աստուծոյ **խօսի թագաւորն և Թամար թագուհին, որ նա ի թագաւորական ցեղէն էր՝ անձամբ վայելուչ և պատկերօք գեղեցիկ, նման եւային և առաքինութեամբ նման Հռիփսիմին**[55]:

Անանուն Արծրունին նշում է, որ Գագիկի կինը Արծրունի իշխան Ապուհամզայի դուստրն էր, առանց անունը տալու[56]*: Բայց Թագուհու անունը նշվում է նրա՝ 908 թ. Վարագավանքին ընծայած Ավետարանում՝ «ես՝ **Մլքէ**, աղախին Քրիստոսի եւ Հայոց[թագո[ւ]հի...»*[57]*: Այս անվան վերաբերյալ Վրեժ Վարդանյանը հետևյալ մեկնաբանությունն է անում. «Ըստ երևույթին Մլքե անվանումը Գագիկ Արծրունու տիկնոջ օտարամույծ կրկնանունն էր, որը ծագում էր արաբերեն «Մալիքե» բառից, որը թարգմանաբար կլինի «Թագուհի»... հավանաբար Արծրունյաց տիկինը իր առավել գործածական «Մլքե» կրկնանունից բացի*

54 Թովմա Արծրունի և Անանուն, էջ 291:

55 ՄՄ 5467, 18ա-19բ, Մաֆսուդեանց, նշվ. աշխ., էջ 26:

56 Թովմա Արծրունի և Անանուն, էջ 276: Թովմա Արծրունու մի տեղեկությունից ենթադրվել է թե Գագիկ Արծրունին ունեցել է մեկ այլ՝ առաջին կին, որը Շապուհ Բագրատունու դուստրն էր (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 243, Ռ. Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Երևան, 1994, էջ 14-15), սակայն պատմության այդ հատվածում խոսքը Գագիկ Ապումրվանի մասին է (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները ***Վ. Վարդանյանի***, Երևան, 1978, էջ243):

57 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ե-ժԲ դդ.*, աշխատասիրությամբ ***Ա. Մաթևոսյանի***, Երևան, 1988, էջ 49: «Մլքե թագուհու Ավետարանը» (ձեռ. Վնտկ. 1144/86), մեզ հասած հայերեն հնագույն թվակիր Ավետարանն է, որի կազմողի հիշատակարանը 862 թ.-ից է, իսկ 908 թ. ձեռագրի հետագայի ստացող Մլքե թագուհին այն նվիրել է Վարագավանքին:

ունեցել է և հայերեն անուն, որը դուրս է մղվել առաջինի կողմից, երբ Գագիկը թագ է ընդունել արաբներից»[58]:

*Երկրորդ անգամ Ղազարը Թամարի մասին գրում է Գագիկի՝ Աղթամարում տեղի ունեցած մահվան կապակցությամբ. «...ի յԱղթամար հանգեաւ և արարին կոծ մեծ և սուք ի վերայ նորա, տարի մի և Ջ (6) ամիս ի սուք մնացին աշխարհս և **Թամար** թագուհին Գ (3) տարի սգով մնաց, մինչ ապա թագաւորեաց որդին՝ ամիրա **Գօրգին**»*[59]: *Այս վերջին անունը նույնպես այլ աղբյուրներում չի հիշատակվում, և որպես Գագիկ Արծրունու որդի ու գահը ժառանգող հիշատակվում է Դերենիկը*[60]: *Բայց անմիջապես նշված տողից հետո Ղազարը ճշգրտորեն նշում է Գագիկի ծնողների և եղբայրների անունները. «Տէր Աստուած, Քո անարատ ծնօղիդ բարեխօսութեամբն լուսաւորեա լուսով աստուածութեան Քո **զԳագիկ** թագաւորի հոգին և իւր ծնողացն. հօրն՝ **զԴերենկին** և զմօրն՝ **զՄոփի** խաթունին: Եւ զեղբացն՝ **Աշոտ** թագաւորին և **Գուրգէն** արքային»*[61]:

Թամարի անվան իրական, թե մատացածին լինելու առնչությամբ նշենք, որ դեռևս 19-րդ դարում Վասպուրականում տարածված էր գեղանի Թամարի անվան շուրջ հյուսված մի լեգենդ, որի հրաշալի գեղարվեստական մշակումը՝ հանրահայտ «Ախթամարը», Հովհաննես Թումանյանը հրատարակել է 1891 թ.[62]: *Հարց է առաջանում՝ արդյո՞ք ժողովրդական ավանդազրույցն է առիթ դարձել, որ այդ անունը վերագրվի Գագիկ թագավորի կնոջը, թե՞ իրական գեղեցկատես Թամար թագուհու անունն է մնացել ժողովրդական հիշողության մեջ և հետագայում տրվել ռոմանտիկ պատմության հերոսուհուն: Առայժմ այս հարցը վերջնական պատասխան չունի: Ավելացնենք, որ ըստ Համազասպ Ոսկյանի՝ Աղթամար կղզու հյուսիս-արևելյան ծայրում «կայ փոքրիկ մատուռ մը, որ կը համարուի **Թամար Թագուհիին** աղօթատեղին»*[63]: *Մենք չենք բացառում, որ Գագիկ Արծրունու կինն իրոք Թամար անունն է ունեցել, իսկ Մլքեն նրա կրկնանունն էր՝ «թագուհի» նշանակությամբ:*

---

58 **Վ. Վարդանյան**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Երևան, 1969, էջ 65:

59 ՄՄ 5467, 22ա, **Մաքսուդեանց**, նշվ. աշխ., էջ33:

60 **Վ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 167-174:

61 ՄՄ 5467, 22աբ: Այստեղ Գագիկի կոտսեր եղբոր նույնպես արաբ կոչվելը ճիշտ է, քանի որ Գագիկն իրոք նրան տվել էր թագավորության մի մասը, երկպառակության առիթ չտալու հա մար:

62 Թումանյանի «Ախթամար» ստեղծագործությանն է նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանի համակողմանի ուսումնասիրությունը՝ **Վ. Դևրիկյան**, *Աւիւց աւի լողացող սիրահար պատանու պատմությունը և «Ախթամարը»*, Երևան, 2014, էջ 3-61:

63 **Հ. Ոսկեան**, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 101:

«Հավաքարան»-ում ներառված նյութերում Ղազարի միջամտության, տար բեր տեղեկությունների հավելման այլ օրինակներ ևս կան, սակայն սահմանա փակվենք այսքանով:

«Հավաքարան»-ի հրատարակության մասին

Ինչպես վերը նշվեց, «Հավաքարանը» հրատարակվել է Ս. Էջմիածնում 1916 թ.: Տիտղոսաթերթին՝ վերնագրից ներքև, նշված է. «Մանոթագրութիւննե-րով լոյս ընծայեց Աղթամարեան աթոռի հիմնարկութեան հազարամեակի (915-1915) առթիւ, Մեսրոպ Վ. Մաքսուդեանց, միաբան Մ. Աթոռոյ»: Նկատի ունենա-լով հրատարակության հոբելյանական բնույթը՝ Մեսրոպ վարդապետը գրքում, «Հավաքարանից» բացի, ընդգրկել է նաև հավելյալ նյութեր, Աղթամարի կաթո-ղիկոսները մի ցանկ՝ Կոստանդնուպոլսում՝ 1909 թ. լույս տեսած «Ընդարձակ օրացույցից», որի տվյալներն ավելի արժանահավատ են (այն սկսվում է 1114 թ. Դավիթ Ա. Թոռնիկյանի անունով)[64] և Հարության կաթողիկոսի 1818 թ. մի կոնդակ[65]:

Հայոց ցեղասպանության ժամանակ՝ 1915 թ. ամռանը Ս. Էջմիածին բերված ձեռագրի և «Հավաքարանի» մասին Մ. Մաքսուդյանցն առաջաբան է գրել, վեր-նագրված՝ «Ընթերցողին» (էջ Թ-ԺԵ), որի վերջում նշված է այն գրելու ամսա-թիվը՝ «1915 թ. դեկտ. 24, Ս. Էջմիածին»: Հասկանալի է, թե ինչպիսի դժվարին ժամանակ է տեղի ունեցել այս նյութի հրատարակության պատրաստումն ու գրքի տպագրությունը և, իհարկե, պետք է շնորհակալ լինել Մաքսուդյանին կա-տարած աշխատանքի համար: Սակայն պետք է նկատենք, որ այն գիտական հրատարակություն չէ: Պահպանելով բնագրի ուղղագրությունը՝ նա համառո-տագրությունները չի բացել, ամենուր կիրառված են գծիկով պատվոգրված բա-ռեր, փոքրատառով է գրված նաև հատուկ անունների մեծագույն մասը: Կաթո-ղիկոսական ցանկի վերջում, որը ձեռագրի 43բ էջում է, հրատարակության մեջ նշվում է. «Այստեղ վերջանում է բուն ձեռագիրը»[66], մինչդեռ ձեռագիրը վերջա-նում է Ղազարի հիշատակարանով (ՄՄ 5467, 54բ), որը սույն գրքում մեջբեր-ված է վերոնշյալ հավելվածներից հետո՝ 80-85-րդ էջերում: Կան նաև որոշ բա-ռերի սխալ վերծանություններ, թերի է անվանացանկը և այլն:

---

[64] Մ. **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 66-68:
[65] Նույն տեղում, էջ 89-96:
[66] **Մաթևոսեանց**, նշվ. աշխ., էջ 52:

կարծում ենք, որ առաջիկայում անհրաժեշտ է իրականացնել «Հավաքարանի» գիտական հրատարակությունը՝ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով, ապա նաև՝ աշխարհաբար փոխադրությունը:

Ամփոփում

Ղազար գրչի ձեռքով 1824 թ. Աղթամարում ստեղծված «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց» բնագրիը (ՄՄ 5467) բանաքաղության հիմքի վրա կառուցված և խմբագրողի լրացումները պարունակող աշխատություն է: Ընդհանուր առմամբ, գրքում ներկայացված են այլ աղբյուրներով հաստատված պատմական դեպքեր, գործիչների անուններ և թվականներ, սակայն միաժամանակ կան նաև անվավեր տվյալներ և հավելումներ, ուստի հետազոտողներն աշխատությանը վերաբերվում են վերապահումով:

Ղազարի ինքնությանը, նրա օգտագործած աղբյուրներին, ինչպես նաև խմբագրումներին վերաբերող սույն համառոտ ուսումնասիրությամբ գալիս ենք այն եզրակացության, որ թեև իր անվան առաջին հիշատակության մեջ հեղինակ-կազմողն իրեն կոչում է «նավավար», որն ի դեպ, նրա գրածի նկատմամբ անվստահության պատճառներից մեկն է դարձել, իրականում որոշակի կրթություն ստացած և ձեռագրերի հետ աշխատելու փորձ ունեցող մարդ է եղել: Նա, հավանաբար, Աղթամարի սարկավագներից մեկն էր, որն ինչ-որ պատճառով քահանայական ձեռնադրության չի արժանացել և փոխել է գործունեության ոլորտը: Սակայն Հովհաննես ե Շատախեցի կաթողիկոսի աթոռակալության սկզբում Աղթամար գալով՝ իր ծառայությունն է առաջարկել՝ հին և դժվարընթեռնելի ձեռագրերից օգտվելով կաթողիկոսական աթոռի պատմությունը ներկայացնող մի աշխատություն պատրաստելու համար, որը հավանության է արժանացել: Արդյունքում ստեղծվել է Աղթամարի և տեղի կաթողիկոսական աթոռի պատմության վերաբերյալ տարբեր աղբյուրներից քաղված, տեղական ավանդազրույցներով համեմված և Աղթամարի մեծարման միտումով խմբագրված նյութեր ընդգրկող մի ժողովածու:

Նկատի ունենալով բնագրի 1916 թ. էջմիածնում կատարված հրատարակության որոշ թերությունները, կարծում ենք, որ Աղթամարի պատմության մասին ուշագրավ տվյալներ պարունակող և տարբեր առումներով հետաքրքրական սույն աշխատությունն արժանի է գիտական հրատարակության:

KAREN MATEVOSYAN

THE *COLLECTION OF NAMES OF THE CATHOLICOSES* AS A SOURCE ON THE HISTORY OF AKHTAMAR

Key words: Akhtamar, Catholicosate, Matenadaran, manuscript, scribe, Lake Van, T‘ovma Artsruni.

The Collection of the Names of Catholicoses (Ms M5467, written by the scribe Ghazar (Ղազար) in Akhtamar in 1824) consists of 54 sheets. The manuscript was delivered to the St. Etchmiadzin library in 1915, and Mesrop Maksudyants published the text in 1916. This work is dedicated to the history of Akhtamar Island in Lake Van and the Catholicosate that operated there from 927 to 939 and from 1113 to 1895. It was written by order of the Catholicos Yovhannēs V Shatakhets‘i of Akhtamar (1823–1843). Because the author aimed to glorify the Akhtamar Catholicosate, the work contains some exaggerations for this purpose, making researchers sceptical.

This study shows that the author or compiler of the work was fairly educated and familiar with the Akhtamar Catholicosate library. He used two sources: the 10th century history of T‘ovma Artsruni and Anonymous and the 18th-century list of Catholicoses compiled by Deacon Nerses. However, he also drew on other sources. This work, which contains remarkable data on the history of Akhtamar and is of interest for various reasons. It deserves a new scholarly publication.

КАРЕН МАТЕВОСЯН

«СБОРНИК ИМЕН КАТОЛИКОСОВ» КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ АХТАМАРА

Ключевые слова: Ахтамар, католикосат, Матенадаран, рукопись, писец, озеро Ван, Товма Арцруни.

«Сборник имен католикосов» в рукописи Матенадарана № 5467 составлен писцом Газаром в Ахтамаре в 1824 году; он занимает 54 листа. Сама рукопись была доставлена в библиотеку Св. Эчмиадзина в 1915 году, а текст был опубликован Месропом Максудянцом в 1916 году. Работа посвящена истории острова Ахтамар на озере Ван и действовавшего там с 927 по 939, а затем с 1113

по 1895 год католикосата, и была написана по заказу Ахтамарского католикоса Ованнеса V Шатакхеци (1823–1843). Поскольку автор стремился прославить католикосат Ахтамара, работа содержит некоторые преувеличения, что стало причиной скептического отношения к этому труду.

Настоящее исследование показывает, что автор-составитель «Сборника» был достаточно образованным человеком: он пользовался библиотекой Ахтамарского католикосата, особенно историей Товмы Арцруни и Анонима (X век) и списком Католикосов, составленным диаконом Нерсесом (XVIII век). Этот труд, содержащий примечательные данные по истории Ахтамара и представляющий интерес в различных аспектах, заслуживает новой научной публикации.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
PUBLICATIONS
ПУБЛИКАЦИИ

ՋԱՔԱՐԻԱ ԵՊՍ. ԲԱՂՈՒՄՅԱՆ*

DOI: 10.57155/FWHJ5321

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԾԻՍԱԿԱՆՈՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԳԵՎՈՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Կիրակոս Երզնկացի, րաբունապետ, ծիսականոնական թուղթ, հավատք, բարի գործեր, ապաշխարություն, մեղքերի խոստովանություն, խոստովանահայր, եկեղեցու խորհուրդներ, ժամակարգություն:*

Երզնկայի նշանավոր դպրոցի րաբունապետ Կիրակոս Երզնկացու[1] († 1355) ուշագրավ երկերից է «ՅԱստուծոյ ամենակալէն» սկսվածքով ծիսականոնական թուղթը, որն ուղղված է հոգևոր իր զավակներին՝ քահանաներին, կրոնավորներին և համայն ժողովրդին՝ անկախ տարիքից և սեռից: Իբրև նախանձախնդիր հոգևոր հովիվ և գիտնական վարդապետ՝ Կիրակոս րաբունապետը թղթում մատնանշում է ժամանակի խնդիրներն ու մարտահրավերները, դրանց հաղթահարման ուղիները՝ խոսքը հաստատելով սուրբգրային մեջբերումներով, կանոնական մտածողությամբ, անձնական, հոգևոր հարուստ փորձառությամբ ու միաժամանակ շեշտելով, որ դրանք սահմանել են մարգարեները, առաքյալներն ու աստվածատես հայրապետները: Նա ոչ միայն աստվածաբանական մտածողությամբ և հայրախոսական ավանդության իմացությամբ տեսաբան վարդապետ է, այլև գործող եկեղեցական, որը քաջածանոթ է եկեղեցու ծիսագործնական կյանքին, մարդուն հուզող հոգևոր կյանքի նրբություններին ու բարդություններին, հոգևոր սպասավորների խնդիրներին:

---

* Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, hayrzakaria@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 9 հունվարի, 2026, հոդվածը գրախոսելու օրը՝ 2 ապրիլի, 2026:

[1] Հեղինակի և նրա մատենագրական ժառանգության մասին տե՛ս **Ջաֆարիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան**, *Կիրակոս Երզնկացու Մուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները*, Երևան, 2022, էջ 13-51:

Կիրակոս Երզնկացու նշված թղթին առաջին անգամ անդրադարձել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, ականավոր պատմաբան և աստվածաբան Հ. Միքայել Չամչյանը (1738-1823) «Պատմութիւն Հայոց» կոթողային աշխատության մեջ: Բնութագրելով Կիրակոսին իբրև «այր սրբակրօն և հետամուտ իմաստութեան»՝ նա գրում է. «Ի խոր ծերութեան իւրում գրեաց թուղթ յորդորական իբրև զվարոզ և կանոն խրատուց առ ամենայն Հայս և մանաւանդ առ բահանայս՝ երկար և ճառօրէն, միջակ և աշխարհաբար ոճով՝ առ ի դիւրաճաս լինելոյ ամենեցուն»[2]: *Կիրակոսի այս երկը մեկ ձեռագրի հիման վրա 1943 թ. հրատարակել է Հ. Հակոբ Շագուրյանը «Բազմավէպ» հայագիտական հանդեսում՝ հիմք ընդունելով Վենետիկի Մխիթարյան մատենադարանի 96/241 Ոսկեփորիկ Բ ժողովածուն[3]: Նա ամփոփ ներածականում անդրադարձել է նաև Կիրակոս Երզնկացու կենսագրությանը, նրա մատենագրական վաստակին, ինչպես նաև թղթի գրության շարժառիթներին, բովանդակությանը և այլն: Անտեղյակ լինելով Կիրակոս րաբունապետի մահվան ճշգրիտ թվականին և կյանքի և գործունեության այլ մանրամասներին՝ նա փորձել է թղթում արծարծված դեպքերը կապել պատմական որոշ անցքերի հետ:*

Հայկական ձեռագրական հավաքածուներում Կիրակոսի այս թղթի 12 ձեռագիր ընդօրինակություն է պահպանվել, որոնցից վեցը՝ Մաշտոցյան Մատենադարանում[4], երկուսը՝ Վենետիկում[5], չորսը՝ Երուսաղեմում[6]: Հնագույններում

---

[2] **Միխայէլ Չամչեանց**, *Հայոց Պատմութիւն*, հ. Գ, Երևան, 1984, էջ 508:

[3] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, յօրինեց* **Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան**, Վենետիկ, 1924, էջ 611-613, «Եզնկացի Կիրակոս վարդապետի թուղթը». *Բազմավէպ*, 1942, Յունուար-Դեկտեմբեր, էջ 52-57, բնագիրը՝ *«Բազմավէպ»*, 1943, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 62-66: Թղթի նոր բնագիրը պատրաստելիս համեմատության համար սկզբում գործածեցինք նախորդ դարում տպագրված տարբերակը: Բայց աշխատանքի ընթացքում նկատեցինք, որ այն որոշ տեղերում թերի է: Ուստի խնդրանքով դիմեցինք և Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատան պատասխանատու Հ. Վահան Օճանյանից շնորհակալությամբ ստացանք բուն ձեռագրի թվային տարբերակը, որը և գործածել ենք բնագիրը կազմելու համար:

[4] ՄՄ 228 (Ժողովածոյ), 1457 թ., թթ. 157բ-172բ, ՄՄ 1720 (Ժողովածու), 1720 թ., թթ. 169բ-182ա, ՄՄ 2542 (Ժողովածու), 1476 թ., թթ. 99բ-110բ, ՄՄ 2939 (Ժողովածու), 1779-1799 թթ., թթ. 318ա-327բ, ՄՄ 3050 (Ժողովածու), 1592 թ., թթ. 152ա-165ա, ՄՄ 8727 (Ժողովածու), ժէ դ., թթ. 301ա-313ա:

[5] Վնտկ. 96/241 (Ոսկեփորիկ Բ), 1495 թ., թթ. 3ա-19բ, Վնտկ. 1177/1016 (Կանոնագիրք ԻԴ), 1667 թ., թթ. 250ա-256ա:

[6] Եղմ. 171 (Ա. Կանոնագիրք, Բ Դատաստանագիրք), 1722 թ., էջ 391-400, Եղմ. 182 (Ա. Կանոնագիրք, Բ Դատաստանագիրք), 1790 թ., էջ 220-234, Եղմ. 1136 (Ժողովածոյ), էջ 153-165, Եղմ. 1434 (Քարոզագիրք), ժէ դ., էջ 79-91:

Թղթի խորագիրը շատ պարզ է՝ «Կիրակոս վարդապետի ասացեալ»[7]*, բայց հետագայի՝ ԺԷ-ԺԸ դարերի ընդօրինակություններում ավելի ընդարձակ է.* «Կիրակոս վարդապետի ասացեալ խրատ ընդհանրական աշխարհաց, զոր գրով առաքէր, ուր և կամէր, զմերձաւորսն՝ բանիւ, և զհեռաւորսն՝ գրով, որպէս սովորութիւն է սրբոց առանց աստուածացելոց»[8]*: Ինչպես տեսնում ենք, ընդարձակում առավել շեշտվում են Թղթի կանոնախրատական բնույթը և Կիրակոս րաբունապետի անվիճելի հեղինակությունը: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Կիրակոսի այս թուղթը շատ հաճախ զետեղվել է կանոնագիտական ժողովածուներում՝ ընկալվելով իբրև կարևոր և ուսուցողական գրվածք հոգևորականության ու ժողովրդի համար: Կիրակոսն իր թուղթն անվանում է* «զգիրս ճառոզիս և կանոնացս»՝ *շեշտելով, որ արդեն ծեր է և այլազգիների վախից իրենց մոտ չի կարող գնալ: Հասցեատերերի հանդեպ ջերմությունն ու հոգատարությունը վկայում են, որ նա շատերին անձնապես ճանաչում և ցանկանում է տեսնել նրանց դարձի գալը, մեղքերից ազատվելը՝ հավելելով.* «Եթէ զայս տիեզերական ճանճառս աստուածային թէ ի գործ չածեմ ի նեզ, պահանջելոց է յինէն Աստուած»*: Իսկ սիրեցյալ քահանաներին պատվիրում է, որ անպայման իր թուղթն ընթերցեն գյուղերում և քաղաքի եկեղեցիներում՝ մարդկանց առջև: Թղթում բազմիցս ընդգծվում է Կիրակոս րաբունապետի հոգևոր կապն այդ մարդկանց հետ, ինչպես նաև վարդապետական նախանձախնդրությունը հատկապես ծիսադավանաբանական հարցերում: Թղթից պարզվում է նաև, որ հեղինակը եկեղյաց գավառից է և նրա մայրաքաղաք երզնկայի անվամբ երզնկացի է կոչվում.* «Այս է գիր նեռին իմոյ, ի նուաստ Կիրակոս վարդապետէ եզնկացւոյ, մայրաքաղաքին Հայոց Լուսաւորչի գաւառիս գրեցաք առ աստուածապահ ժողովուրդ, ուր և հասանի»*: Կիրակոսը հուսով է, որ երբ իր թուղթը և լուսավոր խոսքերը հասնեն,* «բառնան ցասումք և պատուհասք, և մահ տարաժամ մարդոյ և անասնոյ, և ամենայն ցասումն ծաղկանց ծառոց»*: Նա վստահ է, որ Քրիստոսի խաչի, Ս. Ավետարանի, Ս. Լուսավորչի Աջի, սրբերի զորությամբ և իր աղաչանքներով կվերանան նրանց միջից խռովությունները, չա-*

---

7 ՄՄ 228, թ. 157բ, ՄՄ 3050, էջ 152ա, Վնտկ. 1177/1016, թ. 250ա:

8 ՄՄ 8727, թ. 301ա, ՄՄ 1720, թ. 169բ, ՄՄ 2939, թ. 318ա: Իսկ Երուսաղեմի մատենադարանի եղմ. 1434 ձեռագրում թղթի խորագիրն ավելի ճոխ է և բովանդակալից. *«Կանոնական խրատք ընթանրական ամենայն Հայոց ի Կիրակոս վարդապետէ երզնկացոյ, Արևելք ասողէ, զեւագրեա Լուծմանց պարզողէ, զոր արարեալ ծաղկաքաղ յԱստուածաշունչ Գրոց և կանոնաց առաքելոց և հայրապետաց, և գրով առաքէր. որքան կարէր զմերձաւորս բանիւ՝ բերան առ բերան, և զհեռաւորս՝ գրով, որպէս սովորութիւն է ամենայն սրբոց աստուածացելոց». Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. ե, կազմեց **Նորայր եպս. Պողարեան**, Երուսաղէմ, 1971, էջ 109:

րիքը և ամենքի վրա կհեղվեն բաղձալի խաղաղությունը, աստվածային շնորհները, ողորմությունը, առողջությունը: Հետաքրքիր է այստեղ հատկապես Լուսավորչի Աջի հիշատակությունը, որը հայտնի է նաև չարխափան և բժշկող զորությամբ[9]*:*

Երզնկայից դիմելով մարդկանց՝ Կիրակոս րաբունապետը թղթի գրության ժամանակաշրջանն անվանում է «դառն և անբարի», երբ մարդիկ բազում մեղքերի պատճառով նահատակվում են, հալածանքներ ու նեղություններ կրում անօրեններից հանուն Քրիստոսի: Վերահաս պատուհասների պատճառները տարբեր են՝ հոգևոր սննդի պակասը, քահանաների տկար լինելն ու աշխարհիկ գործերով զբաղվելը: Կիրակոսի նկարագրած իրավիճակը և ժամանակին տրված բնորոշումները համահունչ են ԺԴ դարի հիշատակարաններում պահպանված նույնաբնույթ տեղեկությունների հետ[10]*: Իսկապես, մոնղոլների պարտադրած ծանր հարկերը, սովն ու զանազան համաճարակները, բնական աղետները, մահերն ու մարդկանց վաճառքը, ահագնացող արտագաղթը շատերին անհուսության էին մատնել, Հայոց աշխարհը հայտնվել էր անորոշության մեջ: Նկատի ունենալով վերոգրյալ հանգամանքները՝ դժվար է որոշել թղթի գրության ստույգ թվականը, քանզի այն բնորոշ է տվյալ ժամանակաշրջանի գրեթե բոլոր փուլերին: Հ. Հակոբ Շագուրյանը կարծում է, որ Կիրակոսն իր երկը գրել է հավանաբար Կիլիկիայից, ուր այդ ժամանակ ավելի բարվոք իրավիճակ էր, իսկ որպես գրության թվական նշում 1307 թ. կամ դրանից առաջ՝ նախքան Սսի ե ժողովը*[11]*: Նա սխալմամբ հիմնվում է 1289 թ. Կիրակոսի արդեն ծեր լինելու, Թղթում 1319 թ. Անիի երկրաշարժը չհիշատակելու և ծիսական մեկ արտահայտության վրա:*

Գրության թվականը պարզելու համար մենք հիմնվում ենք մի քանի փաստի վրա՝ տվյալ ժամանակի նկարագրությունը, Կիրակոսի ծեր լինելը, մարդկանց մոտ անձնապես գնալու անկարողությունը և այլազգիների բռնությունից վախը: Եթե այս թուղթը Կիրակոս րաբունապետը գրել է Երզնկայից, ինչպես որ նշում է Թղթում, ապա պետք է փնտրել մի թվական, երբ նա այս կամ այն պատճառով չէր կարող դուրս գալ հայրենի բնակավայրից: Այսպես, 1338 թ. Իկոնիայի թուրքմեն Տամուրտաշը չորս ամիս պաշարում է Երզնկան, շատերին կոտո-

---

[9] **Իգիթ Ղարիբյան**, «Գրիգոր Լուսավորչի աջը», *«Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ*, 2003, հուլիս Ա.-սեպտեմբեր Ա.:

[10] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա (1301-1325 թթ.)*, կազմողներ՝ **Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան**, Երևան, 2018, էջ 33, 41-42, 61, 75, 86, 102, 140, 343, *մասն Բ (1326-1350 թթ.)*, Երևան, 2020, էջ 48, 260, 318, 320, 358:

[11] «Եզնկացի Կիրակոս վարդապետի թուղթը», *Բազմավէպ*, 1942, Յունուար-Դեկտեմբեր, էջ 54:

րում, մարդկանց ունեցվածքը բռնագրավում և այլն[12]*: Նույն թվականին գրված մի հիշատակարան այսպես է նկարագրում իրավիճակը.* «Ի ժամանակս որ ոչ դան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև զնաւ յերերման, և frիստոնէայք էին հալածական և փախստական»[13]*: 1338 թ. Կիրակոսը 63 տարեկան էր կամ փոքր-ինչ ավելի և իրավամբ իրեն կարող էր ծեր համարել, իսկ երզնկայի պաշարումն ու թշնամու ոտնձգությունները ժողովրդի նկատմամբ նրան թույլ չէին տալիս դուրս գալ, անձնապես հանդիպել մարդկանց հետ: Նման իրավիճակում բնական է նաև վախի զգացումը: Մեր ուշադրությունը գրավեց նաև 1321 թ. գրված մեկ այլ հիշատակարան, որում գրիչ Մխիթար Անեցին այսպես է նկարագրում իրավիճակը.* «Յայսմ նեղ և ի նսեմ, դառն և դժնեա աւուրս գրեցի, էր սով սաստիկ և սրածութիւն և սասանութիւն, և ի չարիս պէս-պէս և զանազան՝ վասն մեղաց իմոց»[14]*: Այս հիշատակարանի որոշ բառեր («սրածութիւն», «սասանութիւն», «սով») գործածում է նաև Կիրակոսն իր Թղթում՝ նկարագրելով երկրի իրավիճակը: Իսկ Կիրակոսի՝ իրեն ծեր ներկայացնելն ընդունված արտահայտչաձև էր միջնադարյան հեղինակների համար: Այլ խոսքով՝ բացառված չէ, որ և՛ հիշատակարանի գրիչը, և՛ Կիրակոս րաբունապետը նույն իրավիճակն են նկարագրում և նույն թվականին անդրադառնում: Հետևաբար պայմանականորեն կարող ենք ընդունել, որ Կիրակոս Երզնկացին ծիսականոնական այս Թուղթը գրել է կյանքի երկրորդ կեսին:*

Թուղթն աչքի է ընկնում բարոյախրատական և ծիսականոնական բնույթով: Նրա նպատակն է անգամ հեռվից խրատել, ճիշտ ուղու վրա դնել հոգևոր իր զավակներին՝ անդրադառնալով հավատքի, ապաշխարության, մեղքերի խոստովանության, խոստովանահայրության կարևորությանը, Ս. Պատարագին, ծիսական կյանքին մասնակցության անհրաժեշտությանը, ինչպես նաև բարձրաձայնել զանազան մեղքերի և խոտելի երևույթների մասին: Հեղինակն առավել խիստ է քահանաների դեպքում՝ հորդորելով նրանց հավատարիմ մնալ Աստծուց իրենց տրված կոչմանը և առաքելությանը, նախանձախնդրությամբ պահպանել եկեղեցական կանոնները, անխաթար կատարել խորհուրդները, ծիսակարգերն ու տոները: Չէ՞ որ սրբազան ծեսը միջոց է Աստծու հետ առավել մտերմիկ հարաբերվելու և Ս. Հոգու շնորհաբաշխությունը վայելելու համար: Ուշադրության են արժանի նաև գործող և այրի, կարգալույծ քահանաների ու երեցկանանց մասին Կիրակոսի դատողությունները:

---

[12] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ,* էջ 311:
[13] Նույն տեղում, էջ 331:
[14] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա,* էջ 439:

Ըստ Կիրակոս Երզնկացու՝ քրիստոնյաները երկնքի արքայություն կարող են մտնել հավատքով և դրանից բխած բարի գործերով. «Որպէս թռչունն, որ Բ. թևով թռչի, նոյնպէս և մարդն հաւատովն և բարի գործովն վերանայ յերկինս»: *«Հավատք» ասելով՝ հեղինակը նախևառաջ նկատի ունի դավանական հավատքը՝ ուղղափառության խոստովանությունը, որը նախապայման է մարդու փրկության համար:* «Եւ հաւատն այն է, որ խոստովանին զԵրրորդութիւնն և զմի Աստուածութիւնն: Եւ յԵրրորդութենէն Որդին միայն ծնաւ ի Կուսէն կամաւ Հաւր և Ս. Հոգւոյն, խաչեցաւ և թաղեցաւ և յարեաւ ի մեռելոց և աստուածապէս համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր: Գալոց է նովին մարմնովն և փառաւ Հաւր՝ դատել զկենդանիս և զմեռեալս», – *նշում է Կիրակոս րաբունապետը՝ իր մյուս երկերում նույնպես շեշտելով հավատքի խոստովանության կարևորությունը*[15]*: Մեջբերված վերոգրյալ դավանանքը համահունչ է Նիկեա-Կոստանդնուպոլսյան Հավատամքի ոգուն*[16]*: Բնականաբար, տեսական հավատքին պետք է զուգակցվի նաև գործնականը՝ բարի գործերը*[17]*: Այստեղ Կիրակոսը շեշտում է մեղքերի խոստովանության կարևորությունը, քաջալերում տասնաբանյա պատվիրանների պահպանությունը՝ Պողոս առաքյալի նման հորդորելով հեռու մնալ զանազան մեղքերից:*

Կիրակոս Երզնկացին մասնավորապես անդրադառնում է տվյալ ժամանակ հասարակության մեջ արմատացած ախտերից մեկին և զգուշացնում հեռու մնալ «պիղծ» և «անօրէն» հայհոյողներից, «զի որդնալից բերան[18] լինի յիշոցնատուին յատուրն դատաստանի»[19]: *Վերստին հիշեցնելով մահվան, վերջին դա-*

---

[15] **Ջահարիա արեղա Բաղումյան**, «Կիրակոս վարդապետ Երզնկացու Հովհաննեսի Ավետարանի Ա. 1 համարի մեկնությունը», *Էջմիածին*, 2012, Թ, էջ 88-90, նույն տեղում, 2012, Գ, էջ 64-65:

[16] *Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց*, Վաղարշապատ, 1880, էջ 9:

[17] Դավանական հավատի կարևորությունն է շեշտում նաև ԺԳ դարի մեծանուն րաբունապետ Հովհաննես Երզնկացի Պլուզն իր կանոնական խրատում՝ նկատի ունենալով Ս. Մկրտության ծեսի ժամանակ մանկան փոխարեն կնքահոր արտասանած համառոտ Հավատամքը: Ըստ Հովհաննես Պլուզի՝ հավատի երկրորդ տեսակը՝ *«հաւատալ ամենայն աստուածային և Սուրբ Գրոց»*. տե՛ս **է. Մ. Բաղդասարյան**, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը*, Երևան, 1977, էջ 148, հմմտ. *Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս՝ ըստ սահմանադրութեան Սուրբ եկեղեցւոյս Հայոց*, Վաղարշապատ, 1905, էջ 20:

[18] «Որդնալից բերան» արտահայտությունը գործածում է նաև Ս. Բարսեղ Կեսարացին իր ճառում, որն ընթերցվում է Ավագ Հինգշաբթի՝ Ս. Պատարագի ընթացքում. տե՛ս *Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ*, Վաղարշապատ, 1872, էջ 204:

[19] Հայհոյողներին առավել անողոք ֆնենադատում է Հովհաննես Երզնկացին «Խրատ հասարակաց»-ում՝ առանձին գլուխ հատկացնելով այս մեղքին. *«Յիշոցնատուքն փակեն զդուռն ողորմութեանն Աստուծոյ և չտան տեսանել Արարչին ողորմած աչաւք գիւր արարածս, և արգելուն*

տաստանի և Աստծու ամենատեսության մասին՝ հեղինակը խնդրում է զերծ մնալ նաև գողության տարբեր դրսևորումներից, որոնք ավեր են գործում մարդկային հարաբերություններում[20]*: Հավիտենապես ապրելու ցանկությունը մարդուն պետք է մղի վերափոխվելու, բարիք գործելու և անանց արժեքներին հետևելու: Թե՛ մեծ և թե՛ փոքր մեղքերը մարդու հոգին սպանում են: Իր մտածումը հաստատելու նպատակով Կիրակոսը պատկերավոր մի օրինակ է բերում.* «Աւձին ատամն, որ ճան զասղան ծայր փոխր է, երբ խածանէ զմարդն, մեռանի»*: Հեղինակը ցույց է տալիս նաև մեղքերից ազատագրվելու ճշմարիտ ճանապարհը՝ ապաշխարությունը: Քանի դեռ ֆիզիկական այս մարմնում ենք, հնարավորություն ունենք մեր մեղքերը խոստովանելու և մաքրվելու,* «զի առանց խոստովանութեան և ապաշխարութեան, չկայ մեղաց թողութիւն»*: Հատակ է նաև, որ ներվում են քահանայական կարգ ունեցող հոգևորականին խոստովանված և նրա կողմից թողություն ստացած մեղքերը: Երբ մարդ չի ապաշխարում, մեղքերն իր հետ գերեզման է տանում և ինքնաբերաբար իրեն հավիտենական կորստյան դատապարտում: Ուստի Կիրակոսը թվարկում է նաև ամեն մեղքին հատուկ դեղամիջոցը՝ ապաշխարանքը:*

Հաջորդիվ Կիրակոս Երզնկացին դիմում է քահանաներին՝ եկեղեցական կանոնները պահելու, աստվածպաշտության կարգերը կատարելու, տերունի և սրբոց տոները պատշաճ նշելու հորդորով: Առանձին պարբերությամբ նա անդրադառնում է Ս. Պատարագի կարևորությանը հոգևորականների ու ժողովրդի կյանքում: Քահանաների սուրբ պարտականությունն է ժողովրդին պատրաստել Ս. Պատարագին, որպեսզի «ի յարութեան փողոյն ձայնէն չզրկիմ և ի հուր գեհենին մատնիմ, փոխանակ վարձին և պատուին, որ կայ պահած ձեզ, զպատուհասն ժառանգէմ»*: Նույնն է պահանջվում նաև հավատացյալներից: Ժողովրդին հորդորում է Ս. Պատարագի, ժամերգությանը ձայնը լսելուն պես շտապել եկեղեցի և հատկապես ներկա լինել Ս. Ավետարանի՝ Աստծու խոսքի ընթերցանության պահին.* «Քրիստոնէայ լինի անուանել և ոչ երթայ, նա յուրացաւ-

---

զսուրբսն Աստուծոյ բարեխաւսել վասն աշխարհի», **է. Մ. Բաղդասարյան**, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը*, էջ 163: Նման մարդկանց սխալ է անգամ Հիստոնյա անվանել, քանզի եթե չապաշխարեն, ապա մեղերի թողության չեն արժանանա: Ուշագրավ է Պլուզի հայտնած այն տեղեկությունը, որ «մեծ վարդապետ» Վարդանը (Արևելցին) իր կենդանության օրոք բազում ժողովներ է գումարել և վերահաստատել եղած կանոնները. կաթողիկոսը, եպիսկոպոսը, վարդապետը և հասանան իրավունք չունեն հայհոյողին օրհնել, Ս. Հաղորդություն տալ, թաղման կարգ կատարել, նրանց զավակներին մկրտել, պսակել և այլն:

[20] Հմմտ. **է. Մ. Բաղդասարյան**, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը*, էջ 159-160:

ղաց դասէն է և ոչ ի Քրիստոսի»[21]: Ապա *Կիրակոսն անդրադառնում է Ս. Մկրտության, Ս. Պսակի, Ս. Պատարագի և թաղման խորհուրդների գործնական կիրառության՝ քահանաներին հիշեցնելով, որ իրենք կոչում և առաքելություն ունեն այս աշխարհում, և քահանայագործությունը չպետք է շփոթել տարբեր արհեստների, մեղքերի կամ մարդկային տկարությունների հետ: Քահանան պատասխան է տալու իր ծխականների գործած կամ չգործած արարքների համար: Կնունքը, պսակը և թաղումն անպայման պետք է կատարել Ս. Պատարագից հետո, քանզի այդպես են պահանջում կանոնները*[22]: *Ս. Մկրտության խորհրդակատար քահանան, կնքահայրը և մկրտվողի ծնողները պետք է պահք պահած և խոստովանած լինեն*[23]: *Հեղինակը խստապահանջ է հատկապես Ս. Մկրտության և Ս. Պսակի խորհուրդներն անպայման եկեղեցում կատարելու հարցում.* «Զինչ որ յԱւազանէ ի դուրս կնքեն, նա անկնումք է, և զինչ յայս սահմանացս ի դուրս պսակեն, այն անպսակ է, նոր պիտի պսակել և կնքել»[24]:

Ուշագրավ են Կիրակոսի խոհերը մեղքերի խոստովանության և խոստովանահայրության մասին, որոնց նա անդրադարձել է նաև իր մյուս գործերում: Կիրակոս րաբունապետը նախ զգուշացնում է, որ սատանան մարդկանց «փափուկ սրով» է խոցում, ապա շեշտում ապաշխարության հույսի մասին և հորդորում ոչ մի դեպքում չհուսահատվել՝ զուգահեռներ անցկացնելով գիտուն ու անգետ բժշկի և իմաստուն ու անուս խոստովանահոր միջև. «Մեծ գիտուն հաիմմն հիւանդին փաւիրէզ տայ, որ է ծոմն պահողաց, և ապա զմաղձ դեղն, որ է խոստովանութիւնն, որ հաղորդութիւնն, և ապա մաղձն թափի և ապա հիւանդն առողջանայ: Այսպէս արասջիք և դուք: Մի՛ յապաղէք գնալ առ մեծ և գիտուն խոստովանահայրն, զի անգէտ հաիմմն ճարտար սպանաւղ է: Նոյնպէս և անգէտ հաւանայն»: *Եթե այլ հարցերում պետք է ընտրել սուրբ, աստվածավախ քահանայի և հաշվի չառնել նրա տգիտությունը, ապա խոստովանահայ-*

---

[21] Նույն խնդրի մասին իր մեկ այլ խրատում Կիրակոսն ասում է. *«Զի քրիստոնէ, որ կիրակէ Աւետարանի ձայն չլսէ, չէ՛ քրիստոնէ»*. **Ջամարիա վարդապետ Բաղումյան**, «Կիրակոս վարդապետ Երզնկացու «Բանիւ խրատականի» երկը», *Էջմիածին*, 2013, ե, էջ 85:

[22] Միայն Ս. Պատարագից հետո թաղման ծեսը կատարելու Կիրակոսի պնդումն ու եկեղեցական կանոնների վկայակոչումն անհիմն են: Գուցե հեղինակն ակնարկում է իր ժամանակ կենցաղավարած ծիսական ավանդույթը, որն ընդհանրական բնույթ չի ունեցել:

[23] Հմմտ **Է. Մ. Բաղդասարյան**, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը*, էջ 149-150:

[24] Հմմտ. «Կանոնի Տեառն Յովհաննիսի Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի», կանոն ԺԹ, ԺԵ (*Կանոնագիրք հայոց*, հ. Ա., աշխատասիրությամբ *Վազգեն Հակոբյանի*, Երևան, 1964, էջ 521):

րության դեպքում մեղավոր և գիտուն հոգևորականը գերադասելի է սրբից և տգետից[25]*:*

Կիրակոս րաբունապետն առանձին քննում է կարգալույծ հոգևորականի խնդիրը, որը կարգից զրկվել է կա՛մ պոռնկության պատճառով, կա՛մ հայրապետական տնօրինության համար, կա՛մ բանադրվել վարդապետի կողմից՝ իր խոսքին առավել ուժականություն և հեղինակություն հաղորդելու նպատակով վկայակոչելով «Լուսավորչի» կանոնները: Ըստ Կիրակոսի՝ այդ կանոններում հստակ նշվում է, որ տվյալ քահանային արգելվում է եկեղեցի մտնել, Ավետարան կարդալ, խորհուրդներ կատարել, խոստովանություն լսել և այլն: Այդպիսինին մարդիկ չպետք է նաև քահանային հատուկ դիմելաձևով ողջունեն[26]*: Բանադրված քահանան կարգազուրկ կմնա մինչև բանադրողից քահանայագործելու թույլտվություն ստանալը, իսկ պոռնկության մեջ բռնվածը խոստովանահոր հրամանով ցմահ ապաշխարության շրջան պիտի անցնի: Այս դեպքում Կիրակոսը թույլատրելի է համարում տվյալ հոգևորականի եկեղեցական ծեսով քահանայաթաղը: Ե՛վ բանադրված, և՛ մեղանչած քահանայի համար փրկության ճանապարհն անկեղծ ապաշխարությունն է: Այս համատեքստում Կիրակոսն անդրադառնում է նաև այրի քահանայի և այրիացած երեցկնոջը՝ երկուսին էլ պատվիրելով վանք գնալ և հետագա կյանքն ապրել «կրաւնաւորի»՝ վանականի կարգով՝ նկատի ունենալով եկեղեցական կանոնները*[27]*: Նման իրավիճակում հայտնված քահա-*

---

[25] **Զաքարիա վարդապետ Բաղումյան**, *Կիրակոս վարդապետ երզնկացու «Բանք խրատականք» երկը*, էջ 85: Կոստանդին Ա. Բարձրբերդցու հրավիրերով 1243 թ. գումարված Սսի ժողովի ԺԲ կանոնում, որը մեջբերել է իր պատմության ԽԴ գլխում ականատես պատմագիր Կիրակոս Գանձակեցին, նշվում է. *«Ծեր և գիտուն խոստովանահարս կարգեսցեն, որ յամէն կիրակէի առանց դրամի ի խոստովանութիւն կոչեսցէ վասն շաբաթուն յանցանաց, և քահանայքն խոստովանահարցն հրամանաւ զիւրեանց ժողովրդեան զարժանաւորն հաղորդեսցեն առանց դրամի, նոյնպէս և զհիւանդն առանց դրամի»*. **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն հայոց*, աշխատասիրությամբ՝ *Կ. Ա. Մելիք Օհանջանյանի*, Երևան, 1961, էջ 305:

[26] Լուսավորչի անունով մեզ հասած կանոնաեռում նման խնդիրներ չեն արծարծվում, հմմտ. *Կանոնագիրք հայոց*, հ. Ա, էջ 245-249:

[27] Հայոց Կանոնագրքի որոշ կանոններ կարգավորում են վերոգրյալ խնդիրը և սահմանում բացառությունները: Այսպես՝ եթե ամուսնի կինը մահանա 60-ն անց տարիքում, ապա տվյալ ամուսնան կարող է շարունակել ամուսնայագործել: Իսկ եթե երիտասարդ ամուսնայի կինը մահանա, ապա նա պետք է վանք գնա և այնտեղ ապրի մինչև մահ (**Բասղի գիր կանոնական, կանոն ճԽԲ**. *Կանոնագիրք հայոց*, հ. Բ., աշխատասիրությամբ *Վազգեն Հակոբյանի*, Երևան, 1971, էջ 135): ԺԱ.-ԺԲ. դդ. կանոնագետ Դավիթ Ալավկա Ոդին նույնպես վկայակոչում է Ս. Բարսեղի այս կանոնը և մեկնաբանում (կանոն ՀԳ.): Ըստ նրա՝ երիտասարդ ամուսնան, որի կինը մահացել է, պետք է ամուսնի անապատ և խորհուրդներ կատարելու իրավունք չունենա: Իսկ եթե ամուսնայի կինը 60-ն անց մահանա, ապա նա կարող է շարունակել ամուսնայագործել՝ ապրելով եկեղեցու իր սենյակում. *The penitential of David of Ganjak*, Translated by C. J. P. Dowsett (CSCO, V. 216, Scriptores Armeniaci, Tomus 3), Louvain,

նային և երեցկնոջն անգամ չպետք է խոչընդոտեն իրենց տունը կամ զավակները, որովհետև որբի տերն Աստված է, իսկ տունը՝ Վերին Երուսաղեմը[28]*։*

Թուղթն ավարտվում է Ս. Հոգու շնորհաբաշխ օրհնությամբ և այն հաստատ համոզումով, որ «Աջն հայրական և ամենայն սուրբ Իւր բառնան զինչ ցասումն կայ ի ձէնջ»։

Բնագրի լեզվին հատուկ են միջին հայերեն քերականական որոշ ձևեր (օր.՝ կու-*ով ներկայի կազմությունը (*կու հրամայէ*), եմ֊ բայական վերջավորությունը* եմ֊*-ի փոխարեն (*վճարեմ֊վճարեմ*), բայի անցյալ դերբայն ունի մերթ* եալ-*ով (ինչպես գրաբարին էր հատուկ, օր.՝* հանդիպեալ*) և մերթ* ել-*ով (ինչպես միջին հայերենում է, օր.՝* հանդիպել*). Նման դեպքերում նախընտրել ենք գրաբարյան ձևը, ինչպես նաև՝ բառեր և արտահայտություններ (*ընկալակ, կատուլակ, հաֆիմ, փահրէզ, դաստուր, ճորով, թաղուի, լուծած լինի*)։*

Բնագիրը պատրաստելիս բացել ենք սուրբգրային հապավումները, միօրինակության համար ավելացրել ենք -ի *ավարտով բառերի սեռական-տրական հոլովաձևում զանց առնված* ւ*-երը, անտեսել ենք* յ*-ի անտեղի գործածությունը, ակնհայտ վրիպակները, գրչագրում առկա* աւ*-ի և* օ*-ի զուգահեռ գործածություններից նախընտրել ենք* աւ *տարբերակը։*

1961, էջ 61: Նույն այս տեսակետին է նաև Ս. Ներսես Շնորհալին. **Ներսէս Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական*, բնագիրը՝ *Ագատ Բոզոյեանի* (ՄՀ, ճ. ԻԲ, ԺԲ դար, *Ներսէս Շնորհալի*, Գիրք Բ), Երևան, 2022, էջ 113-114: Եկեղեցական կանոններն անդրադառնում են նաև ճահճանայի ու նրա ընտանիքին առնչվող ևս երկու պարագայի: Ըստ այդմ՝ եթե ճահճանայի կինը պոռնկացել է, ապա ճահճան պետք է նրանից բաժանվի: Իսկ եթե ցանկանում է ապրել նման կնոջ հետ, ապա զրկվում է ճահճայական կարգից («Կանոնք Աթանասի Աղեքսանդրացւոյ», ՀԴ, *Կանոնագիրք հայոց*, ճ. Ա, էջ 321, «Բասղի գիր կանոնական», կանոն ԾԶ, *Կանոնագիրք հայոց*, ճ. Բ, էջ 115, **Մխիթար Գոշ**, *Գիրք Դատաստանի*, կանոն ՃԽԷ (ՄՀ, ճ. ԺԹ, ԺԲ դար), Երևան, 2014, էջ 264: Ճահապիվանի ժողովի Բ կանոնը նման դեպքում նաև ապաշխարության շրջան է սահմանում այն ճահճանայի համար, որի կինը պոռնկացել է (*Կանոնագիրք հայոց*, ճ. Ա, էջ 431): Իսկ «Կանոն Բասղի աւ Ամփիւղոնոս» կանոնախմբի ԺԳ կանոնը սահմանում է, որ «անպատեհ և անարժան» ամուսնության մեջ հայտնված և ամուսնալուծված ճահճաները պահպանում են ճահճայական կոչումը, բայց զրկվում ճահճայագործելուց և ապաշխարության շրջան անցնում. *Կանոնագիրք հայոց*, ճ. Ա, էջ 344-345:

[28] Երուսաղեմի 1651 թ. Կիլիկիո և Ամենայն Հայոց Կաթողիկոսության համատեղ ժողովի ԺԳ կանոնում ասվում է. «Այրի երիցուի՛ թէ իցեն պարկեշտ և ծեր, և կամ ունիցին մանկունս սնուցանելոյ՝ կացցեն յեկեղեցին, և թէ ոչ այսպէս, գնասցեն ի վանս և յանապատս. և թէ ոչ գնասցեն, ի բաց կացցեն ի ժառանգութենէ և կարգէ». **Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան**, *Հայոց եկեղեցական իրավունքը*, Ս. Էջմիածին, 2011, էջ 381:

Օգտագործել ենք հետևյալ նշանները՝] (փոխ.), > (=չիք), ~ (=շրջ), + (=ավելացված է)։ Ստորև տալիս ենք ձեռագրերի համառոտ նկարագրությունները.

Ա – ՄՄ 228 (ժողովածոյ), 1457 թ., թթ. 157բ-172բ, գրիչ՝ Սիմէոն կր., ստացող՝ Տէր Յակոբ, վայր՝ Դերձկոյ անապատ, 244 թերթ, թուղթ 18,3×14, միասիւն, բոլորգիր, 19 տող։ Բնագրում նշում ենք այս ձեռագրի էջահամարները։

Բ – ՄՄ 2542 (ժողովածոյ), 1476 թ., թ. 99բ-110բ, գրիչ՝ Զաքար աբղ., կազմող՝ Մելիսեդեկ, վայր՝ Անկուներաց վանք, 164 թերթ, թուղթ 17,2×13,5, միասիւն, բոլորգիր, տող 21-25։

Գ – ՄՄ 3050 (ժողովածոյ), 1592 թ., թ. 152ա-165ա, գրիչ և ստացող՝ Ղուկաս սրկ., վայր՝ Թլուանճ գիւղ (Կարին), 283 թերթ, թուղթ 21,5×15,5, միասիւն, բոլորգիր, 22-26 տող։

Դ – ՄՄ 8727 (ժողովածու), ԺԷ դ., թ. 301ա-313ա, ստացող՝ Յովհաննէս երէց, 438 թերթ, թուղթ 16×10,7, միասիւն, նոտրգիր, տող 22։

Ե – Վնտկ. 1177/1016 (Կաճոնագիրք ԻԴ), 1667 թ., թ. 250ա-256ա, գրիչ՝ Տէր Աւիստակէս ֆահանայ, ստացող՝ Տէր Մարկոս նորօծ ֆահանայ, վայր՝ Պոլիս, Պալաթու թաղ, 368 թերթ, թուղթ 17×25, երկսիւն, բոլորգիր, տող 31։

Զ – ՄՄ 1720 (ժողովածու), 1720 թ., թ. 169բ-182ա, վայր՝ Քաշո՞տ, գրիչ՝ Յովհաննէս երէց, 469 թերթ, թուղթ 16, 4×10,6, միասիւն, բոլորգիր, տող 18-19։

Է – ՄՄ 2939 (ժողովածու), 1778-1799 թթ., թ. 318ա-327բ, վայր՝ Ըռուստաց գիւղ Նովիտայ, Նոր Նախիջևան, գրիչ և ստացող՝ Մարտիրոս Ավետիքով Կաֆացի, 599 թերթ, թուղթ 32×20, միասիւն, երկսիւն, նոտրգիր, տող 28-32։

Ը – Վնտկ. 96/241 (Ոսկեփորիկ Բ), 1495 թ., թ. 3ա-19բ, վայր՝ Կապոսի վանք, գրիչ՝ Խաչատուր աբեղայ, 310 թերթ, թուղթ 17×12 (13×8), բոլորգիր, միասիւն, երկսիւն, տող 19-27։

ԲՆԱԳԻՐ

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ[1]

ՅԱստուծոյ ամենակալէն[2] աւհնութիւն և պահպանութիւն, և ի նուաստ Կիրակոս վարդապետէ աղաւթ և աւհնութիւնմ ընդհանուր[3] ամենայն հաւատացելոցդ ի Քրիստոս[4]՝ հաճայիցդ, և կրաւնաւորացդ, և զինուորեալ մանկանցդ[5], և բարեպաշտ հրիստոնէիցդ՝ մեծի և փոքու[6], արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և համաւրէն ժողովրդոցդ[7]: Ընտրեալ ի սկզբանէ աշխարհի յառաջ հան զլինելն[8] աշխարհի սուրբ և անար|158ա|ատ[9] ժողովուրդ[10] սեփհական[11] յԱստուծոյ, տնկեալ ի տուն Տեառն պատուով, ծաղկեալ[12] յուսով և պտղաւորեալ[13] ճշմարիտ սիրովն Աստուծոյ, և որ եղբայր[14] ընդ[15] աննիւն խաչակցեալ և հանապազաւր մեռեալ[16] վասն անուանն[17] Քրիստոսի[18]: Եւ[19] վասն որոյ և[20] փառացն

---

1 ԲԸ > Կիրակոս վարդապետի ասացեալ, Դ Կիրակոս վարդապետի ասացեալ խրատ ընդհանրական աշխարհաց, զոր գրով առաքէր, ուր և կամէր, զմերձաւորսն՝ բանիւ, և զհեռաւորսն՝ գրով, որպէս սովորութիւն է սրբոց արանց աստուածացելոց Ջ + է ընդհանրական աշխարհաց… աստուածացելոց, է Կիրակոս վարդապետէ ընդհանրական աշխարհաց…. աստուածացելոց

2 Ա ամենակալէ

3 Բե ընթհանուր, Ը ընթանուր

4 Ե + այլև

5 ԲԳ մանգանցդ, Ե զինորեա մանգանցդ] զինուորեալ մանկանցդ | է հաճայիցս, կրոնաւորացս, զինուորեալ մանկանցս] հաճայիցդ, և կրաւնաւորացդ, և զինուորեալ մանկանցդ, Ը մանկանցս

6 է փոքր

7 ԲԳ ժողովրդոցնդ, ՋԷԸ ժողովրդոց

8 Բե զլինել, է զլինիլն

9 ԲԳե անարատ

10 Ը ժողովուրդ

11 ԲԳԴՋԷԸ սեփական

12 Ա > տնկեալ ի տուն Տեառն պատուով, Բ > ի տուն Տեառն պատուով, ծաղկեալ

13 Դ պտղաբերեալ

14 Ը յեղբար

15 ԲԳԵԸ ըստ

16 Ա հանապազօրեալ] հանապազաւր մեռեալ

17 Ը անուան

18 Ը նորա

19 Ը > և

20 Դէ > և

հաղորդ լինելոց էք յանվախճան և յանսպառ[21] ուրախութիւնսն[22], *«անբիծք*[23] *և անարատք որդիք Աստուծոյ, անմեղք ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգիդ*[24]*, յորոց միջի*[25] *լինիցիք*[26] *իբրև զլուսաւորս յաշխարհի*[27]՝ *զբանն կենաց ունելով*[28] *յանձինս՝ ի պարծանս ինձ յաւուրն*[29] *Քրիստոսի»*՝ ըստ առաքելոյ[30] (Փիլ. Բ. 15-16):

Յուսամ յԱստուած[31] բարեարս, զի ի[32] հասանել գոյս[33] և ի լուսաւոր բանից մերոց[34] առ ձեզ, բառնան ցասումբ[35] և պատուհասբ, և մահտարաժամ[36] մարդոյ և անասնոյ, և ամենայն[37] ցասումն ծաղկանց ծառոց, և զինչ[38] պտուղ[39] կայ ի հողէ[40]: Եւ ամենայն[41] հակառակորդքն[42] ձեր՝ երևելիբ և աներևոյթբ[43] սովքն[44] և[45] ս|158բ|րածութիւնբ[46] և սասանութիւնբ[47] Ս.[48] Խաչիւն[49] Քրիստոսի, և Ս.[50] Աւետարանաւն, և Ս. Լուսաւորչիս[51] Աջովն, և

---

[21] Դե անսպառ
[22] ԲԳե ուրախութիւնն, ԴՋէ յուրախութիւնն
[23] ե անբիծ
[24] էԸ ազգիտ
[25] Ջ միջից
[26] Դ լինիբ
[27] ԱԲԳԴեՋէ աշխարհի
[28] է յունելով
[29] Ա յաւուր, է աւուրն
[30] է առաքելոյն
[31] ԳեԸ + ի, Դէ Աստուած
[32] է > ի
[33] Ը թղթիս
[34] ԲԳԴեՋէԸ բաներոյս մերոյ] բանից մերոց
[35] ԴՋէ ցասմունբ
[36] ե տարաժամբ
[37] է յամենայն
[38] Ը + որ
[39] Ա պաղուղ
[40] Դ հողոյ է
[41] է յամենայն
[42] ԲԳԴեՋէ հակառակորդն
[43] ԱԸ երևելիբն և աներևոյթն] երևելիբ և աներևոյթբ
[44] Ը > սովբն
[45] Ա > և
[46] Ը > սրածութիւնբ
[47] ԱԸ սասանութիւնբն
[48] Ա > սուրբ
[49] ԴՋ խաչիւ
[50] Ա > սուրբ
[51] ԲԳԴեՋ Լուսաւորչին, է Լուսաւորչի

ամենայն[52] սրբոց երկնաւորաց և երկրաւորաց, և մեր աղաչանաւք[53] հալածական լինին[54] և[55] վերանան ի ձէնջ ամենայն չարիք և խռովութիւնք[56]: Եւ փոխանակ խռովութեանցն[57] Աստուծոյ, որ ի վերայ մեղաց ձերոց[58], շնորհիւ[59], աւրհնութիւն, խաղաղութիւն, ողորմութիւն[60], լիութիւն[61] և առողջութիւն, և փարթամութիւն[62] հոգևոր և մարմնաւոր յամէնառատ[63] Պարգևողէն՝ Քրիստոսէ[64] Աստուծոյ մերմէ[65], հեղցի ի վերայ ձեր և[66] զաւակաց ձերոց, և ի վերայ անասնոց և անդաստանաց ձերոց[67], և սերմանեաց[68] և պտղաբերից[69] ձերոց[70]: Աջն հայրական հովանի լիցի ի վերայ բահանայիցդ[71] և ամենայն հաւատացեալ ժողովրդեանդ[72], որ ներ և անձուկ[73] և նուրբ[74] ճանապարհաւն[75] կու գնայք, երթայք ի կեանսն[76] յաւիտենական[77]: Արդ, գիտացիք[78], բրիստոնեա՛յք[79], |159ա| որ մարդն Բ.[80] իրաւ յարբայութիւնն

---

52 է յամենայն
53 ԴՁէ աղաչանաւքն
54 ԲԳԴէ լիցին
55 ԲԳե > և
56 է զինչ արևելք յարևմտից. ամէն. եղիցի, եղիցի] ամենայն չարիք և խռովութիւնք
57 Ը խռովութիւն
58 Գ ձեր, Ը վասն մեղաց մարդկան] ի վերայ մեղաց ձերոց
59 ՁէԸ շնորհ
60 է օրհնութիւնն, խաղաղութիւնն, ողորմութիւնն, Ը ~ ողորմութիւն, խաղաղութիւն,
61 է լիութիւնն, Ը և լինութիւն, առատութիւն] լիութիւն
62 է առոյգութիւնն և փարթամութիւնն] և առողջութիւն և փարթամութիւն
63 է յամէնյառատ
64 Ը Քրիստոսի
65 Ը մերոյ
66 Ը + ի վերայ
67 Ը > ձերոց
68 Ը > սերմանեաց
69 Բե պտղաբերաց
70 ԴՁէ > և ի վերայ անասնոց և անդաստանաց ձերոց և սերմանեաց և պտղաբերից ձերոց
71 է բահանայիցս
72 Ը > և ամենայն հաւատացեալ ժողովրդեանդ
73 ԱԸ անծուկ, Ձ անցուկ
74 ԱԲԳԴեՁէ > նուրբ
75 ԱԴՁէ ճանապարհաւ
76 ԱԸ կեանսն
77 ԴՁէ յաւիտենից ամէն] յաւիտենական
78 ԴՁէ + ով
79 Ը աստուածասէրք
80 է երկու

Աստուծոյ[81] պիտի մտանէ[82] հաւատովք և բարի գործովք: Որպէս թոչունն[83], որ երկու թևով[84] թոչի, նոյնպէս և[85] մարդն հաւատովն և բարի գործովն վերանայ յերկինս: Եւ հաւատքն[86] այն է, որ խոստովանին զերորդութիւնն և զմի Աստուածութիւնն: Եւ յերորդութենէն[87] Որդին միայն[88] ծնաւ ի Կուսէն կամաւ Հաւր և Ս. Հոգւոյն, խաչեցաւ և[89] թաղեցաւ և յարեաւ ի մեռելոց և[90] աստուածապէս համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր: Գալոց է նովին[91] մարմնովն[92] և փառաւ Հաւր՝ դատել զկենդանիս և զմեռեալս[93]: Այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւնն կարճառաւտ: Իսկ բարի գործքն[94] այլ երկուս է՝ Ա.[95] այն է, որ խոստովանին զմեղս[96] իւրեանց[97] և այլ ոչ գործեն[98], մինչև[99] յիւրեանց[100] մահուն[101] աւրն, և յազգապղծութենէ[102] ի զատ կենան[103]: Եւ յայնմանէ, |159բ| որ[104] ասէ[105]. *«Մի՛ շնար, մի՛ սպանաներ*[106]*, մի՛ գողանար*[107]*,*

---

81 Ը > Աստուծոյ
82 ԱԲԳԸ մտէ
83 Ա թոչուն
84 Ը թևովն
85 Ը > և
86 ԴՋ հաւատն
87 ԴՋ երորդութենէն, Ը յերորդութիւնն > և յերորդութենէն
88 ԱԲԳԴԵՋԷ > միայն
89 ԸԷ > և
90 Ը > և
91 ԴՋԷ այն
92 Ը մարմնով
93 ԴՋԷ + և զինչ որ յԱստուածաշունչ (է Աստուածաշունչ) Գրոց բանի կայ (է կան բանի), յորժամ լսեմք առանց թէրահաւատութեան և երկմտութեան (է թերահաւատութեանն և երկմտութեանն), հաւատամք որպէս Աստուծոյ բերանոյ
94 Ը գործն
95 Դէ մեկն, Ը մէկ
96 Ը զմեղքն խոստովանի] խոստովանին զմեղս
97 Ը > իւրեանց
98 Ը գործէ
99 Ջ + ի
100 ԴՋ > յիւրեանց, Ը յիւր
101 է ի մահուան] մինչև յիւրեանց մահուն
102 ԴՋ յազգապղծութենէն
103 ԱԳէ կենայ, Բ կեայ, Ը կենայք
104 Դ այն է, զոր] յայնմանէ, որ
105 Բ > որ ասէ
106 Ը ~ մի՛ սպանաներ, մի՛ շնար
107 Ը գողանայր

մի՛ սուտ վկայեր և մի՛ ցանկար[108] *ընչից ընկերի քո*[109]*»* (ել. Ի. 13-17)։ Եւ այլ, որ յայս[110] նման մեղմ իցէ[111], մի՛ առնէք, զի մի՛[112] յարհայութեանէն[113] զրկիցէ[114] զնեզ[115]։ Այլ զբարին[116] գործեցէք[117] զպահին[118], զաղաւթին[119], զողորմութիւնն[120], զաւտարսիրութիւնն[121], զընկերսիրութիւնն[122], զաստուածսիրութիւն[123], որ արհայութեանն արժանի լինիք ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որում փառ յաւիտեանս. ամէն։

Աղաչեմ[124] զնեզ, եղբա՛րք[125] և[126] որդեա՛կք իմ[127] ի Քրիստոս, արժանի գնալ կոչմամբն[128], յոր[129] կոչեցարուք։ Մի՛ ոք լիցի[130] ի ձենջ պոռնիկ, մի՛ ագահ, որ է կռապաշտութիւն[131], մի՛ շնացող, մի՛ ազգապիղծ, մի՛ իգացեալ, մի՛ արուագէտ, մի՛ գող[132], մի՛ արբեցող, մի՛ բամբասող[133], մի՛ յափշտակող[134], մի՛ անզգամ, մի՛ չար, մի[135]՛ նախանձոտ[136], մի՛ սպանանող, և[137] մի՛

---

108 Ա ցանգար, Ե ցանկանայր, Տ ցանկայր
109 Ը ~ fո ընկերի իրացն
110 ԲԳԵԸ + ի, ԴՋ և այլոյ որ այսմ] և այլ, որ յայս
111 Դ իցեն, Ը է
112 Ը > մի
113 Դ արհայութենէն
114 ԲԴեէԸ զրկէ
115 Գէ զԵզ
116 Դ բարին
117 Ը արարէք] գործեցէք
118 ԴՋ + և
119 ԴՋ + և
120 Ը զողորմութիւն
121 ԴՋէ զաւտարասիրութիւնն, Ը > զաւտարսիրութիւնն
122 Ը զընկերսիրութիւն
123 ԱԲԳԴԵՋէ > զաստուածսիրութիւն
124 ԴՋ դարձեալ աղաչեմ
125 ԴՋ + իմ, է եղբայրք
126 ԲԳԵԸ > եղբարք և
127 Ը > իմ
128 Ը կոչմանն
129 է որ
130 ԱԲԳԴԵՋէ > լիցի
131 Ը կռապարիշտ
132 ԱԲԳԴԵՋէ > մի՛ գող
133 ԱԲԳԴԵՋէ > մի՛ բամբասող, Ը + և
134 է ապշտակող
135 Ը և
136 Ա > մի՛ անզգամ, մի՛ չար, մի՛ նախանձոտ
137 Ը > և

զծնաւղս[138] անարգող, և[139] մի՛ ամբարտաւան[140], մի՛ երդմնահար և[141] մի՛ սուտ վկայ[142], մի՛ մատնիչ[143] և մի՛ որ այսոց[144] |160ա| նման մեղ իցեն գործէ[145], *«զի վասն այսորիկ գայ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ որդւոցն*[146] *անհաւանութեան*[147]», որպէս հրամայէ առաքեալն[148] (Եփես. ե. 5-6, հմմտ. Ա. Կորնթ. Ջ. 9-10)։ Առաւել զգուշացարուք ի պիղծ և յանաւրէն[149] յիշոցնատուացս[150], զի որդնալից լինի[151] բերան[152] յիշոցնատուին յաւուրն[153] դատաստանի։ Զի՞նչ ասացից մի ըստ միոջէ. ամենայն մեղ, որ մեծ է[154] և որ փոքր[155], սպանանէ զհոգին[156], վասն զի ի մարմնաւորս, թէ[157] աւնին ատամն, որ ման զասղան[158] ծայր[159] փոքր է, երբ խածանէ զմարդն, մեռանի։ Նոյնպէս և մեղքն[160], զի *«ցանկութիւնն*[161] *յղացեալ՝ զմեղս ծնանի*[162]*, և մեղքն*[163] *կատարեալ՝ զմահ ծնանին*[164]», որպէս Յակոբոս ասէ[165] (Յակ. Ա. 15)։ Վասն

---

138 Ե զծնօղան
139 ԲԳԴԵՋԷ > և
140 Ե անբարտաւան
141 ԸԷ > և
142 Է վկայէր
143 Ը մատնող
144 Ա յայսոց
145 ԲԳԵ գործեր, Ը որ յայս ի նման չարիք է։ Մի ոք զնեզ խաբեսցէ] մի՛ որ այսոց... գործէք
146 Ջ որդոց
147 ԴՋ + որ լսէ զհաւատոց և զաւրինաց բանին և չհաւանի, այլ հայհոյէ և առհամարհէ, է անհավանութեանն
148 ԴՋ + զներե[ա]լս վասն և զերկայնմտելովն Աստուծոյ առհամարհիցես և այլն, է + Պաւղոս զներելովն և զերկայնմտելովն Աստուծոյ առհամարհիցես և այլն
149 ԴՋ անաւրէն
150 Ը յիշոցնատուէն
151 Բ որդնացի > որդնալից լինի, ԴՋէ լիցի
152 Գ > յիշոցնատուաց, զի որդնալից լինի բերան, Ե բերանն
153 Է յիշոցաց յաւուրն] յիշոցնատուին յաւուրն
154 Ե մեղաւոր մեծ և որ փոքր] մեղ, որ մեծ է
155 Ը որչափ փոքր է և կամ մեծ] որ մեծ է և որ փոքր
156 Ը + թէ մեծ է և թէ փոքր
157 ԴՋէ աւրինակ ձեզ] վասն զի ի մարմնաւորս, թէ
158 ԴՋԸ զասխան
159 ԴՋ ծայրն
160 Է + կատարեալ
161 Ը ցանկութիւն
162 ԲԳԴՋ ծնանին
163 Ե զմեղն
164 ԲԷ > և մեղն կատարեալ՝ զմահ ծնանին
165 Ե ~ ասէ Յակոբոս

որոյ աղաչեմ՝ յամենայն մեղաց զգուշացարուս, և[166] ամենայն արուեստաւորդ զգուշացարուս[167] ի գողութենէ[168]. զինչ[169] առնուս շինել՝ իբրև Աստուծոյ գործեցէք առանց գողանալոյ, առաջի ամենատես աչացն[170] Աստուծոյ գործեցէք |160բ| և[171] մի՛ իբրև մարդոյ[172]: Գիտացիք[173], թէ ի գին և ի ծախ[174], թէ յարուեստ[175], զրկանք, թէ[176] զինչ որ խաբէ մարդ[177] զընկեր[178] իւր[179] և տանի, ի դատաստանի աւուն զինչ գործել է բարի[180], և զԱւազանին[181] շնորհն[182] առնու Աստուած[183] ի[184] յայն[185] մարդոյն[186] և տայ ի զրկածն[187], և զզրկաւղն[188] ի հուր գեհենին առաքէ: Վասն որոյ աղաչեմ՝ մի՛ զյաւիտենական բարիքն այս սուտ և անցաւոր կենացս փոխէք: Մարգարէն Դաւիթ Աստուծոյ Հոգւովն զմարդոյ[189] կեանքն Հ.[190] տարի սահմանէ և[191] այլ աւելի՝ Ջ.[192] (Սաղմ. ՁԹ. 10). թող զայն, որ ի տղայութեան հասակին յափշտակէ մահն[193] և տանի:

---

166 Ը > և
167 Գ > ամենայն արուեստաւորդ զգուշացարուս
168 ԴՁէ + զի արուեստաւորդ և վաճառողք, որ ի խանութ նստին, առաւել գողք են, յորժամ խաբեն զոգէտսն առն և ի տուր, Ը գողանալոյ
169 ԲԳ + որ, Դ + է, Է + է որ
170 Ա աչիցն
171 Ը > գործեցէք և
172 Ը մարդկան
173 Ե գիտացէք, Դէ և գիտացիք
174 ԴՁ + և
175 Ե արուեստ
176 Ը ~ թէ զրկանք, թէ յարուեստ, է և թէ արուեստ] թէ յարուեստ
177 Ե + և, Ը մարդն
178 ԴՁ զընկերն
179 Ը ~ զիւր ընկերն
180 Ը բարի գործ է գործել] գործել է բարի
181 ԴՁ Աւազանին, ԷԸ զԱւազանի
182 ԲԴե շնորհն
183 Ը ~ Աստուած առնու
184 Ը > ի
185 Դ այն
186 Գ մարդոյն, է մարդն
187 Ը ~ ի զրկածն տայ
188 ԱէԸ զրկողն
189 Գ զմարդոյ
190 ԲԳե եւթանասուն, ԴՁէ եաւթանասուն, Ը ի եւթանասուն
191 Ը + թէ
192 Եէ ունգուն, Ը ութսուն
193 Ա մահ

Արդ[194], աղաչեմ զնեզ՝ մի՛ այս սակաւ ժամանակիս համար[195] զրկէք զմիմեանս[196] ի յայս[197] կեանս, և զնեզ ի յերկնից[198] արհայութենէն զրկէք[199], զի զրկողն զիմն և զիւր հոգին կու զրկէ[200], զի զոչինչն կու առնու, և զանգին |161ա| մարգարիտն փոխան կու[201] տայ: Գիտէ, թէ շահ կու գործէ[202] ի տունն և[203] չի յիմանալ[204], թէ զԱստուծոյ հրեղէն սուրն տանի[205] ի տունն[206] իւր[207], որ կտրէ[208] զմարդ[209] և զանասուն, և[210] զքարն[211], և զհողն: Որպէս ասէ մարգարէն, որ յամենայն[212] հաւատէ[213] առնու, յամենայն[214] հաւատ վճարէ: Եւ որ յամենայն[215] հաւատէ[216] սպանանէ, նա յամենայն[217] հաւատէ իմն սպանանի[218]:

Ահա, որդեա՛կի, մինչդեռ կենդանի էի և կարող էի գործել զբարին, այժմ դարձիի և գործեցէի զբարին *«մինչդեռ աւր կայ. գայ գիշեր մահուն, յորում ոչ ոք կարէ գործել բարի*[219]*»* (Յովհ. Թ. 4): Մի՛ գործէք զմեղս[220], և ի Քրիստոսէ

194 Ը > արդ
195 Ը + մէկ զմէկ
196 Ը > զմիմեանս
197 է այս
198 է երկնից] ի յերկնից
199 ԴՋէ կու զրկէք
200 ԴՋ > զի զրկողն զիմն և զիւր հոգին կու զրկէ
201 Ա > կու
202 Ե շահ գործ] շահ կու գործէ, Ը կու տանի
203 Ը տուն] տունն և
204 ԴՋէ իմանալ, Ե չիմանալ] չի յիմանալ
205 Ը գերանդին կու տանի] սուրն տանի
206 Ջ տուն
207 Ը ~ յիւր տունն
208 Ա կարէ
209 Ե զմարդն
210 ԴՋ > և
211 Բ քարն
212 Ը յամէն
213 ԴՋ յաւատայ, Ե յաւատս, է յավատէ
214 Ը յամէն
215 Ը յամէն
216 ԴՋ ամենայն հաւատէ] յամենայն հաւատէ
217 Ը յամէն
218 է > նա յամենայն հաւատէ իմն սպանանի
219 Ը > բարի
220 Ը գործել զմեղն] գործէք զմեղս

սպանանիք[221] կա՛մ ի յայս[222] կեանս, կա՛մ ի յայն[223]: Ապա[224] թէ մեղաւ, փութով դարձիր և[225] խոստովանեա՛[226] և ապաշխարեա՛, զի[227] կեցցես, զի առանց խոստովանութեան և ապաշխարութեան[228], չկայ մեղաց թողութիւն, զի ասէ[229] Աստուած մարգարէիւն[230]. *«Ասա՛ դու նախ զան|161բ|աւրէնութիւնս քո, զի արդարասցիս»* (Ես. ԽԳ. 26): Եւ Յակոբոս Տեառնեղբայրն ասէ. *«Խոստովան եղերուք*[231] *միմեանց զյանցանս*[232]*, որպէս զի աղաւթս արասցեն ի վերայ ձեր, զի բժշկեսջիք»* (Յակ. ե. 16): Եւ Դաւիթ մարգարէն ասէ[233]. *«Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա»* (Սաղմ. ճե 1): Զի Ինքն[234] Տէրն, որ զերկինք[235] և զերկիր բանիւ հաստատեաց, այլ Նա Իւր աստուածային բերանովն հրամայեաց, թէ՝ *«Ումեք*[236] *թողուցուք զյանցանս*[237] *յերկրի*[238]*, թողեալ լիցի*[239] *յերկինս, և զոր կապիցէք յերկրի*[240]*, կապեալ լիցի յերկինս*[241]*»* (Յովհ. Ի. 23): Տեսանէք, որ մինչդեռ դուք չէք խոստովանել[242], և մեք չենք[243] թողեալ[244], այն մեղքն անմաւելի է ի յերկինս և

---

221 Ը սպանանիլ
222 Զ այն
223 Զէ այն
224 Ը և
225 է > և
226 Ա խոստանեա, Ը խոստովանէ
227 Ը և
228 ԱԲԳԴԵԶէ > և ապաշխարութեան
229 Ա զասէ] զի ասէ
230 է մարգարէին
231 ԲԳէ լերուք, Ե լերուրք
232 է զմեղս և զանցանս] զյանցանս
233 ԴԶ > խոստովան եղերուք… Դաւիթ մարգարէն ասէ
234 Ը զինքն] զի ինքն
235 Ը զերկինս
236 ԱԲԳԴԵԶէ ուրուք
237 էԸ զանցանս
238 Դէ երկրի, Ը > յերկրի
239 Բ լի կապեալ] լիցի
240 ԴԶ երկրի
241 է > և զոր կապիցէք յերկրի, կապեալ լիցի յերկինս, Ը թէ զուրուք ունիցիք, կալեալ իցէ] յերկինս, և զոր կապիցէք… յերկինս
242 Ա ի խոստանիլ, Գ խոստովանիլ
243 ԴԶ չեմք
244 ԱԲԳԴԵԶէ ի թողուլ

ի[245] յերկրի[246]: Եւ[247] զոր դում[248] խոստովանիմ[249], և մեք[250] բահանայական կարգովս թողումք[251], նա[252] թողած է[253] այն մեղմն յերկինս և յերկրի[254]: Եւ որ ի գերեզմ|162ա|անն տանի զմեղմն[255], այն կորեալ է զյաւիտենական[256] կորուստն: Ապա յորժամ[257] խոստովանին զմեղմն[258], զմեղաց դևն ի հոգւոյն հանեն: Պարտ է զտեղին բարի գործովք[259] լնուլ թափուր և դատարկ[260] չէ պարտ թողուլ[261], զի թէ[262] դատարկ[263] թողուն[264] զտեղն, նա այն մեղաց դևն *«երթայ և առնու է. դև քան զինքն այլ չարագոյն և գայ բնակէ ի մարդն այն, և լինի մարդոյն այնորիկ յետինն*[265] *չար, քան զառաջինն»* (Մատթ. ԺԲ. 45): Ասեմ ձեզ և[266] թէ որպէ՛ս զտեղի մեղացն բարի գործով լնուն[267]: Յովաննէս[268] Մկրտիչն տայ մեզ[269] խրատ՝ ասելով. *«Արարէ՛ք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան»* (Մատթ. Գ. 8): Ո՞ր է պտուղ արժանի ապաշխարութեան[270]. այն է, որ ընդ[271] մեղացն զապաշխարանսն[272] չափէ, այսինքն՝ աւելի

---

245 ե > ի
246 ԴՋ երկրի
247 Բ > և
248 Ը > դում
249 ե խոստովանիս
250 ԴՋ մենք, ե > մեք
251 ԴՋ թողումք, ե կագիւն իշխանութեամբն թողուն] կարգովս թողումք
252 ԴՋ Աստուծոյ, Ը > նա
253 ե թողեալ է fn] թողած է
254 է երկինս և երկրի] յերկինս և յերկրի
255 ե և ի հողն մտանէ մեղամն] զմեղմն
256 Ը զյաւիտենից
257 Ը ինչ] յորժամ
258 ԴՋէ > այն կորեալ է զյաւիտենական կորուստն: Ապա յորժամ խոստովանին զմեղմն
259 Ը գործով
260 Ը դարտակ
261 ե թողուլն
262 Ը ապա եթէ] զի թէ
263 Ը դարտակ
264 ե > զի թէ դատարկ թողուն
265 Ը յետին
266 Դէ > և
267 ԳԴՋ լնուլ
268 է Օհաննէս, Ը Յովհաննէս
269 Ը > մեզ
270 Աէ > ո՞ր է պտուղ արժանի ապաշխարութեան
271 Ը ընդդէմ
272 ե զապաշխարանն

կերար և արբեցար, այն չափն[273] բաղցած[274] և ծարաւած[275] կեցիր[276]: Ծիծաղեցար՝ |162բ| այն չափն[277] լաց, գիրացար, ստուարացար[278], և մարմինդ զրկեց[279] զհոգիդ[280], ճնշէ[281] զմարմինդ[282] պահաւք և աղաւթիւ և[283] ճնազանդեցոյ հոգւոյդ[284]: Գողացար, զրկեցեր զընկերն[285], թէ[286] խոստովանեցար՝ գողութեան[287] դևն ելաւ ի հոգւոյդ, այժմ մէկ[288] սպիտակին[289], Դ.[290] ի Տէրն[291] դարձոյ, և զկէս ընչիցն ո[292] տուր աղքատաց[293]: Եւ որպէս Զաքէոս[294] արար, և դու արա՛[295] և լսես իբրև զնա ի Քրիստոսէ, թէ[296]՝ *«Այսաւր եղև փրկութիւն*[297] *տանս այսմիկ»* (Ղուկ. ԺԹ. 9): Եթէ[298] հպարտացար՝ նովին չափովն խոնարհեաց[299]. սպաներ՝ փոխանակ նորա արեանն[300] ո արիւնդ է[301], թէ[302] խոստովանութեամբ ողորմութիւն[303] գտար և թողութիւն[304] մեղաց.

---

273 է + այլ, Ը այն չափովն
274 Ա բաղած, Դ բաղծած
275 ԴԶէ > և ծարաւած
276 Ը կացիր
277 Դե չափ, Ը այն չափովն
278 ԲԳ ստորացար, Ը սոնֆացար
279 Ե զրկեցեր
280 էԸ զհոգիտ
281 Եէ ճշնէ
282 է մարմինտ
283 Ե > և
284 է զհոգւոյտ
285 ԴԶ զընկերդ
286 Ը > թէ
287 Ե խոստովաեա զգողութիւնդ] խոստովանեցար գողութեան
288 ԲԳ Ա.
289 Ե պակասին, է ստակին
290 է > դ
291 Ը Տէր
292 ԴԶէ ~ զո կէս ընչիցն
293 ԴԶէ ո հոգւոյդ] աղքատաց
294 ԲԳ Զակիէոս
295 Ը ~ արա և դու
296 Ը Տեառնէ] Քրիստոսէ, թէ
297 է փրկութիւնս
298 Դէ և թէ, Ը և եթէ] եթէ
299 ԲԳԴԶէ խոնարհեց
300 ԴԶէ > արեանն
301 ԴԶէ + արեամբ չափ ապաշխարէ
302 Ե > խոնարհեաց. սպաներ, փոխանակ նորա արեանն ո արիւնդ է, թէ, Ը եթէ] թէ
303 Եէ ողորմութիւնն
304 է թողութիւնն

հանապազ[305] սովով, և[306] ծարաւով, և չարչարանաւք[307], և ապաշխարութեամբ[308] զքեզ մեռոյ մեղացն[309] համար: Եւ եթէ[310] պոռնկեցար և պղծեցեր[311] |163ա| զՔրիստոսի[312] անդամն և յերկնաւոր Փեսայէն[313] որոշեցար և եղեր անդամ պոռնկի, զի գրեալ է, թէ[314]՝ *«Որ մերձենայ ի պոռնիկն*[315]*, մի մարմին է, և*[316] *պոռնիկք*[317] *զարքայութիւնն*[318] *Աստուծոյ ոչ ժառանգեն*[319]» (Ա. Կորնթ. Ջ. 16, 9): Դարձի՛ր փութով և մի՛ յամեր ի մեղին. գուցէ[320] յանկարծակի[321] հասանիցէ աւր մահուն և անկանիցիս[322] ի հուր գեհենին: Այլ դարձի՛ր իբրև զԴաւիթ[323] մարգարէն[324], և լուա՛ արտասուաւք, և պահաւք, և ողորմութեամբ զմեղս fո, զի Դանիէլ մարգարէն[325] ասէ[326]. *«Զմեղս քո ողորմութեամբ*[327] *քաւեսցես, և զանաւրէնութիւնս քո տրաւք*[328] *տնանկաց»* (Դան. Դ. 24): Այս է պտուղ արժանի ապաշխարութեան, որ ընդդէմ մեղացն զապաշխարանին չափեն: Վասն որոյ աղաչեմ զամենեսեան[329], որ նահատակիք[330] յայս դառն և անբարի ժամանակս, և զամենայն հալածանս և զնեղութիւնս |163բ| կրէք ի յանաւրինաց[331] վասն Քրիստոսի, չանացէ՛ք և սուրբ պահեցէ՛ք զնեզ

---

305 Ե հնազանդ
306 Է > և
307 Ե չարչարաւք
308 Ը աշխատութեամբ
309 Ա մեղաց
310 Ե թէ
311 Ե պղծեցար
312 Դ զՔրիստոս
313 Դ + զՔրիստոսի, ՋԷ + Քրիստոսի
314 Ը թէ
315 Ը պոռնիկ
316 Ե + որ
317 Է պոռնիկ
318 Ը զարքայութիւն
319 Գ ժառանկեն
320 Դ գուցցէ, Ե գուտցէ
321 ԲԳԵ > յանկարծակի, ԴՋ և] յանկարծակի
322 ԲԳԵ անգանիցիս
323 Ե Դաւիթ
324 Ը մարգարէ
325 Տ մարգարէ
326 ԲԳ > զի Դանիէլ մարգարէն ասէ
327 Է > զմեղս fո, զի Դանիէլ մարգարէն ասէ. զմեղս fո ողորմութեամբ
328 Ը տrofն | *Աստվածաշնչի ընկալյալ բնագրում՝* գթով
329 ԴՋ զամենեսեանդ
330 Ը + ի
331 Ե յանաւրինակ

յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ, զի և[332] պսակացն արժանի լինիջիք ի Քրիստոս Յիսուս[333]՝ ի Տէր մեր, որում փառ յաւիտեանս. ամէն[334]:

Առաւել[335] աղաչեմք զամենայն հաճանայդ եկեղեցւոյ, որ ժիր կենայք ի գործ և[336] ի մշակութիւն եկեղեցւոյ զամենայն աւուրս ձեր, զկանոնս և զժամակարգութիւնս[337] կատարեցէք զաստուածաղիրս[338], զոր եղեալ է առաքելաբ և մարգարէիւ[339] և աստուածատես հայրապետաւ[340]:

Դարձեալ[341]՝ առաւել աղաչեմ զտէրունական և զմարտիրոսական տաւնն[342] պատուեցէք[343], որ ի յայս[344] կեանս աւգնեն և փրկեն զնեզ[345] ի թշնամեաց ձերոց՝ երևելեաց և աներևութից[346], զնեզ և[347] զամենայն հաւատացեալս, որ կան ի վերայ աշխարհի և ի յայն[348] կեանն բարեխաւս լինին առ Քրիստոս յահեղ ատենին ձեզ և մեզ |164ա| և ամենայն ննջեցելոց ի յԱդամէն մինչև[349] ի կատարած աշխարհի:

Եւս[350] առաւել զմիաշաբաթն, որ է կիրակի[351], պատուեցէ՛ք սաղմոսելով, կարդալով[352], հսկելով. զերեք փողոյն[353] ձայնն, որ[354] են երեք Աւետարանին[355]

---

332 Ե այլև] և
333 Ջէ > Յիսուս
334 Ե > ամէն, Ը > յաւիտեանս. ամէն
335 Զ դարձեալ առաւել
336 է գործ] ի գործ և
337 Ը զժամակարգութիւնսն
338 Ը զաստուածաղիրսն
339 Բ մարգարիւ, ԴՋ մարգարեաւ
340 Գ > և մարգարէիւ և աստուածատես հայրապետաւ
341 Տ > դարձեալ
342 Գ տունն
343 Տ > պատուեցէք
344 Զէ այս
345 Ը > զնեզ
346 Ը յերևելեաց և յաներևութից
347 է > և
348 ԴՋէ այն
349 ԱԲԳԵ ~ մինչև յԱդամէն, է մինչև ի Ադամէն, Ը մինչև յԱդամ. ամէն] ի յԱդամէն մինչև ի կատարած աշխարհի
350 Ը > ևս
351 Ը կիրակին
352 է > կարդալով
353 է փող
354 Ը որ
355 է Աւետարանն

առաւաւտուն[356], որ աւրինակ է գլետի[357] աւուրն Գ.[358] փողոյն: Ու[359] զպատարագն, թէ հնար է և[360] թէ չէ, մինչ ի[361] պատարագն[362] զայլն ամենայն լսելի արարէ ժողովրդեանն, որ դում ի[363] յարութեան[364] փողոյն ձայնէն չզրկիմ[365] և ի հուր գեհենին[366] մատնիմ, փոխանակ վարձին[367] և պատուին, որ կայ պահած նեզ, զպատուհասն ժառանգէմ[368]: Եւ[369] մարդ, որ զպատարագին ձայնն[370] լսէ և[371] գիտենայ, որ պատարագ կայ ու[372] կամ ժամ, և[373] կամ զհաճանային[374] ձայն լսէ[375], հնար կամ կարողութիւն[376] կենայ[377] առաւել ի պրաւսխումէնն[378], որ զերկնաւոր Թագաւորին երեսն տեսանէ, զի վարձ[379] առնելոյն[380] ժամն[381] այն է: Քրի|164բ|ստոնեայ լինի անուանել[382] և ոչ երթայ, նա յուրացաւղաց[383] դասէն է և ոչ ի Քրիստոսի, զի թագաւոր և իշխանք զնիանս[384] պատառեն վասն պրաւսխումէի[385] ձայնին: Եւ[386] մարդ, որ

---

356 Ա առօտուն, է առավօտուն
357 Ը յետի
358 է յաւուրն երեք
359 Ե ուր
360 Ը կայ ու] է և
361 է > ի
362 Բ > թէ հնար է և թէ չէ մինչ ի պատարագն
363 Ը > ի
364 է յարութեանն
365 է չի զրկիմ
366 է գեհենոյն
367 է վարցին
368 Ե պատուհասն ժառանգիցէք] զպատուհասն ժառանգէմ
369 Ե + որ
370 Ե զձայնն
371 Ը > և
372 Ե > ու
373 Ը ու
374 ԲԳԵ հաճանայի
375 է > և գիտենայ, որ պատարագ կայ ու կամ ժամ և կամ զհաճանային ձայն լսէ, Ը > լսէ
376 է կարողութիւնն
377 Ա կենաց
378 Ե պրասխումենէն, ԴԶ պրաւսխումէնն, է պրաւսխումէէն, Ը պրաւսխումէն
379 ԴԶ վարձմ
380 Ը առնելոյ
381 ԲԳ ժամ, Ե + է
382 ԴԵԶ անուանեալ
383 ԱԸ յուրացողաց, ԴԵ ուրացողաց
384 Ը իշխանայմ ձի կու] իշխանիմ զնիանս
385 Ա պոսխումի, ԳԴԶ պրաւսխումէի, է պրաւսխումէին, Ը պրաւսխումին
386 Ը > ձայնին: Եւ

ձայնահաս լինի և ոչ երթայ, ինքն տացէ զանձին[387] իւոյ պատուհասն, մեք անպարտ եմք յաւեներ նորա:

Ո՛վ հահանայք, լսեցէ՛ք, ասո ձեզ է բանս այս[388], որ ասացի, զի[389] վասն[390] ժամակարգութեան[391] խաւսեցայ: Այժմ[392] վասն տնաւրէնութեանն[393] Քրիստոսի և Սուրբ Եկեղեցւոյ կամիմ խաւսիլ[394] ասո ձեզ: Գիտացիք[395], հոգևոր որդեակք իմ, հահանա՛յք, որ զկնոջն[396] հարոզն և[397] զպսակին և[398] զպատարագին զամէն մէկ երեք աւր[399] հազիւ վճարեմք[400] և[401] զթաղման կարգն. այնչափն[402] ծանր է և[403] մեծ խորհրդով, որ[404] հրեղէն լեզուն Քրիստոսի՝ Պաւղոս, հայեցաւ ի սոսա և անդ ի վերացաւ ուշ իւր: |165ա| Ասէ. *«Խորհուրդս այս մեծ է*[405]*, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի*[406]» (Եփես. ե. 32): Տեսանե՞ս ի ճառել սկսաւ և յանճառսն[407] աւարտեաց, որ դուք անգիտաբար[408] սովորական գործ չառնէք[409], կամ հիւսնութեան[410], կամ դարբնութեան[411], կամ որկրամոլութեան[412] և[413] կամ ագահութեան[414], կամ

---

387 Ջ յանձին
388 Ե > այս
389 Ը > զի
390 Ե + ժամանակի
391 ԴՋ + էր զոր, Է ժամակարգութեանն
392 ԲԵԸ այժմն
393 ԳԴ տնաւրէնութեան
394 Է խաւսել, Ը և Հրիստոնէի կու խաւսիմ] կամիմ խաւսիլ
395 Ե գիտացէք
396 Ե զկնոջ
397 Ը ու
398 Ը ու
399 Բ > աւր
400 ԱԲե վճարենք, Ը դեռ չենք ի կարել վճարել] հազիւ վճարեմք
401 Ը ու
402 ԴՋ այնչափ
403 Ը ու
404 Է + ի
405 ԴեՋէ այս է խորհուրդս մեծ] ասէ խորհուրդս այս մեծ է
406 Է եկեղեցի
407 Է անճառսն
408 Է անգիտապար
409 Է առնէք
410 Աե հիւանդութեան, ԴՋ որպէս թէ հիւսութեան] կամ հիւսնութեան, Է հիւսնութեանն
411 Բ դարբնութեանս, Ե դպրութեան, Է դարբնութեանն
412 Է որկրամոլութեանն
413 ԴՋէԸ > և
414 Է ագահութեանն

փառաց և երեսպաշտութեան[415], և[416] զխորհուրդ եկեղեցւոյ դեղէմ և ապականէմ, զոր գրեալ է, թէ՝ *«Զեմք գիշերոյ, չեմք խաւարի»* (Ա. Թես. ե. 5), և դում զորդիմ[417] լուսոյն[418] որդիմ խաւարի առնէմ: Մի՛, աղաչեմ, որդեա՛կ իմ, մի՛[419]:

Այս է խորհուրդ եկեղեցւոյ[420], զոր ցուցանեմ ձեզ կարճ ի կարճոյ[421] անխարդախ զառաջինն, զի նա է հիմն հաւատոյ մերոյ[422]: Նախ՝ հաճանայն[423] պատրաստ կենայ իբրև ժամահար[424] ուր կանոնսն[425] վճարեսցէ[426], իբր[427] թէ ժամ շինէ[428], ու զեկեղեցին[429] ժամու պատրաստէ[430]: Զի՞նչ մարդ, որ յայն[431] |165բ| կնումն[432] գայ ի յուտել[433], այն ի ծոմ[434] պիտի[435], թէ[436] ամէնն[437] չկարեն[438], նա կնճահայրն ու տղին հայրն[439] և[440] մայրն ու[441] մանկաբարձն և[442]

---

415 է երեսպաշտութեանն
416 ԲԳԴԵԶէ կամ, Ը ու
417 ե որդիմ, է զորդիս
418 Դէ լուսոյ
419 Դ > մի
420 ԴԶ յեկեղեցւոյ
421 Ը կարճառաւտ] կարճ ի կարճոյ
422 ԳԶէԸ մեր
423 է հահանայմ
424 ԱէԸ ժամի հատր, ԲԳե ժամ մի հատր, Ը ժամ մի հատր և] ժամահար
425 Դ կանոնն, ե կանոն, է կանոնս
426 է + զսաղմոսին, Ը վճարած
427 Ը իբրև
428 Դէ շինեսցէ, ե շինելոյ
429 ե եղեցին
430 Ը ժամի պատրաստած] ժամու պատրաստէ
431 է այն, Ը + ի յայն
432 Ա կնումն, ԴԶ ի կնումմ] յայն կնումն
433 Դ > ի յուտել
434 ե և յայն ծոմ] այն ի ծոմ
435 ԴԶ պիտի ծոմ լինի] այն ի ծոմ պիտի
436 ԴԶ + որ
437 ե ամենեեան, Ը ամէնն
438 է չի կարեն
439 Ա հայր
440 ԳԴէԸ ու, ե > և
441 ե այլև, է կնճամայրն
442 ԶԸ ու

ֆահանայն: Այսոիկ[443] ամենեքեան[444] ի[445] ծոմ պիտին և[446] խոստովանած[447] խիստ պնդով[448], և[449] ապա ի յայս[450] աճեղ[451] խորհուրդս[452] մերձենալ կարէ բազում աղաչանաւք: Երբ առաւաւտուն[453] ժամ արձակին[454], սկիզբն առնեն պատարագի և առնեն[455] զկնումն[456] և[457] զպատարագն[458]. այս է ժամ[459] որդիս լուսոյ ծնանելոյ: Այսպէս սկիզբն[460] առնեն պսակին և[461] թաղումն[462] կենսաբեր, որ ասէ[463]. «Փոխեցաւ ի մահուանէ ի կեանս[464]»: Առանց պատարագի այս երեք իրս[465] չկայ հրաման ի կանոնաց[466], որ կատարի. թէ՛ հնար լինի և թէ[467՛] չլինի, նա զամենայն պիտի մինչ ի[468] պատարագին[469] խորհուրդն անհնար է առնել[470]: Զինչ որ յԱւազանէ[471] ի |166ա| դուրս[472] կնքեն,

---

443 Ը > այսոիկ
444 Ը ամէնն
445 Դե > ի, Զ այսոիկ
446 է պիտի և Ը պիտի ու] պիտին և
447 Ը + լինին
448 Ա պիտին, Դ պնդելով, Զ պնթով, է պնտով
449 Ը ու
450 ԴԶէ այս
451 ԱԸ յահեղ
452 Ե խորհրդոյս
453 ԲԳ առաւաւտունն
454 Ը ժամն արձակի] ժամ արձակին
455 է առնուն, Ը + զլուսաւոր
456 Ա զկնում
457 Ը ու
458 ԴԶ պատարագին, յայնժամ առնուն զկնումն ի հետ պատարագին] պատարագի և առնեն զկնումն և զպատարագն
459 Ը ժամն
460 է սկիզպն
461 Ե այլև
462 Դ զթաղումն, Ը այս ոճով պսակն է և պատարագն և թաղումն] այսպէս… և թաղումն
463 ԴԶ ~ ասէ որ
464 Ը կեանք
465 ԴԶ խորհուրդիս
466 ԴԶէ > ի կանոնաց
467 Ը + հնար
468 ԴԶ > ի
469 Ը պատարագի
470 ԱԲԳԵէԸ > է առնել
471 Դեէ Աւազանէ, Զ Աւազանէն
472 Ը դուս

նա անկնումբ[473] է, և զինչ յայս[474] սահմանացս[475] ի դուրս պսակեն, այն[476] անպսակ է, նոր պիտի պսակել և կնքել:

Այս է ճշմարիտ խորհուրդ եկեղեցւոյ, զոր գրեցաւ կարճ ի կարճոյ[477], որ առանց այս խորհրդոյս[478] կատարէ զգործ եկեղեցւոյ, նա զայն լսեն ծոյլ[479] և հպարտ, կամապաշտ, անզեղջ հաճանայք[480], որ ասէ աստուածախաւսն[481] Պաւղոս[482], թէ՝ *«Մեք և կամ հրեշտակք ի*[483] *յերկնից*[484] *եկեսցէ և*[485] *քան զայս, որ*[486] *ինչ գրեցաք*[487]*, այլ ինչ աւելի*[488] *կամ պակաս քարոզեսցեն*[489]*, նզովեա՛լ եղիցին*[490]*»* (Գաղ. Ա. 8): Եւ կամ զայն լսէ, որ անսուտ բերանն Քրիստոս ասաց, թէ՝ *«Տուր զհաշիւ*[491] *տնտեսութեան*[492] *քո»* (Ղուկ. ԺՁ. 2), թէ չէ *«մատնէ զքեզ ոսոխն*[493] *քո դատաւորին*[494]*, և դատաւորն՝ դահճաց*[495]*, և դահիճքն*[496]*, որ են չար հրեշտակք*[497]*, և արկանիցեն զքեզ ի բանտ*[498] *գեհենին*[499]*»* (Մատթ. Ե. 25): Եւ կամ զայն |166բ| լսես կամապաշտ հաճանայ[500], որ ասէ[501]. *«Որդի՛ մարդոյ, դէ՛ւ կացուցի զքեզ»* (Եզեկ. Գ. 17) ի վերայ բանաւոր ոչխարաց Իմոց. Ես

---

473 Ա անկնում
474 ԴՋէ ի այս
475 Ը ոճէս
476 Ը նայ
477 Ը կարճառաւտ] կարճ ի կարճոյ
478 Ը ոճիս
479 ԲԳԵԸ ծուլ
480 Ա հաճանայ, Ը հաճանայքն
481 Ը աստուածախօս
482 ԴՋ ~ Պաւղոս աստուածախաւսն
483 ԲԳԴՋէԸ > ի
484 եէ երկնից
485 Բ > և
486 ԴՋէ զոր
487 ԴՋ + կամ, Ը գրեցաքն
488 ԴՋ աւել
489 Ը խարոզեսցէ
490 Ը եղիցի
491 Ը զհաշիւն
492 էԸ տնտեսութեանն
493 Ա ոսոխ
494 Ե դատաւորի
495 Ը դահճին
496 ԴՋ դատաւոր, է դատաւորէն, Ը > և դահիճքն
497 Ը հրեշտակքն և դահիճքն] հրեշտակք
498 ԱԲԳե բանդ
499 է գեհենոյն
500 Ե հաճանայից
501 Ձէ > որ ասէ

մարդ կոչեցի զԵզ, զինչ հովիւն՝ ոչխարին. նա փոխանակ դէտին դև եղեր. ամէն ասեմ[502] *«զարիւնքն[503] ամենայն[504] ի ձեռաց քոց խնդրեցից»* (հմմտ. Եզեկ. Գ. 18):

Ո՛վ եղբարք[505], զորո՞ց արիւնն[506], զոր հաճանայքն գայլոց[507] արարին և գիշատեցին, զոր անկնումք[508] մեռան[509], զոր անխոստովանութեամբ մեռան, զոր անհաղորդ մեռան և[510] կորեան զյափտենական[511] կորուստն, զոր պսակաթող[512] եղեն[513], զոր տարայք[514] զմէկին[515] ի մէկ այլն[516] կցեցիք[517] իբրև զշուն, և զեկեղեցիք[518] Աստուծոյ ի հիմանց հակեցիք, զի[519]. *«Ջոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»* (Մատթ. ԺԹ. 6): Եւ զայն, որ զգարշելին է[520], ուտել տուիք[521] զմեռելոտին[522], որ է մուտաո[523]՝ զմկնըմկէցն[524], զշնլակն, զկատուլակն[525], զի գրեալ |167ա| կայ ի կանոնն, թէ՝ «Որ[526] զմեռելոտին ուտէ, նմա աղբ ինչ ծանր է ուտել[527]»: Ահա, որդեա՛կք իմ[528], ամենայն

---

502 Ա > ասեմ
503 Ե զարթիւմն
504 ԴՋէ ամենայնի
505 Ջէ եղբայրք
506 ԴՋ արիւնն զայնոք, է արիւնն զայնոք] արիւմն
507 Ը գայլոցն
508 Ա անկնուք, Ը յանկնումք
509 ԴՋէ մեռանի, Ը մեռաւ
510 Ը զոր յանհաղորդ ելաւ, զոր յանխոստովանութիւն մեռաւ, ու] զոր անխոստովանութեամբ մեռան, զոր անհաղորդ մեռան և
511 ԴՋ զաւիտենական, է զավիտենական, Ը զյաւիտենից
512 Ե պսակթող
513 Ը եղան
514 է + զոր
515 ԴՋ զմէկինն, է մէկինն
516 Ե այլ
517 Ա կցեցից
518 Ը զեկեղեցի
519 Ա Ը > զի
520 Ը > է
521 Ա տվիք
522 Ե մեռելոտին
523 ԴՋէ անդանակ, Ը մուտաոն
524 ԴՋէ զմկընկէցն
525 ԴՋ զկատուլակն
526 ԴՋէ ով
527 ԴՋ աղբի, է ախպի պէս պիղծ է և մուտաո] աղբ ինչ ծանր է ուտել
528 Ը > իմ

Աստուածաշունչ[529] Գիրք զմեռելոցի[530] աղբի[531] և մուտաո շան կու նմանեցուցանեն[532], և[533] ի Լուսաւորչիս դաւանութիւնն[534] զմկնընկէցն[535] և[536] զշնլակն[537] զփայտեղէնն[538] և[539] զկաւեղէնն[540] արտաքս ընկեաց[541], զպղնձեղէնն[542] նոր կլայեկել[543] տայ[544], և[545] զկատուկակն[546] է. ջրով լուանալ[547] և[548] խաչ հանել[549] տալ ու[550] ապա ի բան գայ:

«Ջոր Աստուած զուգեաց». Բ. պսակն է, և[551] զայլն շուն կու կոչէ[552] Տէրն՝ զառնատէրն[553] և զպսակատէրն, զի գողն և գողակիցն[554] ի միասին տանջեսցին: Եւ բանի տուն ծուխ ունի բահանայն[555], զամէնին[556] արիւնն[557] ի նմանէ պիտի[558] պահանջէ[559] Աստուած, ու[560] զիւր[561] տանն ու[562] զիւր

529 է աստուածասունչ
530 Ը զմեռելոցին
531 ԴՋէ աղբ
532 Ա նմանցեն, ԲՋ նմանցնեն, է նմանեցնէ, Ը կու նմանեցուցանէ
533 ԲԵ > և
534 է Լուսաւորիչ դաւանութիւս] ի Լուսաւորչիս դաւանութիւնն
535 Ջէ մկնկէցն
536 Ը ու
537 Ե զշանլակն
538 ԲԳԵէ զփայտեղէն, ԴՋ զփայտեղէնսն
539 է > և, Ը ու
540 Ջ զկաւեղէնսն, Ջ զկաւեղէնսն, է զկաւեղէն, Ը ~ զկաւեղէն ու զփայտեղէն
541 ԲԳԴՋէ ընկէց, Ե ընեց, Ը ընկեայ
542 ԱԲ պղնձեղէնն, Ը պղնձեղէն
543 է կլակել, Ը կլաեկել
544 Ե տաչիհ
545 Ը ու
546 ԴՋէ զկատուիլակն
547 Ա լվանալ, Ե լուանաս, է լուանայ
548 Ը ու
549 ԴՋ խաչակնքել և] խաչ հանել
550 Գ և
551 Ը > և
552 ԴՋ գոչէ
553 Գ զառնատէն, ԴՋ զառնատէն
554 ԲԳԴԵՋէԸ գողակիցն
555 է > բահանայն
556 ԲԳ զամէնի, Ե զամենեսին, է ամէնն
557 ԴՋէ արիւնն
558 Գե > պիտի
559 ԴՋէ պահանջելոց է
560 Դ և
561 Ա զիր
562 ԳՋէ և

անձինն[563], զիւր հաճանայութեանն[564] լուծն, |167բ| զի դէտ է վասն գայլոցն և գողոցն[565]: Գայլն մեղքն[566] է հետ մարդոյն[567], և գողն[568]՝ սատանայ: Աստուած զո՞ր[569] հաճանայ թրով ի լուծ էած, դուք ձեր կամաւ[570] էք ի յանձն[571] առել[572] զդիտողութիւնդ[573]: Ահա ա՛յս է արիւնքն[574], որ ասաց Աստուած. *«Խնդրեցից ի ձեռաց ձերոց*[575]*»* (հմմտ. Ծննդ. Թ. 5): Անպարտ եմք յարենէ ձերմէ, զաւգուտն ձեր դուք գիտասջիք:

Ո՛վ եղբարք[576], գիտեմ զսատանայի խորամանկութիւնն[577], որ փափուկ սրով խոցէ[578] զամենայն մարդ և ոչ տայ զգալ[579], թէ մահու եմ խոցեալ, գոյ յոյս[580] ապաշխարութեան[581]: Մի՞թէ ի ձեզ հանդիպեալ[582] լինի այս ամենայն խոցոտմունս սատանայի[583]: Աղաչեմ՝ մի՛ յուսահատիք, այլ[584] *«արարէք պտուղ*[585] *արժանի ապաշխարութեան*[586]*»*, զոր ասաց Մկրտիչն Յովաննէս[587] (Մատթ. Գ. 8): Մեծ գիտուն[588] հարիմն հիւ|168ա|անդին փահրէզ[589] տայ, որ է ծոմն պահողաց, և ապա զմաղն[590] դեղն, որ է խոստովանութիւնն, որ

563 Ը աննձին ու
564 Դե հաճանայութեան
565 ԲԳՋ գողացն
566 Դ մեղք
567 Գ մարդոյն
568 Բ գող
569 Դ որ
570 Է կամաւն, Ը կամով
571 Է այնձն
572 Ե առեր, Է առել, Ը առեալ
573 ԴՋէ զդիտողութիւնն
574 Ե արիւնն
575 Դ + և, Ջէ + և մեք
576 ԴեՋէը եղբայրք
577 Ը խորամանկութիւն
578 ԴՋէ կու խոցէ
579 ԴՋ իմանալ, Է յիմանալ, Ը սգալ
580 Է յոյս
581 ԲէՋ ապաշխարութեանն
582 ԱԲե հանդիպել
583 ԴՋ + է
584 Ջէ + աղաչեմ, Ը > այլ
585 Ե զպտուղ
586 Է ապաշխարութեանն
587 ԲԸ Յովհաննէս, Է Օհաննէս
588 Ե + և
589 Գ փահրէզն, Ե փերհեզ, Է փէհրիզ
590 Բ մաղձն

հաղորդութիւնն[591], և ապա մաղձն թափի, և[592] ապա հիւանդն առողջանայ[593]: Այսպէս արասջիք և դուք: Մի՛ յապաղէք[594] գնալ առ մեծ և գիտուն խոստովանահայրն[595], զի անգէտ հաիմն ճարտար սպանաւղ[596] է: Նոյնպէս և[597] անգէտ հաճանայն[598]: Եւ հաճանայ[599], որ լուծած լինի ի կարգէն[600], թէ փորձանաւք մեղացն, որ է պոռնկութիւն[601], և թէ[602] հայրապետի հրամանաւք[603] կամ վարդապետի բանադրած. նա այսպէս է[604] գրած[605] ի Լուսաւորչիս[606] կանոնին, թէ՝ ո՛չ յեկեղեցի մտանեն և ո՛չ Աւետարան[607] կարդան, ո՛չ խորհուրդ[608] ասեն, ո՛չ խաչ տան, ո՛չ[609] խոստովանութիւն[610] առնուն[611], ո՛չ «աւհնեա՛, Տէ՛ր» ասեն: Մէկն[612] մինչ ի յայն[613], որ բանադրողն դաստուր[614] |168բ| տայ[615], ու մէկ այն[616], որ ի[617] փորձանի է անկեալ պոռնկութեան[618], նա մինչ ի մահուն աւրն[619] յումկնդիրսն կայցէ[620]

591 ԱԲԳԴԵԶԷ > որ հաղորդութիւնն
592 Բ > և
593 Բ հիւանդան առոջանայ] հիւանդն առողջանայ, է առոխջանայ
594 Ե ապաղէք, Ը յապէք
595 Ը խոստովանհայրն
596 ԲԳԵ սպանող, Զ սպանեաւղ, է սպանող
597 ԲԳԵԸ > և
598 Ե հաճանայիցն
599 Ե հաճանայն
600 է կարէն] ի կարգէն
601 Եէ պոռնկութիւնն
602 ԴԶ > թէ
603 Ը > հրամանաւք
604 Ը > է
605 Բ ~ գրած է
606 է Լուսաւորչի, Ը Լուսաւորչին
607 է Ավետարան
608 Դ զխորհուրդ
609 Ը > ոչ
610 է խոստովանութիւնն
611 Դ աներն, Զ առնեն
612 Ե մեկն, է > մէկն
613 է այն
614 է տէսդիւր
615 Ե տան, Ը առնակէ] դաստուր տայ
616 Ը այլն
617 Ա > ի
618 է պոռնկութեանն
619 ԴԶ աւր, Ը մահ] մահուն աւրն ի
620 Ը կացցէ

խոստովանահաւուն հրամանաւ[621]: Մեծ ապաշխարութեամբ, պահաւ[622] և արտասուաւ առանձինն սաղմոսէ, առանձինն[623] կարդայ, առանձինն[624] աղաղակէ հանապազ, զինքն յետին ամաւթով մշակ կարդայ[625], մինչ[626] մահուն աւրն գայ, ապա իւր[627] հահանայական կարգովն թաղուի[628] առ Քրիստոս: Ահա, ո՛վ որդեակ[629] իմ, հահանա՛յ[630], թէ[631] գայս ամենայն ոճով կատարէ ի բարին, նա յորժամ գառուն լինի հոգւոց, նա գայն ձայնն լսէ[632], որ ասաց. *«Քահանայք քո զգեցցին*[633] *զարդարութիւն*[634]*, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն*[635]» (Սաղմ. ճԼԱ. 9), կամ[636] գայն հահանայ կրկին պատուոյ[637] արժանի լիցին[638]: Ապա հաւասար եղան[639] հահանայքն, թէ ընկած էր ու թէ չէր, |169ա| որ ի մեղացն հրաժարեաց[640], որ ճշմարիտ ապաշխարեաց[641], որ յունկնդիրսն[642] եկաց ի[643] յայս[644] կեանս և որ յատենին[645]. յետինքն և առաջինքն հասարակ ցնծասցեն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ[646], որ է աւրհնեալ յաւիտեանս:

---

621 Գ > խոստովանահաւուն հրամանաւ
622 Ջ + և աղաւթիւ
623 է առանձին
624 Ե և] առանձինն, է առանձին
625 ԴՋ > առանձինն աղաղակէ հանապազ, զինքն յետին ամաւթով մշակ կարդայ
626 է մինչև
627 Ա իր
628 Ը թաղի
629 ԲԳ որդեաք, է որդեակ
630 ԲԳԵ հահանայ, Դ > հահանայք, է > իմ հահանայք
631 Ե եթէ
632 ԴՋ լսէ
633 է հահանայք fո զգեցին
634 Ե զարդարութիւն
635 է > fո ցնծալով ցնծասցեն
636 է և կամ
637 Ը պատվու
638 Ը եղիցին
639 ԲԸ եղեն
640 ԱԲԳԴԵՋէ > որ ի մեղացն հրաժարեաց
641 Ե ապաշխարեալ
642 ԴՋ ~ յոր ունկնդիրսն, Ե ունկնդիրսն
643 է > ի Ը > եկաց ի
644 ԴՋ այս] ի յայս
645 է աւեին
646 է > Աստուծոյ մերոյ

Այլ գիտացիք[647], աստուածասէ՛ր ժողովուրդք[648], մարդ, որ զհաճանայն ճորով յիւր կամացն հանէ կամ[649] պատրաստ չլինի[650], կամ այն[651] բանն յաւրինաց[652] չլինի[653], ու[654] ժողովուրդն ճորով[655] եկեղեցւոյ գործ տայ գործել, նա պատիժ պատուհասին ելցէ ի գլուխ պարտաւորին[656]. զմեղացն շատ կէսն նա տայ զպատուհասն[657], ապա հաճանայն մահու չափ պիտի պատերազմի[658] ընդդէմ հեթանոսական աշխարհականին: Հեթանոսք, որ զաւրէնս ոչ ունին, բնութեամբ զաւրինացն գործեն: Նոքա, որ զայս բաներս գործեն, այլ շար են, հան զհեթանոսս[659]: |169բ| Եւ ազգապղծութիւնն[660] հան զբաժանիլն այլ ճար[661] չկայ[662], թէպէտև որդեաց[663] և թոռանց տէր է[664] լեալ, որ ապա ի մեղացն ազատին[665], թէ ստոյգ ապաշխարեն: Նոյնպէս յամենայն մեղաց, մինչ ի զատ ոչ կենան, ոչ ազատին[666]: Եւ այրի հաճանայն[667], այն չափ[668] վնաս է ի մէջ աշխարհի կենալ կամ ի շուրջ գալ որպէս[669] կրաւնաւորացն[670]: Նոյնպէս այրի երիցակնոջն[671]: Այս երիս մարդս գրած կայ յաստուածային կանոնին, որ ելանեն յաշխարհէ[672], Քրիստոս կու[673] հրամայէ, և որ յամառեալ մնան սովորականաւ յաշխարհ, նա կու հրամայէ, թէ այն

647 ԴՋ դարձեալ գիտասջիք] այլ գիտացիք
648 է ժողովուրդ
649 ԴՋէ որ] կամ
650 Եէ չի լինի
651 է կամացն] կամ այն
652 ԴՋէ աւրինաց
653 է չի լինի
654 ԴՋէ որ, ե > ու
655 Դ որ
656 Ը է > ելցէ ի գլուխ
657 Ա պատուհասն
658 ԲԳեէ պատերազմիլ, ԴՋ պատերազմել
659 Ը հեթանոսին
660 է ասգայպղծութիւնն, Ը ազգապղծութիւն
661 Ը ճարակ
662 ԴՋ չի կայ
663 ԴՋէ որդոց
664 Ը են
665 Ը ազատի
666 Բ ազատի
667 Բե հաճանայ
668 Ը չափն
669 ԴՋ նոյնպէս
670 Բ կրաւնաւորաց, ե կրօնաւորաց
671 Բ իրիցակնոջն, ԴՋ իրիցակնոջ, է իրիցակինն
672 է աշխարհէ
673 ե > կու

չափն[674] պատուհասի արժանի են[675], որ թէ[676] մահ հանդիպի, չեն արժանի յաւրինել[677] հող թաղելոյ որպէս հրիստոնեայքն[678], թող թէ հահանայական պատուով: Գիտէ, թէ հնարն որ է. որ ասացն[679] այն է, որ աշխարհազումար սով լինի |170ա| կամ սրածութիւն[680], որ յաշխարհ[681] վանք[682] կամ անապատ ոչ գտանի, նա անպարտ[683] է ի պատուհասէն: Մի՞թէ այլ չար աւուրք[684] կայր հան զՔրիստոսին, որ պատուհաս խաչին գրած կայր ի վերայ Նորա, և արիւնք ամենայն[685] ծննդոցս[686] Ադամայ յինքն յանձնէր[687] արարած[688] կամաւ Հաւր և Հոգւոյն[689]. նա ցերեկն[690] զաշխարհ[691] ուսուցանէր, և զաստուածահաւաշ բժշկութիւնն կատարէր[692], և զգիշերն վասն աղաւթից ի լերունքն առանձնանայր: Եթէ ասեն այրի[693] հահանայքն և երիցակինն[694], թէ տուն ունիմք և դառն որբեր, գիտեմ և ես, մինչ աստուածաբաժինք չէիք, ի վայրս աւրեաց Աստուած զձեր տունն, այդչափ ուզէր չէն, զձեր բունն ի Վերինն երուսաղէմ շինեցէք[695] և վասն որբերուն ասէ՝ որբոյն տէրն Աստուած է, և վասն որբոյն այն չափ կայ հրաման, մինչ յարենէ փրկին: Երբ վաստակաւոր

674 ԴՋ այնչափ
675 Ե արժանին] արժանի են
676 ԵՐ եթէ
677 ԴԵՋՐ յաւրինեալ
678 ԴՋ > որպէս հրիստոնեայքն
679 Ա ացն, ԴՋ անձն
680 է սրածութիւնն
681 Ջ յաշխարհաց, Ր յաշխարհս
682 է աշխարհավանք] յաշխարհ վանք
683 Բ անգարտ, Ե անապատ] նա անպարտ
684 է ուրուք
685 է արիւն յամենայն] արիւնք ամենայն
686 Ա ծնննդոց, Ե ծնննդոցն
687 Ե անձնէր
688 ԴՋ առ Աստուած
689 Ր Հոգւոյ
690 Ա ցերեաքն, Ր ցերեակն
691 ՐէՋ զաշխարհս
692 Ա > զաստուածահաւաշ բժշկութիւնն կատարէր
693 ԱՐ այր
694 Գե իրիցակինն
695 ԲԳԴՋէՐ ~ Աստուած զձեր տունն այդ չափ ուզէր չէն, մինչ աստուածաբաժինք չէիք, ի վայրս աւրեաց Աստուած, զձեր բունն ի Վերինն երուսաղէմ շինեցէք, Ե զձեր տունն այդչափ ուզէր չէն, մինչ աստուածաբաժինքն չէիք, ի վայրս աւրեաց Աստուած, զձեր տունն ի Վերինն երուսաղէմ շինեցէք

լինին[696] շատ կամ սակաւ, դուք |170բ| ազատ էք[697] անպատճառ: Այրի[698] իրիցակինն[699] ի կանանց վանս[700] երթիցէ, և այրի[701] երէցն[702] ի[703] հարանց[704], զի ի[705] կրաւնաւորի կարգէն[706] են, և[707] կրաւնաւորք խաչակցեալ[708] են ընդ Քրիստոսի: Զայն լսելոց էք[709] ի Քրիստոսէ, որ ասէ. *«Ուր[710] են եմ, անդ[711] և պաշտաւնեայն[712] իմ եղիցի[713]»* (Յովհ. ԺԲ. 26): Ահա կրաւնաւորք և այրի[714] հահանայք[715], թէ թողիք զաշխարհս, առիք զձեր բաժինն: Երանի է ձեզ[716], զոր[717] վայելեցէք[718] ի փառս Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեան. ամէն:

Ահա աստուածասէր որդեակք իմ, կրաւնաւո՛րք[719], հահանա՛յք և ժողովո՛ւրդք[720] իմ, զի մի[721] մի ի ձէնջ անխարդախ խրատեցաք[722] սիրովն Աստուծոյ սակաւիկ մի, զոր ի[723] մեր տկարութենէս ելաւ, և Սուրբ Երորդութեանն լսելիք և առնելիք պատրաստէ[724] ձեզ[725] ամէն[726]: Ես չեմ

---

696 ԴՋէ լինի
697 Դ ազատեցէք] ազատ էք
698 Գ և այրի
699 Զ իրիցկինն, է էրէցկինն, Տ երիցակինն
700 Ը վանսն
701 Ե աւրի
702 ԴՋ էրէցն
703 ԴՋէ > ի
704 Տ + վանս
705 է > ի
706 Ա կարգէ, Դէ կարգին, Ը կարգ
707 Ա > և
708 Զէ խաչակիցք
709 Դ լսեցէք] լսելոց էք
710 Ա որ
711 ԲԳ անտ
712 ԲԳ պաշտաւնայն, Ե պաշտօնեան
713 է > եղիցի
714 Բ այր
715 Ը + և իրիցակին
716 ԱԲԳԴԵՋէ > զձեզ
717 Ա զի, է որ, Ը > զոր
718 Բ վայելոց եք, ԴՋէ վայելեցիք
719 Ե կանաւորք, Ը կրօնաւոր
720 Ը ժողովուրդ
721 ԲԳԴԵՋէ զմի] զի մի
722 Ե խրատեցէք
723 ԴՋ > մի ի ձէնջ անխարդախ խրատեցաք սիրովն Աստուծոյ սակաւիկ մի, զոր ի
724 ԴՋ առնելիքն պատրաստեցէք] առնելիք պատրաստէ
725 ԲԳԵՏէԸ ձեզ
726 ԴՋ > ամէն

կարող, որ զամ առ աստուածսիրութիւնդ ձեր, զի յոյժ փափաք ունիմ ձեզ[727]: Վասն այնորիկ գրեցի զգիրս ճարոզիս և[728] կանոնացս, զի դուք[729] ապրեսջիք յահեղ ատենին, զի ես ծեր եմ և ոչ եմ կարաւղ և[730] կու[731] վախեմ գալ ի բոն|171ա|ութենէ այլազգեաց[732]: Եւ երկնչիմ յԱստուծոյ[733], եթէ[734] զայս տիեզերական ֆանֆարս[735] աստուածային թէ ի գործ չածեմ ի ձեզ, պահանջելոց է[736] յինէն Աստուած[737]: Իմ ծերութեան ալիքս ի ձեզ բարեխաւս, վասն Աստուծոյ սիրոյն աղաչեմ զֆահանայիդ[738], որ զայս սակաւ խրատս յամենայն[739] գեղ[740] և ի ֆաղաքի յեկեղեցիդ[741] կարդայք առաջի[742] ժողովրդեանդ[743], որ[744] լսեն և աւգտին[745], ձեզ այլ վարձ է[746]: Կու[747] ճրամայէ առաքեալն Պաւղոս, թէ՝ *«Այս է*[748] *գիր ձեռին իմոյ Պաւղոսի*[749]» (ճմմտ. Ա. Կորնթ. ԺԶ. 22, Բ. Թես. Գ. 17): Նոյնպէս և ես ասեմ. «Այս է[750] գիր[751] ձեռին իմոյ[752], ի[753] նուաստ Կիրակոս վարդապետէ[754] եզնկացւոյ[755], մայրաքա-

727 ԱԲԳԴԵԶԷ > ես չեմ կարող… ունիմ ձեզ
728 ԶԷ ի] և
729 Ա դու
730 ԴԶ > և
731 Ե > կու
732 Է այլազգաց
733 ԴԶ ի Աստուծոյ, Է Աստուծոյ
734 Է թէ
735 Ե ֆանֆարն
736 Զ պահանջելոցն ի
737 ԱԲԳԴԵԶԷ > Աստուած
738 Ը զֆահանայիդ
739 Է յամենայն] ի
740 Ը գեղ
741 ԲԳԴԶԷ եկեղեցիս, Ե եկեղեցիս, Ը եկեղեցիդ
742 Ե + ամենայն
743 ԴԶ ժողովրդեանն, Է ժողովրդեան
744 Է և] որ
745 Ա աւգտին
746 Է են
747 Ե և ձեզ այլ վարձս, որպէս և] ձեզ այլ վարձ է: Կու
748 ԴԶԷ > Է
749 ԴԶ +է, Ե Տիմոյթէ, Է Պօղոսի
750 ԲԵԶԷ > ի
751 Ե + ի
752 Է+ է
753 Ը > ի
754 Ը վարդապետի
755 ԴԶԷ վարդապետին է] վարդապետէ

ղաֆիս[756] Հայոց Լուսաւորչի[757] գաւառիս[758] գրեցաք առ աստուածապահ ժողովուրդ[759], ուր և հասանի[760]»: Աղաչեմ զձեզ, հրիստոնեա՛յք, յորժամ գիտենայք եթէ երէց[761] է, եթէ աբեղայ[762], որ ի ձեր մէջդ[763] բնակեալ[764] են, ի[765] վեր[766] ի |171բ| յԱստուած[767] կու նային և վար[768]՝ ի ձեզ: Վասն սիրոյն Քրիստոսի պէտ[769] կալէք[770], զինչ[771] ի[772] ձեր կարողութենէդ ելանէ, որ աղաւթիցն[773] և[774] պատարագացն[775] և[776] սաղմոսացն[777] մասնակից լինիք դուք և ձեր ննջեցեալքն: Աղաչեմ զձեզ՝ որոյ[778] շինելով, որոյ[779] կերակրելով, որոյ[780] հանդերձիւք[781], որու[782] սպասիւ և գրաւ[783] եկեղեցւոյ՝ զոմանս մխիթարելով, զոմանս յորդորելով: Եւ ժողովուրդք[784] հնազանդ[785] հաճանայիցդ[786]՝ զինչ Աստուծոյ: Եւ դոքա[787] Աստուծոյ աւրինաւքն խրատեն զձեզ, որ ապա[788]

---

756 Բ > վարդապետէ եզնկացոյ մայրաքաղաքիս, ե մայրաքաղաքի
757 ԳԴՋՏԷԸ Լուսաւորիչ
758 Բե ~ Հայոց Լուսաւորչի գաւառիս
759 ԲԳե ժողովուրդս, է ժողովուրդ, Ը + մեր
760 Դջ + առ աստուածսիրութիւնդ ձեր, իմանալ և ի միտ առնուլ, Ը > ուր և հասանի
761 Դջէ թէ էրէց] եթէ երէց
762 Ը տեսանէք զկրօնաւորս ի յանապատի և զհաճանայս] զիտենայք եթէ երէց է, եթէ աբեղայ
763 Դջ մէջն, ե + էն
764 ԱԲԳ բնակել
765 Ը > ի
766 է վերն
767 է Աստուած
768 ԱԸ վայր] վար
769 Գ պիտ
770 ե ի պէտս կալարուք և] պէտ կալէք
771 է + որ
772 Ջ որ
773 ԴՋ յաղաւթիցն
774 Ը ու
775 Դ պատարագուցն, ե պատարագաց
776 ԳԷԸ ու
777 Ա սաղմոսից, ե սաղմոսաց, Ը սաղմոսիցն
778 ԱԸ որու
779 ԱԸ որու
780 ԱԸ որու, ե և
781 ԴՋԸ հանդերձիւ, է հանդերձս
782 Ա որու, ԵԸ > որոյ, է որ
783 ե գրովք
784 Ը ժողովուրդքս
785 ԴՋ > հնազանդ
786 Ը հաճանայիցս
787 Ը հաճանայդ
788 Ը յապա

երկիրդ ձեր շէն կենայ, և ցասումն[789] վերանան: Եւ դուք ձեր ննջեցեալսն[790] աղաւթիցն[791] և պատարագացն[792] մասնակից լինիք, որ զայն լսէ[793] ի Քրիստոսէ, որ[794] ասաց աշակերտացն. *«Որ արբուսցէ ձեզ բաժակ մի ջուր ցուրտ*[795]*, ոչ կորուսցէ*[796] *զվարձս իւր*[797]*»* (Մարկ. Թ. 40): Եւ[798] Տէրն ասէ. *«Որ զձեզ ընդունի, զիս |172ա| ընդունի, և որ*[799] *զձեզ անարգէ, զիս անարգէ, և որ զիս անարգէ*[800]*, զառաքիչն իմ*[801] *անարգէ*[802]*»* (Ղուկ. Ժ. 16):

Գիտացիք Հրիստոնեայք[803], որ զինչ[804] հաճանայից ու[805] աղաւթաւորաց առնէք[806], Քրիստոսի ու[807] Հաւր Աստուծոյ է: Այլ գիտացիք, աստուածասէրք հաճանայք և ժողովուրդ[808]. տեղ[809] որ աւերի, ի՞նչ է պատճառն. այն է՝ որ կերակուր ի տանէ Տեառն պակասի[810]: Ո՞ր[811] է կերակուրն[812]՝ ժամն է[813], պատարագն[814], աղաւթքն: Գրոց աթոռն կործանի, հարոզն պակասի, հաճանայից պտուղն պակասի, ողորմութիւնն[815] նուազի[816]: Քահանայք անճարակին, թողուն զտուն Տեառն, որ է եկեղեցի, ի գործ աշխարհի մշակութիւն[817]

789 Գ ցասումնիւն, Ջ ցասմունք, է ցավք
790 ԴՋ ննջեցելովն
791 ԱՐ աղաւթից
792 Ր պատարագաց
793 է լսէ
794 Դ > որ
795 ԲԳԵ > ցուրտ, Ր ցրտիւ ջուր բաժակաւ] բաժակ մի ջուր ցուրտ
796 ԲԳԵԷՐ կորուսից
797 ԲԳԵԷ նորա, Ր նոցա
798 ԴՋ դարձեալ
799 է > որ
800 ԵԷ > և որ զիս անարգէ
801 ԴՋ > իմ
802 Ա > և որ զիս անարգէ, զառաքիչն Իմ անարգէ
803 ԱԲԳԴԵՋԷ > Հրիստոնեայք
804 Ե ինչ
805 ԱԲԳԴԵՋԷ > հաճանայից ու
806 է + ի
807 ԴՋԷ > ու, Ե և
808 ԱԲԳԴԵՋԷ > հաճանայք և ժողովուրդ
809 ԴՋԷ որտեղ
810 Գ պակասէ, Ե պակասին, Ր կու պակասի
811 ՋՐ որն
812 ԲԳԵ ո՞րն կերակուր] ո՞ր է կերակուրն, է որն, Ր + այն է
813 ԲԳՋԵՋԷՐ + և, Ր > է
814 ԲԳԴԵՋԷ + և
815 Գ ողորմութիւն
816 ԲԳԴՋԷ սպառի, Ե սառի, Ր պակասի
817 է մշակութիւնն, Ր մշակութեան

մտանեն[818] իբրև զաշխարհական[819]: Ամենայն մեղաց համբերէ Աստուած մինչ ի դատաստանն. այս, որ ոչ ասէ՝ դուք զԻմն[820] կտրեցիք, և ես՝ զձեռն. կամ սով բերէ, կամ սուր, կամ կարկտիւ հարկանէ[821], կամ չեկ ու ցասումն պտղոց, կամ այլ ինչ և fակէ զտեղն[822] ի հիմանց[823], զմարդ և |172բ| զանասուն, զհող և[824] զfար կտրէ[825] բարկութեամբ[826]: Աչն հայրական և[827] ամենայն սուրբ Իւր բառնան զինչ ցասումն կայ ի նէնջ[828]:

Աւրհնեալ եղերո՛ւմ ի շնորհաց Սուրբ Հոգւոյն[829]:

BISHOP ZACHARIA BAGHUMYAN

THE LITURGICAL-CANONICAL LETTER OF KIRAKOS OF ERZNKA AND SPIRITUAL-POLITICAL ISSUES OF THE TIME

Keywords: Kirakos of Erznka, chief-doctor, liturgical-canonical letter, faith, good deeds, repentance, confession of sins, father confessor, sacraments of Church, Liturgy of the Hours.

One of the prized works of Kirakos of Erznka is the canonical-liturgical letter that begins with the words ‘From Almighty God’. It is addressed to his spiritual children – priests, monks and the entire community, regardless of age or gender.

The letter is characterized by its moral and didactic, as well as canonical and liturgical nature. Its purpose is to admonish them by emphasizing the importance of faith, repentance, confessing sins, spiritual fatherhood, the mystery of the Divine Liturgy, and participating in the Church’s liturgical life. It also speaks out against various sins and reprehensible practices.

---

818 Ա.Ր մտեն
819 է աշխարհական
820 Ր զիմնն
821 Ր > կամ կարկտիւ հարկանէ
822 Ա.Գ զտեղին
823 Ր + և
824 է > և
825 Ր կրտէ
826 Ա ի բարկութիւն] բարկութեամբ
827 է > և
828 Զ ~ բառնան ի նէնջ զինչ ցասում կայ, + և Քրիստոսի փառ, յափտեանս. ամէն, է բառնան ի նէնջ զինչ ցասում կայ ամէն
829 Գ + յափտեանս. ամէն, Դ և Քրիստոսի փառ, փառ յափտեանս. ամէն] ի նէնջ: Աւրհնեալ եղերո՛ւմ ի շնորհաց Ս. Հոգւոյն, Ե + եղիջ. ամէն, է > Աւրհնեալ եղերո՛ւմ ի շնորհաց Ս. Հոգւոյն, Ր + ողջ լերուս

The author is particularly strict with priests, urging them to remain faithful to their vocation and mission. He exhorts them to observe ecclesiastical canons zealously and to perform sacraments, rites, and feasts with integrity, without deviation.

His reflections on active and widowed priests, as well as defrocked clergy and priests' wives, are of particular interest.

Likewise, Kirakos of Erznka harshly condemns blasphemers and thieves.

ЕПИСКОП ЗАХАРИЯ БАГУМЯН

ЛИТУРГИКО-КАНОНИЧЕСКОЕ ПОСЛАНИЕ КИРАКОСА ЕРЗНКАЦИ И ДУХОВНО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ЭПОХИ

Ключевые слова: Киракос Ерзнкаци, верховный архимандрит, литургико-каноническое послание, вера, добрые дела, покаяние, исповедь грехов, духовник, таинства Церкви, богослужение.

Одно из важных произведений Киракоса Ерзнкаци – литургико-каноническое послание, начинающееся словами «От Всемогущего Бога». Оно адресовано его духовным чадам – священникам, монашествующим и всему народу, независимо от возраста и пола.

Послание отличается нравоучительным и литургико-каноническим характером. Его целью является наставление адресатов по вопросам веры, покаяния, исповедания грехов, значению духовника, таинства Святой Литургии, необходимости участия в литургической жизни; в нем также рассматриваются различные грехи и пороки.

Особо строг автор со священниками: он призывает их оставаться верными своему призванию, следовать церковным канонам, безупречно совершать таинства и обряды и соблюдать праздники. Представляют интерес размышления Киракоса о действующих и вдовствующих, а также расстриженных священниках и их матушках.

ՄԵՐԻ ՔԵՇԻՇՅԱՆ*

ՄԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

DOI: 10.57155/KKEV2558

ԱՐՎԵՍՏԱԲԱՆ ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ. «ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ»

Բանալի բառեր՝ *Սահակ Ծաղկարար, էջմիածին, Սերիկ Դավթյան, հայկական որդան կարմիր, ներկ, ասեղնագործություն, Մատենադարան, արվեստ, զարդանախշ, Դիլիջան:*

Եւ մինչ պատրաստեցի նիւթն ի վերայ մարմարիոն քարին,
առի զսուրբ Նարեկն ձեռս իմ եւ բացի ձեռնարկութեան
Նարեկն Ջե գլուխն, բացի եւ սկսայ օրհնել եւ ասել զաղօթսն
եւ ասացի Սրբոյն Գրիգոր Նարեկացոյն. «ու զգործս ձեռաց
մերոց ուղիղ արարեա, պահպանիչ ի վերայ գործոյն եւ անձին իմոյ»[1]*:*
Սահակ Ծաղկարար

Ներածություն

Սերիկ Դավթյանի «Սահակ Ծաղկարար» մինչ այժմ անհայտ ուսումնասիրությունը Ս. էջմիածնի միաբան, 19-րդ դարի շնորհալի և բազմեռանդ ծաղկող վարպետ Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյանի՝ Սահակ (Խահակ-Սհակ) Ծաղկարարի[2] *մասին է, որի անունը և գործը, հատկապես գեղեցիկ ծաղկանկարնե-*

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիտաշխատող, marykeshishian@mail.ru,
հոդվածը ստանալու օրը՝ 10 դեկտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 8 մայիսի, 2026:
** Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, լաբորանտ, martirosyanmery04@gmail.com,
հոդվածը ստանալու օրը՝ 10 դեկտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 8 մայիսի, 2026:

1 **Սահակ եպիսկոպոս Տէր-Գրիգորեան (Ծաղկարար)**, «Բազմավէպ», *էջմիածին,* 1964, թիվ Ա, էջ 37:

2 Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգոյանը ծնվել է 1780 թ. Երևանում, Մահտեսի Տ. Գրիգոր Բահանայի ընտանիքում: Հայրը ուխտում է որդուն նվիրել Մայր Աթոռին: Դուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի օրոք (1780-1799 թթ.), 17 տարեկան հասակում, նա որդուն տանում է

րը, իր ժամանակին մեծ ճանաչում են ունեցել: Հոգևոր գործունեությանը զուգահեռ, նա ասեղնագործության և կտորներ ծաղկելու համար նկարներ է գծել և զարդանկարներ արել: Մեծ է Սահակ Ծաղկարարի ավանդը հատկապես որդան կարմիրի հավաքման և ներկի պատրաստման գործում. նա նաև բնագետ էր և այդ ասպարեզի լավագույն մասնագետ: Նա այն քիչ հեղինակներից է, որն ինքնակենսագրական տեղեկություններ է հաղորդում, անդրադառնալով նաև ժամանակի կարևոր դեպքերին և անձերին:

Անտիպ հոդվածը 2021 թ. ապրիլին Սերիկ Դավթյանի տնային արխիվում հայտնաբերել է արվեստաբանի կենսագիր Մերի Քեշիշյանը (ի թիվս Սերիկ Դավթյանի այլ անտիպ աշխատությունների): Նույն տարվա սեպտեմբերին այն հանձնվել է Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահին, համալրելով անվանի գիտնականի անձնական արխիվը:

Տարբեր հեղինակներ անդրադարձել են Սահակ Ծաղկարարի կենսագրության դրվագներին, դիտելով նրան որպես որդան կարմիր ներկի ուսումնասիրողի և այդ ուղղությամբ քիմիական փորձեր կատարողի, բնագետի և ձեռագրեր ծաղկողի: Այդ առումով Սերիկ Դավթյանը բացառություն է, նա շեշտադրումը կատարում է հատկապես դեկորատիվ-կիրառական արվեստի մի ճյուղի՝ ասեղնագործության բնագավառում Սահակ Ծաղկարարի թողած ժառանգության վրա: Արվեստաբանը բարձր է գնահատում նրան ոչ միայն որպես շնորհալի և սակավապետ մարդու, այլև արժևորում է նրա մասնագիտական կարողությունները, որի երևակայությունը խորն է, ոճը և գույնը գեղեցիկ, իսկ աշխարհընկալումը զատորոշվում է մյուս միաբաններից: Ջուգահեռաբար, ընդհանուր գծերով հյուսում է Ծաղկարարի կյանքի կարևոր դրվագները:

Հոդվածի ձեռագիրը կամ դրա սևագիր օրինակը չի գտնվել: Սերիկ Դավթյանն աշխատել է միայն մեքենագիր տարբերակով (սրբագրումներն արված են այդ օրինակի վրա): Տեքստը բերված չէր ավարտուն տեսքի: Գիտնականի արխիվում՝ առանձին թերթիկների վրա և տետրերում, հանդիպում են Սահակ Ծաղկարարին առնչվող այլ նշումներ և գրառումներ:

Ս. Էջմիածին՝ ուսանելու: Սահակն այստեղ մնում և ծառայում է 61 տարի, մինչ իր մահը՝ 1858 թ.: Դավիթ Ե Էնեգեթցի (1801-1807 թթ.) կաթողիկոսի կարգադրությամբ, որպես ուշիմ աշակերտի, Սահակին սովորելու են հանձնում վաղարշապատցի ոսկերիչ և ծաղկարար Տեր Հովհան Բահանային (Ոսկեչյան), Սահակ Ծաղկարարն իրեն համարում է նաև Մկրտում Հովնաթանյանի աշակերտը: Միաբանի կյանքի ժամանակը համընկել է Մայր Աթոռի ամենածանր օրերին՝ Դավիթ-Դանիելյան կաթողիկոսների վեճերի շրջանին, ինչպես նաև ռուս-պարսկական պատերազմների տարիներին:

Սերիկ Դավթյանի կենսագրական և մասնագիտական գործունեության շուրջ

Սերիկ Դավթյանը (ծնվ. 1893 թ. 18 սեպտեմբերի, Դիլիջան – մահ. 1978 թ., 14 փետրվարի, Երևան, թաղված է Դիլիջանում) հայագիտության և կիրառական արվեստի մասնագիտական բնագավառի ավագ սերնդի կարկառուն դեմքերից է, արվեստի և արվեստագիտության ոլորտի փորձառու մասնագետ, ականավոր արվեստաբան, ազգագրագետ, Հայաստանի Արվեստի վաստակավոր գործիչ, մանկավարժ, պետական-հասարակական գործիչ:

1906-1913 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Թիֆլիսի երրորդ օրիորդաց գիմնազիան, 1914 թ.՝ գիմնազիայի մանկավարժական դասարանը: Այդ տարիներից մտերմացել է բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և նրա ընտանիքի հետ, բարեկամությունը պահելով ողջ կյանքի ընթացքում:

1914-1920 թթ. դասավանդել է Դիլիջանի, Բաքվի, Սարատովի հայկական և ռուսական դպրոցներում: 1915 թ. մասնակցել է Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականների, հատկապես որբերի հավաքման և խնամքի աշխատանքներին: 1919-1920 թթ. սովորել է Սարատովի համալսարանի պատմա-լեզվագրական ֆակուլտետում, որտեղ աշակերտել է անվանի ազգագրագետ, Սարատովի Հայրենագիտական թանգարանի հիմնադիր-տնօրեն Բորիս Սոկոլովին: 1920 թ., ուսումը կիսատ թողնելով, վերադարձել է Հայաստան:

1920-ական թթ. արդեն Խորհրդային Հայաստանում, Սերիկ Դավթյանը մանկավարժական աշխատանքը զուգակցել է հասարակական և պետական գործունեության հետ, աշխատել ժողովրդական կրթության բնագավառում, ապա՝ պետական կառավարման համակարգում: Նշանավոր հոգեբան, մանկավարժ Գուրգեն Էդիլյանի խորհրդով, նախ՝ Դիլիջանի գիմնազիայում ռուսաց լեզվի և գրականության դասեր է վարել, իսկ 1920-21 թթ. քաղաքային գրադարանում ստեղծել Դիլիջանի առաջին գավառագիտական թանգարանը: Նույն տարիներին Սերիկ Դավթյանի շնորհիվ Դիլիջանում բացվել են առաջին մանկապարտեզները:

1920-ական թթ. սկզբին ղեկավարել է Էջմիածնի և Դիլիջանի ժողովրդական կրթության բաժինները, 1925-1934 թթ.՝ եղել է Երևանի Լուսժողկոմի տեղակալը:

Սերիկ Դավթյանին միշտ հետաքրքրել են Խորհրդային Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին մտահոգող հարցերը, հատկապես կրթական ոլորտի: Անգրագիտության վերացման նպատակով, նրա անմիջական մասնակցությամբ և ջանքով, 1921 թ. հոկտեմբերին Էջմիածնի տպարանում

լույս է տեսել քրդերեն առաջին այբբենարանը՝ «Շամս»-ը («Արև»), որի հեղինակը քրդագետ Լազոն էր (Հակոբ Ղազարյան)։ Սերիկ Դավթյանի շնորհիվ Հայաստանի քրդաբնակ շրջաններում բացվել են առաջին քրդական դպրոցները, հիմնադրվել թերթեր։

1933-1936 թթ. Սերիկ Դավթյանը Սարատովում կիսատ թողած ուսումը շարունակել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում։

1934-1937 թթ. ղեկավարել է ՀԿ(բ)Կ ԿԿ Կուլտպրոպագանդայի և դպրոցական բաժինը, միաժամանակ եղել Երևանի քաղաքային խորհրդի ժողկրթության բաժնի վարիչը։

1937 թ. օգոստոսի 4-ին ձերբակալվել է որպես ժողովրդի թշնամի, դատապարտվել 10 տարի ազատազրկման և 5 տարի քաղաքացիական իրավունքի զրկման։ Ազատազրկման տարիներն անցկացրել է Երևանի, Վլադիմիրի, Սուզդալի, Կազանի, Վլադիվոստոկի բանտերում, իսկ 1939 թ. աքսորվել Մագադան։ Մաքառման այդ տարիներին, բռնադատվածների ճամբարում տաժանակիր զանազան աշխատանքներ է կատարել (շինարարություն և բեռնակրություն), որից հետո աշխատել է ճամբարի կարի արտադրամասում։ Տեսնելով նրա ասեղնագործ աշխատանքները՝ Սերիկ Դավթյանին տեղափոխել են ասեղնագործության արհեստանոց, որտեղ բանտի ղեկավարության ընտանիքի անդամների համար զանազան ասեղնագործություններ էին անում։ Ջուգահեռ աշխատել է նաև ճամբարային հիվանդանոցում։

Կալանքի ժամկետը լրանալուց հետո, 1946 թ. նոյեմբերի վերջին Սերիկ Դավթյանը վերադարձել է աքսորավայրից։ Ըստ սահմանված օրենքի՝ բռնադատված անձը զրկված էր մայրաքաղաքում բնակվելու իրավունքից։ Բնակվում և աշխատում է ծննդավայր Դիլիջանում, որտեղ 10 տարի ղեկավարել է Դիլիջանի Ղազարոս Աղայանի անվան քաղաքային գրադարանը։ Նրա շնորհիվ, կարճ ժամանակում, գրադարանը դարձել է հանրապետության առաջատար մշակութային կենտրոններից մեկը, որտեղ աղջիկների համար բացել է ասեղնագործության խմբակ, միաժամանակ դասավանդել և նյութեր է հավաքել իր ապագա աշխատությունների համար։ Անտեսելով սահմանափակումները, նա կարողացել է Դիլիջանից գաղտնի հասնել Երևան, որպեսզի իրեն հետաքրքրող նյութերը հավաքի և կարդա՝ Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում և Հանրային (այժմ Ազգային) գրադարանում։

1956 թ. վերջնականապես արդարացվել է և Երևանում ապրելու թույլտվություն ստացել։ Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանի հրավերով

1958 թ. աշխատանքի է անցել ինստիտուտում, որտեղ մինչև 1978 թ. ղեկավարել է Դեկորատիվ-կիրառական արվեստի բաժինը:

Ասեղնագործության մասնագիտական ոլորտում եզակիորեն քիչ է պատահում, որ ստեղծագործողը նաև ուսումնասիրող լինի: Այս պարագայում վաստակաշատ գիտնականն առանձնանում է և՛ որպես ստեղծագործող վարպետ, և՛ որպես գիտնական-արվեստաբան, հմուտ և բանիմաց ազգագրագետ:

Տարիներ շարունակ Սերիկ Դավթյանը ջանասիրությամբ հավաքել, կրկնօրինակել և մանրամասն ուսումնասիրել է հայ վարպետների ձեռագործ արժեքները (գորգեր, կարպետներ, ասեղնագործ աշխատանքներ, ժանյակներ) ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի չորս ծագերում ապրող հայերից, օգտագործել դրանք իր գիտական աշխատանքներում, առանձնացրել ու բնորոշել նախշերի, դրանց տարատեսակների, գույների և ոճի բազմաթիվ ձևերը, որոնցով աշխատել է հայ կինը: Սերիկ Դավթյանի նախաձեռնությամբ, Խորհրդային Հայաստանի տարբեր բնակավայրերում հիմնվում են ձեռագործի խմբակներ (Երևան, Էջմիածին, Դիլիջան, Վանաձոր, Գյումրի, Սևան):

Սերիկ Դավթյանն ուսումնասիրել է միջնադարյան հայ մանրանկարչությունը, ոսկերչությունը, փայտագործությունը, ճարտարապետությունը, խաչքարային զարդարվեստը և քանդակը, վստահ լինելով, որ ասեղնագործությունն իր ներքին բովանդակությամբ և ոճով ընդհանրություն ունի արվեստի այս ճյուղերի հետ: Արդյունքում լույս են տեսել հայկական ասեղնագործությանը, ժանյակին, գորգին և կարպետին վերաբերող նրա հոդվածներն ու մենագրությունները՝ «Հայկական ժանյակ» (1966 թ.), «Հայկական ասեղնագործություն» (1972 թ.), «Հայկական կարպետ» (1975 թ.), «Մարաշի ասեղնագործություն» (1978 թ.), «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» (1981 թ.):

1963 թ. 70-ամյա Սերիկ Դավթյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն արվեստագիտության գծով՝ «Ակնարկներ հայկական ասեղնագործ արվեստի պատմությունից» թեմայով:

Տարիներ շարունակ թղթակցել է «Սովետական մանկավարժ», «Հայաստանի աշխատավորուհի», «Սովետական Հայաստան» ամսագրերին, քաղաքային և հանրապետական թերթերին (հատկապես իր ծննդավայրի «Դիլիջան» թերթին), բազմաթիվ հանդիպումներ է ունեցել տարբեր քաղաքների և գյուղերի մշակույթի տների, ասեղնագործության խմբակների անդամների, դպրոցականների հետ, որոնց պատմել է հայ ձեռագործ արվեստի մասին, ծանոթացրել դրա հմտություններին:

1967 թ. Սերիկ Դավթյանին շնորհվել է Հայկական ՍՍՀ Մշակույթի վաստակավոր գործչի և Ինքնագործ արվեստի Համամիութենական փառատոնի դափնեկրի կոչում, նա արժանացել է ԽՍՀՄ «Աշխատանքային Կարմիր դրոշ»-ի շքանշանի և Խաչատուր Աբովյանի անվան մեդալի:

Նրա ասեղնագործ աշխատանքները և հավաքածուները պահվում և ցուցադրվում են Հայաստանի Հանրապետության տարբեր թանգարաններում, հատկապես Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահում և ժողովրդական արվեստների թանգարանի Դիլիջանի մասնաճյուղում:

Սերիկ Դավթյանի «Սահակ Ծաղկարար» հոդվածի, դրա թվագրման և ուսումնասիրությանն առնչվող հարցերի շուրջ

Մեր միջամտությունները Սերիկ Դավթյանի «Սահակ Ծաղկարար» հոդվածի բնագրին աննշան են (որոշ օտար, սակայն գործածելի եզրույթների համար կիրառել ենք դրանց համարժեք հայերեն տարբերակը, շտկել կետադրությունը): Քառակուսի փակագծերի մեջ ավելացրել ենք Սահակ Ծաղկարարի ձեռագրերից արված մեջբերումների բաց թողնված հատվածներն ու էջերը, որոնք հեղինակը չի հասցրել նշել: Շտկել ենք որոշ անճշտություններ և վրիպակներ: Տողատակերի ծանոթագրությունները մերն են: Սահակ Ծաղկարարից մեջբերումները ներկայացրել ենք թավ տառատեսակով:

Սերիկ Դավթյանի արխիվում չեն պահպանվել Սահակ Ծաղկարարի զարդանախշերից արված լուսանկարների օրինակները, որոնց նկարագրությանը նա անդրադարձել է: Սահակ Ծաղկարարի ծաղկանկարները տեղադրել ենք մենք՝ ըստ շարադրանքի տրամաբանության:

Հոդվածն անթվակիր է: Տեքստի բովանդակությունը և հղված գրականության ցանկը թույլ է տալիս մոտավոր որոշել ժամանակագրությունը: Հենվելով փաստերի վրա՝ ենթադրելի է, որ Սերիկ Դավթյանն այն գրել է 1957-1958 թթ.:

Հիմնավորումներից առաջինն այն է, որ հոդվածում Սերիկ Դավթյանը վկայակոչել է միայն Հայր Ղևոնդ Ալիշանի[3], աղբյուրագետ, բանասեր Լևոն Մելիք-սեթ-Բեկի[4] և քիմիագետ Տիրան Ղազանչյանի[5] ուսումնասիրությունները, որոնք

---

[3] **Ղևոնդ Ալիշան**, *Այրարատ (Բնաշխարհ Հայաստանեայց տեղագրաց)*, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 483-485:

[4] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Հայաստանում ոռոգման ներկի արտադրության պատմությունից», *ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների*, Երևան, 1946, № 2-3, էջ 17-26:

[5] **Տ. Ղազանչյան**, «Սահակ Ծաղկարար», *ԲՄ* 3, 1956, էջ 131-139:



Սերիկ Դավթյան, 1958 թ.

լույս են տեսել 1890, 1946 և 1956 թթ.: Այսինքն, հեղինակն օգտվել է միայն իրեն հայտնի և մինչ այդ հրատարակված աղբյուրներից: Սերիկ Դավթյանը ծանոթ չի եղել 1959 թ. տպագրված Վահան Վարդապետ Տերյանի՝ «Ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյան» հոդվածին[6], այլապես, որպես իրեն հետաքրքրող ուսումնասիրություն՝ կնշեր նաև այդ աղբյուրը: Սա կրկին հիմնավորում ենք այն եզրակացությամբ, որ շարադրանքը գրվել է 1957-1958 թթ. միջանկյալ ժամանակաընթացքում:

***

Սերիկ Դավթյանի հոդվածը անհասանելի է եղել գիտական հանրությանը և դուրս է մնացել Սահակ Ծաղկարարին վերաբերվող ուսումնասիրությունների շարքից: Ակնհայտ է, որ ժամանակի ընթացքում Սահակ Ծաղկարարի գործի և անձի մասին հետաքրքրությունը մեծացել է: Հրապարակվել են նոր ուսումնասիրություններ, նրա մասին հետաքրքիր տեսակետներ ու կարծիքներ են հայտնում այլ հեղինակներ[7]:

Նկատենք, որ ավելի վաղ ժամանակներում Սահակ Ծաղկարարի գործունեությամբ հետաքրքրված է եղել նաև Միքայել Նալբանդյանը, կարևորելով նրա

---

6 **Վահան Վարդապետ Տերյան**, «Ծաղկարար Սահակ եպիսկոպոս Տեր-Գրիգորյան», *էջմիածին*, 1959, թիվ ե, էջ 34-40:

7 **Վ. Ա. Աբրահամյան**, «Թղթի գործարան Հայաստանում», *Հայկ. ՍՍՌ ժողկոմսովետին կից պետական ձեռագրատան (Մատենադարան) գիտական նյութերի ժողովածու*, № 1, 1941, էջ 61-72, **Ա. Բ. Գևորգյան**, «Ինչպես էին նկարազարդվում ձեռագրերը», *Բեհ*, № 2, 1991, էջ 68-73, **նույնի՝** *Հայ մանրանկարիչներ. Մատենագիտություն IX-XIX դդ. (Սահակ Տէր-Գրիգորեան)*, Կահիրէ, 1998, էջ 643-644, **Ա. Սահակյան**, «Ոդան կարմիր», *Արևելագիտական ժողովածու*, Երևան, 2002, հ. XXI, էջ 387-399:

գիտելիքները հատկապես որդան կարմրի հավաքման և ներկի պատրաստման ասպարեզում[8]*:*

Ավելի ուշ, Սահակ Ծաղկարարի որդան կարմիրի ներկարարական փորձերի մասին, լույս է տեսել խոսրով Կ. Գալֆայանի ուսումնասիրությունը[9]*:*

Կարևորելով Սահակ Ծաղկարարի թողած արժեքավոր ժառանգությունը, 1963-64 թթ. Ս. Ավդալբեգյանը ամբողջությամբ տպագրության է ներկայացրել նրա Հիշատակարանը՝ «Բազմավէպ» խորագրով[10] *(ձեռագիր ՄՄ 6247, 23 էջ): Սահակ Ծաղկարարն իր Հիշատակարանը գրել է էջմիածնի վանքում՝ 1800-ական թթ. սկզբից մինչև 1843 թ.: Գրառումներն ընդհատել է 1815 թ. և վերսկսել 1833 թ.: Միջանցիկ այդ տարիների գրառումների բացակայությունը պայմանավորված է Սահակ եպիսկոպոսի 1822-27 թթ. Հաղբատում գտնվելու փաստով:*

***

Սերիկ Դավթյանին մշտապես հետաքրքրել են Սահակ Ծաղկարարի անձը, արվեստը և գործունեությունը: Իր բոլոր ուսումնասիրություններում նա հիշատակում է միաբանի անունը: Նրա կարծիքով՝ Ծաղկարարի անդադար պրպտումների մասին են վկայում ոչ միայն ձեռագիր նկարազարդելու էսքիզները, այլև մեծ չափերի զարդարանքների գծանկարները, որոնք արվել են հատկապես ասեղնագործության համար[11]*: Արվեստաբանը նկատում է.* ***«Պահպանված նկարները գալիս են կրկին ապացուցելու, որ մանրանկարչության և ասեղնագործության միջև սերտ կապեր են գոյություն ունեցել և շատ դեպքերում ձեռագործի նկարները կատարել են ձեռագիր ծաղկողները»***[12]*:*

«Հայկական ասեղնագործություն» ուսումնասիրության մեջ Սերիկ Դավթյանը հայկական ասեղնագործական նյութը բաժանել է մի քանի խոշոր, ճանաչված կենտրոն-դպրոցների՝ ***Վասպուրականի, Շիրակ-Կարինի, Սյունիքի, Արարատյան դաշտի, Կիլիկիայի, Պոլսի, Թիֆլիսի և գաղթօջախների,*** *որոնցում*

---

[8] **Մ. Նալբանդյան**, *Երկերի լիակատար ժողովածու* (տե՛ս՝ 1863 թ. մայիսի 1-ին եղբորը՝ Ղազարոսին գրած նամակը), Երևան, 1949, հ. 4, էջ 215:

[9] **Խ. Կ. Գալֆայան**, «Աւարատյան որդան կարմրից ներկանյութ ստանալու Սահակ Ծաղկարարի փորձը», *Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում (Գիտական հոդվածների ժողովածու)*, Երևան, 1979, հ. 7, էջ 116-129:

[10] **Ս. Ավդալբեգյան**, «Ծաղկաւար Սահակ եպիսկոպոսի հիշատակարանը», *Էջմիածին*, 1963, հ. Ի, թիվ ԺԲ, էջ 36, **Սահակ եպիսկոպոս Տէր-Գրիգորեան (Ծաղկաւար)**, «Բազմավէպ», էջ 37-42, 1964, թիվ Ա, էջ 32-38, թիվ Դ, էջ 48-55:

[11] **Ս. Ս. Դավթյան**, *Հայկական ասեղնագործություն*, Երևան, 1972, էջ 36:

[12] Նույն տեղում:

անդրադարձել է իրեն հայտնի ստեղծագործ-վարպետներին: Սահակ Ծաղկաբարն իր արվեստով ընդգրկված է Արարատյան բաժնում, հանդիսանալով այդ դպրոցի կարկառուն ներկայացուցիչը:



Սահակ Ծաղկաբար

*Սերիկ Դավթյանը հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի պատմության ուսումնասիրությանը զուգահեռ կարևորել և իր առջև խնդիր է դրել՝ պարզել, թե ովքեր են եղել ասեղնագործության նկարնեի վարպետ-հեղինակները: Իր աշխատություններում նա մշտապես նշել է, որ եկեղեցական ու կենցաղային ձեռագործ պարագաների, կարպետների ու գորգերի վրա հանդիպում են ասեղնագործ տեքստեր ու մակագրություններ, որոնք վկայում են դրանք գործողի և նվիրատուի անունը, ստեղծման վայրը, ժամանակը, պատմությունը: Սերիկ Դավթյանը դրանք համարում է ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրներ, գտնելով, որ եկեղեցական բնույթի ասեղնագործությունների բարդ բովանդակությունը (հատկապես փոքր տարածության վրա) վկայում է հեղինակների արհեստավարժ լինելը: Այդ առումով, նա կարևոր տեղ է հատկացնում Սահակ Ծաղկարարին: Նրա համոզմամբ՝ անցյալի հոգևոր խոշոր կենտրոններն ունեցել են իրենց նկարիչներն ու ձևավորողները, ստեղծելով կատարողական ուրույն ձևեր, ոճ, տեխնիկա, միաժամանակ, ավանդաբար անխզելի պահելով նախշերի միջև եղած ներքին կապն ու ներդաշնակությունը: Սերիկ Դավթյանը նկատում է. «**Հարց է ծագում, թե ովքե՞ր են եղել այդ նկարների հեղինակները: Դժբախտաբար այդ տեսանկյունով հարցը ուսումնասիրված չէ, և ամեն մի հայտնաբերում մեծ նշանակություն ունի կիրառական արվեստի պատմության համար»:***

*Սերիկ Դավթյանին հետաքրքրել է, թե **«...ինչ նկարներ է արել Սահակ Ծաղկարարը կիրառական արվեստի զանազան ճյուղերի, ինչպես նաև ասեղնագործության կտորները՝ «ծաղկելու» - ներկելու համար»**:*

*Դեկորատիվ-կիրառական արվեստի մասնագիտական ոլորտում Սերիկ Դավթյանն առաջինն է, որ կիրառում է **«կտորներ ծաղկելու»** եզրույթը: Ի դեպ, «Հայկական կարպետ» աշխատության մեջ նա անդրադարձել է որդան կարմիրով թելեր ներկելու եղանակներին, հիշատակելով Սահակ Ծաղկարարին և նրա գործունեությունը (թաշկինակներ ու ծածկոցներ ներկելուն, ծաղկելուն, դրոշմազարդման և դաջածո արվեստին)[13]: Հայկական կարպետագործության ոլորտում թելերի ներկման ավանդական ձևերի ու եղանակների մասին խոսելիս՝ Սերիկ Դավթյանը չէր կարող շրջանցել Ծաղկարարի անունը: Լինելով նաև հմուտ կարպետագործ[14], առանձնակի ուշադրություն է դարձրել բուսական տարբեր եղանակներով և միջոցներով թելերի երանգավորմանը: Հիմք է ընդունել այդ ոլորտում իր փորձառությունը և գիտելիքը, միաժամանակ՝ հավաքչական աշխատանքի արդյունքը, նկատելով, որ **«տեղեկությունները վերաբերվում են այն շրջաններին, որտեղ նման ուսումնասիրություններ չեն կատարվել և համապատասխան նյութերը գրի ենք առել առաջին անգամ»**[15]:*

*Ս. Դավթյանն ուսումնասիրել է Սահակ Ծաղկարարի գրչին պատկանող ՄՄ 6247, ՄՄ 6248, ՄՄ 9029 ձեռագրերը և սևագիր նկարները: Նրան շատ են հետաքրքրել ծաղկող-նկարչի մասնագիտական գործունեությունը, հոգևոր և անձնական կյանքի մանրամասները, նաև Սահակի մասին հրատարակված՝ իրեն հայտնի ուսումնասիրությունները: Արվեստագետը Սահակ Ծաղկարարին որակում է որպես **«կենդանի մտքի մարդ, հետաքրքիր, որոնող»**:*

Անդրադառնալով հայկական ասեղնագործության բոլոր տեսակներին՝ նա դրանք երկու մեծ խմբի է բաժանել՝

***Ա խումբ** – կտորի թելերի խիստ հաշվարկով արված ձեռագործներ,*

***Բ խումբ** – աշխատանքներ, որոնց վրա նախապես նկարվել է զարդանկարը և ասեղնագործությամբ լցվել մակերեսը (դրանց տալիս է հարթակար անունը, ամենաբարդը համարելով ուռուցիկ և գեղարվեստական հարթակարը):*

---

[13] Ս. Ս. Դավթյան, *Հայկական կարպետ*, Երևան, 1975, էջ 23: Հեղինակը նկատի ունի ՄՄ 6248 ձեռագիրը:

[14] Սերիկ Դավթյանը հմտորեն տիրապետել է ասեղնագործության տարբեր կարատեսակներին, ժանյակագործությանը և կարպետագործությանը:

[15] Նույն տեղում, էջ 24: Հիմնավորապես ուսումնասիրել է Դիլիջանի տարածաշրջանում բույսերից ներկեր պատրաստելու և թելեր ներկելու եղանակները:

Սերիկ Դավթյանը հատուկ անդրադարձել է գեղարվեստական հարթակարի բացատրությանը (բարդ հորինվածքներով, այուժետային մեծ չափերով նկարներ)։ Նա համեմատում և տարբերակում է իր առանձնացրած երկու խմբերի ստեղծագործական ընդհանրությունները և տարբերությունները, առանձնահատկությունները, ստեղծման ընթացքը, նկարչի և կատարող-ասեղնագործ վարպետի աշխատանքների բնույթը։

Արվեստաբանը նկատել է էջմիածնի թանգարանի ասեղնագործ աշխատանքների և Մայր տաճարի պատերի գեղարվեստական հարդարանքի՝ որմնանկարչության զարդարանքների (հատկապես ծաղիկների և բուսական զարդանախշերի) միջև եղած նմանությունները։ Միաժամանակ անդրադարձել է դրանց գունային անցումներին (աստիճանական փոփոխություն մուգից դեպի բաց երանգավորում)։ Արդյունքում նա հանգել է այն մտքին, որ **«Մանրանկարչության նման, ասեղնագործության մեջ էլ գույնն ապրել է առանց խամրելու»**։ Ըստ Սերիկ Դավթյանի, արվեստի այդ երկու ոլորտների ոճային նմանությունները պատահական չեն։ Սակայն ասեղնագործության համար նա կարևորում է նախշի համաչափությունը և դասավորությունը։

Սերիկ Դավթյանի մեքենագիր տեքստի տողատակում մի հետաքրքիր հիշատակություն կա, որի ենթատեքստից պարզվում է, որ նա փորձել է գտնել Սահակ Ծաղկարարի աշակերտ Գևորգ Պետրոսյան Աղազատյանի ժառանգներին, ենթադրելով, որ նրանց մոտ դեռևս պահպանված կլինեն ծաղկողի ոչնչացված ձեռագրերից պատառիկներ ու նկարների մնացորդներ։ Նրան հաջողվել է գտնել Գևորգ Աղազատյանի որդու թոռանը՝ բժշկուհի Կարինե (Կարիկ) Աղազատյանին և նրա մոտ՝ Սահակ Ծաղկարարի «ղրմզի ղազանը» (ներկի կաթսան)։ Մի գրառումից պարզվում է նաև, որ արվեստաբանը նպատակ է ունեցել հետագայում ուսումնասիրել և գրել նաև Սիմեոն Բզնունու մասին, զուգահեռ տանելով նրա և Սահակ Ծաղկարարի միջև։

Ս. Դավթյանը միշտ առաջնորդվել է մտքով, որ **«...մինչև օրս ի մի չեն հավաքված և չեն ուսումնասիրված հայկական ասեղնագործության մասին եղած հարուստ ու մեծարժեք գանձերը։ Դրա անհրաժեշտությունը մեծ է թե՛ հարցի պատմագիտական առումով և թե՛ այսօրվա ծաղկող ասեղնագործության զարգացմանը նպաստելու նպատակով»**[16]։

[16] **Ս. Ս. Դավթյան**, «Հայկական ասեղնագործության մի հին նմուշ», *ԲՄ* 3, 1956, էջ 44։

Սերիկ Դավթյանի անտիպ հոդվածի հրատարակման կարևորությունը

Սերիկ Դավթյանի անտիպ հոդվածի հրապարակայնացումը կարևոր է, քանզի այն անմիջականորեն առնչվում է ոչ միայն Սահակ Ծաղկարարի անձին և գործունեությանը (որը քիչ ուսումնասիրված հեղինակ է), այլև վերաբերում է հայկական ասեղնագործությանը և զարդանախշման արվեստին: Տասնամյակներ շարունակ անմատչելի մնալով գիտական հանրության համար՝ հոդվածը բովանդակային առումով նորություն է:

Կարևոր հանգամանք է, որ ուսումնասիրությունը չկորավի, ինչպես կորավել է Սերիկ Դավթյանի քսանամյա աշխատանքի արգասիքը՝ հայկական կիրառական արվեստի բառեզրույթների գրեթե ավարտուն բառարանի քարտարանը, որը արվեստաբանի մահից տարիներ անց անհետացել է առեղծվածային հանգամանքներում:

*Անհայտ է, թե ի՞նչ պատճառով է Սերիկ Դավթյանի ներկայացվող աշխատությունը մնացել անավարտ և անտիպ: Ենթադրելի է, որ դրան խանգարել է արվեստաբանի բազմազբաղ լինելը, և նա իրեն խիստ հետաքրքրող այս նյութը թողել է հետագայում ավելի հանգամանալից ուսումնասիրության, սակայն ցավոք, այդպես էլ ժամանակ չի գտել: Ուստի այն արժեքավոր գտնելով՝ որոշեցինք պատրաստել հրատարակության, հիշելով Ծաղկարարի խոսքը՝ **«...Սուրբ Աստված որ գիտօղն է ամենայն գաղտնեաց եւ տայ պարգեւս առատօրէն խնդրողին»**[17]:*

ԲՆԱԳԻՐ

ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆ

ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ

Հայկական ասեղնագործ զարդարանքները բազմազան են նկարների, նյութի, գույների տեսակետից:

Եթե ժանյակները չհաշվենք, բոլոր ասեղնագործությունները բաժանվում են երկու մեծ խմբերի: Առաջին խմբին են պատկանում այն ասեղնագործությունները, որոնք կատարված են կտորի թելերի խիստ հաշվարկով, ինչպես թելհաշները, շարակարը, գծային հարթակարը, խաչկարերը և այլն: Երկրորդ խմբինը այն ասեղնագործություններն են, երբ կտորի վրա նախօ-

[17] **Սահակ եպիսկոպոս Տէր-Գրիգորեան (Ծաղկարար)**, «Բազմավէպ», *էջմիածին*, 1964, Դ, էջ 52:

ոոճ նկարվում է զարդանկարը, և ապա զանազան թելերով գործվում-լցվում զարդակարի մակերեսը: Դրանք ընդհանուր անունով հարթակարեր են, որոնցից ամենաբարդերը ուռուցիկ և գեղարվեստական հարթակարեր են:

Մեր թանգարաններում կան այդ երկու խմբերից բազմաթիվ գեղարվեստական բարձր արվեստով ու շնորհիվով կատարված զարդարանքներ, ուր բանեցված են բդյա, մետաքսյա, վուշի ու բամբակյա, ոսկյա, արծաթյա թելեր, փայլուններ[18], թրթրըռ[19] և այլն:

Գեղարվեստական հարթակարով կատարված զարդարանքների վրա հանդիպում են մեծ չափերով սյուժետային նկարներ: Բարդ կոմպոզիցիա ունեցող աշխատանքները զարմացնում են իրենց զարդանկարների կատարելությամբ, առանձին մասերի համաչափությամբ, ծաղիկների, թռչունների, մարդկանց բնական տեսքի, գույների ներդաշնակությամբ: Երևում է, որ զարդանկար կազմողը վարժ նկարիչ է եղել, իսկ կատարողը՝ հմուտ ասեղնագործող:

Երբ զարդակարերը արվում են կտորի թելերի հաշվարկով, հաճախ օգտագործում են շատ հին, երբեմն դարերի խորհից եկող, մեծ մասամբ երկրաչափական բնույթի նախշեր: Մինչդեռ գեղարվեստական հարթակարով արվող ամեն մի զարդարանքի համար պատրաստվում է հատուկ նկար, որը անց է կացվում կտորի վրա, ապա ծածկվում թելով: Պատահում է, որ նկարողն ու ասեղնագործողը նույն մարդն է, սակայն մեծ մասամբ, մանավանդ կրոնական սյուժե ունեցող զարդարանքներում, նկարիչը այլ մարդ է, իսկ կատարողը՝ այլ:

Եղել են հատուկ արհեստանոցներ, ուր կատարվել է աշխատանքի բաժանում՝ նկարիչը միայն նկարել է թղթի վրա (կամ հենց կտորի վրա), մի ուրիշը այդ նկարը թանաքով կամ այլ ներկով անց է կացրել կտորի վրա, իսկ վարպետ ասեղնագործողները կատարել են իրենց գործը:

***

Էջմիածնի թանգարանի ասեղնագործ զարդարանքների և տաճարի ներքին պատերի որմնանկարչության ու արտաքին պատերի զարդարանքների մեջ կան ակնհայտ նմանություններ: Մասնավորապես ծաղիկները, թե՛ բնական և թե՛ ոճավորված ձևերով նման են միմյանց: Վարդերից, մեխակներից,

[18] Փայլուն՝ զանակ (ոսկեզօծ կամ արծաթագույն նուրբ թիթեղյա բեկորներից հավաքած թերթիկներ):

[19] Թրթրըռ՝ մետաղյա զսպանականև զարդ:

զանգակներից ու այլ ծաղիկներից կազմած փնջերը նույնպես նման են: Գույների ու դրանց երանգների դասավորությունը՝ մուգ կապույտից մինչև սպիտակի հասնող երկնագույնը, կարմիրի և կանաչի մուգ երանգներից դեպի բաց թույրի անցումը, ոսկու, սև գծերի գործածությունը գալիս են ասելու, որ այս զարդարանքների ոճի նմանությունները պատահական չեն:

Առծաթյա, ոսկյա, ոսկորից պատրաստված դեկորատիվ նշանակություն ունեցող իրերի, մանրանկարչության, որմնանկարչության, ինչպես և ասեղնագործության ամեն մի դարաշրջանում նկատվում է արվեստի, ընդհանուր ոճի գոյություն ու նմանություններ:

Հայկական իշխանական տների անկումից հետո ճոխ, թանկարժեք զարդարանքները պահպանվել են եկեղեցիներում, որի շքեղության ապահովության համար ամեն մի դարաշրջան, ամեն մի խոշոր տաճար ունեցել է իր պահանջները և դրանց տաղանդավոր կատարողները, ձևավորողները:

Ելնելով նյութից (կտոր, մետաղ, քար)՝ մեծ վարպետները ստեղծել են կատարողության ուրույն ձևերը, օգտագործել տեխնիկական առանձնահատուկ միջոցներ ամեն մի նյութի համար այն հաշվով, որ յուրաքանչյուր տիպի զարդարանք ստացել է իր դեմքը, գտել իր տեղը և պահպանել իրեն հատուկ բազմապիսի ձևերը:

Ոճի միասնականությունը նկատվում է էջմիածնի թանգարանի շատ զարդարանքների մեջ: Հատուկ ստեղծագործական միտք, գեղարվեստական հաշակ, ոսկի ձեռքերի վարպետություն, համբերատար աշխատասիրություն են պետք եղել պահպանելու բոլոր զարդարանքների արտաքին նմանությունների հետ նաև նրանց ներքին ընդհանուր կապը և ներդաշնակությունը:

Տաճարի թանգարանի ասեղնագործ զարդարանքները չափազանց շքեղ են, կատարված դիպակի, բեհեզի, մահուդի, թավիշի և բազմատեսակ մետաքսյա կտորների վրա, բանեցված են թանկարժեք տեսակ-տեսակ թելեր, մարգարիտ, հասարակ ու անգին քարեր:

Մետաքսյա թելերի մեջ երկու-երեք հարյուր տարի կայուն մնացած կարմիր ու կապույտ գույները, ոսկին ու արծաթը իրենց փայլով զարմացնում են դիտողին: Մանրանկարչության նման, ասեղնագործության մեջ նույնպես, այդ գույներն ապրել են առանց խամրելու: Այստեղ պետք է նկատել, որ ոչ միայն ասեղնագործություններն են կատարված մեծ հաշակով, հմտությամբ ու գեղարվեստական բարձր որակով, այլ մեծ կատարելության են հասած և այդ զարդարանքների նկարները, որոնց համաչափ դասավորությունը հիմք է ծառայել ասեղնագործության համար:

Հարց է ծագում, թե ովքե՞ր են եղել այդ նկարների հեղինակները: Դժբախտաբար այդ տեսանկյունով հարցը ուսումնասիրված չէ և յուրաքանչյուր հայտնաբերում մեծ նշանակություն ունի կիրառական արվեստի պատմության համար:

Ճիշտ է, եկեղեցական զարդարանքների վրա կան մակագրություններ, ասեղնագործած տեքստեր, որոնք նշում են զարդարանքի պատրաստման ժամանակը, վայրը, նվիրողի, երբեմնի գործողի անունը (ինչպես «Աննա», «Մարիամ», «Հռիփսիմե» և ուրիշներ): Շատ հետաքրքիր են XVIII դարից Պոլսո ասեղնագործողների անուններ կամ Ջուղայից՝ «քաշեց Պետրոսի դուստր Թամարը» («քաշեց»-ը ցույց է տալիս, որ նկարը, գծումը պատկանում է Թամարին): Ամեն մի նկար արված է հատուկ զարդարանքի համար՝ սփոռոցի, սրբիչի, ծածկոցի, վարագույրի և այլն:

Եկեղեցական հագուստի զարդանկարները նույնպես մշակված են, պատրաստված ամեն մի մասի համար (օրինակ, շապիկի օձիք, բազպաներ, խույր, ուրար և այլն): Բովանդակություն ունեցող յուրաքանչյուր նկար ամփոփվում է հատուկ շրջանակով, որը ինչ-որ կապ ունի պատկերի հետ: XVII-XVIII դարերում բուսական, բնության տեսարանների բնույթի նկարների հետ մեծ տեղ են գրավում Հիսուսի կյանքի զանազան դեպքերը՝ ծնունդը, խաչելությունը, հարությունը, բարոզելը, որոնք ըստ կանոնի մշակված, ավանդական ձևեր են ընդունում և համարյա անփոփոխ կրկնվում: Նման նկարները նույնպես ունեն եզրափակող շրջանակ՝ «հաշյա», կազմած ծաղիկներից, կոկոններից, տերևներից: Շատ փոքր տարածության վրա զետեղված բարդ բովանդակության նկարները համոզում են մեզ, որ դրանց հեղինակները վարժ նկարիչներ են եղել:

***

Մատենադարանի ձեռագրերում պահվում են մի շարք սևագիր նկարներ, որոնց մի մասը պատկանում է Սհակ (Իսահակ) Ծաղկարարին: Նկարները և իր թողած գրավոր նյութերը վկայում են, որ նա ոչ միայն ձեռագրեր, կոնդակներ ու օրհնագրեր է ծաղկազարդել, այլև նկարներ է պատրաստել ասեղնագործության և կտորներ ծաղկելու համար:

XIX դարի ծաղկարար Իսահակ եպիսկոպոսը Երևանցի Տեր-Գրիգորյանն է: 6248 ձեռագրի մեջ (թղթապանակում) գտնվում են՝ տետր նկարնե-

րով, մակագրություններով և 58 առանձին թերթիկներ[20], որոնց վրա մատիտով, ներկերով զանազան նկարների, մեծ մասամբ ծաղիկների, զանազան սևագրություններ կան: Սահակ վարդապետն իր տետրը համարում է ծաղկարան, գրածները՝ գրչափորձ, ներկերի, ոսկու որակը փորձելու համար.

«Տետրակս այս է ծաղկարան...[21] ոչ այլ ինչ է, եթէ ոչ փորձ, ամենայն տետր հարելու մին անգամ Ա (1) գիծ կամ Բ (2) խաշել եմ լատութիւն յիմացել ապա թէ գործ եմ ածել»[22]:

Տետրի երկրորդ էջում նկարել է ոսկով և գույներով վարդի փունջ՝ երեք բացված վարդ, երկու կոկոն, տերևներ: Փնջի վրա նստած է փորիկ թռչուն՝ կարմիր գլխով, դեղին փորով: Փնջի երկու կողմից թանաթով գրած է.

«Պիպպիկն կարոտով վարդին
Ասաց եկ գնամք մեր այգին»[23]:

Տակը գրել է. **«Ոսկե վրդ (վարաղ) փորձիլ արարի (շատ լաւն է)»[24]** *(տե՛ս նկ. 1)**:

Շատ անգամ է նա փորձում ոսկին.

«Խնդրեմ ի ձենջ՝ անմեղադիր լինեք վասն տետրակիս, և վասն իմ ոչ այլ ինչ է, եթե ոչ փորձ, զիրայ մինչև փորձն չառնումք, չեմք կարիլ բանիլ. երբեմն զամէն շատ կու լինի, չի կոկուիլ, երբեմն պակաս կու լինի, կու թափի կոկէլու ժամուն: Վասն որոյ պետք է փորձենք, որ ամօթ չի կրեմք»[25]:

Իսահակ Ծաղկարարը դժվար պայմաններում ծաղիկներ էր պահում և, երբ բույսը աճում է՝ ուրախանում է: Գուցե հենց այդ իսկական ծաղիկներն են նրան օրինակ ծառայել իր նկարների համար, ինչպես օրինակ հիրիկների փորիկ գեղեցիկ փունջը *(տե՛ս նկ. 2)*:


Իսահակ Տեր-Գրիգորյանը կենդանի մտքի մարդ է, հետաքրքրվող, որոնող: Նա շատ է հետաքրքրվել զանազան ներկեր պատրաստելու խնդրով, որտեղ առաջնակարգ տեղ են բռնում կապույտը, կարմիրը և ոսկին: Ինքնագիր կենսագրությունում (ձեռագիր 6247)՝ «Բազմավէպ»-ում, Սահակ Ծաղկարարը պատմում է իր բարեկամ **«բաջ պատկերահան»[26]** Միրզա Ապղլհապի իրեն

---

[20] 1-57 թերթերը տարբեր բովանդակության նկարների օրինակներ են:
[21] ՄՄ 6248, թ. 1ա:
[22] ՄՄ 6248, թ. 2ա:
[23] Նույն տեղում:
[24] Նույն տեղում:
* Այս և մյուս նկարները՝ ներդիրում:
[25] ՄՄ 6248, թ. 5ա: Ոսկե վարաղի փորձագրություն:
[26] ՄՄ 6247, թ. 13բ:

այցելելու մասին, որը՝ **«ութ օր [եւ գիշեր. ամէն օր] ետս սեղանի չկպուռվն եօլայ էր գնում. եւ ի միասին միւ ամանում հաց էինք ուտում»**[27]:

Ներկեր պատրաստելու գաղտնիքներն ուրիշներին չէին հայտնում, սակայն Ապղվհապը որպես Իսահակի բարեկամ, վերջինիս խնդրանքով նրան սովորեցնում է լաջվարդ (կապույտ ներկ) պատրաստելու եղանակը[28]: Նա թուրերեն գրում է **«խրատը»**[29] (բաղադրությունը) և Սահակն այն թարգմանել է տալիս հայերեն և մի շարք ինքնուրույն փորձերից հետո կարողանում է ստանալ լավ որակի կապույտ ներկ.



Սահակ Ծաղկարաի ձեռագիրը
«Խրատների տետր»-ում
ՄՄ 9029, 26բ



«Ղըրմըզափորձ»
Ոդան կարմիրով նկարած բուսական,
մարդկային և կենդանական պատկերները՝
Սահակ Ծաղկարաի «Խրատների տետր»-ում
ՄՄ 9029, 28բ

[27] ՄՄ 6247, թ. 14ա:
[28] ՄՄ 6247, թ. 14ա, թ. 15ա:
[29] ՄՄ 6247, թ. 15ա:

«[Եւ մինչ լուացի, ոչ հանդուրժեցայ լաւապէս] յատակ ջրոյն [նստել զլաջիւարդն. ծռելով ամանն՝] մազղալամով[30] առի՝ և ծաղիկ յօրինեցի զամխով»[31]:

Նրա խրատների տետրում (ձեռագիր 9029[32]) պահպանվում են թուրերեն և հայերեն գրած լաջվարդ ստանալու խրատը[33]: Սահակ Ծաղկարարն իր բարեկամին այդ առիթով նվիրում է **«մի մահրամայ ծաղկեալ»** (թաշկինակ):

Տարիներ հետո Հնդկաստանի նվիրակ Պողոս արեպիսկոպոսին Սահակը նվիրում է մի ծաղկած թաշկինակ և խնդրում՝

«[Յաղագս սիրոյ եւ] վասն զանազան կերպ նկար ի վերայ կտաւոյ եւ զեփելն դեղօրէից նորա խնդրեցի, որ բերցէ վասն իմ, և վեց մսխալ իւղալի ղըրմըզ ետու [նորին] սուրբ եղբայրութեանն, թէ հարիցէ գտանել անդ իւղահան վարպետ ղրմզի, արարողութիւն նորին գրեալ բերցէ վասն մեր...»[34] (Հիշատակարան):

Չնայած, որ իմն արդեն գիտեր որդան կամիր ներկ (ղրմըզ) ստանալու ձևը, սակայն նրա կենդանի միտքը միշտ պրպտումների մեջ է. հետաքրքրվում, ուզում է իմանալ, սովորել նոր, ավելի լավ եղանակներ:

Սահակ Ծաղկարարը բազմաշնորհ է: Նա եղել է Հաղպատում, Տփխիսում, Ելիզավետպոլում, էջմիածնում, Գառնիում, Խոր Վիրապում, Երասխի ափերին, ամեն տեղ նա աշխատել է մի հանրօգուտ բան սովորել: Ամեն անգամ վերադառնալով էջմիածին՝ ցանկացել է լսածը, տեսածը, սովորածը դարձնել շոշափելի, օգտակար գործ: Սակայն իզուր, ոչ ոք նրան ընդառաջ չի գնացել, չի օգնել, ընդհակառակը նրա կյանքի ճամփին միշտ խոչընդոտներ են հարուցվել:

Ըստ երևույթին նա կնիքներ է պատրաստել: 1810 թ. Տեր Սահակի անձնական կնիքների հետքերը կան նրա տետրակի մեջ, մեկը՝ խաչաձև, մյուսը՝ ձվաձև:

Տեսնելով էջմիածնի տպարանի թափած թղթերի կտորները, որոնք անօգուտ կորչում են՝ Սահակ Տեր Գրիգորյանը ուզում է դրանցից նոր թուղթ ստանալ: Իր Թիֆլիսում եղած ժամանակ՝ նա Փարիզում հրատարակված մի գիրք է տեսնում, ուր լինում են զանազան գործիքների տեխնիկական նկար-

---

30 վրձին
31 ՄՄ 6247, թ. 15բ:
32 Սահակ Ծաղկարար, «Խրատք Ծաղկարարութան», ՄՄ 9029:
33 ՄՄ 9029, թ. 15ա:
34 ՄՄ 6247, թ. 20ա:

ներ: Թուղթ ստանալու մեքենայի նկարը արտանկարում է և էջմիածնում իր հաշվով պատվիրում: Իզուր, նրան չեն լսում: Ինքը երկար շարշարվելուց հետո կարողանում է մի քանի թերթ թուղթ ստանալ՝ **«ուրախացայ, դարձեալ ուրախացայ»**[35], – գրում է նա:

Մի քանի թերթի վրա նա տպագրել է տալիս էջմիածնի տպարանի պատկերը, իսկ մյուս թերթի վրա դիմում է կաթողիկոսին[36] **«վասն զանազան գործոց սոյն թղթի»**[37]:

Տպագրական գործի հետ կապված, գրում է՝ սոսնձի, պատաշի և այլ նյութերի, ինչպես նաև լավագույն միջոցների մասին, որին ինքը հասել է իր անհատական փորձերով: Նրա այդ ջանքերն իզուր են անցնում, հոգևորականի ոչ մի առաջարկ ընթացք չի ստանում:

Պատմական աղբյուրներից հայտնի է եղել կարմիր ներկ արտադրող որդի («որդան կարմիր») գոյությունը Արարատյան դաշտում: Սակայն XIX դ. այդ որդը, որդից կարմիր ներկ ստանալու հարցերը մոռացության գիրկն են ընկած եղել: Եվ ահա, Սահակ Ծաղկարարը համբերությամբ և երկար ժամանակ զբաղվում է որդան կարմիրի հարցերով: Պետք է ենթադրել, որ նա շատ է չարշարվել, մինչև կարողացել է որդը մեռցնել և որդից ստանալ կարմիր յուղալի ներկ[38]:

Պարսկական դաժան իշխանության տապալումից հետո, Ռուսաց կառավարության առաջարկով, նա շրջում է Արարատյան դաշտով և ուսումնասիրում, գրի առնում որդի տարածման վայրերը, թվարկում է գյուղերի [անունները, որոնք ձգվում են] Արաքսի ափով, ուր այդ որդը կա, և մեծ բանակությամբ այն ժողովում է: Սահակ Ծաղկարարն այդ գործը կատարում է, բնակվելով Խոր Վիրապում, որտեղից և որոնումներ է անում: Գիտնականի

---

35 ՄՄ 6247, թ. 20բ:

36 Նկատի ունի Հովհաննես Ը Կարբեցի (1831-1842 թթ.) կաթողիկոսին:

37 ՄՄ 6247, թ. 20բ:

38 Հայկական որդան կարմիրի մասին Ռուսաց կառավարությունը հատուկ «գործ» է սկսել, որն այժմ պահվում է Վրացական ՍՍՀ Կենտրոնական Պատմական արխիվում: Այդ մասին պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը գրում է. « «Գործը», որ սկսված է 1832 թ. ապրիլի 2-ից, պարունակում է 101 թերթ: Հիմնական փաստաթուղթը, որի շուրջը ստեղծվել է այս «գործը», դա էջմիածնի միաբան և ծաղկարար Սիսակ-Սահակ-Իսահակ կոչվող վարդապետի, հետագայում եպիսկոպոսի և արեպիսկոպոսի գրությունն է (1830 թ.), բնագիրը հայերեն, ռուսերեն թարգմանությամբ հանդերձ, կարմիր որդանի մեռուցման շուրջը 10 ռեցեպտով և ներկ արտադրելու շուրջը 3 ռեցեպտով, ինչպես և Վոսկոբոյնիկովի գրությունը (1832 թ.) միմիայն ռուսերեն» (**Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», *Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ*, ե, 1946, № 2-3, էջ 18-19):

հետաքրքրությամբ ու մանրազննությամբ նա ուսումնասիրում ու դիտում է այդ որդի կյանքը, ձվերը, սեզու այն բույսը, որի վրա բարձրանում են որդերը: Նա պարզում է, որ անձրևոտ օրերին որդերը դուրս չեն գալիս բներից, իսկ արևոտ օրերին, առավոտյան և արևածագից հետո մինչև մոտ երեք ժամ ու դարձյալ թաքնվում: Ավել մնալը նրանց համար վտանգավոր է՝ մրջյունն է տանում, թռչունն է տանում, անասուններն են ոտնակոխ անում: Իր այդ գործի համար նա Ռուսաց կառավարչից նվեր է ստանում մի թանկարժեք մատանի: Սակայն գործը չի տարածվում:

Իսահակ Տեր-Գրիգորյանը շարունակ զբաղվում է այդ հետաքրքիր որդի կյանքով, ուսումնասիրում նրանց կյանքի տևողությունը:

Երբ 1837 թ. էջմիածին է գալիս Ռուսաց կայսր Նիկոլայ I, Իսահակն իր աշակերտի հետ մատուցարանով նրան ցույց է տալիս **«որդան կարմիրն... եւ ի միջի նոյն բօթնոցին ունէի պատրաստի ապակեայ տուփ մի խնկալի. այս է՝ կենդանի որդն կարմրոյ մաղեալն առաննին, և զսիզովն ընտ հողով առաննին, նոյն տփովն, որ երկու աչկանի [էի շինել տուեալ եւ զնուս նորին առաննին...]»**[39]:

Ապա կայսրին է տալիս իր խոշորացույցը՝

«...եւ ի ծոցոյ իմմէ հանեալ զխօշորացոյցն ետու ձեռամբ իմով նորին կայսերական մեծութեան. առեալ ի ձեռանէ իմմէ և նայեցաւ նովաւ զմանրահատ նուսն դրմզոյ եւ ետ ինձ զխօշորացոյցն, ասելով զխօրօշօն երկու անգամ եւ հրամայեաց իւրոյ ատութանդին[40] **տանել ընդ իւր, [միեւնոյնն, որ յառաջագոյն նուիրեալ եմ նորին պայծառափայլութեանն եւ նա մատուցեալ է Պասկեվիչին եւ յետ նորա պարօն Րօզէնին, որ նա ի 1830 նուիրեալ է նորին կայսերական մեծութեանն, որ անունն իմ յայնմ ժամանակին կազեթիւ հրատարակեալ են, որպես յայտնի է տեսողացն եւ լսողացն. մինն կորուսի եւ զտասն ի միասին գտի Աստուծով իմով]»**[41]:

«Խօրօշօ»-ն[42] ասելուց հետո՝ հարցը տեղից դարձյալ չի շարժվում, միայն Սահակ եպիսկոպոսին ցարական կառավարությունը թոշակ է նշանակում: Ծաղկարարի նյութական դրությունը միշտ մնում է վատ վիճակում, բոլոր փորձերը նա անում է իր հաշվին: Շրջապատը նրան ոչնչով չի օգնում, ընդհակառակը՝ միշտ վնասներ է կրում:

---

39 ՄՄ 6247, թ. 20ա:
40 Адъютант-ին:
41 Նույն տեղում:
42 Хорошо - «լավ է»:

Որդան կարմիրի մասին եղած Իսահակ եպիսկոպոսի տվյալներից օգտվում է Ալիշանը, որը «Այրարատ»-ում տալիս է որդի նկարագրությունը, այն գյուղերի անունները, որոնց շրջակայքում գտնվում է որդը, և Ծաղկարարի նկարը[43]:

Մեզ հետաքրքրում է, թե ինչ նկարներ է արել Սահակ Ծաղկարարը կիրառական արվեստի զանազան ճյուղերի, ինչպես ասեղնագործության և կտորներ «ծաղկելու», ներկելու համար:

1836 թ. նա իր «ծաղկած» թաշկինակներից նվիրում է բարձրաստիճան հոգևորականներին, իշխան Բեհբությանին: Թաշկինակի նկարը նկարագրում է իր հիշատակարան «Բազմավէպ»-ում.

«[Ի] 1836 [ամին], [ի] մեծ պահոց [աւուրսն, ի լոյս] ընծայեցի զչորեսին թաշկինակն զարմանալի միեւնոյն գրութեամբ, որում նկարեալ էի զտեղի սիզաբեր որդացն կարմրոյ, իբրեւ զպլան, էր [ընդ] եզերս նոցա [ծաղկաւէտ] հաշիայ, եւ ի մէջն էր Մասիս լեառն դաշտովն իւրով, որում գլուխն [ձիւնապատ], նաւն Նոյեան տապանի, ծիածանն աղեղնաձև, զսուրբ աղբիւրն բժշկարար, զստորոտ նորա մեծ գետն Երասխ, այսկոյսն Երասխայ Խոր Վիրապն, հանդերձ իւր լեռնանման բլրօքն, եւ շրջապատ նորա յայսկոյս եւ յանկոյս ևս է Սեաւ ջուրն»[44]: Այս նկարի սևագրությունը գտնվում է 6248 ձեռագրում[45]:

Նույն թղթի վրա միմյանց հաջորդում են նույն բովանդակությամբ երկու տարբերակ, մեկում՝ Մասիսի վրա պատկերված է Նոյան տապանը, իսկ մյուսն առանց տապանի է: Ըստ երևույթին Ծաղկարարն ընտրել է այն տարբերակը, որը կարող էր հոգևորականներին ավելի դուր գալ, այն է՝ Մասիսի գլխին Նոյան տապանի պատկերովը, չնայած որ երկրորդ տարբերակը տալիս է այն բնության նկարը, որը ինքը տեսել է:

Ըստ երևույթին, Սահակ Ծաղկարարը այլ բովանդակության ծաղկած թաշկինակներ է նաև պատրաստել: Հիշենք, որ նկարիչ Ապդվահապին **«ծաղկած թաշկինակ»** է նվիրել: Ծաղկած վերջին թաշկինակների նկարի մասին խոսելիս Սահակ Ծաղկարարը հիշում է, որ շուրջը եղել է **«հաշիայ»**[46]: Այստեղ «հաշիայ» բառը, որը երկու իմաստով է գործածվում ժողովրդի մեջ՝ **ժանյակ**

[43] **Ղևոնդ Ալիշան**, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 484:
[44] ՄՄ 6247, թ. 19բ:
[45] ՄՄ 6248, թ. 85ա:
[46] Ժանյակ՝ նախշավոր ծակոտկեն կամ ցանցանև ասեղնագործական գործվածք:

և **շրջանակ**, Սահակի մոտ նշանակում է նկարը եզրափակող շրջանակ՝ **[ընդ] եզերս նոցա [ծաղկաւէտ] հաշիայ»**[47]:

Ինչ զարդարանք էլ վերցնենք, մանավանդ ասեղնագործ, մենք տեսնում ենք, որ բոլորն ունեն նման հաշիաներ, կազմված ծաղիկներից, տերև ու կոկոնից, որոնք ունենում են և՛ բնական տեսք, և՛ ենթարկվում են բազմատեսակ ոճավորման:

Սահակ Ծաղկարարի թողած սևագիր նկարների որոշ մասը անկասկած ասեղնագործության ու ծաղկելու, դաջելու ու նկարելու համար են, մի որոշ մասը՝ ձեռագործի և կոնդակներ զարդարելու (ինչպես անկյունանկարները, ուղիղ շերտերը կամ զոլերը): Նկարել է հիրիկների փոխրիկ փունջ, վարդեր, մեխակներ, պիոն, բազմաթերթ ծաղիկ *(տե՛ս նկ. 4)*: Վարդի միջուկը երբեմն ցանցակերպ է, նմանակերպ ոճավորումը տարածված է ասեղնագործության մեջ: Ծաղիկներից, շուշանաձևերից կազմել է լայն շրջանակ, ինչպես նաև, ծաղիկներից կազմել է տառեր, որոնք կարող էին կիրառվել մանրանկարչության մեջ և ձեռագործ աշխատանքում *(տե՛ս նկ. 5-6)*: Մեծ նկար է պատրաստած, ըստ երևույթին թաշկինակ ծաղկելու համար[48]:

Խոշոր, ոճավորված ծաղիկներից, ճյուղերից, որոնց արանքում թռչուններ են, կազմել է մեծ նկար՝ սփռոցի, ծածկոցի կամ պատի ասեղնագործ գորգի ստեղծման համար[49]:

Նկարի չորս կողմով, եզրերով անցնում է գեղեցիկ կազմած **«ծաղկալու»** շրջանակ՝ **հաշիան**: Էջմիածնի տաճարի թանգարանում (փոխր սենյակ) XVII դարի մի ծածկոց կա, որին նման է Սահակ Ծաղկարարի այդ նկարը:

Սահակի թողած նկարների մեջ կան ճարտարապետական կամ այլ բնույթի սիմետրիկ կողմեր ունեցող նկարազարդեր: Այդ դեպքում նա նկարում է միայն կեսը, ապա թուղթը ծալում է երկու տակ, ծակծկում է նկարի գծերի վրայով՝ ստանալով ցանկացած ամբողջական պատկերը: Նման ձևը մինչև այսօր էլ բանեցվում է ասեղնագործության մեջ:

Ծաղկարարը ծակծկված նկարը դրել է ձեռագրի էջի վրա, վրան սև փոշի ցանել, ինչպես իմն է ասում **«թոզլամա»**[50] է արել, և ապա՝ ծակերով անցած

---

47 ՄՄ 6247, թ. 19բ:
48 ՄՄ 6248, նկար 89ա-89բ:
49 ՄՄ 6248, 90ա-90գ:
50 Փոշոտել (թուրք.):

փոշու հետքերը գրչով միացրել: Այդ ձևով մի նկարից կարելի է բազմաթիվ պատճեններ հանել, առանց հիմնական օրինակը փչացնելու:

Նման ձևով և ասեղնագործության մեջ նկարների պատճեններ են հանում կտորների վրա, երբ պատճենահան թուղթը անհարմար է լինում գործադրել մահուդի, թավիշի, մուգ գույնի այլ հաստ կտորների վրա: Ծակծկված նկարի վրա թափվում (fսվում) է ներմակ փոշի, ալյուր, կավիճ և ապա հետքերը միացվում են ջրաներկով, վրձինով և ասեղնագործվում:

***

Մանրանկարչության համար կազմած բառդ բովանդակություն ունեցող նկարները երբեմն նույն չափերով, երբեմն մեծացրած, հանդիպում են նաև ասեղնագործ զարդարանքների վրա: Գույները, մուգից դեպի բաց անցնող երանգները, եզրափակող ոսկյա գիծը, բաժանարար սև գծերը հատկանշական են թե՛ մանրանկարչության, թե՛ ասեղնագործության համար, մանավանդ, երբ նկարը կրոնական բնույթի է: XIX դարի ասեղնագործ զարդարանքների՝ բազպան, վակաս, խույր, արտախուրակ, շապիկ, ուրար, եմիփորոն, սկիհի ծածկոցներ, վարագույրներ և այն, բոլորը ծածկված են նույն բովանդակության և գույների ասեղնագործությամբ:

Գրեթե բոլոր զարդարանքների վրա սյուժե ունեցող ներքին նկարը ունենում է զանազան լայնության շրջանակ, կազմված բուսական զարդանկարներից, որը շրեղություն է տալիս կտորին:

Սահակ Ծաղկաբերի արխիվում կան կրոնական բնույթի մի շարք նկարներ: Օրինակ 13-րդ թերթիկի վրա նկարած է Ավետման տեսարանը ավանդական ձևով՝ Մարիամը կանգնած է բարձր գրքակալի մոտ, առաջը բացված գիրք է: Դիմացը կանգնած է թևերով հրեշտակ (Գաբրիել), աջ ձեռքին ծաղկեփունջ է Մարիամի համար, իսկ ձախ ձեռքով ցույց է տալիս երկնքից իջնող թևատարած աղավնուն: Վերևում, ամպերի մեջ, **«Աստվածն» է,** խաչազարդ գունդը ձեռքին: Նկարը ծակծկված է, մրոտած, այսինքն օգտագործված: 42-րդ թերթիկի վրա պատկերված է ծնկաչոք Տրդատ թագավորը, կողքին հույրը և թագուհին:

43-րդ թերթիկի վրա (սևագրություն) երկու դիրքով նկարված է Գրիգոր Լուսավորիչը, կողքին հրեշտակը: Երկուսն էլ լուսապսակով են, առջևում ծնկաչոք են՝ Տրդատը, Աշխենը, Խոսրովադուխտը: 44-50 թերթիկներին՝ սրբերի, հրեշտակների պատկերներ են՝ առանձին ծաղիկների միջուկների մեջ,

որոնք ընդունված, կանոնի հասած ձևերով՝ կրկնվում են եկեղեցական բազմաթիվ ասեղնագործություններում:

***

Սահակ Ծաղկարարը սիրով ու հարգանքով է խոսում իր լավ ուսուցիչների մասին, որոնցից նա որևէ բան է սովորել: Թվելով իր ուսուցիչներին, նա հիշում է նաև Մկրտում Հովնաթանյանին, որի նկարներից օգտվել է:

57-րդ թերթիկի վրա գրած է. **«Յամի Տեառն 1839 օրինակեցի զայս իմ Վարպետ նկարի պարոն Մկրտումի շինեալ օրինակէն և թօզլամայ արարի ի Վայելս հոգևոր ծնողին իմոյ Տեառն Յովհաննու արբազան կաթողիկոսին նոյեմբերի մէկին եւ օրինակավս այս նոր ի նորոյ սկսայ երկու հատ ծաղկել. Ծաղկարար Իսահակ եպիսկոպոս»**[51]:

10-րդ թերթիկի վրա գրված է. **«Տեսլեան պատկերս այս Յովնաթանեան նկարիչ պարոն Մկրտում վարպետիս օրինակէն օրինակեցի ի վայելս հոգևոր ծնողին իմոյ Տեառն Յովհաննու արբազան կաթողիկոսին նոր ի նորոյ թօզլամայ արարի նոյեմբերի մէկին և յուսամ, թէ աւարտ հասուցանեմ ողորմութեամբ Աստուծոյ. Ե[ռնարհ] ծառայ Ձեր ն[ուաստ] ծ[ա]ղկ[արար] Իս[ա]հ [ա]կ եպ[իսկոպո]ս»**[52]:

Նկարը (10-րդ թերթիկ) պատկերում է Գրիգոր Լուսավորչին կաթողիկոսական հանդերձով, ձեռքին օձի երկգլխանի գավազան, գլուխների առանձում գունդ՝ խաչը վրան (նման գավազաններ կան Էջմիածնի թանգարանում): Լուսավորչի գլխին երկծայր խույր է, ոտքերի մոտ վիշապ օձը, որի գլուխը Գրիգոր Լուսավորիչը եզմում է գավազանի սուր ծայրով: Կողքին հրեշտակ է կանգնած[53]:

Մկրտիչ Հովնաթանյանի ազդեցությունը եկեղեցական զարդարանքների վրա ակնհայտ է: Երախտագիտությամբ հիշելով իրեն **բան** սովորեցնող ուսուցիչների անունները, Սահակ Ծաղկարարն աշխատում է իր գիտեցածը սովորեցնել ուրիշներին, հանրօգուտ աշխատանքներ կազմակերպել: Այդ են վկայում նրա թողած *«խրատների»* բաղադրատոմսերի, տեխնիկական, տեխնոլոգիական խոհուրդների տետրը (ձեռագիր 9029):

---

[51] ՄՄ 6248, թ. 99ա:
[52] ՄՄ 6248, թ. 44ա:
[53] ՄՄ 6248, թ. 44ա:

Սահակ Ծաղկարարն ունեցել է անհատ աշակերտներ, որոնցից, ըստ երևույթին, ամենից շատ կապված է եղել Գևորգ Պետրոսյան Աղազատյանի հետ[54]: Վերջինս խնամել է Ծաղկարարին, երբ ծերության օրերին նա հիվանդ է եղել: Սահակ Ծաղկարարն իր աշակերտի համար նկարներ է պատրաստում և նվիրում նրան՝ «**Յամի Տեառն 1834 յունվարի 31-ին նոր ի նորոյ յարմարեալ յինէն խոռանս այս ի վայելս հոգևոր ծնողին իմոյ Տեառն Յովհաննու սրբազնագոյն կաթողիկոսին նորագոյն կոնդակացն ծաղկելոյ աշխատեցի և շնորհեցի հարազատ աշակերտին իմոյ Պետրոսեան Գեորգին**»: – Նկարած է անկյունազարդ, կազմած վարդից և այլ ծաղիկներից (թերթիկ 7)։

Մի այլ թերթիկի վրա գրել է. «**Յանուն ծերունի սրբազան վեհապետին նոր ի նորոյ նկարեցի զայս յամի Տեառն $18\frac{10}{16}34$ և ընծայեցի Գէորգ աշակերտին իմոյ**» (թերթիկ 8)[55]:

Աշակերտն օգտվում է Ծաղկարարի նկարներից, իմն էլ ծաղկում և թերթերի վրա գրում իր անունը. «**...յայշայ է մենարանից վեկալած է սայ սալբու [ծառի] ղրաղի յայշայ որ ես Գէորգ Պետրոսեանս վեր կալայ վասն ծաղկելոյ ի սուրբ մենարանն ի 1837 մայիսի 12**» (թերթիկ 54)[56]:

Դա շրջանակի համար պատրաստած «**հաշեա**» է, որը կարող էր բանեցվել և կոնդակի և ասեղնագործության համար: Այն հանգամանքը, որ նշվում է «**սալբու ծառի ղրաղ**»-ը, մեզ համոզում է, որ դա՝ **սալբի ծառով**[57] **(ընդգծումը՝ Ս. Դ.)** ինչ-որ ասեղնագործության զարդարանքի շրջանակն է: Նկարը ծակծկված է, «**թօզլամայ**» արած, օգտագործված է *(տե՛ս նկ. 3)*:

***

Սահակ Ծաղկարարն իր նկարները պատրաստելիս օգտվել է իրենից առաջ եղած հին նկարիչների, իր ուսուցիչների նկարներից, սակայն

---

54 Գևորգ Պետրոսյան Աղազատյանը Վաղարշապատցի էր: Ծաղկել է հմայիլներ, կոնդակներ, օրհնագրեր ու զանազան նկարներ, որոնք պիտանի են եղել նաև ասեղնագործության համար: Նրա մեծ սնդուկում երկար տարիներ պահպանվել են իր արխիվը և մեծ բանակությամբ ներկեր ու նկարներ: Արխիվը ոչնչացած է, սակայն նրա նկարների մնացորդները կարող են գտնվել իր ժառանգների մոտ: Բժշկուհի Կարիկ Աղազատյանը, որը Գևորգի ծոռն է, պահպանում է մի մեծ, երկու կանթանի պղինձ: Դուցեև Սահակ Ծաղկարարի «ղրմզի ղազանն» է կամ դրա նմանը: Վաղարշապատում Աղազատյանները հայտնի են եղել որպես «Ծաղկարարեանք»:

55 ՄՄ 6248, թ. 42ա:

56 ՄՄ 6248, թ. 88ա:

57 Նոճի, մշտադալար ծառ:

միևնույն ժամանակ նա իմն էլ հորինում է, ստեղծում նոր նկարներ՝ **«ըստ խնդրոյ Աղայ Գալուստ էլիմիրզովին նոր ի նորոյ, առանց օրինակի և** ծնունդ **մտաց իմոյ յարմարեալ նկարեցի զայնս: Ի ծաղկազարդ սուրբ էջմիածնի $18\frac{6}{3}32$ Իսահակ եպիսկոպոս»** (անկյունազարդ նկար է, թերթիկ 5)[58]:

***

Սահակ Ծաղկարարն աշխատել է բարոյական, տնտեսական, բնակարանային, կենցաղային ամենածանր պայմաններում: Անվերջ դիմումներից հետո նրան մի **«դօշակ»** են տալիս, որը լինում է թրջված ու սառցակալած վիճակում, մաշված. **«…ճորընչալով տարայ փոնատան կտուրն փոեցի հազիւ թէ երեք շաբաթին միջումն չորացաւ. այսպիսի նեղութեամբս օրն յոթ թուղթ հաշիալու ծաղիկ էի անում, որ ծաղիկն՝ 7 գրագրաց չէր յագեցուցանում»**[59]:

Ինքը վշտով նկարագրում է իր աշխատանքի պայմանները. **«Ժամանակն էր ձմեռն, սաստիկ ցուրտ. խցերումն ամէն տեղ ոչ գոյր բուխարի. եւ ես տաթեւացի Գետրգ եպիսկոպոսի խցումն էի նստում սաստիկ ցուրտ. ոչ կարգի ժուժել և աշխատել, դեղորայս**[60] **սառում էր. ըստ որում էր ջրով զանգած զամխաջուր եւ այլն. փոնատան ելղունի կրակն էի բերում, որ ճամ ես տաքանամ, ճամ դեղորայսն տաքացնեմ. մինչ որ ղալամն թաթախում էի, որ բանեմ, սառում էր…**[61]:

…այն միջոցին, որ գնում էի ներսն ծաղիկ անելու, ոչ ֆեչայ, ոչ խալիչայ, ոչ կարպետ, ոչ ձին եւ ոչ նորն չունէի եւ երկու երեսն պատռեալ դօշակ մի ունէի, ասացի. ամէն օր տանում էի ներսն ձգում էի տակս, որ բանում էի եւ ներսէն բերում էի տակս էի ձգում գիշերն. մին ղարաբաղցի Թուանճիի Բաբայ անուն Իսրայէլ կայր, թերզութիւն[62] **գիտէր. նրա տակն Խորասանի խալիչայ էր ձգել Գրիգոր վարդապետն. եւ նա նստում էր Սիմէօն սրբազանի Վեհարանումն, եւ Գրիգոր վարդապետ գանձապահն միշտ գալիս էր մօտս վասն ելփուզայի ծաղկելոյն, մինչ պատմեցի իմ աշխատանքն եւ լալս վասն անբաղդութեան իմոյ, ապա թէ մին ձին կարպետ տուաւ, որ երկու-երեք տեղ**

58 ՄՄ 6248, թ. 39ա:
59 ՄՄ 6247, թ. 9բ:
60 Խոսքը ներկերի մասին է:
61 ՄՄ 6247, թ. 11ա:
62 Դերձակություն:

մեծմեծ ծակ լինելոյն[63]**. ծակ տեղերն տակս էի ձգում, որ եկողաց մօտն ամօթ չի կրեմ»**[64]**:**

Ծաղկարարի գլխին **«պատառեալ» առաստաղից** հող է թափվում և աշխատանքը փչացնում, սենյակը մութ է, խոնավ, ցուրտ[65]: Նա հիշատակում է, որ. **«Փանճարայն փոքր լինելոյն, մութն էր լինում. դուռն թէ բաց էի թողում, ծնկներս էր սառում, որոյ պտուղն է այս, որ վայելեմ ծնկացաւերս զանազան»**[66]**:** Այդ պայմաններում չի կարողանում աշխատել. **«...վասն որոյ՝ թողի մնալ մինչեւ ցգարունն, որ օրերն տաքանայ, ապա շինեմ»**[67]**:**

Ծաղկարարը խնդրում է պատուհանը մեծացնել, որ լույս լինի, թույլ չեն տալիս: Նորից դիմում է. **«յետոյ խնդրեցի որ բարձր իշոտնում շինել տայ, փանճարայի առաջին դնեմ դազկեաճի տակն, որ իբրև ստօլ**[68] **լինի, որ այնմ ժամանակին ոչ գոյր ստօլ, ըստ որում չէր սովորութիւն. եւ մին մաշակարի աթոռ խնդրեցի, որ նստեմ բարձր ու շինեմ»**[69]**:**

Այդ խնդիրն էլ չի հարգվում, ընդհակառակը՝ նա ենթարկվում է ծաղրի, անարգանքի ու հալածանքի: Դեռ երիտասարդ հասակից նրան չեն թողել հանգիստ աշխատի և միայն ծաղկարարությամբ զբաղվի, այլ նա և՛ ժամ է ասում, և առավոտ, երեկո հացին ծառայում, գավազանակիր է, կաթողիկոսի ձին հեծած ժամանակ դարձյալ գավազանակիր է, խաչակիր, ճանապարհորդությունների ժամանակ ուղեկցում է նրան և **«ծառայում հնազանդութեամբ»**[70]:

Ամենածանր պայմաններում, երբ բողոքում է նրա ամբողջ էությունը՝ Սահակ Ծաղկարարը մնում է **«հնազանդ»**[71]:

Նա պայքարել, բայց կռվել չի կարողանում, ինչպես անում էին այն ժամանակ այլ կրոնականներ (օրինակ Սիմեոն Բզնունին, որի մասին մի այլ անգամ): Սահակը տեսնում է բանտարկյալ վանականներին. **«եւ ի գիշերի երեքշաբթի աւուրն, աֆսոռեալ եկին միաբանքն ի խանէն Երեւանու ի Սուրբ Աթոռս, թրջուած որպէս ջրային կենդանիք, գլխիբաց և բոկ ոտով, լցրին**

---

63 ՄՄ 6247, թ. 13ա:
64 ՄՄ 6247, թ. 13բ:
65 ՄՄ 6247, թ. 11ա:
66 ՄՄ 6247, թ. 11ա:
67 Նույն տեղում:
68 Стол - «սեղան» (ռուս.):
69 ՄՄ 6247, թ. 11ա:
70 ՄՄ 6247, թ. 13բ:
71 Նույն տեղում:

զամենեսեանսն երեք-չորս հոգի մին սենեկի մեջ եւ ի լուսանալ առաւօտուն, կոչեաց՝ աստիճան աստիճան դատեաց եւ թոյլ ետ գնալ ի սենեակն իւրեանց...»[72]:

Խղճահարության հետ երևի և վախ է զգում: Փոխ հասակից իր կամքից անկախ ընկնում է հոգևոր դպրոց, ուր իշխում էր ֆալախան, ծեծը **«գերմերաստի»** ճիպոտը, վիրավորանքներն ու զրկանքները: Նա աշխատում է հարմարվել, համակերպվել ամենածանր պայմաններին, **«հնազանդ»** լինել:

Տարված լինելով ծաղկարարությամբ, ներկեր պատրաստելու եղանակով, ու արհեստներ զարգացնելու հարցով՝ Սահակ Ծաղկարարը շատ անգամ ուժ է գտնում աննկական հալածանքները, խոչընդոտները հաղթահարել և այդ ասպարեզում մի որևէ գործ կատարել, ապրել ստեղծագործական կյանքով և գրավել **«արհեստի կեօրայ»** դիրք:

Իր կյանքի ընթացքում նա համառորեն զբաղվում է ներկեր ստանալու տեխնո-ֆիմիական, տեխնոլոգիական խնդիրներով ու հարցերով, որոնք կապված են իր հիմնական զբաղմունքի, մասնագիտության՝ ծաղկարարության ու կիրառական արվեստի հարակից բնագավառների հետ:

Իր գիտեցածը և սովորածը նա հետագայում գրի է առել խորհուրդների, խրատների ձեռնարկի ձևով (ՄՄ 9029): Պահպանվել են նրա խրատների տետրերը, ուր գրված են զանազան ներկեր ստանալու փորձերն ու եղանակները, դեղատոմսերը, գործվածքը ծաղկելու տեխնիկական առաջարկները: Այսպիսով, տեսնում ենք, որ Սահակ Ծաղկարարը գործվածքը զարդարել-ծաղկել է և՛ վրձնով-գրչով (խոնհն-գրիչ-մազ ղալամ), և՛ կաղապարով:

Նրա գույների [ներկապնակը] շատ հարուստ է, հատկապես, երբ Ծաղկարարը բացատրում է, թե որ գույնը ինչպես ստանալ (թվարկում է, մի շարք գույներ, որոնք ավելորդ չէ վերհիշել): Գույներից հիշատակում է՝ սև, կապուտակ՝

«...շապի, որ առնէ զկարմրագոյն ներկ ի վերայ մուշասամի»[73], **«պարզագոյնն սորա, որ կոչվի սուս կամ բաց գոյն»**[74], **«մօռ-մանուշակագոյն»**[75], **«յորդն կարմիր որ է ղրմզն»**[76], **«զղեղնագոյն ներկս ի վերա ղալամքարի»**[77],

[72] ՄՄ 6247, թ. 8բ:
[73] ՄՄ 9029, թ. 32բ:
[74] Նույն տեղում:
[75] ՄՄ 9029, թ. 33ա:
[76] ՄՄ 9029, թ. 33բ:
[77] ՄՄ 9029, թ. 35ա:

մանուշակագույն՝ **«փեմպէգոյն որ է վարդագոյն», «փամբշտաներկին որ ասի իմիոնի**[78]**, դեղթափագոյն (որ կոչի նօխուտի)**[79]**, ...արծաթագոյն, նարնջագոյն, մոխրագոյն, մուգ կանաչ, պարզագոյն կանաչ, ոսկի...»**[80]:

Ներկերի այդ հարուստ գամման հնարավորություն է տվել վարպետին ստեղծել բազմագույն, բազմերանգ նկարներ և այդ բոլոր գույների մասին գրել **«խրատներ»**:

Սահակ Ծաղկարարը զբաղվել է նաև կտորներ ստեղծելով, որոնց մասին թողել է մանրամասն ցուցմունքներ:

«Խրատ» երկրորդում նա բացատրում է ինչպես ծաղկել.

«Խրատ երկրորդ. վասն խրնին գրչի (այն է մազ ղալամն)... և զխրնին գրիչդ ոչ իբրև զգրիչ հասարակ ըմբռնեացիս երբում մատամբ թէթեալ, այլ երկու մատամբ ըմբռնեալ բութիւ եւ ցուցական թէ ի գործ ածելդ գծաղիկս եւ թէ ի ներկելդ գծաղիկս...»[81]:

Առաջարկում է գրիչը, որի ծայրը պետք է բութ լինի, բռնել ուղիղ.

« ... եւ ոչ ծուռ իբրեւ զգրիչ այս ...»[82]:

Եվ շարունակում է.

«Խրատ երրորդ. զկնի ուսանելոյդ զգրիչն ըմբռնելոյ զհետ գայ ի վերա պաստառի գծագրել գծաղիկս և զըռէսիմս կամ զարմայս. եթե չունիս զշնորհս ընդ իմեեան գծագրել զպէսպէս ծաղիկս ի մէջ պաստառի ի ճանապարհ իմն դիւարգոյն, որ բազումք այս արհեստ այս շատոք ընթանան, երթ առ պատկերահանս եւ բաջ ծաղկարարս եւ գծագրեցո ի վերա թղթոյ եւ կամ պաստառի եւ ապա դիր զպաստառդ ի վերա ծաղկեալ թղթոյ, յորմէ իբրեւ զհայելի երեւի զգործս եւ, տեսեալ աչացդ fո, գծագրեա երկու մատամբդ յայնժամ»[83]:

Բացի գրչով նկարելը Սահակ Ծաղկարարը գործածել է կաղապարներ (ղալիբ), ինչպես սովորաբար դաջվում է կտորը: Հայ կանայք վաճառի նախատեսված մեծաքանակ ասեղնագործությունների համար գործ են ածել կաղապարներ (տրաֆարետ), որով զարդանկարը անց են կացրել կտորի վրա և հետո ասեղնագործել:

---

78 ՄՄ 9029, թ. 36բ:
79 ՄՄ 9029, թ. 37ա:
80 ՄՄ 9029, թ. 37բ, 38ա, 39բ:
81 ՄՄ 9029, թ. 39բ:
82 Նույն տեղում: Սահակը նկարել է եղևնու տերևի նմանվող թեք գրիչ:
83 ՄՄ 9029, թ. 39բ-40ա:

Չորրորդ խրատում ասվում է կաղապարի մասին.

«Իսկ արդ՝ ասացաք վասն շրջապատի եւ կամ եզերտկի (այսինքն՝ բյանարի) շրջանակէդոյն. յառաջի անդր կանոնի զխրատս նորին թէ պարտէ զայն միայն գաղափարաւ (այսինքն՝ ղալիբով) տպել զսեւագիծս, զի ձեռամբ չլինի երբէք, թէեւ լինի, շատ դժուար լինի»[84]:

Վեցերորդ խրատում Ծաղկարարը սովորեցնում է, ինչպես պաստառը (**«որ է կտաւ բարակ կամ չափաւոր»**[85]) ծածկել ներկով, ինչպես վարվել, եթե ներկը նկարի եզրագծերից դուրս է գալիս:

Եվ այդպես շարունակում է իր ***«խրատս»***-ները կտոր ներկելու մասին: Ներկելուց, չորացնելուց հետո **«զկապուտաներկս»**[86] նա խորհուրդ է տալիս կտորը մի բանի անգամ լվանալ և փռել մաճուր բարի կամ մարմարի վրա, որ չորանա. **«զի ոչ վնասիցի զվարդագոյն ներկս ի մտանելն ի մէջ ղազանին ղրմզոյ»**[87]:

Ուրեմն կտորը կապույտ գույնով ներկելուց հետո, լավ լվացվում, չորացվում է, և ըստ երևույթին որևէ մասսայով ծածկվում չներկվող մասը և նորից կարմիրով ներկում կարմիր ներկի կաթսայի մեջ:

Խրատ իններորդ՝ **«Զկնի կապուտաներկի պարտ է գործ առնել մազէ ղալամով. զպաղլեղաջուրս զանգեալ խեժիւ ամենայն ուրեք, զիարդ եւ իցէ ի մէջ ծաղկանց եւ ի թերթս նոցա, եւ ի ժամանակս գործածութեան գիտեա, զի զկէսն թերթից եւ կամ ծաղկանց շապաջրիւ լցո կէսն, եւ ոչ բոլորովին զայս շապաջրով ներկեալն խեժիւ մնացէ հինգ օր աւելի եւս, եւ ապա լուայ և ներկեա յորդան կարմրիւ ի մէջ ղազանին»**[88]:

Այստեղ շոշափվում են և՛ ներկը ամրացնելու, և՛ բացի կաղապարով ներկելը, նաև **«մազէ ղալամի»** համատեղ գործածությունը: Տասներորդ խրատում խորհուրդներ է տալիս բաց գույնի կարմրագույն և մանուշակագույն ներկելու մասին[89]:

Մենք կրկին համոզվում ենք, որ մեր ֆոնդերում եղած, նկարած զարդարանքները՝ նախշվել են դաջելու, կաթսայում ներկելու և բարակ գծերը, ծաղիկների երանգները գրչով նկարելու եղանակներով: Կան նույն ձևով կատարված եկեղեցական վարագույրներ:

---

[84] ՄՄ 9029, թ. 40ա:
[85] ՄՄ 9029, թ. 40բ:
[86] ՄՄ 9029, թ. 41ա:
[87] Նույն տեղում:
[88] ՄՄ 9029, թ. 41բ:
[89] ՄՄ 9029, թ. 41բ-42ա:

Նշյալ ձեռագրում արտագրված է լաջվարդ (կապույտ ներկ) ստանալու այն եղանակը, որ մենք հիշեցինք: Գրված է նախ արաբերեն լեզվով, արաբական տառերով, ապա գրված է հայերեն թարգմանությունը[90]:

Ոդան կարմիրից Սահակ Ծաղկարարի ստացած ներկով ծաղկազարդվել են ձեռագրերը, կոնդակները, կտորները, նաև մոմե կնիքները:

Խրատները շատ են, որոշները վերաբերվում են ոսկի և արծաթ հալելու, ոսկեգրելու օրենքներին: Սահակ Ծաղկարարի խրատների տետրերը, մանրանկարչության ու ասեղնագործության համար արված նկարները պահպանված փաստական վկայություններ են միջնադարյան դրոշմազարդության, ներկարարության, ծաղկա-զարդանկարչության վերաբերյալ:

***

Ծանր է եղել բազմատաղանդ, աշխատասեր, գեղեցիկի սիրահար, հանրօգուտ գործին նվիրված տաղանդավոր Ծաղկարարի կյանքը: Միամիտ Սահակ Ծաղկարարը միշտ ոգևորությամբ հավատացել է, որ իմը կարող է օգնել և ծառայել ժողովրդին՝ բարեկեցիկ կյանք ստեղծել, սակայն շրջապատված ծով տգիտությամբ, նախանձով ու արհամարհանքով՝ նա իր երազանքները չի կարողացել իրականացնել:

Ծերացած, հիվանդ, տառապելով ծանր հոդացավերով՝ նա իր վերջին ուժերն է հավաքել և գրել իմքնակենսագրականը, որը հանգիստ կարդալ չի կարելի: Նա թողել է իր օգտակար խրատները՝ այդ արժեքավոր ձեռնարկը՝ յուր աշակերտների, իրենից հետո եկողների համար: Ափսոսում ես, որ դաժան պայմանները նրան միշտ խեղդել են, իսկ այլ պայմաններում որքան մեծ գործեր կարող էր անել այդ կենդանի մտքի, բարձր գեղարվեստական ճաշակի տեր, արհեստների սիրահար մարդը:

Մենք պետք է շնորհակալ լինենք Սահակ Ծաղկարարի թողած ժառանգության համար, որը լույս է սփռում XIX դարում ասեղնագործ, նկարածդաջած, ներկած, ծաղկած զարդարանքների վրա:

Հավանական է, որ Սահակ Ծաղկարարի նկարները ավելի շատ են եղել, քան հասել են մեզ, մանավանդ, որ նկարները առանձին թղթերի վրա են: Նկարների մի մասը կարող էր կորչել, ինչպես կորել են հիշատակարանի շատ թերթեր: Եղածն էլ բավական է նրա նկարչական, գեղարվեստական ճաշակի,

[90] ՄՄ 9029, թ. 25բ:

տեխնիկական կարողություններ, նրա ամբողջ ստեղծագործության մասին գաղափար կազմելու համար: Նրա թողած նկարները, տետրերը, արժեքավոր ներդրում են XIX դարի հայկական կիրառական արվեստի մեջ:

Սահակ Ծաղկարարի նկարած բազմերանգ ծաղիկները, խոշոր, ոճավորված բույսերից կազմած գեղեցիկ զարդանկարները ամբողջ ծածկոցի, բարձի համար, նկարը եզրափակող շրջանակ-հաշիաները, որոնք կազմված են ավելի քան հարյուր տարի առաջ, այսօր էլ շատ բան կարող են հաղորդել ու սովորեցնել դեկորատիվ զարդարանքներով զբաղվող մասնագետներին ու նկարիչներին:

MERI KESHISHYAN, MERI MARTIROSYAN

ART CRITIC SERIK DAVTYAN'S UNKNOWN WORK: "SAHAK TSAGHKARAR"

Keywords: Sahak Tsaghkarar, Echmiadzin, Serik Davtyan, Armenian cochineal, embroidery, Matenadaran, art, ornament, Dilijan.

Among the 19th-century monks of Holy Etchmiadzin, a place of honor is occupied by the natural scientist, chemist, writer and miniaturist Bishop Sahak Ter-Grigoryan (1780-1858). He was known as a fine artist and manuscript illuminator and given the name Sahak Tsakhkarar. His contribution to the collection and preparation of Armenian cochineal was especially significant. Many of his manuscripts contain miniature sketches and floral ornaments, most of which are intended for embroidery, which has attracted the attention of specialists in miniature painting and embroidery.

The art critic and ethnographer Serik Davtyan (1893-1978) was particularly interested in the floral paintings intended for embroidery. She frequently addressed various details of Sahak Tsaghkarar's life and activities in her studies.

However, the unfinished work of Davtyan, presumably written in 1958, "Sahak Tsaghkarar," had remained unknown until now. In April 2021, we discovered it in her home archive and donated it to the Dilijan Local Lore Museum and Art Gallery. The research focuses on an important area of decorative and applied arts: Armenian embroidery, and the role of Sahak Tsaghkarar within this tradition. Davtyan mentions stylistic similarities between Armenian miniature painting and embroidery, considering them intentional rather than accidental. Serik Davtyan had previously examined manuscripts M6247, M6248, and M9029, which were written by Sahak

Tsaghkarar. She also examined a number of Tsaghkarar's draft drawings, which are preserved at the Matenadaran.

This article is published with our introduction.

МЕРИ КЕШИШЯН, МЕРИ МАРТИРОСЯН

НЕИЗВЕСТНОЕ ИССЛЕДОВАНИЕ ИСКУССТВОВЕДА СЕРИК ДАВТЯН: «СААК ЦАХКАРАР»

Ключевые слова: Саак Цахкарар, Эчмиадзин, Серик Давтян, *армянская кошениль*, вышивка, Матенадаран, искусство, орнамент, Дилижан.

Среди монахов Святого Эчмиадзина XIX века почетное место занимает естествовед, химик, писатель и миниатюрист епископ Саак Тер-Григорян (1780-1858 гг.). Известный как прекрасный художник и иллюстратор рукописей, он получил имя Саак Цахкарар. Особенно велик его вклад в методы сбора и приготовления армянской кошенили. Многие из его рукописей содержат миниатюрные зарисовки и цветочные узоры, большинство из которых представляют собой рисунки для вышивания, что привлекло внимание специалистов по миниатюрной живописи и вышивке.

Цветочные мотивы, предназначенные для вышивания, интересовали заслуженного деятеля искусств Армении, искусствоведа и этнографа Серик Давтян (1893-1978 гг.), которая в своих исследованиях регулярно обращалась к подробностям жизни и деятельности Саака Цахкарара. Однако до сих пор оставалась неизвестной ее незаконченная статья «Саак Цахкарар», предположительно написанная в 1958 году. Она была обнаружена в домашнем архиве искусствоведа в апреле 2021 года и передана нами в дар Дилижанскому краеведческому музею-галерее.

Статья посвящена одному из важных направлений декоративно-прикладного искусства – армянской вышивки и роли в нем Саака Цахкарара. Автор видит в армянской миниатюрной живописи и вышивке стилистическое сходство, которое считает неслучайным. Серик Давтян ранее изучала рукописи M6247, M6248, M9029, принадлежащие перу Саака Цахкарара, а также черновые рисунки, хранящиеся в Матенадаране.

ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
MANUSCRIPT STUDY
КОДИКОЛОГИЯ

ԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ*

DOI: 10.57155/POXA7340

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԵՑԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *Ամիդ, Ամիդի Սուրբ Սարգիս եկեղեցի, Մուշի Առաքելոց վանք, Սրապիոն Եդեսացի, Համառոտ Աստվածաշունչ, Հարանց վարք, Ամիդի Ավետարան, Սիրարփի Տեր-Ներսեսյան, Նիրա Սթոուն, 17-րդ դար:*

Օսմանյան կայսրության գավառական ամենամեծ կենտրոններից մեկը՝ եպիսկոպոսանիստ Ամիդը (ներկայումս Դիարբեքիր քաղաքն է, 16-րդ դարի վերջից կոչվել է նաև Տիգրանակերտ[1]) 16-րդ դարի կեսից դարձել է հայության ամենանշանավոր ուսումնագիտական կենտրոններից մեկը: Սրանով պայմանավորված՝ 16-րդ դարի վերջից Ամիդում զարգացում է ապրել գրչության արվեստը: Ս. Սարգիս և Ս. Կիրակոս եկեղեցիներին կից գործել է գրչության աշխատանոց-դպրոց (հիշատակարաններում՝ «դպրատուն»), որի կայացման ու զարգացման մեջ մեծ դեր են խաղացել Ամիդի առաջնորդներ Սրապիոն Եդեսացին (1592–1603 թթ.) ու Բարսեղ Արծրունին (1604–1640 թթ.)[2]: «Քարտուղար» կամ «գրչապետ» կոչումներով հայտնի ավագ գրիչների ղեկավարությամբ այս գրչակենտրոնում կանոնավոր գործունեություն են ծավալել գրիչներ, մանրա-

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, գիտաշխատող, anoush.sargsyan@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 21 դեկտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 28 մարտի, 2026:

1 **Գ. Երանյան**, «Ամիդը Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթը», *ԲՄ* հ. 32, 2021, էջ 52-67:

2 Ամիդի գրչության կենտրոնի մասին տե՛ս **Ն. Ակինեան**, «Բարսեղ վ. Արծրունի, եպիսկոպոս Ամիթի եւ վերատեսուչ Մուշի Առաքելոց վանքի», *ՀՍ*, 1956, թիւ 9-12, էջ 417-451, **Ս. Տէր Ներսէսեան**, «Նպաստ մը Ամիթի դպրոցի պատմութեան», *ՀՍ*, 1957, թիւ 3-5, էջ 177-181, **S. Der Nersessian**, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, 1973, pp. 58-59:

նկարիչներ, նորոգողներ ու կազմարարներ մինչև 17-րդ դարի 60-ական թթ.: Այդպիսով, Ամիդը դարձել է ձեռագրեր արտադրող տարածաշրջանային առաջատար կենտրոն:

Ամիդում գրչագրվել են բազմապիսի բնագրեր, որոնց զգալի մասը հատուկ պատվերով արված, ճոխ նկարազարդումներ ունեցող ձեռագրեր են: Այս դպրոցն առաջիններից է, որտեղ գրչագրվել ու նկարազարդվել են ամբողջական աստվածաշնչեր:

Ամիդի գրչության դպրոցի պատմության մեջ մեծ ավանդ ունի Ջանիբեկի ու Եթարի որդի, գրչապետ Հովհաննես երեցը (գործունեության շրջանը՝ 1582/1587-1621 թթ.), որին կարելի է համարել Ամիդի գրչության ու մանրանկարչության դպրոցի հիմնադիրը: Նրա կենսագրության աղբյուրը իր և աշակերտների գրչագրած ձեռագրերի հիշատակարաններն են:

Ամիդի առաջին սերնդի գրիչներ Ստեփանոս Կարմիրի ու Շահնազարի հետ նա աշակերտել է Աստվածատուր քահանա Ամդեցուն († 1594 թ.): 1592 թ. Հովհաննեսը սկսել է աշխատել Ամիդի առաջնորդ Սրապիոն Եդեսացու հովանավորության ներքո: Վերջինիս ու նրա աշակերտների պատվերով Հովհաննեսը մի շարք ձեռագրեր է գրչագրել ու նկարազարդել:

Հովհաննես երեցն աշխատել է Ս. Սարգիս եկեղեցում կամ եկեղեցուն կից աշխատանոցում, որը հետևյալ կերպ է ներկայացնում իր սերնդակից Ստեփանոս Կարմիրը. «Արդ գրեցաւ.... առ ոտս Յովհաննէս գրչապետին»[3]: 1601 թ. սկսած Հովհաննեսը ներկայացել է որպես ուսուցիչ: Նրա և աշակերտների թողած հիշատակարաններից պարզ է դառնում, որ հիմնականում ղեկավարել է ձեռագրերի գրչության աշխատանքներն՝ անձամբ ստանձնելով դրանց մանրանկարչությունը: Այսպես, Համառոտ աստվածաշնչի (1601 թ.) գրչության ընթացքում Հովհաննեսին օգնել է նրա աշակերտ Ասլանը, մյուս աշակերտ Աստատ դպիրը նրա ղեկավարությամբ Հարանց վարք է գրչագրել (1604 թ.): Մանրանկարչական դիրքով օժտված Ստեփանոս Կարմիրի որդին՝ Մինաս քահանան, օգնել է ձեռագրեր նկարազարդելիս և հետագայում նրան փոխարինել է ավագ գրչի պաշտոնում († 1637 թ.): Մյուս աշակերտ ու հոգեզավակ Մելքոնը, որն աշխատել է եկեղեցուց դուրս՝ Մարդինի դռան մոտ գտնվող Ջխալ Թաղամասի դստիկոնում, 1611 թ. սկսած գրչագրել է Հովհաննեսի նկարազարդած ձեռագրերի մեծ մասը: Կան նաև ձեռագրեր, որոնց պարագայում Հովհաննեսն աշխատել է

[3] *Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա*, հ. Բ, կազմեց Հ. Հ. *Ոսկեան*, Վիեննա, 1963, էջ 106-107:

խմբով: Այսպիսին է 1615 թ. Հարանց վարքը, որն իրականացրել է Մելքոնի ու Մինասի, իսկ 1621 թ. գրչագրած Ավետարանը՝ նույն Մելքոնի, Ս. Սարգսի ավագերեց Միաքյելի և Հովհաննես գրչի հետ:

Հովհաննես երեցը կիլիկյան մանրանկարչության հարուստ ավանդույթներին միաձուլելով ժամանակի հայկական ու եվրոպական ձեռագիր ու տպագիր գրքերի պատկերատիպերը, ուղղություններն ու ոճերը՝ ձևավորել է յուրատիպ մի ձեռագիր, որը կարելի է բնորոշել Ամիդի մանրանկարչություն անունով: Մասնավորապես մշակել է ավետարանական մանրանկարչության մի համակարգ ու ոճ, որին հետևել են Ամիդի դպրոցի բոլոր մանրանկարիչները: Նա նաև վերակենդանացրել է բարդ նկարազարդումներ ունեցող հարանց վարքեր ու համառոտ աստվածաշնչեր ընդօրինակելու ավանդույթը, որոնցով հայտնի է դարձել Ամիդի գրչության դպրոցը: Նրա մշակած և տարբեր բովանդակության ձեռագրերում կիրառած պատկերատիպերը մուտք են գործել Ամիդում նկարազարդված աստվածաշնչերի մանրանկարչության մեջ:

Հովհաննես երեցը թողել է ձեռագրական հարուստ ժառանգություն: Նա գրչագրել ու նկարազարդել է ութ Ավետարան, երեք Հարանց վարք, երկու Համառոտ աստվածաշունչ, մեկ Հայսմավուրք, մեկ Սաղմոսարան, երեք մեկնողական ժողովածու և վերանորոգել, կազմել ու լրացրել է ութ ձեռագիր: Նրա գրչագրած, նկարազարդած, լրացրած, նորոգած ու կազմած ձեռագրերը համալրել են Մաշտոցյան Մատենադարանի, Էջմիածնի մատենադարանի, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի, Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյան միաբանությունների, Նոր Ջուղայի, Դուբլինի Ջեսթեր Բիթի գրադարանի, Լոնդոնի Բրիտանական թանգարանի և Բալթիմորի Ուոլթերս արվեստի թանգարանի ձեռագրական հավաքածուները: Իսկ Օսմանյան կայսրության հայկական վանքերի ու եկեղեցիների մատենադարաններում պահված գրչագրերը հիմնականում կորսվել են Համիդյան զանգվածային կոտորածների (1894-1896 թթ.) և Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) արդյունքում: Հովհաննես երեցի գործունեության վայրում՝ Ամիդի Ս. Սարգիս եկեղեցում, պահվել են նրա գործերից մի քանիսը, որոնք 1878-1879 թթ. ցուցակագրել է Գարեգին Սրվանձտյանցը[4]: Վկայությունների

[4] **Ա. Մարգսյան**, ««Գիրք փակեալ կոտ են». Գարեգին Սրվանձտյանցի ցուցակագրած ձեռագրերի հետքերով», E-SAS (*Entries of the Society for Armenian Studies*) - http://entriessas.com/research-guides/%D5%A3%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%AB%D5%B6-%D5%BD%D6%80%D5%BE%D5%A1%D5%B6%D5%B1%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%81%D5%AB-

համաձայն, այդ հավաքածուն ոչնչացվել է 1895 թ. Համիդյան զանգվածային կոտորածների ժամանակ[5]: Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ Ս. Սարգսի 69 ձեռագրերից երեք պահպանված միավորից երկուսը Հովհաննեսի գրչին են պատկանում[6]:

Հովհաննես երեցի աշխատանքներն արժանացել են Սիրարփի Տեր-Ներսեսյանի, Քրիստինա Մարանչիի, Նիրա Սթոունի, Սիլվի Մերիանի ու Հելեն Էվանսի ուշադրությանը: Նրա ձեռագրական ժառանգությանը հատուկ անդրադարձել է Սիրարփի Տեր-Ներսեսյանը Ուոլթերս արվեստի թանգարանի թիվ 541 Ավետարանի նկարագրության առիթով՝ ներկայացնելով հետևյալ ձեռագրերը. Olim CES 9, DU 551, Olim TIG 53 (Տիգրանակերտի Ս. Սարգիս եկեղեցու նախկին հավաքածու, թիվ 53), Olim ARM 43, ET 44, ՄՄ 4912, BAL 541, Olim TIG 29, ՄՄ 1245, LOB Add.27.301, Olim PC 13, Olim TIG 31, WIK, Վիեն. 212, NOJ 79, եղմ. 285, եղմ. 260, եղմ. 1145, ITN 142 (Թոփքափը պալատի թանգարանի գրադարանի հավաքածու)[7]: Շարունակելով հետազոտությունը՝ ընդարձակել ենք Հովհաննեսի աշխատասիրած ձեռագրերի ցանկը: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր ձեռագրի վերաբերյալ ներկայացրել ենք ձեռագրագիտական ու արվեստաբանական ուսումնասիրություն:

Հովհաննես երեցի գրչագրած ու մանրանկարած ձեռագրերի համառոտ նկարագրությունները, մանրանկարների ցանկը ու դրանց վերաբերյալ ճշգրտումներն ու կարևոր տեղեկությունները ներկայացրել ենք ստորև: Ջպահպանված կամ մեր չուսումնասիրած ձեռագրերի մանրանկարների ցանկերը կազմելիս հիմնվել ենք ձեռագրերի նկարագրությունների վրա: Ապա համակարգել ենք կազմարարական ու նորոգչական, ինչպես նաև ձեռագրեր լրացնելու աշխատանքները, այնուհետև՝ «Յոհաննես Համթեցի» ստորագրությամբ չորս ձեռագրերն ու դրանց վերաբերյալ ուսումասիրությունը, և վերջում՝ Հովհաննես երեցին վերագրվող մանրանկարված էջերի քննությունը:

%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%AE-%D5%B1%D5%A5/ (12.01.2026):

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

7 **S**. **Der Nersessian**, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, pp. 58-59, նաև՝ **Ս**. **Տէր Ներսէսեան**, «Նպաստ մը Ամիթի դպրոցի պատմութեան», էջ 177-181: Ձեռագրական հավաքածուների հապավումների համար առաջնորդվել ենք ԲՄ-ի պահանջներով ու Բեռնադ Կուլիի կազմած լատինատառ հապավումների համակարգով, տե՛ս **B**. **Coulie**, *Armenian Manuscripts: Catalogues, Collections, Libraries* (Corpus Christianorum), Edition 2, Revised, Turnhout, 2020, pp. 450-462:

Հովհաննես երեցի գրչագրած ու մանրանկարած ձեռագրերը

ՄՄ 10326 (նախկինում պատկանել է Գրիգոր Ջաքարի Տերտերյանին, Հեզաջարիբ գյուղ)։ Հայսմավուրք։ Ժամանակ՝ 1587 թ.։ Տեղ՝ Ամիդ, Ս. Սարգիս եկ.։ Գրիչներ՝ Աստվածատուր ք., Հովհաննես դպ.։ Ստացող՝ Թլկատինցի Դանիել ք.։ Թերթ 601։ Նյութ թուղթ։ Մեծ.՝ 35,5×24,5։ Գր.՝ երկսյուն։ Գիր՝ բոլորգիր։ Կազմ՝ կաշեպատ տախտակ[8]։

Մանրանկարչություն

Լուսանցային մանրանկարներ *– Հովհաննես Մկրտչի գլուխը՝ 35ա, եկեղեցի՝ 61ա, խաչ՝ 64ա, 328բ, 481բ, Գրիգոր Լուսավորիչ՝ 90բ, սերովբե՝ 148ա, ֆանտաստիկ կենդանի՝ 194ա, կենդանի՝ 199բ, ծառ և թռչուններ՝ 226բ, Պողոս և Պետրոս՝ 233ա, եկեղեցի (Տեառնընդառաջ)՝ 306ա Հիսուս Քրիստոսը հարության խաչով (Հարություն)՝ 459 ա, խաչ և ծնկաչոք կերպար (Սուրբ խաչի երևման տոն. պատկերված կերպարը թերևս ստացողն է)՝ 469ա, եկեղեցի (Տապանակի տոն)՝ 579ա, Հիսուս Քրիստոս (Պայծառակերպություն)՝ 580բ։*

Բուսական, հանգուցային ու թռչնակերպ լուսանցազարդեր *– հանդիպում են գրեթե ամեն թերթի վրա։*

Անվանաթերթ *– 384ա։*

Գլխազարդեր *– 57ա, 108ա, 152բ, 201բ, 250բ, 255բ, 350բ, 418ա, 470ա, 512ա, 545բ։*

Գույներ *– կապույտ, դարչնագույն, կարմիր։*

Ծանոթություն. *Գրիգոր Մերենց Խլաթեցու՝ Հայսմավուրքի խմբագրմանը զուգահեռ՝ 15-րդ դարի կեսերից սկսել են մանրանկարվել նաև այս ծիսամատյանները[9]։ Հայսմավուրքերում հազվադեպ են հանդիպում ամբողջ էջով մեկ մանրանկարներ։ Սովորաբար, սրբերի պատումները պարփակող լուսանցքներում պատկերված է կա՛մ տվյալ սուրբը, կա՛մ նրա հետ կապված մի թեմատիկ մանրանկար, կա՛մ էլ տվյալ սրբի գործունեությունը բնութագրող ամբողջական տեսարանից մի դրվագ։*

---

[8] *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Բ, կազմ. ***Օ. Եգանյան***, ***Ա. Ջեյթունցյան***, ***Փ. Այնթաբյան***, խմբ. ***Լ. Խաչիկյան***, ***Ա. Մնացականյան***, Երևան, 1970, էջ 1094։ *Յուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանաց թանգարանի*, հ. Բ, կազմ. ***Լ. Մինասեան***, խմբ. ***Օ. Ս. Եգանեանի***, Վիեննա, 1972, էջ 233-234։

[9] Գրիգոր Մերենց Խլաթեցու խմբագրության մասին տե՛ս **Ա. Մաթևոսյան**, **Ս. Մարաբյան**, *Գրիգոր Մերենց Խլաթեցի*, Երևան, 2000։

Այս Հայսմավուրքի պատվիրատուն Դիարբեքիրի էյալեթի Արղնի սանջակի Շամիկ գյուղի քահանա Թլկատինցի Դանիելն է, որի մահից հետո ձեռագիրը փրկագնել է Ամիդի առաջնորդ Սրապիոն Եդեսացին և նվիրաբերել Սրուկ Թլակի Ս. Աստվածածին եկեղեցուն:

Հայսմավուրքը դեռևս դպիր Հովհաննեսը գրչագրել է իր ուսուցիչ Աստվածատուր «քարտուղար»-ի հետ: Թերևս այս ձեռագիրը Հովհաննեսի առաջին աշխատանքներից է: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Աստվածատուրը միայն ձեռագրի սկզբի հատվածի գրիչն է. 108ա էջից հանդիպում են Հովհաննեսի՝ որպես ձեռագրի գրչի հիշատակագրությունները: Գլխավոր հիշատակարանը նույնպես Հովհաննեսինն է:

Olim MUSA 63 (Մուշի Առաքելոց – Թարգմանչաց վանքի նախկին հավաքածու), non vidi: Ավետարան: Ժամանակ՝ 1588 թ.: Տեղ՝ Ամիդ, Ս. Սարգիս եկ.: Գրիչ՝ Հովհաննես: Պատվիրատու՝ Միմեոն խոջա սրկ.: Նյութ՝ թուղթ: Մեծ.՝ 25×19×6: Գր.՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր[10]:

Մանրանկարչություն

Ըստ Սահակ Մուրադյանի նկարագրության՝ ձեռագիրը նկարազարդված է եղել տերունական 14 մանրանկարներով, խորաններով, ավետարանիչների պատկերներով, անվանաթերթերով և լուսանցազարդերով:

***Մանոթություն.** Մանրանկարները բնորոշվում են «նուրբ» բառով: Նկարագրությունից ու հիշատակարանից երևում է, որ նկարազարդումներում ոսկի է օգտագործված. «....ոսկեզօծ են Աւետարանիչներու պատկերները, անոնց խորաններ եւ լուսանցազարդեր....»:*

Այս ձեռագիրը Միմեոն խոջա սարկավագը պատվիրել է Մուշի Առաքելոց վանքին հիշատակ թողնելու նպատակով: 1912 թ. Սահակ Մուրադյանը ձեռագիրը ցուցակագրել է նույն տեղում: Նշված թվականից հետո ձեռագրի վերաբերյալ տեղեկություններ հայտնի չեն:

Ավետարանի՝ Հովհաննես երեցի գրչին պատկանելու հարցը թեական է և հստակեցման կարիք ունի: Ձեռագրի նկարագրության մեջ նշված է գրչի անունը՝ Հովհաննես: Սակայն տպագրված հիշատակարանում վերջինիս անունը բացակայում է: Գրչին վերաբերող այնպիսի հատվածները, ինչպիսիք են «....Աւարտեցաւ սուրբ եւ գերարհրաշ Աւետարանս ձեռամբ անիմաստ սուտանուն գրչի, ի յիշատակ բարեմիտ և հեզահոգի....», կամ «....յիշեսջիք աղօթիւք ի Քրիստոս

[10] *Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից*, կազմ.՝ ***Ս. Ա. Մուրատեան***, ***Ն. Պ. Մարտիրոսեան***, խմբ. ***Ա. Գալանճեան***, Երուսաղէմ, 1967, էջ 55-56:

զբարի եւ աստուածասեր....» ընդհատվում են: Ըստ Մուրադյանի մեկնաբանության՝ երկու տեղում էլ չորս տող պակաս է: Այնուամենայնիվ, երկրորդ ընդհատվող հատվածը վերսկսվում է գրչի ուսուցիչ Աստվածատուրի անվան հիշատակումով. «....եւս առաւել զուսուցիչն իմ քաջ քարտուղար, զտէր Աստուածատուր քահանայ....»: Ինչպես հայտնի է, Աստվածատուրի աշակերտն է եղել նույն վայրում ու նույն ժամանակաշրջանում ապրած Հովհաննեսը: Մյուս կողմից, այս մասին է վկայում նաև Մուրադյանի նկարագրությունը: Հավանական է, որ նա գրչի անվանը հանդիպել է փոքր հիշատակագրությունների մեջ կամ մանրանկարներից մեկի տակ: Սովորաբար Հովհաննես երեցն իր ստորագրությունը թողել է Հովհաննես Ավետարանչի պատկերի տակ, ինչպես օրինակ ET 44 և BAL 541 ավետարաններում:

Olim CES 9 (Ս. Կարապետ վանքի Նոր գրադարանի նախկին հավաքածու), non vidi: Հարանց վարք: Ժամանակ՝ 1599 թ.: Տեղ՝ Ամիդ, Ս. Սարգիս եկ.: Գրիչ՝ Հովհաննես երեց: Նկարիչ՝ Հովհաննես երեց: Պատվիրատու՝ Սրապիոն եդեսացի: Ստացող՝ Հովհաննես եդեսեացի: Թերթ 414: Նյութ թուղթ: Մեծ.՝ 29×20: Գր.՝ երկսյուն: Գիր՝ նոտրգիր: Կազմ՝ կաշեպատ տախտակ[11]:

Մանրանկարչություն

Տրդատ Պալյանի նկարագրության համաձայն՝ ձեռագիրն ունեցել է 590 մանրանկար, որոնցում պատկերված են եղել բոլոր անապատական սրբերը: Վերջիններիս շարքում Պալյանն առանձնացնում է ձեռագրի վերջում զետեղված բարեխոսության թեմայով տեսարանը (407բ), որում, մակագրությունների համաձայն՝ պատկերված են գահակալ Քրիստոսի առջև ծնրադիր Սրապիոն եդեսացին («ընկալ Տէր զմաղթանս ծառայի քո Սրապիոնի») և նրանցից ներքև՝ Հովհաննես երեցը («Տէր Աստուած Յիսուս Քրիստոս յիշեա զմեղուցեալ նկարողս և ողորմեա»): Ձեռագիրը նկարազարդված է եղել նաև ոսկեզօծ լուսանցազարդերով, խորանով (4ա) և գլուխները զարդարող կիսախորաններով («ամէն գլխոց սկիզբն»)[12]:

Ծանոթություն. *Հովհաննես երեցն ընդօրինակությունը կատարել է Թադեոս Ավրամենցի անունով հայտնի Հարանց վարքից (եղմ. 285): Այս ձեռագիրը*

---

[11] **Տ. Պալեան**, «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Կարապետի վանուց նոր գրադարանի ի Կեսարիա», *Հմ*, 1959 թ., թիւ 9-11, էջ 433-443, նաև՝ **Ն. Ակինեան**, «Բարսեղ վ. Առծրունի, եպիսկոպոս Ամիթի...», էջ 417-451, **S. Der Nersessian**, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 58. **N. Stone**, *The Kaffa Lives of the Desert Fathers*, Lovani, 1997, pp. 90-91:

[12] **Տ. Պալեան**, «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Կարապետի վանուց նոր գրադարանի ի Կեսարիա», էջ 433-443:

գրչագրվել է Ավրամենցի ձեռքով Ղրիմի Ս. Անտոն վանքում 1430 թ., և 1443 թ. ձեռագրի ստացող Ղազար Ղրիմեցին նվիրաբերել է այն Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին: Ավելի քան 500 մանրանկար ունեցող այս ձեռագիրը համարվում է նկարազարդ հնագույն Հարանց վարքերից մեկը[13]*: Ըստ ամենայնի՝ Ավրամենցի ձեռագրից առաջին ընդօրինակությունը կատարել է Հովհաննես երեցը: Կեսարիայի գրադարանի ձեռագիրը առայժմ միակն է, որտեղ Հովհաննեսը թողել է իր ինքնանկարը:*

Ավրամեցնի Հարանց վարքը կրկնօրինակելու նպատակով Երուսաղեմի պատրիարք Դավիթ Մերտինցուց (1583-1613 թթ.) խնդրել է Սրապիոն եդեսացին, երբ 1591 թ. Ամիդի առաջնորդ Ղուկաս Կեղեցու հետ (1582-1592 թթ.) ուխտի է գնացած եղել Երուսաղեմ: Ուխտագնացությունից մեկ տարի անց՝ 1592 թ. Սրապիոն եդեսացին, դառնալով Ամիդի առաջնորդ, իր հետ բերած Ավրամենցի Հարանց վարքը հանձնել է Հովհաննես երեցին ընդօրինակելու պատվերով, և գրչության ավարտից հետո կրկին վերադարձրել է Երուսաղեմ: Սրապիոն եդեսացին կրկնօրինակությունը նվիրաբերել է իր հոգեզավակ և աշակերտ Հովհաննես եդեսացուն:

Հովհաննես եդեսացուն պատկանած և Կեսարիայի գրադարանում հանգրվանած ձեռագիրը համարվում է կորսված: Այնուամենայնիվ, ըստ Նիրա Սթոունի ենթադրության՝ որոշ էջեր պահպանվել են: Թադեոս Ավրամենցի Հարանց վարքին նվիրված ուսումնասիրության մեջ Սթոունը, համեմատելով Հովհաննեսի 1615 թ. նկարազարդած Հարանց վարքում (LOB Add. 27.301) և Վենետիկի Մխիթարյան մատենադարանի թիվ 1922 (1680) հինգ առանձին թերթից բաղկացած նկարազարդ ձեռագրի պատառիկում հանդիպող «Որք զդրախտի լեառն գտին» մանրանկարը, տեսակետ է հայտնել, որ Վնտկ. 1922 ձեռագրի մանրանկարված էջերը պատկանում են Հովհաննեսի՝ Ս. Կարապետի վանքի գրադարանի Հարանց վարքին[14]*: Սթոունն իր կարծիքը հիմնավորել է նրանով, որ ի*

---

[13] **N. Stone**, *The Kaffa Lives of the Desert Fathers*.

[14] **N. Stone**, *The Kaffa Lives of the Desert Fathers*, pp. 90-91. Ձեռագրերի նկարագրությունը տե՛ս *A Catalogue Armenian Manuscripts in the British Museum*, ed. ***M. A. Conybeare***, London, 1913, pp. 209-215, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ը, կազմ.՝ ***Ս. Ճեմճեմեան***, Վենետիկ, 1998, էջ 657-660, նաև՝ *Varkh Harants - Vite dei Padri. Il manoscritto 1922/1680 della Biblioteca Mechitarista di S. Lazzaro, Venezia*, a cura di ***Alberto Peratoner***, Venezia, Nova Charta, 2019 (Այս ուսումնասիրությանը հատվածաբար ծանոթացել ենք չէջադրված տարբերակով, որի պատճառով էջահամարները չենք նշում): Վնտկ. 1922 ձեռագրի ուսումնասիրության մեջ Աննա Շիրինյանը, համակարծիք լինելով Նիրա Սթոունի հետ, համարել է, որ մանրանկարված էջերը պատկանում են *Olim* CES 9 Հարանց վարքին:

տարբերություն Ավրամենցի ինքնօրինակի՝ նշված ձեռագրերում դրախտի ծառերի պատկերագրությունն ու ոսկու օգտագործմամբ ոճավորումը նույնն է: Ուսումնասիրողը նմանություն է տեսել նաև այդ երկուսի և Հովհաննեսի 1601 թ. նկարազարդած Համառոտ աստվածաշնչի (DU 551) Դրախտը պատկերող մանրանկարի եդեմական պարտեզի տեսարանի միջև: Սակայն Վնտկ. 1922-ի նկարագրությունից հայտնի է, որ ձեռագիրը Վենետիկի հավաքածու է մուտք գործել հայր Ներսես Սարգիսեանի միջոցով 1846-1852 թթ. Հայաստան կատարած ուղևորությունների արդյունքում[15]*: Իսկ ինչպես հայտնի է, Տրդատ Պալյանը կեսարիայի Ս. Կարապետի վանքի գրադարանի ձեռագրերի ցուցակը կազմել է 1913-1914 թթ. ընթացքում: Բացառում ենք նաև, որ Պալյանի նկարագրության ժամանակ Ս. Կարապետի գրադարանի Հարանց վարքը հատված էջեր ունենար, քանի որ նկարագրության մեջ ձեռագրի վիճակը գնահատվում է գերազանց: Այսպիսով, Վնտկ. 1922 ձեռագրի մանրանկարված էջերը չեն կարող Ս. Կարապետի վանքի գրադարանի Հարանց վարքինը լինել:*

Պալյանի նկարագրած կեսարիայի ձեռագրի մանրանկարչության մասին կարելի է ընդհանուր պատկերացում կազմել՝ դատելով Ավրամենցի Հարանց վարքից, ինչպես նաև Հովհաննեսի նկարազարդած 1615 թ. օրինակից (LOB Add.27.301), այնպես էլ եղմ. 23 ձեռագրերից: Վերջին ձեռագիրն ընդօրինակվել է 1625 թ. Հալեպի Քառասուն մանկանց դաստատանը[16]*: Ինչպես հայտնի է, կեսարիայի Ս. Կարապետի գրադարանի ստացող Հովհաննես Եդեսացին 1625 թ. Հալեպի առաջնորդն է եղել և նստել է Քառասուն մանկանց եկեղեցում*[17]*: Ամենայն հավանականությամբ, եղմ. 23 Հարանց վարքը ընդօրինակվել է կեսարիայի վերոնշված ձեռագրից: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ Ավրամենցի նկարազարդման համակարգին հետևող 17-րդ դարում գրչագրված հարանց վարքերի մի մասն ընդօրինակվել է ոչ թե բնօրինակից, այլ Հովհաննես երեցի ընդօրինակություններից*[18]*:*

---

[15] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ը, էջ 657-660:

[16] *Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. I, կազմ.՝ **Ն. եպս. Պողարեան**, Երուսաղէմ, 1966, էջ 116-125:

[17] **Կ. Ա.մատունի**, «Ժէ դարի երևելի վարդապետներ», *Բազմավէպ*, 1987, թիւ 1-4, էջ 64-69:

[18] Այս հարցին անդրադառնել ենք 2024 թ. հուլիսի 26-ին Մատենադարանում տեղի ունեցած «Հայկական գրական հորիզոններ. ընթերցողներն ու գրային առաջնահերթությունները վաղ արդի շրջանում» միջազգային գիտաժողովում՝ «Հարանց վարք. ձեռագրից տպագիր գիրք փոխադրության անհայտ կողմերը» վերնագրով զեկույցում:

DU 551 (Ջեսթեր Բիթի գրադարան)։ Համառոտ աստվածաշունչ։ Ժամանակ՝ 1601 թ.։ Տեղ՝ Ամիդ, Ս. Սարգիս եկ.։ Գրիչներ՝ Ասլան, Հովհաննես։ Նկարիչ՝ Հովհաննես։ Պատվիրատու և ստացող՝ Սրապիոն եղեսացի։ Էջ՝ 37։ Նյութ՝ մագաղաթ։ Մեծ.՝ 30.6×17.9։ Գր.՝ խառը։ Գիր՝ բոլորգիր։ Կազմ՝ կարմրաշագանակագույն դրոշմազարդ կաշի[19]***։***

Մանրանկարչություն և աղյուսակներ

Ամբողջ էջով մանրանկար – Դրախտ՝ 4։

Տեքստամիջյան մանրանկարներ – Ադամն ու Եվան դրախտում՝ 7, Նոյ նահապետ՝ 9, Աբրահամ նահապետ՝ 10, Հակոբ նահապետ՝ 11, Մովսես մարգարե՝ 13, Հեսու Նավե՝ 14, Բենիամին՝ 16, Դավիթ թագավոր՝ 17, Եղիակիմ՝ 25, Եղիազար՝ 27, Էմանուել Քրիստոս՝ 29, Վշտացյալ Քրիստոս՝ 30, Տիրամայրը մանկան հետ՝ 31, Պետրոս առաքյալ՝ 31, Հակոբոս Մեծ՝ 31, Հովհաննես Ավետարանիչ՝ 31, Հակոբոս Փոքր՝ 32, Սիմոն Կանանացի՝ 32, Թադեոս առաքյալ՝ 32, Անդրեաս առաքյալ՝ 32, Փիլիպոս առաքյալ՝ 32, Բարդուղիմեոս առաքյալ՝ 32, Մատթեոս Ավետարանիչ՝ 33, Թովմաս առաքյալ՝ 33, Մատաթիա առաքյալ՝ 33, Պողոս առաքյալ՝ 33, Հովսեփ–Բառնաբաս՝ 34, Ալփեոսի որդի Բառնաբաս՝ 34։

Գլխազարդ – 5։

Աղյուսակներ – Ազգաբանական նկարազարդ ծառ–աղյուսակներ՝ 7-30։ Աստվածաշնչի գրքերի ծառ –աղյուսակ (խորագիրը՝ «Աստուածային գրեանք»)՝ 6։ Նոյի տապանի չորս ձևեր (մակագրությունները՝ «Ձև տապանին ըստ Մովսիսի», «Ձև տապանին ըստ Յովսեփա պատմագրին», «Ձև տապանին ըստ հին վարդապետաց» և «Ձև տապանին ըստ վարդապետաց»)՝ 8-9։ Ելից Ճանապարհի 42 օթևանների աղյուսակ – տախտակ (մակագրությունը՝ «Այս են խբ (42) օթևանք ժողովրդեանն Իսրայէլի յանապատին Սինէա ի յերիս ամս»)՝ 16։ Վկայության տապանակի շուրջը Իսրայելի տասներկու ցեղերի վրաններիտեղադրության աղյուսակ՝ 16։ Երուսաղեմի հատակագիծ՝ 25։

Զարդագրեր –կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր։

Գույներ–կարմիր, բալագույն, կապույտ, երկնագույն, կանաչ, դեղին, նարնջագույն, մանուշակագույն, օխրա, շագանակագույն և ոսկի։

---

[19] **S. Der Nersessian**, *The Cheaster Beatty library, A catalaogue of the Armenian manuscripts*, V.I. Text, Dublin, 1958, pp. 3-7, նաև **S. Der Nersessian**, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 58. Ձեռագրի թվային առցանց տարբերակը տե՛ս այս հղմամբ. https://viewer.cbl.ie/viewer/object/Arm_551/1/LOG_0000/ (12.01.2026)։

Մանոթություն. *ձեռագիրը գրվել ու մանրանկարվել է Հովհաննես երեցի և նրա աշակերտ Ասլանի ձեռքով: Հովհաննեսի աշակերտ Ասլանը, որը մահացել է ձեռագրի գրչության ընթացքում քսան տարեկան հասակում, ձեռագրի մեծ մասի գրիչն է: Հովհաննես երեցի վկայությամբ՝ Ասլանը հմտացած է եղել նաև պարսկերեն, արաբերեն և օսմաներեն գրչության ու մանրանկարչության մեջ. «....զի ոչ թէ գրչութեանս և նկարագրութեանս զմերս միայն ուսաւ (Ա. Ս.՝ Ասլանը) այլ զայլասեռ երից ազանց զպարսին, զարապին, և զթուրքին....»: Հովհաննեսը ոճապատկերագրական առումով խմբագրել է Համառոտ աստվածաշունչ բնագիրը և հավելել Դրախտը պատկերող առաջնապատկերը: Հովհաննես երեցը նորարարական մոտեցում է ցուցաբերել ձեռագիրը կազմելու հարցում. բովանդակությունը շարադրված է կտորներով իրար սոսնձած մագաղաթյա թերթի մի երեսին, որին գրքի տեսք է տրվել զիգզագաձև ծալվածքների և կաշվե կազմի միջոցով: Առաջին և վերջին էջերն ամրացրած են կազմի փեղկերին, և դրանք աստառի դեր են կատարում: Կազմի մեջք չունենալու պատճառով ձեռագիրը երկու երեսից բացվելու հնարավորություն ունի: Հայ կազմարվեստում թերևս առաջին անգամ հանդիպող այսօրինակ ալբոմային գրքերը, որոնք հայտնի են ակորդեոն–գիրք անունով, տարածված են եղել իսլամական գրքարվեստում*[20]*:*

Ըստ Ջեսթեր Բիթի գրադարանի աշխատակից Հիդեր Աբասի տրամադրած տեղեկության՝ Սըր Ջեսթեր Բիթին ձեռագիրը գնել է 1936 թ. մարտի 13-ին գրավաճառ գործակալից, որն էլ իր հերթին ձեռք է բերել 1936 թ. Լոնդոնի '46 Great Russell Street' հասցեում գտնվող հայտնի 'Luzac & Co' արևելյան գրքերի գրատնից, ապա փետրվարի վերջին առաջարկել Սըր Ջեսթեր Բիթիին: Սըր Ջեսթեր Բիթիի հավաքածուի մեջ մտնելուց առաջ ձեռագիրը պատկանել է անհայտ հավաքածուի, որի մասին է վկայում կազմի ներսում մակագրված թվահամարը՝ «թիւ 225»:

Պատվիրատու Սրապիոն եղեսացին ձեռագիրը պատվիրել է անձնական օգտագործման համար, իսկ հետագայում՝ իր և ծնողների անունից հիշատակ թողնելու նպատակով. «....եւ գրել զսա ոսկենկար զարդարիւ ի վայելումն անձին իւրոյ սրբասիրի ի ներկայս և յապագայն պատուական անուան իւրոյ և հոգւոյն յիշատակ և ծնօղաց իւրոց հօրն խոճայ Դանիելին և նախնեացն իւր»: Այնուա-

[20] Համառոտ աստվածաշնչի մասին ուսումնասիրությունը տե՛ս **A. Sargsyan**, "The Origin of The Armenian Manuscripts Chester Beatty Library 551 and Matenadaran 10772", *REArm*, tome 38, 2018, pp. 103-131.

մենայնիվ հայտնի չէ, թե որ վանքին կամ եկեղեցուն է Սրապիոն եդեսացին ձեռագիրը հիշատակ թողել։

ՄՄ 10772 (Մատենադարան, Հարություն Հազարյանի նախկին հավաքածու, թիվ 83)։ Համառոտ աստվածաշունչ։ Ժամանակ՝ 1602-1607 թթ.։ Տեղ՝ Ամիդ, Ս. Սարգիս եկ.։ Գրիչ և նկարիչ՝ Հովհաննես։ Պատվիրատու՝ Հովսեփ Հզվեցի։ Թերթ 18։ Նյութ՝ թուղթ։ Մեծ.՝ 31,2×22։ Գր.՝ խառը։ Գիր՝ բոլորգիր։ Կազմ՝ շագանակագույն դրոշմազարդ կաշի[21]։

Մանրանկարչություն և աղյուսակներ

Տեքստամիջյան և մեդալիոնային մանրանկարներ *— Ադամն ու Եվան դրախտում՝ 3ա, Նոյ նահապետ՝ 4ա, Աբրահամ նահապետ՝ 4բ, Մովսես մարգարե՝ 6ա, Հեսու Նավե՝ 6բ, Բենիամին՝ 7բ, Դավիթ թագավոր՝ 8ա, եղիակիմ՝ 11բ, եղիազար՝ 13ա, էմանուել Քրիստոս՝ 14ա, Վշտացյալ Քրիստոս՝ 14բ, Տիրամայրը մանկան հետ՝ 15ա, Պետրոս առաքյալ՝ 15ա, Հակոբոս Մեծ՝ 15ա, Հովհաննես Ավետարանիչ՝ 15ա, Հակոբոս Փոքր՝ 15բ, Սիմոն Կանանացի՝ 15բ, Թադեոս առաքյալ՝ 15բ, Անդրեաս առաքյալ՝ 15բ, Փիլիպոս առաքյալ՝ 15բ, Բարդուղիմեոս առաքյալ՝ 15բ, Մատթեոս Ավետարանիչ՝ 16ա, Թովմաս առաքյալ՝ 16ա, Մատաթիա առաքյալ՝ 16ա, Պողոս առաքյալ՝ 16ա, Հովսեփ — Բառնաբաս՝ 16բ, Ալփեոսի որդի Բառնաբաս՝ 16բ։*

Գլխազարդ *— 2ա։*

Աղյուսակներ *— Ազգաբանական նկարազարդ ծառ — աղյուսակներ՝ 3ա—14բ։ Աստվածաշնչի գրքերի ծառ — աղյուսակ (խորագիրը՝ «Աստուածային գրեանք»)՝ 2բ։ Նոյի տապանի չորս ձևեր (մակագրությունները՝ «Ձև տապանին ըստ Մովսիսի», «Ձև տապանին ըստ Յովսեփա պատմագրին», «Ձև տապանին ըստ հին վարդապետաց» և «Ձև տապանին ըստ վարդապետաց»)՝ 3բ—4ա։ Ելից Ճանապարհի 42 օթևանների աղյուսակ — տախտակ (մակագրությունը՝ «Այս են ԽԲ. (42) օթևանք ժողովրդեանն Իսրայէլի յանապատին Սինէա ի յերիս ամս»)՝ 7բ։ Վկայության տապանակի շուրջը Իսրայելի տասներկու ցեղերի վրանների տեղադրության աղյուսակ՝ 7բ։ Երուսաղեմի հատակագիծ՝ 12ա։*

Զարդագրեր *— կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր։*

---

[21] *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Գ, կազմ. **Ա. Մալխասյան**, խմբ. **Ա. Տէր-Մովսիսյանի**, Երևան, 2007, էջ 196, **Օ. Եգանյան**, *Աշխատութիւններ. Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուները*, մաս Բ, հրատարակության պատրաստեց **Գ. Տէր-Վանդանեան**, Երևան, 2014, էջ 267-270։ Օնիկ Եգանյանի նկարագրության մեջ ձեռագիրը սխալմամբ ներկայացված է Մատենադարանի 10681 թվահամարի տակ։

Գույներ *– կարմիր, բալագույն, կանաչ, դեղին, կապույտ, երկնագույն, մանուշակագույն, օխրա, շագանակագույն և ոսկի:*

Մանրանկարչություն. *Ձեռագիրը խունացած է և մաշված, ունի խոնավության հետքեր: Մանրանկարներից մկրատած է Հակոբ նահապետի պատկերը (էջ 5ա), իսկ մնացած մանրանկարների մեծ մասի գույները թափված են: Ձեռագրում բացակայում է նաև Դրախտը պատկերող մանրանկարը, որը հավանաբար ընկել է:*

Այս Համառոտ աստվածաշունչը Մատենադարանին է նվիրաբերել նյույորքաբնակ հայտնի կոլեկցիոներ Հարություն Հազարյանը 1977 թ.[22]: Ըստ երևույթին, ձեռագիրը Նյու Յորքում է հայտնվել հետագա ստացողի ձեռքով: Ձեռագրի հիշատակագրություններից տեղեկանում ենք, որ ձեռագիրն Օսմանյան կայսրության տարածքում է գտնվել մինչև 19-րդ դարի վերջը: Ըստ Աա. թղթե պահպանակի վրա եղած մակագրության՝ 1891 թ. մայիսի 12-ին «Մկրտիչ Խ. Պա//ար»-ը Կարինում, ծննդյան առիթով. ձեռագիրը նվիրել է Սանասարայան վարժարանի տեսուչ և ուսուցիչ Սարգիս Սողիկյանին (1854-1937 թթ.). «Առ սիրելիդ իմ Սարգիս Սողիկեան ի յիշատակ ծննդեան տարեդարձին»: Իսկ Սողիկյանը, Յեղասպանությունից փրկվելով, հաստատվել է Նյու Յորքում[23]:

Նույն պահպանակի վրա կան նաև 19-րդ դարում արված այլ մակագրություններ, որոնց շարքում ընթերցում ենք՝ «Արշակ Աւետիս Տէր Մխիթարեան», «Վարդան Յակոբեան Մշեցի» անուններն ու «1812 գիրդ///» եղծված տողը: Այս գրություններով ձեռագրի անցած ճանապարհի թելը կտրվում է մինչև գրչության ժամանակը: Գլխավոր հիշատակարանի համաձայն՝ ստացողն է Գոմաց վանքի առաջնորդ, Սրապիոն եդեսացու աշակերտ Հովսեփ Հզվեցի վարդապետը: Վերջինս ձեռագիրը նվիրաբերել է իր հայրենի երկրամաս Արղնի Բարձրահայաց Սուրբ Աստվածածին վանքին. «Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զստացօղ սորին՝ զվերոյգրեալ Յովսեփ վարդապետն, որ եդ զՀամառաւտ տոհմաթիւ Աստուածաշունչ տառս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց ի դուռն Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի, ի բնիկ քաղաքն իւր Հզոյ»[24]:

Olim ARM 43 (Արմաշի դպրեվանքի նախկին հավաքածու), non vidi: Սաղմոսարան («Յաղագս երգոց Սաղմոսարանին եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ և Սաղմոս»): Ժամանակ՝ 1607 թ.: Տեղ՝ Ամիդ, Ս. Սարգիս եկ.: Գրիչ՝ Հովհաննես: Նկարիչ՝ Հովհաննես: Պատվիրատու՝ տեր Հովհաննես Ուռհայեցի (եղե-

[22] Նույն տեղում:

[23] **H. A. Tarbassian**, *Erzurum (Garin): Its Armenian History and Traditions*, U. S, 1975, p. 110.

[24] **Ծ. Եգանեան**, *Աշխատութիւններ*, էջ 267-270:

սացի) և որդի Հովհաննես կր.: Թերթ 330: Նյութ թուղթ: Մեծ.՝ 13×9.5x5: Գր.՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ դրոշմազարդ կաշի[25]:

Մանրանկարչություն

Ըստ ձեռագրացուցակի՝ Հովհաննեսը ձեռագրում պատկերել է քնարը ձեռքին Դավիթ թագավորին, Մովսես, Ամբակում, Հովնան, Եզեկիա, Եսայի մարգարեներին և Ս. Աննային, ինչպես նաև՝ համապատասխան ձևավորմամբ խորաններ (խորանի մեջտեղում բազմած է Դավիթ թագավորը՝ ձեռքին Սաղմոս «երանելի» գրությամբ), կիսախորաններ, լուսանցազարդեր ու զարդագրեր: Մանրանկարները զարդարված են եղել ոսկով[26]:

Ծանոթություն. *Կիսախորանի մեջ պատկերված Դավիթ թագավորի, ինչպես նաև մարգարեների պատկերներ հանդիպում են Ամիդում նկարազարդած աստվածաշնչերում (օրինակ՝ ՄՄ 187, էջ 214 ա, 292բ, 291ա, 328ա, 267բ):*

Արմաշի վանքի մատենադարանի այս և մնացած 222 ձեռագրերը ոչնչացվել են Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) ընթացքում[27]: Ձեռագրի պատվիրատուն է Սրապիոն եղեսացու աշակերտ և հոգեզավակ Հովհաննես եղեսացին, որն իր ուսուցչից նախկինում նվեր է ստացել Հովհաննես երեցի՝ 1599 թ. գրչագրած Հարանց վարքը (Olm CES 9):

ET44: Ավետարան: Ժամանակ՝ 1607 թ., 1608 թ.: Տեղ՝ Բաղեշ, Գոմաց վանք, Ամիդ, Ս. Սարգիս եկ.: Գրիչ՝ Հովսեփ եպ.: Ծաղկող և կազմող՝ Հովհաննես: Ստացող՝ Ջուղայեցի խոջա Մահսումն: Թերթ 252: Նյութ թուղթ: Մեծ.՝ 18×14×7,5: Գր.՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Կազմ՝ դրոշմազարդ շագանակագույն կաշի, Ա փեղկին՝ խաչ, Բ փեղկին՝ փոքրիկ խաչեր ու ծաղկանախշեր, դռնակը՝ ծաղկանախշ[28]:

Մանրանկարչություն

Խորաններ—1ա,բ, 2ա, 3ա, բ, 4ա, բ, 5ա, բ, 6ա:
Ավետարանիչներ—Մարկոս՝ 80բ, Ղուկաս՝ 128բ, Հովհաննես և Պրոքորոն՝ 208բ:
Անվանաթերթեր—7ա, 81ա, 129ա, 209ա:

---

[25] *Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին*, կազմ.՝ ***Յ. Թօփճեան***, Վենետիկ, 1962, էջ 154-157, նաև՝ **S. Der Nersessian**, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 58:

[26] *Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին*, էջ 154-157:

[27] Նույն տեղում, էջ 5-7:

[28] «Յուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», *Էջմիածին*, 1951, թիվ 1-3, էջ 87-88:

Մատթեոսի Ավետարան, լուսանցային մանրանկարներ—*եկեղեցի՝ 65ա, խաչ՝ 74ա:*

Մարկոսի Ավետարան, լուսանցային մանրանկարներ—*Ծառ՝ 108բ, 109բ, եկեղեցի՝ 110բ, 114բ:*

Ղուկասի Ավետարան, լուսանցային մանրանկարներ—*ծառ՝ 192բ, խաչ՝ 203ա:*

Հովհաննեսի Ավետարան, լուսանցային մանրանկարներ—*Ոչխար (Բարի հովվի առակը)՝ 239բ, խաչ՝ 257ա, Հովսեփ Արիմաթացի՝ 258բ, եկեղեցի՝ 262բ:*

Բուսական – հանգուցային և թռչնակերպ լուսանցազարդեր *– բազմաթիվ:*

Գույներ *– կարմիր, կապույտ, կանաչ, վարդագույն, օխրա:*

Ծանոթություն. *Խորանապատակերների դասավորությունը խառն է՝ Եվսեբիոսի թուղթն առ Կարպիանոս (2ա-3բ) խորանապատակերներից առաջ երկու համաբարբառի խորան կա, 3բ և 4ա էջերի միջև երկու թերթ պակասում է: Խորանապատակերները նաև վնասված են, գույները տեղ-տեղ թափված: Այնուամենայնիվ, դրանք պարզունակ են և գունավորված են կարմիրով ու կապույտով: Ավետարանիչների պատկերները, անվանաթերթերն ու լուսանցային պատկերները հորինվածքով նման են «Ամիդի ավետարանի» նույնօրինակ պատկերներին (BAL 541):*

Հովհաննես երեցը ավետարանիչների պատկերների տակ թողել է նրանց խորհրդանիշներին ձոնված բանաստեղծական տողեր: Նրա օգտագործած տարբերակը հանդիպում է 1309 թ. վերագրվող մի Ավետարանում, որը թերևս կիլիկյան ծագում ունի[29]*: Այս սկզբնական տարբերակը մի փոքր ընդարձակ է, և դրանում բացակայում է Մարկոս Ավետարանչի խորհրդանիշին վերաբերող հատվածը: Բացի այդ՝ ամեն խորհրդանիշի վերաբերյալ բանաստեղծական տողերից հետո հիշատակված է գրչի անունը: Իսկ Հովհաննեսն իր մակագրությունը թողել է միայն Հովհաննես Ավետարանչի պատկերի տակ՝ շարունակելով խորհրդանիշին ձոնված հանգավոր տողերը.*

«Այս Յովաննէս աւծուանման,
Թռեաւ մտաւմն անհասական,
Առ ի պատմել որդոց մարդկան,
Զանճառ էիցս հաւրական:
Եւ ես ծաղկողս անարժան,
Որ Յովանէս կոչիմ յանուան,
Ըզիս արէմ յիշման արժան

[29] **Ա. Սարգսյան**, ««Գիրք փակեալ կուտ են»....»:

եւ զնեզ աւրհնէ ամման արքայն»[30]։

Ավետարանի ստացողն է ջուղայեցի խոջա Մահսումը, որն առևտուր անելու նպատակով գալով Ամիդ, Հովհաննեսին պատվիրել է լրացնել գրչագրած ձեռագրի թերի հատվածները՝ այսինքն գլխագրերը, մանրանկարչությունը, կազմելը. «....եւ եթ լնուլ զթերին զգլխագրելն զծաղկելն և զկազմելն»։

ANUSH SARGSYAN

THE MANUSCRIPT HERITAGE OF YOVHANNĒS THE PRIEST

Key-words: Amida, Church of Saint Sargis in Amida, Monastery of the Holy Apostles in Mush, Srapion of Edessa, Abridged Bible, Lives of the Desert Fathers, Amida Gospels, Sirarpie Der Nersessian, Nira Stone, 17th century.

The seventeenth century was the most prolific period for reproducing Armenia's medieval literary heritage. Numerous works by prominent medieval Armenian authors were preserved in manuscripts produced during this time. Although the textual tradition was largely transmitted without significant alteration, a markedly different development occurred in the realm of images. During this period, there were major developments in miniature painting. Alongside the revival of traditional iconographic models, a new visual trend emerged under the influence of European printed books, as well as Persian and Ottoman miniature painting. Consequently, the seventeenth century became the most innovative era in the history of Armenian manuscript imagery.

In this context, individual artists emerged who had a significant influence on the art of manuscript illumination. One of them was priest Yovhannēs (active ca. 1582–1621), who lived and worked in Amida, a major provincial centre of the Ottoman Empire and an Armenian episcopal see. Yovhannēs copied and edited texts from a miniature painting perspective. Together with the stylistic and iconographic features he developed, his work came to dominate the local scribal school of Amida. This bibliographic study examines the manuscript heritage of Hovhannes the Priest, offering art-historical and codicological analyses of each manuscript.

[30] ET 44, 208բ:

АНУШ САРГСЯН

РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ ИЕРЕЯ ОВАННЕСА

Ключевые слова: Амида, Церковь Святого Саргиса в Амиде, Монастырь Святых Апостолов в Муше, Срапион Эдесский, Краткая Библия, Жития отцов-пустынников, Амидское Евангелие, Сирарпи Тер-Нерсесьян, Нира Стоун, XVII век.

XVII век является наиболее плодотворным периодом воспроизведения средневекового литературного наследия Армении. Многочисленные труды средневековых армянских авторов сохранились в рукописях, созданных в это время. В то время как текстовая традиция в целом передавалась без существенных изменений, в области изображений наблюдается принципиально иное развитие. Данный период ознаменовался значительными достижениями в искусстве миниатюрной живописи: наряду с возрождением традиционных иконографических моделей сформировалось новое визуальное направление под влиянием европейских печатных книг, а также персидской и османской миниатюрной живописи. В результате XVII век стал наиболее инновационным этапом в истории образного оформления армянской рукописной книги.

В это время появляются отдельные мастера, оказавшие значительное влияние на искусство книжной миниатюры. Одним из них был иерей Ованнес (период активности ок. 1582–1621), живший и работавший в Амиде, крупном провинциальном центре Османской империи и центре армянского епископата. Стилистика и иконография, разработанная Ованнесом в им самим созданных кодексах, а также в рукописях, отредактированных им с точки зрения миниатюрной живописи, стали доминирующими в местной рукописной школе Амида. Настоящее библиографическое исследование рассматривает рукописное наследие иерея Ованнеса, предлагая искусствоведческий и кодикологический анализ каждой рукописи.

Շարունակելի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-18, 2023
INTERNATIONAL CONFERENCE DEDICATED TO THE 100TH ANNIVERSARY OF BABKEN CHOOKASZIAN, NOVEMBER 17-18, 2023
МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ, ПОСВЯЩЕННАЯ 100-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ БАБКЕНА ЧУГАСЗЯНА, 17-18 НОЯБРЯ, 2023

ՀԱՅԱՐՓԻ ՀԱԿՈԲՅԱՆ*

DOI: 10.57155/FVGA3689

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ 1275-1350 ԹԹ.[1] ՄԱՍ Ա

Բանալի բառեր՝ *Վանա լճի ավազան, գրչատուն, ձեռագիր մատյան, Աղթամար, Արճեշ, Բերկրի, Լիմ, Խիզան, Մոկս, Վան։*

Ներածություն

Մոտ չորս տարի առաջ մասնակցում էի Մատենադարանում անցկացվող ամենամյա միջնադարագիտական երիտասարդական գիտաժողովին։ Ձեկույցս նվիրված էր 14-րդ դարի երկրորդ քառորդում աշխատած կիրակոս ծաղկողի արվեստին։ Ձեկույցի ընթացքում մեջբերեցի նրա հիշատակարաններից մեկը,

---

* Մաոտին Լութեր համալսարան (Հալլե-Վիտենբերգ), ասպիրանտ, hayarpi.hakobyan30@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 20 հունվարի, 2026 թ., հոդվածը գրախոսելու օրը՝ 13 փետրվարի, 2026։

[1] Հոդվածը զեկույցի տեսքով ներկայացվել է Մատենադարանում (*Բաբկեն Ջուգասզյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողով*) և Լոս Անջելեսի համալսարանում (*21st Annual Graduate Student Colloquium in Armenian Studies*, California, Feb. 16, 2024)։ Ձեռագրերի պահոցները նշելու համար օգտագործվել են հետևյալ հապավումները. Բրիտ.՝ Բրիտանական գրադարան, Եղմ.՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք, Թբլ.՝ Թբիլիսի, Ձեռագրերի ինստիտուտ, ՄՄ՝ Մաշտոցյան Մատենադարան, ՆՋ՝ Նոր Ջուղա, Վնտկ.՝ Վենետիկի Մխիթարյան միաբանություն, Վիեն.՝ Վիեննայի Մխիթարյան միաբանություն, Վիեն. ազգ. գրադ.՝ Վիեննայի ազգային գրադարան, Հալեպ՝ Հալեպի Քառասուն մանկանց վանք, Փրզ.՝ Փարիզ, Ֆրանսիայի ազգային գրադարան։

որտեղ նշվում էին մի շարք գրիչների և հոգևորականների անուններ: Ջեկույցից հետո լսարանից հարց հնչեց հիշատակված անձանցից մեկի մասին: Այդ ակնհայտ առերեսումն առաջին անգամ հստակ ցույց տվեց մի բաց՝ ձեռագրերի ստեղծման գործընթացում ներգրավված անձանց հավաքական ուսումնասիրության բացակայությունը:

Այդ պահից սկսած հետազոտության մեջ, որի առանցքում մինչ այդ եղել էին բացառապես մանրանկարիչները, սկսեցի ուշադրություն դարձնել նաև 1275–1350 թթ. տվյալ տարածաշրջանում մատյանների ստեղծմանը մասնակցած այլ գործիչների: Ժամանակի ընթացքում ավելի ակնհայտ դարձավ տվյալների միասնականացման ու համահավաք շտեմարանի անհրաժեշտությունը:

Թե՛ հիշատակարանների ժողովումը, թե՛ գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրությունը դեռևս 20-րդ դարի կեսերից ստացել են ինքնուրույն գիտական արժեք: Սակայն առնվազն Վանա լճի ավազանի ձեռագրերի ստեղծման վերաբերյալ առ այսօր բացակայում է համապարփակ հետազոտությունը, որը դիտարկում է ոչ թե առանձին գրչատների պատմությունը, այլ ողջ տարածաշրջանի ձեռագրական մշակույթի ընդհանրական պատկերը՝ կոնկրետ ժամանակաշրջանում գործող միջվանքային և միջանձնային փոխառնչությունների համատեքստում: Այդպիսի դիտարկումը պետք է հիմնվի ինչպես պատմական աղբյուրների, այնպես էլ մատյանների գեղարվեստական և գրչագրական հատկանիշների համադրված վերլուծության վրա:

Ներկա հոդվածի նպատակն է, առկա գիտական տվյալների շրջանակներում, ներկայացնել Վանա լճի ավազանում 1275–1350 թթ. ստեղծված ձեռագրերի քանակական, թեմատիկ և գեղարվեստական միտումները, դրանք ստեղծած վանքերն ու գրչատները, ինչպես նաև ստեղծման գործընթացին մասնակցած գործիչների համակազմը: Հատուկ ուշադրություն է դարձվում նրանց փոխհարաբերություններին՝ հատկապես գրիչ-մանրանկարիչների միմյանց, գրչատների և պատվիրատուների հետ ունեցած կապերին: Վերլուծության նպատակը ոչ միայն հիշատակվող անձանց հավաքական դիմապատկերի (prosopography) ձևավորումն է, այլ նաև նրանց գործունեության և մատյանների ծագման առայժմ անհայտ կողմերի վերհանումը՝ ինչի շնորհիվ հնարավոր կլինի նաև պատկերացնել այդ ժամանակաշրջանի մտավոր ու հոգևոր-մշակութային միջավայրը:

Հոդվածն ընդգրկում է հինգ հիմնական ենթաբաժին: Առաջինը նվիրված է թեմայի սահմանմանն ու օգտագործված տերմինաբանության ճշգրտմանը: Երկրորդ մասում դիտարկվում է ոլորտում առկա՝ հոդվածի կազմման ընթացքում

որպես ձևանմուշ ծառայած գրականությունը, ինչպես նաև ներկայացվում են կիրառված հետազոտական մեթոդները: Երրորդ հատվածում ներկայացվում են մեզ հայտնի բոլոր 33 գրչատները՝ խմբավորված գրչության կենտրոնների շուրջ: Չորրորդ բաժնում ուսումնասիրվում են այն մատյանները, որոնց ծագումն անհայտ է, սակայն գրչագրական, մանրանկարների գեղարվեստական հատկանիշներից կամ պատմական տվյալներից ելնելով հաստատ է, որ դրանք ստեղծվել են Վանա լճի շրջակայքում: Վերջին՝ հինգերորդ ենթաբաժնում ներկայացվում են մատյաններ, որոնք ամենայն հավանականությամբ ծագում են քննվող տարածաշրջանից, սակայն այդ ենթադրությունը դեռևս պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություն: Հետևաբար, այս վերջին խմբում ընդգրկված մատյանները ներառված չեն ուսումնասիրության հիմնական առանցքը կազմող 118 ձեռագրերի ցանկում:

1. «Վանա լճի ավազան» տեղանվան կիրառման և ընկալվող ժամանակահատվածի ընտրությունը

*Հոդվածի վերնագրում ընդգծված երկու հիմնարար շեշտադրումներ արժանի են հատակեցման: Առաջինը վերաբերում է **«Վանա լճի ավազան»** տեղանվան կիրառմանը, որը ենթադրում է Վանա լճի շրջակա տարածքները թե՛ աշխարհագրական, թե՛ առավել լայն՝ մշակութային ընդգրկումով: Վանա լճի «ավազան» կամ «տարածաշրջան» ձևերը ներկա հոդվածում փոխարինում են գիտականորեն առավել տարածված «Վասպուրական» անվանը: Այս եզրույթային փոփոխությունը բացատրվում է մի շարք հանգամանքներով: Նախ, ուսումնասիրության առանցքում վերցված մատյանները ստեղծվել են այն ժամանակաշրջանում, երբ ոչ պատմական Վասպուրականի նահանգը և ոչ էլ Վասպուրականի թագավորությունն այլևս գոյություն չունեին որպես վարչաքաղաքական միավորներ: Հոդվածում խմբված մատյանները թե՛ գեղարվեստական և թե՛ գրչագրական առումներով միասնական են, սակայն դրանց ստեղծման վայրերը դուրս են գալիս Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի (7-րդ դար) և Վասպուրականի թագավորության (908–1021 թթ.) աշխարհագրական երբեմնի սահմաններից: Այս վայրերն ընդգրկում են ոչ միայն պատմական Վասպուրական նահանգը, այլև Տուրուբերանի և Մոկքի առանձին շրջաններ: Այսպես, ըստ «Աշխարհացոյց»-ի՝ պատմական Տուրուբերան նահանգի մեջ են մտել Արճեշ-Քաջբերունիքի և Արծկե-Բզնունիքի շրջանները: Սրանք 1275–1350 թթ. ակտիվ մասնակցություն են ունեցել Վանա լճի շրջակայքում ձեռագրերի ստեղծմանը,*

ավելին՝ այս տարածքներից մեզ հասած մատյանները շատ ավելին են, քան լճի ավազանի հարավարևելյան գրչատներից հայտնի մատյանները[2]*։*

Հետաքրքիր է նաև, որ թեմայի շրջանակներում քննվող 118 մատյաններից միայն երկուսն են, որ հիշատակարաններում պահպանել են «ի գաւառիս Վասպուրականիս» կամ «յերկիրն Վասպուրական» տեղորոշումը։ Առաջին մատյանը Ընձայեաց վանքում արտագրված Ավետարանն է (Վնտկ. 453, 1276 թ.)[3]*, իսկ երկրորդը՝ գրականության մեջ որպես «Սաւարտ» հիշատակված գյուղում ստեղծված մի Ավետարան (1308 թ.), որի գտնվելու վայրն անհայտ է*[4]*։ Փոխարենը, ինչպես կտեսնենք ստորև, հիշատակարաններում գրիչները վանական համալիրների և եկեղեցիների տեղադրությունը հստակեցնում են գավառանունների մեջբերմամբ, ինչն առավել ճշգրտորեն է հաղորդում մատյանների ստեղծման ժամանակ տարածաշրջանի վարչական կառուցվածքը։*

Քննվող տարածքները միավորող հիմնարար ընդհանրություն է ձեռագրերի հիշատակարաններում Աղթամարի կաթողիկոսության (1113–1895 թթ.) հիշատակությունը։ Մեր քննության առարկա մատյանները ծագում են Վանա լճի շրջակայքի այն բոլոր վանքերից և գյուղական եկեղեցիներից, որոնք գտնվել են 1113 թ. հիմնադրված Աղթամարի կաթողիկոսության իշխանության ներքո[5]*։ Հետևաբար, ձեռագրերի այս տարածաշրջանից ծագման ամենակարևոր ցուցիչը Աղթամարի կաթողիկոսների անունների հիշատակությունն է ձեռագրերի հիշատակարաններում։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանի ձեռագրերում հիշվում են Ստեփանոս Գ. Սեֆեդինյանը (1272–մոտ 1296, 1336/1340–1346), Զաքարիա Ա. Սեֆեդինյանը (1296–1336) և Դավիթ Բ-ն (1346–մոտ 1368)։ Բացի*

---

[2] «Վասպուրական» տեղանվան փոխարեն տարածաշրջանը Վանա լճի անվամբ կոչելու իր նախապատվությունը նման կերպ է բացատրում Էմանուել վան Էլվերդինգեն՝ հենվելով անգլերեն գրականության մեջ հանդիպող “Lake Van region” տեղորոշման վրա։ Տե՛ս **E. van Elverdinghe**, *Modèles et copies : étude d’une formule des colophons de manuscrits arméniens : VIIIe-XIXe siècles* (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 698), Louvain, 2022, p. 167, n. 101.

[3] Հիշատակարանի համապատասխան հատվածը տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ա, յօրինեց՝ **Բ. Սարգիսեան**, Վենետիկ, 1914, էջ 426։

[4] Հիշատակարանը տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար*, մասն Ա (1301-1325 թթ.), կազմ.՝ **Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան**, Երևան, 2018 (այսուհետ՝ *Հիշատակարաններ ԺԴ*, Ա), էջ 150։ Գյուղի երբեմնի գտնվելու վայրն անհայտ է։

[5] **Վ. Վարդանյան**, *Աղթամարի կաթողիկոսության պատմություն*, Էջմիածին, 2017։

այդ, Զաքարիայի փոխանորդ Ներսես Բոլատը նրա հետ զուգահեռ հիշատակվում է 1315–1316 և 1324 թթ.[6]:

Մատյանների ստեղծման գործընթացում Աղթամարի կաթողիկոսության հովանավորությունը հաշվի առնելու առումով, Հրավարդ Հակոբյանի վաղ հոդվածում այս շրջանի մանրանկարչությունը Աղթամարի անվան հետ կապելը առավել ընդունելի է, քան այն Վասպուրական նահանգի կամ թագավորության հետ կապելը[7], այդ առնչությունը հետագայում սովորական է դարձել գիտական, մասնավորապես՝ մանրանկարչության պատմությանը վերաբերող հրապարակումներում:

Այսուհանդերձ, Աղթամարի անունով գրչատները համախմբելու մոտեցումը ևս լիարժեք չէ, քանի որ կաթողիկոսությունը հիմնադրվել է 1113-ին, իսկ տարածաշրջանում ձեռագիր մատյաններ ստեղծվել են նաև դրանից առաջ՝ թե՛ Վասպուրականի նահանգի և թագավորության գոյության շրջաններում, թե՛ 1021–1113 թթ. միջակայքում: Կարևոր է նաև ընդգծել, որ անգամ 1113-ից հետո Աղթամարի կաթողիկոսությունը երկար ժամանակ չի ունեցել այն դիրքն ու հեղինակությունը, որ գրիչները հիշատակեն տեղական կաթողիկոսին: Այսպես, Ստեփանոս Գ-ից առաջ (1272–մոտ 1296) տարածաշրջանի վանքերում գրված մատյաններում Աղթամարի կաթողիկոսությունը չի հիշատակվում[8]:

Քննվող շրջանում ստեղծված ձեռագրերի խմբավորման համար կարևոր համարելով Աղթամարի կաթողիկոսության հիշատակումը՝ ստիպված ենք խմբից դուրս թողնել Նախիջևան և Արտազ գավառների ձեռագրերը: Այս երկու գավառները պատմականորեն պատկանել են Վասպուրական նահանգին, բայց Աղթամարի կաթողիկոսության հաստատումից հետո դուրս են մնացել վերջինիս ազդեցության ոլորտից[9]: Նախիջևանի և Արտազի՝ այս ժամանակաշրջանի ձեռագրերի հիշատակարաններում որևէ հոգևոր հովանավոր չի նշվում[10], կամ հիշատակվում է Զաքարիա Ծործորցին՝ Արտազի արքեպիսկոպոսը[11]: Եվ արդարա-

---

6 Այս կաթողիկոսների մասին տե՛ս **Ն. Ակինեան**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920, էջ 42-67:

7 **Հր. Հակոբյան**, «Աղթամարի մանրանկարչության սկզբնավորման և նրա ակունքների հարցի շուրջ», *ԼՀԳ*, № 10, 1966, էջ 42-50:

8 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար*, կազմ.՝ **Ա. Մաթևոսյան**, Երևան, 1984 (այսուհետ՝ Հիշատակարաններ ԺԳ), էջ 303:

9 **Թ. Հակոբյան**, *Հայաստանի պատմական աշխարհագրություն*, Երևան, 2007, էջ 180, 177-178:

10 ՄՄ 3722 (1304 թ., *Հիշատակարաններ ԺԴ*, Ա, էջ 62-65) և Ս. Պետերբուրգի ազգային գրադ., Арм. 48 (1319 թ., *Հիշատակարաններ ԺԴ*, Ա, էջ 378-379):

11 *Հիշատակարաններ ԺԴ*, Ա, էջ 76:

ցիորեն, այս շրջաններում ստեղծված ձեռագրերը գեղարվեստական առումով ևս տարբեր են Վանա լճի շրջակայքի գրչատների աշխատանքներից:

1275–1350 թթ. ժամանակահատվածի ընտրությունը *պայմանավորված է մատյանների քանակական և գեղարվեստական ցուցանիշներից բխող երկու հանգամանքներով: Առաջին, Վանա լճի ավազանում ձեռագրերի ստեղծման շարունակական ավանդույթին հնարավոր է հետևել այս տարիներից սկսած: Քննության վերցված շրջանից մեզ հասած վաղագույն ձեռագիրը թվագրվում է 1276 թ. (Վնտկ. 453): Չնայած հայտնի է, որ մինչ այդ տարածաշրջանում նույնպես ձեռագրեր են արտագրվել, դրանց պահպանված քանակը բավարար չէ համակարգված ուսումնասիրության համար:*

Այսպես, 8-րդ դարից մինչև 1275 թ. ստեղծված մատյաններից մեզ են հասել հինգ միավոր ամբողջական կամ մասնակի մատյաններ[12]*: Տասնյոթ այլ մատյանների երբեմնի գոյությունը փաստագրված է հետագայում դրանցից ընդօրինակված ձեռագրերի շնորհիվ*[13]*: Այս փոքր թիվը կարելի է բացատրել ոչ միայն նրանով, որ մատյանները չեն պահպանվել դարերի հոլովույթում, այլ նաև նրանով, որ ձեռագրերի ստեղծումը շատ ավելի դժվար և ծախսատար է եղել: Հայտնի է, որ քննվող դարերում սոցիալ-քաղաքական անկայուն (արաբական, սելջուկ-թյուրքերի, մոնղոլական) շրջաններն ուղեկցվել են նաև կլիմայական անբարենպաստ պայմաններով: Այսպես, 698 թ. սաստիկ ձմռան պատճառով Վանա լիճն ամբողջությամբ սառցակալել է, իսկ 11–13-րդ դարերում տարածաշրջանում տևական երաշտի պատճառով լճի մակարդակը բավական իջել է: Այս դժվարին պայմանները, մասնավորապես՝ անասնապահության կրճատումը և մագաղաթի մշակման համար անհրաժեշտ ջրի պակասը, նույնպես խոչընդոտել են մատյանների մեծածավալ ստեղծմանը*[14]*:*

---

[12] ՄՄ 10100 (9-րդ դար, ստացող՝ Գուրգեն Առծրունի), Վնտկ. 953 (Աղրակ, 999 թ.), ՄՄ 10434 (Նարեկավանք, 1069 թ.), ՄՄ 1214 (Մարմետ գյուղ, 1118 թ.) մատյանները և Նարեկավանքում 1181 թ. ստեղծված Ավետարանի պատառիկները (Harvard, no. 1960.202 & 1960.203):

[13] Խմբավորումն իրականացվել է հիշատակարանների ժողովածուների հիման վրա: Տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ե-ժթ դդ.*, աշխատ.՝ **Ա. Մաթևոսյանի**, Երևան, 1988 (այսուհետ՝ *Հիշատակարաններ ե-ժթ*), *Հիշատակարաններ ժԹ*: Տե՛ս նաև՝ **Ո. Քեշիշյան**, «Մատենադարանի նոր ստացված Հմր 11219 ձեռագիր թերթերը՝ հայկական մանրանկարչության նորահայտ օրինակ», *ԲՄ*, № 29, 2020, էջ 161-188:

[14] Հետազոտությունը ներառում է մ.թ.ա. 1050-մ.թ. 1450 թթ.: Ըստ իզոտոպային նստվածքների տվյալների՝ խոնավության հարաբերական ուժգնությունը (*proxy-based humidity index*) 950-1250 թթ. միջակայքում ցածր է եղել նորմալ խոնավությունից (1-ից), մասնավորապես 1050-1150 թթ. այն հասել է դեռևս ուրարտական ժամանակներից սկսած մեզ հայտնի երբևէ ամենացածր ցուցանիշին (մոտ 0.25)՝ առաջ բերելով տևական երաշտ: Սրան հակառակ՝ մոտ

Հակառակ այս դժվարություններին՝ 13-րդ դարի վերջին քառորդից սկսած ձեռագրերի ստեղծման ոլորտում նկատելի առաջընթացը պայմանավորված պետք է լիներ ոչ միայն քրիստոնյաների նկատմամբ մոնղոլ Ղազան խանի (1271–1304 թթ.) վարած մեղմ քաղաքականությամբ, այլ նաև բնակլիմայական պայմանների բարելավմամբ և թղթի՝ որպես գրանյութի լայն տարածմամբ, որի ձեռքբերումը պահանջում էր զգալիորեն պակաս ռեսուրս, քան մագաղաթի մշակումը:

Թեմայի ժամանակային ընդգրկումը սահմանելու երկրորդ կարևոր հանգամանքը 1275–1350 թթ. ստեղծված ձեռագրերում արձանագրվող գեղարվեստական միտումների բազմազանությունն է: Նկարազարդ մատյաններում տեսանելի պատկերագրական տարբերությունները և կիրառված գեղարվեստական լուծումները հնարավորություն են տալիս տարբերակելու մի շարք գեղարվեստական ենթախմբեր, ինչպես օրինակ՝ Արճեշի, Արծկեի, Բերկրիի դպրոցները: 14-րդ դարի կեսերից սկսած՝ տարածաշրջանի մանրանկարչությունն աստիճանաբար ձեռք է բերում առավել ընդհանրացված գեղարվեստական դիմագիծ՝ պայմանավորված ինչպես ոճական մոտեցումների միակերպությամբ, այնպես էլ ձևավորված պատկերատիպերի սահմանափակ քանակով և կրկնվող շրջանառությամբ[15]*:*

Հնարավոր է, որ հետագայում հայտնվեն նոր տեղեկություններ այս վաղ շրջանի՝ մինչև 1275 թ. ստեղծված մատյանների մասին: Մինչ այդ՝ առկա տվյալները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու 13-րդ դարի երրորդ քառորդից սկսած ձեռագրարվեստի շարունակական պատմությունը, որ հասել է ընդհուպ մինչև նոր ժամանակներ:

---

750 և 1350 թթ. գրանցել են խոնավության ամենաբարձր ցուցանիշը՝ մ.թ. 150 թ. ի վեր: Տարածաշրջանում խոնավության ինդեխի համադիր պատկերը տե՛ս **J. Preiser-Kapeller**, "Ecology, Irrigation and Lordship in the Lake Van Region: A Long-Term View from Urartu to Vaspurakan," in *A Companion to the Environmental History of Byzantium*, ed. by ***A. Izdebski, J. Preiser-Kapeller,*** Leiden-Boston, 2024, p. 332, fig. 12.7:

[15] Քննվող շրջանը որպես առանձին փուլ է դիտարկում նաև Հրավարդ Հակոբյանը, որ Վանա լճի շրջակայքի ձեռագրական ժառանգության թեմատիկ, ոճական և պատկերագրական միտումների զարգացումը բաժանում է երեք հիմնական փուլերի՝ 13-րդ դ. վերջից մինչև 14-րդ դ. կեսեր, 14-15-րդ դդ. առաջին կես և 15-րդ դ. վերջից մինչև 17-րդ դ.: Տե՛ս **Հր. Հակոբյան**, «Վասպուրականի մանրանկարչական դպրոցը», *Հայ արվեստի պատմություն, Ա. Ադամյան և ուրիշներ,* Երևան, 2009, էջ 184:

2. Աշխատանքի ձևավորման սկզբնաղբյուրները, ձևաչափն ու կիրառված մեթոդաբանությունը

Վանա լճի տարածաշրջանի ձեռագրերի խմբավորման գործում առաջնային կարևորություն են ունեցել ձեռագրերի հիշատակարանների տպագիր ժողովածուները, քանի որ դրանք համահավաք կերպով ընդգրկում են ոչ միայն Երևանի Մատենադարանի ձեռագրերը, այլև արտասահմանյան հավաքածուների, հայագիտական ուսումնասիրությունների և անցյալ դարում Արևմտյան Հայաստանում կազմված առանձին ձեռագրացուցակների մեջ հիշատակված մատյանները[16]*:*

Հավաքված տեղեկությունները լրացնելու են եկել ժողովածուի համար աղբյուր ծառայած ձեռագրացուցակները: Այնուհետև, աշխատանքի համար օգտակար է եղել Մատենադարանի աշխատակիցների կազմած՝ գրչության կենտրոններին նվիրված քարտեզը և կից գրքույկը, ինչպես նաև համանուն կայքը, որտեղ քարտեզի վրա տեղորոշված են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գործած տասնհինգ գրչատներ՝ ուղեկցված եկեղեցիների լուսանկարներով և որոշ ձեռագրերից ընտրված պատկերներով[17]*:*

Ձեռագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով ուսումնասիրվել են Հայաստանի և արտերկրի գրադարաններում և պահոցներում պահվող հայերեն ձեռագրերի թվայնացված օրինակները, ինչպես նաև դրանց համապատասխան ցուցակները[18]*:*

Մատյանների՝ ըստ ստեղծման վայրերի խմբավորման և վերլուծության համար օրինակ են ծառայել դեռևս նախորդ դարակեսից սկսած առանձին գրիչների և գրչության կենտրոնների ուսումնասիրության բնագավառում ավանդ ունեցած մասնագետների փորձը և մեթոդաբանությունը: Այս առումով պետք է նշել

---

[16] *Հիշատակարաններ Ե-ԺԲ, Հիշատակարաններ ԺԳ*: 14-րդ դարի առաջին կեսի հիշատակարանների համար օգտագործվել են ժողովածուի նոր, լրամշակված հրատարակությունները՝ *Հիշատակարաններ ԺԴ, Ա և Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար*, մասն Բ (1326-1350 թթ.), կազմ.՝ **Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան**, Երևան, 2020 (այսուհետ՝ *Հիշատակարաններ ԺԴ, Բ*):

[17] Տե՛ս www.armenianscriptoria.com: Կայքում տեղանշված գրչության կենտրոններից ներկա հոդվածի ժամանակային սահմանման պատճառով մենք կանդրադառնանք միայն հետևյալներին՝ Աղթամար, Ապարանքի Ս. Խաչ, Արգելան, Արծկեի Ս. Սմանչելազործ, Արճեշ, Ավանս, Բերկրի, Լիմ, Խառաբաստավանք, Խիզան, Մեծոփավանք, Մոկաց Դաշտ գյուղ, Մոկաց Ս. Գևորգ վանք, Վան, Վարագավանք:

[18] Թվայնացված հայերեն ձեռագրերի ցանկը տե՛ս https://www.armenian-manuscripts-index.com:

Գարեգին Հովսեփյանի՝ Մխիթար Սասնեցուն նվիրված հետազոտությունը[19], այնուհետև առանձին գրչակենտրոնների վերաբերյալ ուսումնասիրությունները՝ Հարություն Քյուրտյանի (Խիզան)[20], Արտաշես Մաթևոսյանի (Մոկաց Ս. Գևորգ վանք[21], Լիմ[22], Մեծոփավանք[23]), Լուսինե Թումանյանի (Աղթամար, Լիմ)[24] հեղինակությամբ[25]: Հարկ է նշել սակայն, որ նշված աշխատանքներում քննվում են ներկա հոդվածում թվարկված՝ քննվող ժամանակաշրջանում ակտիվ 33 գրչատներից միայն հինգը, իսկ մյուսներին անդրադարձ կկատարվի առաջին անգամ:

Աշխատանքի ընթացքում տվյալների համեմատության, ճշգրտման և վերանայման նպատակով շարունակաբար դիտարկվել են Աննա Լեյլոյանի կազմած՝ տարածաշրջանի գրիչներին և մանրանկարիչներին ներկայացնող ցանկերը[26], ինչպես նաև տվյալ շրջանի մանրանկարիչներին վերաբերող արվեստաբանական գրականությունը:

Ներկա աշխատանքում նախևառաջ ընդգրկվել են այն ձեռագրերը, որոնց հիշատակարանների տվյալները փաստում են դրանց՝ Վանա լճի տարածաշրջա-

---

19 **Գ. Յովսէփեան**, «Մխիթար Սասնեցի, 1260(?)-1337», *Արարատ*, ճ. 32, № 3-4, 1899, էջ 158-167:

20 **Յ. Քիւրտեան**, *Խիզանի դպրոցին գրիչներն ու մանրանկարիչները և իրենց յիշատակարանները*, Փարիզ, 1951:

21 **Ա. Մաթեւոսյան**, «Մոկաց Սաղի Ս. Գեորգ վանքի գրչության կենտրոնը XIV-XV դարերում», *ԲՄ*, № 6, 1962, էջ 197-218:

22 **Ա. Մատթեոսյան**, «Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դարերում», *Էջմիածին*, 1966, Ջ (յունիս), էջ 48-55:

23 **Ա. Մաթեւոսյան**, *Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺՒ-ԺԵ դդ.)*, Ս. Էջմիածին, 1997:

24 **Լ. Թումանյան**, *Վանա լճի Աղթամար, Լիմ և Կտուց վանքերի գրչության կենտրոնները*, թեկնածուական ատենախոսություն, պաշտպ.՝ 24. 12. 2013, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ: Թումանյանի հետազոտությունը նախ հրապարակվել է առանձին հոդվածների և գրքային գլուխների տեսքով, մինչև այն հավաքվել է մենագրության ձևաչափով: Տե՛ս **Լ. Թումանյան**, «Աղթամարի գրչության կենտրոնը», *Էջմիածին*, № 9, 2010, էջ 118-136, **Լ. Թումանյան**, «Կտուց անապատի ձեռագրական ժառանգութիւնը», *ՀԱ*, № 1-12, 2012, էջ 35-48, **Լ. Թումանյան**, «Աղթամարի ձեռագրական ժառանգությունը», *Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը*, հեղ.-կազմ.՝ **Կ. Մաթևոսյան**, Երևան, 2013, էջ 114-141, 155-167, **Լ. Թումանյան**, «Լիմ մենաստանի ձեռագրական ժառանգությունը», *ՊԲՀ*, № 3, 2014,, էջ 163-183, **Լ. Թումանյան**, *Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները*, Երևան, 2019:

25 **Ա. Ղազարոսյան**, «Վասպուրականի գրչության կենտրոնները», *Հայաստանի մայրաքաղաքները, Գիրք 1, Վան* (Վան հաղարի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 7-9 հոկտեմբերի 2010 թ.), Երևան, 2013, էջ 128-134: Թեև այս հոդվածը թեմատիկ առումով առնչվում է ներկա ուսումնասիրությանը, նյութի ընդգրկումը սահմանափակվում է ընդհանուր դիտարկումներով՝ առանց էականորեն լրացնելու մեր ունեցած տեղեկությունները:

26 **A. Leyloyan-Yekmalyan**, *L'art du livre au Vaspurakan (XIV^{e}-XV^{e} siècles). Étude des manuscrits de Yovannēs Xizanc'i*, Paris-Louvain, 2009.

նի վանքերում ու գյուղերում ստեղծված լինելու մասին: Ապա, այս խմբում ընդգրկվել են նաև այն ձեռագրերը, որոնց ծագման վայրը հայտնի չէ, սակայն դրանց հիշատակարաններում հիշատակվում են Աղթամարի կաթողիկոսները (օրինակ՝ ՄՄ 5606, Լոս Անջելեսի համալսարանի Arm. 2), կամ այդ մատյանների գրիչները (օրինակ՝ ՄՄ 1180), մանրանկարիչները (օրինակ՝ Փրգ. 88, ՄՄ 2929, ՄՄ 9423, ՄՄ 7351) նույնացվել են տվյալ ժամանակահատվածում Վանա լճի տարածաշրջանում աշխատած անձանց հետ (տե՛ս աղյուսակը՝ սույն հոդվածի հրատարակվելիք Դ մասի վերջում): Ուսումնասիրության մեջ ներառված ձեռագրերի երրորդ խումբն են կազմում պատկերազարդ այն ձեռագրերը, որոնք արդեն վերագրվել են կամ պետք է վերագրվեն տարածաշրջանի գրչատներին, սակայն չունեն ստեղծման կամ պատկերազարդման վայրի մասին որևէ տեղեկություն: Այդ ձեռագրերի պատկերազարդումների գեղարվեստական և պատկերագրական հատկանիշները դրանք մոտեցնում են Վանա լճի ավազանում ստեղծված ձեռագրերին:

Այս ժամանակահատվածի գրական-ձեռագրական գործունեության ծավալը, մատյանների քանակական, թեմատիկ գնահատումը, անհայտ ծագումով մատյանների վերագրումը որևէ գրչատան, առանձին գրչատների գործունեությունը ավելի լավ հասկանալու նպատակով հաշվի են առնվել ներկայումս անհայտ գտնվելու վայրով ձեռագրերի մասին գրականության մեջ պահպանված տեղեկությունները: Պայմանականորեն այս մատյանները կարելի է անվանել «կորած», քանի դեռ դրանց գտնվելու վայրերի մասին նոր տեղեկություններ չունենք: Կորուսյալ ձեռագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացնել, թե ձեռագրերի որ տեսակներն ու ժանրերն էին առավել հաճախ ընդօրինակվում, ինչպես նաև՝ մատնանշել առավել ակտիվ գրչատները: Այն նաև լրացուցիչ տեղեկություններ է տալիս ձեռագրերի ստեղծմանը մասնակցած՝ մեզ արդեն արդեն հայտնի անձանց մասին կամ մեզ հաղորդում նոր անուններ: Ջպետք է սակայն մոռանալ, որ կորած մատյանների այս խմբավորումը միայն մասնակի պատկերացում կարող է տալ տարածաշրջանում քննվող շրջանում ծավալված գրավոր մշակույթի մասին, քանի որ դարերի ընթացքում ոչնչացված ձեռագրերի թիվն անհաշվելի է:

Աշխատանքի սկզբում ձեռագրերը նախ դասակարգվել են ըստ գրչատների, որոնց ընդհանուր թիվը ներկա ուսումնասիրության շրջանակում կազմում է 33-ը: Հետագայում, ներառված նյութը դյուրամատչելի դարձնելու, ինչպես նաև դրանց կիրառումը վիճակագրական վերլուծությունների մեջ պարզեցնելու նպատակով ձեռագրերը խմբավորվել են ըստ համապատասխան ժամանա-

կաշրջանում հայտնի գավառների և դրանց կենտրոնների[27]: Ըստ այմ՝ ներկա ուսումնասիրության մեջ առանձնացվել են գրչության հետևյալ հիմնական կենտրոնները՝ Աղթամար, Արճեշ-Քաջբերունիք, Արծկե-Բզնունիք, Բերկրի-Առբերանի, Լիմ, Խիզան, Մոկս և Վան: Այստեղ անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ աշխատության ներկայիս տարբերակում Աղթամարը, Լիմը և Խիզանը ներկայացված են որպես առանձին կենտրոններ: Ուսումնասիրության հետագա զարգացման արդյունքում հնարավոր է, որ ըստ կենտրոնների դասակարգման սկզբունքը վերանայվի՝ համապատասխանեցվելով գավառային բաժանումին. այս դեպքում, Աղթամարը կներկայացվի Ռշտունիքի կազմում, Լիմը ընդգրկված կլինի Առբերանիի խմբում, իսկ Խիզանը՝ Մոկսի:

Քանի որ ձեռագրերի վերաբերյալ հիմնական տեղեկությունները վերցված են ձեռագրացուցակներից, այս հոդվածում ձեռագրերի ֆիզիկական նկարագրությունները չեն ներառվել՝ նյութը մանրամասներով չծանրաբեռնելու նպատակով: Փոխարենը տրված են հղումներ համապատասխան ձեռագրացուցակներին և մատյանների մասին առկա մասնագիտական գրականությանը: Նույն կերպ, վանքերի, եկեղեցիների, ինչպես նաև գրչության կենտրոնների մասին ներառվել են միայն համառոտ տեղեկություններ և հղում է տրվել դրանց մասին առկա գրականությանը, եթե այդպիսին կա:

3. Ակտիվ ձեռագրատները և դրանց ժառանգությունը

Այս տարածաշրջանից մեզ հայտնի են 1275–1350 թթ. ստեղծված 118 ձեռագրեր, որոնցից 84-ը պահպանվել են, իսկ 34-ի գտնվելու վայրերն անհայտ են (տե՛ս աղյուսակը՝ սույն հոդվածի հրատարակվելիք Դ մասի վերջում):

Ձեռագրերի ներկայիս տեղաբաշխման և բովանդակության վիճակագրական պատկերը հետևյալն է.

Պահպանված ձեռագրերի զգալի մասը՝ 60 միավոր, գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Հինգ ձեռագիր պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանությունում (այդ թվում՝ երկուսը Հարություն Քյուրտյանի հավաքածուից), երեքը՝ Նոր Ջուղայում, երեքը՝ Բրիտանական գրադարանում: Հալեպի Քառասուն Մանկանց վանքի և Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հավաքածուների մեջ ներառված են երկուական ձեռագրեր: Մեկական օրինակ պահվում է Ավստրիայի Ազգային գրադարանում, Բեռլինի

[27] Հիշատակարաններում գավառները հաճախ կոչված են ոչ թե իրենց անուններով, այլ՝ կենտրոնների: Այսպես, օրինակ՝ Քաջբերունիքի փոխարեն գործածված է «Արճեշի երկիր» ձևակերպումը, Աղթամարի ձեռագրերում չի հիշատակվում Ռշտունիքը, իսկ Լիմի ձեռագրերում առանձին կերպով չի նշվում Առբերանին:

Պետական գրադարանում, Գարի Տատինցյանի մասնավոր հավաքածուում (Դուբայ), Թբիլիսիի Ձեռագրերի ազգային կենտրոնում, Կալիֆորնիայի համալսարանում (Լոս Անջելես), Փարիզի Ազգային գրադարանում, ինչպես նաև Վրաստանի Ախալքալաքի շրջանի Վաչիան գյուղում[28]*: Հայաստանում կա երկու ձեռագիր, որոնք մասնավոր սեփականություն են:*

Բովանդակային առումով՝ 118 ձեռագրերից 81-ը աստվածաշնչյան գրքեր են (որոնցից 69-ը՝ Ավետարաններ), 21-ը աստվածաբանական ժողովածուներ (ներառյալ Աստվածաշնչի մեկնությունները և հոգևոր-դավանական բնույթի այլ աշխատություններ, ինչպես, օրինակ, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի ընդօրինակություններ), 12-ը ծիսական գրքեր են՝ Ճաշոցներ և Մաշտոցներ, իսկ մնացած չորսը պատմական բնույթի ժողովածուներ (տե՛ս գծապատկեր 1-ը ներդիրում)[29]*:*

Ձեռագրերի չափերն այս ժամանակաշրջանում ենթարկվել են որոշ փոփոխությունների: Քննվող խմբում ձեռագրերի սովորական չափը միջինում կազմում է շուրջ 30× 25 սմ: Ամենամեծը՝ ՄՄ 4674-ն է, որի չափերը հասնում են 47× 32 սմ-ի, իսկ ամենափոքրերը՝ մոտավորապես 16× 12 սմ են (օրինակ՝ ՄՄ 76, ՄՄ 269, ՄՄ 2583 և այլն):

Պահպանված և անհայտ տեղորոշմամբ ձեռագրերը նախ խմբավորվել են ըստ այն գրչատների՝ վանքերի կամ եկեղեցիների, որտեղ դրանք ընդօրինակվել են: Այս քայլը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացնելու յուրաքանչյուր գրչատան գրական գործունեության բնույթը և ծավալն առանձին:

Նախքան գրչատների ուսումնասիրությանն անցնելը, անհրաժեշտ է հստակեցնել «գրչատուն» (scriptorium) եզրը: Գիտական գրականության մեջ այն վերաբերում է այն վանքերին կամ եկեղեցիներին, որտեղ ձեռագրեր են ստեղծվել: Այսպիսով, ներկա ուսումնասիրության շրջանակում ևս մատյանների ստեղծմամբ աչքի ընկած ցանկացած վայր՝ լինի վանք, թե գյուղական եկեղեցի, դիտարկվում է որպես առանձին գրչատուն: Այս մոտեցման արդյունքում առանձնացվել է 33 գրչատուն:

Վիճակագրական դիտարկումների և համադրությունների հարմարության համար գրչատները միավորված են ըստ համապատասխան գավառների կամ կենտրոնների: Ձեռագրերի ծագումնաբանական բաշխվածությունը հետևյալն է.

— ***Արճեշ-Քաջբերունիքի շրջան՝*** *45 մատյան,*

---

[28] Վաչիան գյուղում պահվող մատյանի մասին գրել է Երվանդ Լալայանը դեռևս 19-րդ դարի վերջին, ուստի մատյանի գտնվելու վայրը դեռևս պահանջում է լրացուցիչ հաստատում: Տե՛ս **Ե. Լալայեան**, «Ջավախք. Հայ գրչագիրներ», *Ազգագրական հանդէս*, № 2, 1897, էջ 284:

[29] Այս և մյուս գծապատկերները՝ ներդիրում:

- ***Աղթամար՝*** *12 մատյան,*
- ***Բերկրի-Առբերանի՝*** *12 մատյան,*
- ***Լիմ՝*** *11 մատյան,*
- ***Վան՝*** *11 մատյան,*
- ***Արծկե-Բզնունիք՝*** *8 մատյան,*
- ***Մոկս՝*** *5 մատյան,*
- ***Խիզան՝*** *2 մատյան:*

*Բացի այդ, ևս 12 ձեռագրերի ծագումն անհայտ է, սակայն նրանց ստեղծման վայրերը, գրչագրական և գեղարվեստական հատկանիշներից դատելով, ենթադրաբար տեղակայված են եղել Վանա լճի ավազանում: Այդ պատճառով դրանք միավորված են **«Վանա լճի տարածաշրջան»** ընդհանուր անվան ներքո (տե՛ս գծապատկեր 2-ը ներդիրում):*

Հիշատակարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրիչներն ու մանրանկարիչները բացառապես հոգևորականներ կամ կրոնավորներ էին: Ոչ բոլոր գրիչներն են եղել մանրանկարիչներ, թեև տիրապետել են ձեռագրերի զարդանկարման արվեստին, ինչը գրչության արվեստի մաս է կազմել: Փոխարենը, մեզ հայտնի բոլոր մանրանկարիչները եղել են նաև գրիչներ, ովքեր թե՛ արտագրել են ձեռագրեր, թե՛ պատկերազարդել այլ գրիչների արտագրած մատյանները: Սակայն գրիչ-մանրանկարիչներն իրենց մասին քիչ տեղեկատվություն են թողել՝ հաճախ բավարարվելով միայն անունով կամ աղոթքով: Ձեռագրերում կենսագրական տվյալների առկայությունը և ազգակցական կապերի հիշատակումները չափազանց հազվադեպ են: Այս հանգամանքը դժվարացնում է նույն անունով հանդես եկող գրիչների նույնականացումը: Մասնավորապես, Թումա, Հովհաննես, Հակոբ, Սարգիս և Ստեփանոս անունները չափազանց հաճախ են հանդիպում տարբեր գրչատներում, ինչի պատճառով խուսափել ենք անհիմն նույնականացումներից, քանի դեռ բոլոր մատյանների գրչագրական և գեղարվեստական համադրական վերլուծությունը ամբողջությամբ չի իրականացվել: Նույն անունով անձանց տարբերակման հարցում հնարավոր չէ հենվել նույնիսկ անունների ուղղագրության վրա, քանի որ անգամ նույն ձեռագրում հանդիպում են նույն գրչի անվան տարբեր գրելաձևեր:

Մատյանների պատվիրատուները եղել են թե՛ հոգևոր դասի ներկայացուցիչներ, կրոնավորներ, թե՛ հասարակության ունևոր շերտի ներկայացուցիչներ, բնակավայրերի, համայնքների ղեկավարներ (իշխան, տանուտեր): Որոշ դեպքերում ձեռագրերի հովանավորների կամ հետագայի սեփականատերերի հիշատակումը կարող է հուշել տվյալ ձեռագրի ծագման վայրը կամ կապը որևէ կոնկրետ վանքի ու նրա հոգևորականների հետ: Այնուամենայնիվ, ձեռագրեր ընդ-

օրինակելու և վաճառելու տարածված երևույթը հաճախ խոչընդոտում է նման նույնականացումներին: Ձեռագրերը վաճառքի նպատակով գրելու մասին են վկայում ձեռագրերում առավել ուշ ավելացված սեփականատերերի անունները, որոնք տարբերվում են հիմնական գրությունից՝ գրված լինելով այլ թանաքով կամ տեղավորված նախապես այդ նպատակով ազատ թողնված հատվածներում: Այս իրողության հիման վրա Ալիս Թեյլորը առաջարկել է այն միտքը, որ գոյություն են ունեցել ձեռագրերի վաճառակետեր, որտեղ գրիչները վաճառքի են հանձնել իրենց արտագրած մատյանները[30]: Ձեռագրերում բազմիցս հիշատակվում են նաև անձինք, ովքեր միջնորդ են եղել գրքի պատվիրատուի և գրչի միջև:

Այժմ անցնենք գրչատների դիտարկմանը՝ ըստ գրչության կենտրոնների:

ա. Աղթամար

Աղթամարի վանքը եղել է կաթողիկոսության աթոռանիստը[31]: Կասկածից վեր է, որ այստեղ ձեռագրերի ընդօրինակման ծավալը շատ ավելի մեծ է եղել, քան մեզ հայտնի է: Ցավոք, այս ժամանակաշրջանից մեզ է հասել միայն տասը մատյան: Տեղեկություններ կան ևս երկու ձեռագրի մասին, որոնց գտնվելու

---

[30] **A. Taylor**, "Armenian Illumination under Georgian, Turkish, and Mongol Rule: The Thirteenth, Fourteenth, and Fifteenth Centuries", *Treasures in Heaven*, ed. ***T. Mathews, R. Wieck***, New York, 1994, pp. 96-97.

[10] **Ս. Դավթյան**, *Հայկական ասեղնագործություն*, Երևան, **1972**, տեքստ և հետևյալ տախտակներ՝ VI, X, XLIV, XCVIII-XCIX, CIX-CXI, CXLI, **С. Манукян, И. Мкртчян**, *Сокровища Армянской церкви. Выставка в гос. Музее Московского Кремля. Каталог,* Вступительная статья и описания, Св. Эчмиадзин - Москва, 1997 (на русском, частично армянском и английском языках); **S. Manukian, I. Mkrtchian**, *The Holy Cross. Treasures of the Armenian Church. Catalogue of the Exhibition*. Text of Introduction and Descriptions,

ասեղնագործության կատարյալ, երբեմն եզակի ստեղծագործություններ են (նկ. 2)։ Հիշատակության են արժանի ուղիղ, թեք, ուռուցիկ և զարդային կարը, հարթակարը, բազմաշերտ հարթակարը, լիցքը՝ զանազանակերպ, ոսկեքուղը, երեքտակ ասեղնագործությունը... Դրանց հետ մեկտեղ, ասեղնագործության համար օգտագործված են նաև մետաղե (արծաթե և ոսկե) և մետաքսե թելերի տարբեր համադրություններ ու խառնուրդներ, մարգարիտ, փայլ, ոսկե ժապավեններ, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր։ Հանդիպում են նաև գեղանկարչական ներդիր-հատվածներ (նկ. 4), որ ստեղծում են խույրի վրայի պատկերը։ Բայց կա և խույրերի մի խումբ, որոնց պատրաստման համար օգտագործվել է ոչ թե գեղարվեստական ասեղնագործություն, այլ գեղարվեստական մետաղաքանդակ՝ ռելիեֆային, դրվագված արծաթե վերադիրներ, որոնք ամրացվել են խույրերի մետաքսե կամ թավշե հիմքի վրա (նկ. 5 (1), 5(2), 8)։ Հավելենք, որ հայկական եկեղեցական գործվածքի ասեղնագործության տեխնիկաները մեծ մասամբ նման են բյուզանդական/հունական, ռուսական, սերբական, մակեդոնական, բուլղարական և վրացական տարբերակներին, ինչը վկայում է եկեղեցական քրիստոնեական արվեստի ընդհանուր արմատների և պատկերագրության մասին։

Միաժամանակ կարևոր է նշել, որ հայկական ասեղնագործության ակունքները գալիս են հազարամյակների խորքից. ասեղնագործված գործվածքի օրինակներ հայտնաբերվել են Արթիկի (մ.թ.ա. 14-13-րդ դարեր) և Կարմիր բլուրի (մ.թ.ա. 7-րդ դար) պեղումներից։ Հենց այս հանգամանքն է կանխորոշել միջնադարյան հայկական եկեղեցական ասեղնագործված հուշարձանների բարձր որակը, նաև, հավանաբար, հայկական ավանդույթների և եկեղեցական քրիստոնեական արվեստի ընդհանուր արմատների և պատկերագրության զուգակցումը։ Միջնադարում հայկական ասեղնագործության ճանաչված կենտրոններ են եղել Անին (11-12-րդ դարեր), 15-րդ դարից սկսած՝ Ուռհան, Այնթափը, Մարաշը, Կարինը, Վանը, 17-րդ դարից՝ Նոր Ջուղան, Մադրասը, Կալկաթան[11]*։*

Հայկական միթրաների գեղարվեստական լուծումն ունի որոշակի հորինվածք՝ խույրի երկու երեսները շրջագծով եզերված են դեկորատիվ զարդագոտիով, որի ստորին հատվածը սովորաբար տարբերվում է կողմնային եզրերից։ Մեկ կամ երկու կողմերում այն լցվում է հիշատակարանով (նկ. 2, 3, 6(1), 6(2),

Helsinki, 1998; **С. Манукян, И. Мкртчян**, *Сокровища Армянской церкви из собрания св. Эчмиадзина. Каталог выставки в Эрмитаже*. Вступительная статья и описания. Санкт-Петербург, 2000.

[11] Նույն տեղում։

9), որի առկայությունը բնորոշ է Հայաստանի միջնադարյան արվեստի բոլոր տեսակների համար: Հիշատակարաններ կարող են լինել նաև թե՛ արտախուրակների, թե՛ վակասի վրա՝ հաղորդելով զգեստի տիրոջ անունը, տեղեկություններ պատվիրատուների, զգեստի պատրաստման տեղի ու ժամանակի մասին, ինչպես նաև հիշատակելով այն եկեղեցին, որին նվիրաբերվել է խույրը, և որոշ այլ մանրամասներ:

Լինելով հայրապետական զգեստավորման պսակող մասը՝ խույրը տեսողական առումով այդ գեղարվեստական համալիրի ամենավառ և եզրափակիչ տարրն է: Զգեստավորման մեջ խույրի դեկորատիվ լուծումը գերակշռողն է: Այստեղ կարևոր է գույների ընտրությունը, մակերեսի ֆակտուրան, փայլուն և փայլատ թելերի, փայլեցված ու չփայլեցված մետաղական մասերի համադրությունը, կիրառված ակնեղենի փայլն ու գույնը: Այս առումով հայկական խույրերը չափազանց արտահայտիչ են ու կատարյալ՝ լավագույնս մարմնավորելով իրենց դերն ու նշանակությունը (նկ. 1, 2, 3, 7, 8):

Ելնելով նույն նպատակից, այն է՝ ընդգծել, շեշտադրել եկեղեցու քահանայապետի գերագույն իշխանությունը, հայկական խույրերն՝ ի տարբերություն լատինականների (վերջիններս այժմ հարթ են, բայց գույնի, առանց պատկերների), ասեղնագործված են սյուժետային մոտիվներով, որոնց պատկերագրությունը վերին աստիճանի խորիմաստ է և լի վեհ խորհրդաբանությամբ: Ամենապարզ մոտիվը խաչն է (նկ. 8): Սյուժետային մոտիվները լրացնում են խույրի զույգ երեսների կենտրոնական դաշտը: Հիմքի վրա նկարիչը մատիտով պատկերների գծանկարն է արել, որը ասեղնագործ վարպետը ասեղնագործել է ըստ տվյալ ժամանակ, տվյալ դպրոցում ընդունված ոճի ու տեխնիկայի, ինչպես նաև՝ սեփական գեղարվեստական ճաշակի: Խույրերի կատարման ոճն ու գունային լուծումը դրանք նմանեցնում են հայկական ձեռագրերի մանրանկարներին:

Կարելի է առանձնացնել ոճային երկու հիմնական ուղղություն՝ գեղանկարչական և պարզ գրաֆիկական, որոնք բնորոշվում են պատկերների տոնային կամ գծային մոդելավորմամբ (համեմատի՛ր նկ. 7 և 9): Զարմանալի, հազվագյուտ վարպետությամբ ու նրբությամբ են ստեղծված կերպարների դեմքերը, որոնք հաճախ աչքի են ընկնում անհատականացված գծերով (նկ. 2, 7): Բազմերանգ թելանյութերի, կարի բազմազան եղանակների հմուտ կիրառության շնորհիվ՝ ասեղնագործված դիմանկարները կենդանի ու արտահայտիչ են[12]: Ոչ

[12] Նույն տեղում:

պակաս վարպետությամբ են ներկայացված կերպարների դիրքը, գործողության վայրը, հանդերձանքը, ատրիբուտները (նկ. 1, 6(1), 6(2))։

Ասեղնագործության մեջ բացառիկ տեղ են գրավում ոսկին, արծաթն ու բաց երանգի լուսավոր մետաքսը։ Դրանցով ասեղնագործված հատվածները խորհրդանշում են Աստվածային լույսը, որով պայծառացած են խույրն ու դրա վրայի պատկերները (նկ. 2, 7)։ Նույնը վերաբերում է արտախուրակներին ու վակասին, որոնք խույրի հետ միասին մեկ համալիր գեղարվեստական ամբողջություն են կազմում (նկ. 2)։

Խույրերի պատկերների և տեսարանների պատկերագրությունը նույնն է, ինչ և 17-19-րդ դարերի հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի այլ ճյուղերում։ Այս ժամանակաշրջանի համար բնորոշ են եվրոպական վաղ տպագիր գրքերից արևելաքրիստոնեական աշխարհի կերպարվեստ թափանցած պատկերագրական տարբերակները։ Հենց դրանց փորագրապատկերների տպաձևերի կաղապարներով էին տպագրվել նաև հնատիպ հայկական Աստվածաշնչերի և այլ եկեղեցական գրքերի նկարազարդումները։ Հենց դրանցից են ծագում ավետարանական տեսարանների արևմտյան գծերը և պատկերատիպերը (նկ. 5, 6, 7), որոնց հիմքում իրենց հերթին ընկած էին արևմտաեվրոպական Բարձր Միջնադարում վերամշակված բյուզանդական նախօրինակները։

Ավետարանական դրվագների հետ մեկտեղ, խույրերի վրա տարածված էին նաև հայկական մոտիվներ, ինչպիսիք են՝ Գրիգոր Լուսավորիչը (նկ. 4[13]), էջմիածնի Մայր տաճարը, Հայոց եկեղեցու հիմնադիրներ Թադեոս և Բարդուղոմեոս առաքյալները, ծաղկյալ խաչեր՝ կենաց ծառի խորհրդանիշերը, երկնային քահանայապետության հրեշտակներ (նկ. 2)՝ հայկական պատկերատիպերով, Քրիստոսը քառակերպյան գահին (նկ. 2), (վերջինս ոչ միայն հայկական պատկերագրությամբ) և որոշ այլ պատկերներ։

Ավետարանական դրվագներից խույրերի վրա պատկերվում էին Ավետումը, Ծնունդը՝ որպես Մանկանը երկրպագություն (նկ. 7), Մկրտությունը, Պայծառակերպությունը (նկ. 1), Խորհրդավոր ընթրիքը, Խաչելությունը (նկ. 3, 6(1), 9), Հարությունը տարբեր պատկերատիպերով, հաճախ՝ որպես Յուղաբեր կանայք Տիրոջ Գերեզմանի մոտ կամ Հրեշտակի հայտնությունը սուրբ կանանց (նկ. 5(1), 6(2)), Համբարձումը, Հոգեգալուստը, Տիրամոր Ննջը։

[13] Տվյալ հայկական կերպարի համար նույնպես օգտագործված է արևմտյան հնատիպ գրքերից պատկերատիպ։

Խույրերի հարդարանքի մեջ մեծ տեղ են գրավել Հայր Աստծո (նկ. 2, 5(1)) և Որդի Աստծո պատկերները, Նորկտակարանային ս. Երրորդությունը, Ամենակալ Քրիստոսը, Հարուցյալ Քրիստոսը (նկ. 5(1), 6(2)), Քրիստոսի Անձեռակերտ պատկերը, Աստծո Գառը, Բարի Հովիվը, որոնք միջնադարյան հայկական արվեստում առանձին գրեթե չեն ներկայացվել: Այս պատկերներն առկա են խույրի երեսներից մեկի վրա, բայց ավելի հաճախ՝ ավետարանական դրվագ պատկերող երեսին՝ ներքին դաշտի վերնամասում (նկ. 5(1), 6(2)):

Գերիշխող էր Տիրամոր պատկերը: Հայոց խույրի մի երեսը նվիրվում էր Աստվածամորը՝ տարբեր պատկերագրական տիպերով՝ Օդիգիտրիա, Օրանտա («աղոթող»), Խանդաղատանք, Մարիամը Մանկան հետ՝ որպես Երկնային Թագուհի, Մարիամը Մանկան հետ՝ որպես Երկրավոր Եկեղեցի, Տիրամայրը Մանկան և հրեշտակապետերի հետ՝ կամ Հովհաննես Մկրտչի և որևէ սրբի կամ երևելի եկեղեցականի հետ, Տիրամոր Վերափոխումը (նկ. 2, 3):

Խույրերը զարդարած առանձին պատկերներից պետք է հիշատակել մարգարեներին ու առաքյալներին, ինչպես օրինակ՝ Պետրոսն ու Պողոսը, ավետարանիչներն ու նրանց խորհրդանիշերը, Մովսեսը, նաև Հովհաննես Մկրտիչը և Հակոբոս Տյառնեղբայրը՝ կտրված գլուխներով (նկ. 2, 3, 5(2), 7):

Առավել հաճախ խույրի կենտրոնական դաշտը զբաղեցնում է Խաչելության և Հարության տեսարանների համադրությունը (նկ. 6 (1. 2)): Դրանք այն տեսարաններն են, որոնք ներկայացնում են Քրիստոսի երկրավոր կյանքի ամենակարևոր իրադարձությունները և արտացոլում Քրիստոնեության գլխավոր դոգմաները՝ Քրիստոսի զոհաբերության շնորհիվ Ադամի մեղքի քավությունն ու հասարակաց համընդհանուր Հարության հնարավորությունը: Հիշված դրվագներից մեկը կարող էր համադրվել Ավետման կամ Պայծառակերպության, Քրիստոսի կամ Տիրամոր կերպարների հետ: Խույրի երեսներից մեկի վրա երբեմն պատկերվում էր Հիսուսի հայտնությունը Մարիամ Մագդաղենացուն, որին սովորաբար համադրվում էր հակառակ երեսին Գահին բազմած Մանուկ Հիսուսը գրկին Աստվածածնի հետ: Դրվագների համադրությունն արտացոլում էր Երկնային ու երկրային եկեղեցիների նվիրապետության գաղափարը, դրանում Քրիստոսի, Աստմածամոր և առաքյալների դերը, Հին ու Նոր Կտակարանների նախակերպարային կապը:

Այս գաղափարները մարմնավորվում էին նաև վակասի ու արտախուրակների պատկերների մեջ: Վակասներն ասեղնագործվում էին մեդալիոնների մեջ ներառված՝ Քրիստոսի ու առաքյալների (նկ. 2), Քրիստոսի և ավետարանիչների, Մանուկ Հիսուսը Տիրամոր գրկին կամ միայն առաքյալների պատկերներով:

Արտախուրակների վրա մեծամասամբ ներկայացվում էր Ավետումը, որն արտացոլում էր Քրիստոսի մարմնավորումը՝ Մարդեղությունը, և երկնային և երկրավոր եկեղեցիների, Հին ու Նոր Կտակարանների միավորումը (նկ. 3)։ Կարող էին և Պողոսի ու Պետրոսի պատկերները լինել։

Խույրերի ու արտախուրակների, երբեմն նաև վակասների դաշտը լցվել է բուսական նախշազարդերով (նկ. 2, 8), որոնք խորհրդանշում են կենաց ծառը, ծաղկած Դրախտի այգին, խաչափայտը. այուժետային դրվագների հետ համադրված՝ դրանք վերածվում էին Հավատքի ու եկեղեցու միջոցով Հոգու Փրկության պատկերի։

Այսպիսով, արտախուրակներով ու վակասով խույրի գեղարվեստական համալիրը փոխանցում էր եկեղեցու հիմնադրույթները (նկ. 2)։ Դրանց վրայի պատկերների ընտրությունը խտացված կերպով արտահայտում էր եպիսկոպոսի ու կաթողիկոսի գերակայությունը, նրանց հովվական դերը եկեղեցում և անշուշտ հենց եկեղեցու նշանակությունը։ Զարմանալի է, որ այս հարուստ պատկերային աշխարհը ստեղծելու հնարավորությունը չեն օգտագործել միթրաներ ստեղծող արևմտյան վարպետները։ Վերն արդեն նշվեց, որ լատինական միթրաները հարդարված չեն պատկերներով, նրանց երկու «եղջյուրներն» էլ հարթ են, առավելապես հանդիպում են եզակի դեպքերում քարերով և հատուկենտ նախշերով զարդարված նմուշներ։ Վերջինները մեծ մասամբ միջնադարյան ժամանակաշրջանից են։ Այսինքն կաթոլիկ վարպետները չեն խախտել ավանդույթը։ Հարց է ծագում, թե ե՞րբ և ինչու՞ են պատկերներ հայտնվել հայկական խույրերի վրա։

Հայկական ձեռագիր ժողովածուներում՝ Շարակնոցներում, Հայսմավուրքներում, Աղոթագրքերում և հենց «ժողովածու» կոչվածների լուսանցքներում, պահպանվել են Գրիգոր Լուսավորչի պատկերները կաթողիկոսական համալիր հանդերձանքով։ Ամենավաղ նմուշները թվագրվում են 17-րդ դարով։ Ձեռագրերի մի մասում խույրերը դեռ ձևափոխված չեն և պահպանում են լատինական միթրայի ձևը (նկ. 10)։ Լուսավորչի այլ դիմանկարներում հանդիպում են խույրեր՝ արդեն ձևափոխված և քարերով զարդարված երեսներով (նկ. 11)։ Եվ 17-րդ դարի մեզ հայտնի միայն մեկ ձեռագրում է Լուսավորիչը պատկերված խույրով, որի ոչ միայն ձևն է փոխված, այլև երեսները հարդարված են ինչպես զարդանախշերով, այնպես և պատկերներով՝ տվյալ դեպքում խաչերով (նկ. 12)։ Հետևաբար, կարող ենք վստահորեն եզրակացնել, որ հայկական խույրերի երեսները ձևափոխվել և հարդարվել են պատկերներով՝ 17-րդ դարից սկսած։ Ինչպես և արվեստի այլ տեսակներում, հայ վարպետները փոխառված ձևերը

փոխակերպել են սեփական պահանջներին, գործառույթներին և գեղարվեստական ճաշակին համաձայն: Արդյունքում, ի հայտ է եկել հայկական եկեղեցական արվեստի մի նոր ինքնատիպ տեսակ՝ հայկական խույրի արվեստը:

SEYRANUSH SOS MANUKYAN

ARTISTIC IMAGE OF ARMENIAN MITERS

Keywords: Armenian miters, artistic features, church art, artistic embroidery, iconography.

Armenian miters became the subject of special study as the works of fine art for the first time.

Miters are part of the vestments worn by the Supreme Patriarch, the Catholicos, and bishops of the Armenian Church. They have been used in the Armenian Church since 1184 when the Pope presented the episcopal Catholic vestments to Catholicos Gregory IV the Young. Miters top the ensemble of episcopal vestments and symbolize the bishop's holiness, dignity, and authority. This purpose has determined their specific artistic image. This study is based on the magnificent collection of miters in the museums of the Mother See of Holy Etchmiadzin, which are monuments from the 17th to 19th centuries.

Like Latin ones, the composition of Armenian miters consists of two identical parts joined at the bottom. However, they are more convex in the middle, forming an upper part that resembles a keel. Miters symbolize the crown of thorns. The two halves symbolize the Old and New Testaments, the two rays of light that emanated from Moses's face on Mount Sinai, and the unification of the Old and New Churches. The ribbons attached to the back of the miter have also changed over time. In ancient times, ribbons were attributes of power and investiture and were also used as a sign of the authority of the high priest. Over time, they also acquired the meaning of the two Testaments. In the Armenian Church, they turned into two pendants attached to the rectangular, elongated *vakas*, which is the collar-amice of the robe. The shape of the pendants changed as well, taking the form of a "blooming" cross with a three-petal ending, representing the Cross-Tree of Life.

Armenian miters are perfect examples of artistic embroidery. Their entire surface is embroidered. Almost all types of medieval embroidery techniques are employed, including combinations and mixtures of gold, silver, and silk threads;

pearls; sequins; gold ribbons; and precious and semiprecious stones. Pictorial fragments and silver chased overlays are also used.

Armenian miters, embroidered with plot motifs, differ from Latin ones in that they reflect the images, symbolism, style, and iconography of monuments of church art. In Armenian manuscript miscellanies dating from the 17th century onward, there are depictions of Gregory the Illuminator wearing full patriarchal vestments, a Latin-style miter, and a miter adorned with gemstones; in one 17th-century manuscript, the shape of Gregory's miter has already changed, and it is decorated with ornamentation and images. This indicates that the Armenian miter acquired a new form and thematic depictions beginning in the 17th century.

СЕЙРАНУШ СОСОВНА МАНУКЯН

ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ АРМЯНСКИХ МИТР

Ключевые слова: Армянские митры, художественные особенности, церковное искусство, художественное шитье, иконография.

Армянские митры – особый мир церковного искусства, впервые ставший предметом специального изучения. Митры являются частью облачения верховного патриарха – католикоса и епископов Армянской Церкви. Они вошли в обиход Армянской церкви с 1184 года, со времени принятия подаренного римским папой архиерейского католического облачения католикосу Григору IV Отроку. Митры венчают ансамбль архиерейского облачения и символизируют великолепие святости, олицетворяемой Епископом, его достоинство и авторитет. Подобное предназначение определило их специфический художественный образ, которому посвящена данная статья. Исследование основано на материале собрания митр музеев Первопрестольного святого Эчмиадзина −памятников XVII-XIX веков, происходящих из разных художественных центров.

Армянские митры, подобно латинским, состоят из двух одинаковых половинок, объединенных в нижней части. Они более выпуклы в средней части, а вверху образуют «киль». Обод митры напоминает о терновом венце. Две половинки символизируют Ветхий и Новый Завет, два луча света, исходившие от лика Моисея на горе Синай, объединение Старой и Новой Церкви, любовь к Богу и к ближнему.

Видоизменились и ленты (манипулы), прикрепляемые на Западе к митре сзади. Ленты, в древности бывшие атрибутами власти, силы, инвеституры, были использованы в митрах как знак власти первосвященника. Но со временем они приобрели также значение двух Заветов. В Армянской Церкви они превратились в две подвески, прикрепляемые к прямоугольному вытянутому вакасу – воротнику-нарамнику ризы. Изменилась и форма подвесок, получившая вид рукава «процветшего» креста с трехлепестковым завершением, значение Креста-Древа жизни.

Армянские митры (и подвески) впервые представляются как произведения изобразительного искусства. Это совершенные образцы художественного шитья. Их поверхность полностью расшита. Здесь использованы практически все виды средневекового шитья, сочетания и смешение золотных, серебряных и шелковых нитей, жемчуг, блестки, золотные ленты, драгоценные и полудрагоценные камни, а также живописные фрагменты и серебряные чеканные накладки, закреплявшиеся на шелковой или бархатной основе митр.

Армянские митры, расшитые, в отличие от латинских, сюжетными мотивами, отражают образы, символику, стиль и иконографию других памятников церковного искусства. В армянских рукописных сборниках, начиная с XVII века встречаются изображения Григория Просветителя в полном патриаршем облачении, в митре латинского образца, а также в митре, украшенной камнями; а в одной из рукописей XVII века форма митры Григория уже изменена, и она украшена орнаментом и изображениями. Это означает, что армянская митра приобрела новую форму и стала включать сюжетные изображения, начиная с XVII века.

ՍԱԹԵՆԻԿ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ*

DOI: 10.57155/ENYJ3197

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԹԻՎ 9422 ՁԵՌԱԳՐԻ ԱՎԵՏՄԱՆ ՏԵՍԱՐԱՆԸ

Բանալի բառեր՝ *կիլիկյան մանրանկարչություն, կիլիկյան արքայական ձեռագիր, ՄՄ 9422 Ավետարան, Ավետման տեսարան, Մարիամ, Գաբրիել, խաչակիրների արվեստ, չինական արվեստի ազդեցություն:*

Կիլիկյան հայկական թագավորության 13-րդ դարի մանրանկարչությունը ներկայացնում է հայ գրքարվեստի առավել փառավոր բաժինը: Թորոս Ռոսլինի ստեղծագործությամբ ձևավորված գեղարվեստական ավանդույթները և ոճական նորամուծությունները շարունակվել ու զարգացել են նրա աշակերտների կամ հաջորդների ստեղծագործական ժառանգության մեջ: Վերջիններս ծաղկել են մի շարք շքեղ մատյաններ կիլիկյան թագավորների և բարձրաստիճան ազնվականների պատվերով: Գեղանկարչական այս յուրահատուկ խճանկարի մեջ մի եզակի գոհար է ՄՄ 9422 Ավետարանը (նկ. 1)[1]:

*Ձեռագրի «**Ավետում**» մանրանկարը (նկ. 2) կիլիկյան գրքարվեստի բացառիկ ստեղծագործություններից է և աչքի է ընկնում իր նրբագեղությամբ ու բանաստեղծական վայելչությամբ: Բաբկեն Չուգասզյանը, Մատենադարանի 1967 թ. և 1969 թ. տպագրված պատկերագրքերի շապիկների համար ընտել էր այս մանրանկարը, և այն ճանաչելի էր դարձել ոչ միայն հայերի համար, այլ նաև հայտնվել է Յան Պելիկանի տեսադաշտում ու զետեղվել նրա հետազոտության մեջ այլ հատընտիր ստեղծագործությունների կողքին[2]:*

---

* Հայաստանի ազգային պատկերասրահի Դեկորատիվ-կիրառական արվեստի բաժնի վարիչ, ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, satenikchookaszian@yahoo.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 հունվարի, 2026, հոդվածը գրախոսելու օրը՝ 2 մայիսի, 2026:

1 Այս և մյուս նկարները տե՛ս ներդիրում:

2 **J. Pelikan**, *Mary Through the Centuries: Her Place in the History of Culture*, New Haven, 1996.

«Ավետման» պատկերագրությունը կազմավորվել է Ղուկասի Ավետարանի (Ա. 26-38), ինչպես նաև պարականոն այնպիսի գրվածքների հիման վրա, ինչպիսիք են Հակոբի նախավետարանը, Կեղծ Մատթեոսի և Կույսի Ծննդյան ավետարանները և այլն[3]*: Այս թեմային անդրադարձել են նաև եկեղեցու հայրեր Հովհան Ոսկեբերանը, Գրիգոր Հրաշագործը, Եփրեմ Ասորին, Անդրեաս Կրետացին և այլք*[4]*: Այս տեսարանի պատկերման առաջին օրինակները, որ հանդիպում են հռոմեական կատակոմբներում, վերաբերում են 3-րդ դարին*[5]*: «Ավետման» տեսարանի ամենավաղ պատկերներից են բյուզանդական արվեստում՝ Հռոմի Սանտա Մարիա Մաջջիորե եկեղեցու 5-րդ դարի որմնանկարը, իսկ հայկական արվեստում՝ 989 թ. էջմիածնի նշանավոր Ավետարանի վերջում կարված 6-7-րդ դդ. մանրանկարը, ինչպես նաև Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու 915-921 թթ. որմնանկարը*[6]*:*

«Ավետման» տեսարաններում Գաբրիել հրեշտակապետին պատկերում են երկու հիմնական դիրքով՝ անշարժ կամ դեպի Մարիամը շարժվելիս: Ահա այս վերջին ձևն է նախընտրել նաև ՄՄ 9422 ձեռագրի ծաղկողը՝ երկնային ավետաբերին ներկայացնելով օրհնող աջով, ձախ ձեռքում գավազանը բռնած[7]*: Իսկ Մարիամին նկարիչները ներկայացնում են նաև նստած կամ կանգնած, երբեմն պատկերում են վախեցած, երբեմն՝ զարմացած, երբեմն էլ՝ Տիրոջ կամքին հնազանդ*[8]*: Այս վերջին տարբերակն է ներկայացված մեր մանրանկարում: Տիրամայրը աջ ձեռքի ափը դեպի դիտողը դարձրած, օրհնելու նշանն է անում և միաժամանակ բռնել է կարմիր թելը, իսկ ձախը մոտեցրել է իլիկին: Այսինքն՝*

---

3 *Христианство, Энциклопедический словарь*, том 1, Москва, 1993, с. 265.

4 **G. Millet**, *Recherches sur l'iconographie de l'évangile aux XIVe, XVe et XVIe siècles, d'après les monuments de Mistra, de la Macédoine et du Mont-Athos*, Paris, 1960, p. 68.

5 **Н. Покровский**, *Евангелие в памятниках иконографии*, С. Петербург, 1892, с. 4, գիրքը վերահրատարակվել է՝ **Н. Покровский**, *Евангелие в памятниках иконографии, преимущественно византийских и русских*, Москва, 2001, с. 98, և մեր հետագա վկայակոչումներն այս հրատարակությանն են:

6 **В. Казарян, С. Манукян**, *Матенадаран. Армянская рукописная книга VI-XIV веков*, т. 1, Москва, 1991, с. 24, илл. 24; **S. Der Nersessian**, *Aghtamar Church of the Holy Cross*, Cambridge, Massachusetts, 1965, p. 38, fig. 63, 42, **Լ. Ջուգասզյան**, *Գրիգոր Ծաղկող*, Երևան, 1986, էջ 38:

7 Գավազանը ճամփորդների մշտական պարագաներից է, իսկ տվյալ տեսարանում խոհրդանշում է Գաբրիելի՝ երկնային դեսպան լինելը, տե՛ս **Н. Покровский**, *Евангелие в памятниках иконографии*, с. 106:

8 Այդ տարբերակները տեսանելի են հետևյալ մատյանների Ավետման տեսարաններում՝ Հովհաննես Սանդղկավանեցու ծաղկած XI դ. «Մուղնու» (ՄՄ 7736), Կիրակոս մանրանկարչի 1330 թ. (ՄՄ 2929), 1289 թ. Ավետարանի՝ (ՄՄ 197), Հակոբ Ջուղայեցու 1607 թ. (Նոր Ջուղայի Մատենադարան, թիվ 396 (105) Ավետարաններում:

Մարիամը ցուցադրված է իլիկ մանելիս: Ուշագրավ է, որ «Ավետման» տեսարանում Մարիամին մանելիս ներկայացնող պատկերները բյուզանդական արվեստում՝ ի հայտ եկան 5-րդ դարից սկսած[9]*:*

Յուրահատուկ նրբագեղությամբ են հաղորդված նրա երկար ու բարակ մատները: Մարիամի օրհնող մատների միջև հայտնվող կարմիր թելը թողնում է ծաղկի[10] *տպավորություն՝ ավելի նազելի դարձնելով Աստվածամոր կերպարանքը:*

Այս մանրանկարում շատ գեղեցիկ են նկարված Տիրամոր աչքերը, որոնք ասես օժտված են թավշի նրբությամբ: Այս կապակցությամբ տեղին է հիշել, որ Անդրեաս Կրետացին Մարիամին վերագրում էր անտիկ Աթենայի իմաստությունը[11]*: Տիրամոր ամբողջ կերպարն աչքի է ընկնում բացառիկ խոնարհությամբ ու ազնվականությամբ: Մարիամի դեպի աջ թեքված գլխի դիրքը, վայելչությամբ լի հայացքը, ձեռքի շարժումը և առհասարակ ողջ կերպարը մեծ հմայք են հաղորդում մանրանկարին:*

Մեր «Ավետման» Տիրամոր գլխի դիրքը հիշեցնում է 13-րդ դարի խաչակիրների ստեղծած և Սինայի Ս. Կատարինե վանքում պահվող մի շարք սրբապատկերներ, ուր ևս անձինք, մասնավորապես Մարիամն, ունեն գլխի այդպիսի թեքված դիրք[12]*: Սա վկայում է այն մասին, որ կիլիկյան վարպետներին ծանոթ են եղել խաչակիրների նման ստեղծագործությունները:*

Գլխի այսօրինակ թեքվածությունը բնորոշ է 13-րդ դարի կիլիկյան արքայական խմբի ձեռագրերի՝ Մարիամին ներկայացնող մի շարք մանրանկարներին: Օրինակ՝ Մարիամն այդպես է նկարված Կեռան Թագուհու 1272 թ. Ավետարանի (եղմ. 2563), Վասակ իշխանի ձեռագրի (եղմ. 2568) և՛ «Ավետման», և՛ իշխանական ընտանիքը ներկայացնող մանրանկարներում, ուր Գթության Աստվածամոր (Mater Misericordiae) տիպը ներկայացնող Մարիամն իր հովանու տակ է վերցնում իշխանին և նրա երկու որդիներին: Ճիշտ այդ պատկերագրությամբ և

---

[9] **M. Evangelatou**, "The Purple Thread of the Flesh: The Theological Connotations of a Narrative Iconographic Element in Byzantine Images of the Annunciation," *Icon and World: The Power of Images in Byzantium*, ed. by ***A. Easmond, Liz James***, Hampshire, England, 2003, p. 261-262.

[10] Ավետման տեսարանում հաճախ է ներկայացվում շուշանը, որը խորհրդանշում է կույսի մաքրությունը, **Д. Холл**, *Словарь сюжетов и символов в искусстве*, перевод с английского и вступительная статья ***Александра Майкапара***, Москва, 1996, с. 103:

[11] **G. Millet**, *Recherches sur l'iconographie de l'évangile*, p. 68.

[12] **K. Weitzmann**, "Thirteenth Century Crusader Icons on Mount Sinai," *The Art Bulletin*, Vol. 45, No. 3, 1963, Sep., pp. 179-203, fig. 1-3, 7, 22.

այդ դիրքով է Տիրամայրը Մարաջախտ Օշինի 1274 թ. Ավետարանի մանրանկարում (Փյերփոնթ Մորգան գրադարան, թիվ 740), ուր Լևոն Բ թագավորի և Վասակ իշխանի եղբայր, արքեպիսկոպոս Հովհաննեսի առաջ կանգնած կույսը սեփական թիկնոցով իր հովանավորության տակ է վերցնում զորավարին և նրա երկու զավակներին[13]: Հավանաբար, այս Մարիամի պատկերների նախօրինակը նույնն է եղել:

Մարիամը գլխի նույն թեքված դիրքով, բայց թագով է 1289 թ. մատյանի (ՄՄ 197) «Ավետման» տեսարանում՝ ներկայանալով իբրև «երկնային թագուհի»[14]: Այդ «Ավետումը» Ս. Տեր-Ներսեսյանը համեմատում է 1226-1234 թթ. ֆրանսիական Խրատական Աստվածաշնչում (Փյերփոնթ Մորգան գրադարան, թիվ 240, fol. 8) զետեղված Բլանշ Կաստիլիացու դիմանկարի հետ, որտեղ թագուհին ոչ միայն թագով է, այլ նաև պատկերված է ձեռքերի նույն դիրքով[15]: Ս. Տեր-Ներսեսյանը ենթադրում է, որ այս հայկական մանրանկարի համար հավանաբար նախօրինակ է հանդիսացել ֆրանսիական գոթական շրջանի որևէ ձեռագրի պատկեր: Չի կարելի բացառել այն փաստը, որ կիլիկյան ծաղկողները հնարավորություն են ունեցել տեսնելու ոչ միայն խաչակիրների, այլև ֆրանսիական ձեռագրերի օրինակներ[16]:

ՄՄ 9422 Ավետարանի մանրանկարներից մի քանիսում առկա է մի յուրահատուկ գեղարվեստական երևույթ: Տերունական շարքից Ավետման և Ղազարոսի հարության երկու գլխավոր կերպարները, ինչպես նաև նույն մատյանի ավետարանիչներից Ղուկասը Թեոփիլոսի հետ (նկ. 3) և Հովհաննեսը Պրոքորոնի հետ ներկայացված են սպիտակ, կարմիր, կապույտ քարերից հյուսված եզրագիծ ունեցող լուսապսակներով: Այս լուսապսակներն իտալացի արվեստաբան Ս. Բատիստինին համարում է հայկական և դրանց առկայությունը իտալա-

---

[13] **S. Der Nersessian**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century*, Washington D.C., Dumbarton Oaks, 1992, Vol. I, pp. 133,158-159. Տեղին է թեևս հիշել, որ Մարաջախտ Օշինը Կեռան թագուհու հեռին էր, նաև Լամբրոնի ամրոցի տերը, տե՛ս **S. Der Nersessian**, op. cit. pp. 102-103: Այս մանրանկարը նախկինում Բրյուսելի Ֆերոն-Սթոքլեթ հավաքածուի մաս է կազմել, իսկ այժմ Փյերփոնթ Մորգան գրադարանի սեփականությունն է:

[14] **Д. Холл**, *Словарь сюжетов и символов в искусстве*, с. 187; **S. Der Nersessian**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 100-101, fig. 381.

[15] *The Pierpont Morgan Library, Exhibition of Illuminated Manuscripts Held at the New York Public Library* (*November 1933 to April 1934*), Introduction by ***Ch. R. Morey***, New York, 1934, no. 51.

[16] **S. Der Nersessian**, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 100-101, fig. 381.

կան արվեստում դիտում որպես հայկական ազդեցություն, մասնավորապես Բոլոնիայի մանրանկարչության լավագույն ստեղծագործություններից մեկի՝ «Մաեստրո դի Ջերոնա» Աստվածաշնչի (Ջերոնա, Մայրաքաղաքային գրադարան) մանրանկարներում: Ըստ Ս. Բատտիստինիի՝ կիլիկյան մանրանկարչությանը բնորոշ այս մանրամասնը հետագայում տարածվում է նաև Կիպրոսի արվեստում և Սինայի սրբապատկերներում[17]*: Հայ գրքարվեստում նմանօրինակ լուսապսակներն առաջին անգամ ի հայտ են գալիս Կեռանի 1272 թ. Ավետարանի մանրանկարներում, ապա Վասակ իշխանի մատյանի Վասակի և նրա որդիների դիմանկարում, Հովհաննես արքաեղբորը, Մարաջախտ Օշինին և նրա որդիներին պատկերող մանրանկարում (Փյերփոնթ Մորգան գրադարան, Ms M. 1111), ՄՄ 197 գրչագրի մի շարք նկարազարդումներում, ինչպես նաև 1280-ական թթ. ստեղծված՝ ՄՄ 2629 մատյանի եվսեբիոսի Թուղթը պարունակող խորաններում և ՄՄ 179 Աստվածաշնչի (1292 թ.) «Մովսեսը օրենքները ստանալիս» մանրանկարում:*

ՄՄ 9422 Ավետարանի «Ավետման» տեսարանում Մարիամի գլխի թեքվածությունը, առանցքի շուրջ Տ-աձև պտտված մարմնի դիրքը հիշեցնում են Ժան (Հովհաննես) Պյուսելի մոտավորապես 1325 թ. ծաղկած թագուհի Ժաննա դ'Էվրոյի ժամագրքի[18] *(Նյու Յորք, Քլոյսթեր թանգարան, fol. 16) Ավետման Աստվածամոր կերպարը՝ ստիպելով մտածել, որ այս համեմատվող երկերը, ըստ երևույթին նույն նախօրինակն են ունեցել:*

ՄՄ 9422 մանրանկարի գունաշարի ամբողջացման առումով իր բաժինն ունի նաև Գաբրիելի կապույտ, վարդագույն և ոսկեգրությամբ զարդարված հանդերձանքը, որն ավարտվում է կարմիր գուլպաներով: Ավետման ուրախալի լուրը բերող հրեշտակապետի հագուստի երանգավորումը կատարված է վառ գույների, իսկ համեմատաբար ավելի բարդ կերպար հանդիսացող Աստվածամոր հնազանդությունը, մտահոգությունը, ամոթխածությունն ընդգծված են մուգ երանգների համադրության միջոցով:

---

[17] **S. Battistini,** "Aspetti e problemi della presenza dei monaci armeni a Bologna", *I quaderni del m.ae.s., Journal of Mediae Aetatis Sodalicium*, VIII/2005, pp. 39-63.

[18] **J. Porcher**, *Medieval French Miniatures*, New York, 1960, p. 52, pl. LIV; http://www.wga.hu/html_m/p/pucelle/evreux.html

Այս մանրանկարի կառուցվածքի անբաժան մասն են կազմում ճարտարապետական կառույցները[19], որոնք ունեն բավական անսովոր ձևեր: Պալատական խմբի ձեռագրերում «Ավետումը» ներկայացնող մանրանկարներում ՄՄ 9422 Ավետարանի պատկերն առանձնանում է իր ճարտարապետական կառույցների սակավությամբ և միևնույն ժամանակ դրանց կատարման նրբությամբ: Ակնհայտ է, որ ծաղկողը ցանկացել է դիտողի ուշադրությունը կենտրոնացնել գլխավոր կերպարների վրա:

Ակնառու են ՄՄ 9422 ձեռագրում Ավետման և Վասակ իշխանի համանուն տեսարանի ընդհանրությունները. սույն ուսումնասիրության առարկա հանդիսացող մանրանկարը կարծես Վասակ իշխանի Ավետարանի տվյալ մանրանկարի առավել կատարելագործված տարբերակը լինի: Վերոնշյալ երկու ձեռագրերի այս և այլ մանրանկարների ոճական և պատկերագրական ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ այս ձեռագրերի մանրանկարիչներից մեկը նույն անձն է եղել: Արքայական ձեռագրերի ծաղկողների անունները ցավոք, անհայտ են, և ՄՄ 9422-ի պարագայում, ուսումնասիրության արդյունքում, այս նկարազարդման ծաղկողին տվյալ մատյանի գլխավոր մանրանկարիչ ենք համարում:

Այստեղ բարակ սյուներին հանգչող կամարների վրա ներկայացված շինությունները երկու դիտակետից են ներկայացված՝ ճակատից և վերևից: Երկու սյուների միջև պատկերված է նաև թեք ծառ[20]: Մարիամին անվանում էին «Կենսատու ծառ», քանի որ նա ս. Հոգու օրհնությամբ աշխարհին պարգևեց իր

---

[19] Ըստ Ղուկասի Ավետարանի (Ա 26)՝ հրեշտակն ուղարկվել էր Նազարեթ կոչվող Գալիլեայի քաղաք, իսկ Ավետումը տեղի է ունեցել Հովսեփի տանը: Ի տարբերություն Հովսեփի տունը բազիլիկի տեսքով նկարող հնագույն վարպետների՝ 12-14-րդ դարերի հեղինակները, ձևափոխելով բազիլիկը, օժտում են այն երևակայական ձևերով: Տե՛ս **А. Майкапар**, *Новый Завет в искусстве*, Москва: Крон-Пресс, 1998, с. 40-43, **Լ. Զուգասզյան**, *Գրիգոր Ծաղկող*, էջ 41:

[20] «Ավետման» տեսարանում հայտնվող ծառը խորհրդանշում է Հիսուսի խաչափայտը, բարու և չարի իմաստության ծառը: Տե՛ս **L. Ross**, *Medieval Art: A Topical Dictionary*, London, 1996, p. 15-16: Նաև խորհրդանշում է կորուսյալ դրախտը, Կենաց ծառի գաղափարը, ինչպես նաև եկեղեցին: Տե՛ս **G. Millet**, *Recherches sur l'iconographie de l'évangile*, p. 88; **G. Schiller**, *Iconography of Christian Art*, Vol. I, London, 1971, p. 40, **Լ. Զուգասզյան**, *Գրիգոր Ծաղկող*, էջ 41, **H. Papastavrou**, *Recherche iconographique dans l'art byzantin et occidental du XIe au XVe siècle: l'Annonciation*, Thèse de doctorat, Art et archéologie, Bibliothèque de l'Institut hellénique d'études byzantines et post-byzantines de Venise, 25, Venise, 2007, p. 248-249:

պտուղը՝ Փրկչին[21]*, մասնավորապես շարականներից մեկում նրան խնկի ծառի են նմանեցնում*[22]*:*

Ամենայն հավանականությամբ, ՄՄ 9422-ի մանրանկարը նախօրինակ է հանդիսացել Ավագ ծաղկողի 1337 թ. Ավետարանի (ՄՄ 212) համանուն ստեղծագործության համար[23]*: Ակնհայտ են երկու մանրանկարների միջև եղած ընդհանրությունները (ընդհանուր կառուցվածքը, կերպարների դիրքերը, հագուստի ծալքավորումը և Մարիամների ձեռքերի դիրքը, Գաբրիելի դիրքին հակադրված Մարիամի հանգիստ ու ներդաշնակ կերպարը):*

ՄՄ 9422-ի ստեղծագործության մեջ ոսկեգրությունը, աստվածային լույսով պարուրելով, առանձնացնում է առավել կարևոր կերպարներին: Բյուզանդական երկերի համեմատ՝ կիլիկյան արքունական ձեռագրերի ոսկեգրությունը բավականին զուսպ է, մասնավորապես ՄՄ 9422 Ավետարանի մանրանկարիչները հիմնականում ոսկեգրությամբ են հարդարում մի կերպարի (հաճախ Մարիամի կամ Քրիստոսի, նաև ավետարանիչների դիմանկարներում ներկայացված հագուստը, կամ որոշ անձանց հանդերձանքի միայն մի հատվածը): Բյուզանդական շատ նմուշների նման, հագուստի տարբեր մասերի ոսկեգրությունն ունի զուգահեռ ու հովհարաձև գծային բնույթ: Ոսկեգրությամբ ավետարանիչների դիմանկարներում ծաղկողը զարդարել է նաև կահույքի հատվածները:

Ուշագրավ է, որ ՄՄ 9422 բոլոր մանրանկարներից իրենց շրջանակների յուրօրինակ հարդարանքով աչքի են ընկնում «Ավետումն» ու «Ղազարոսի հարությունը» (նկ. 4): Վերջիններս ամփոփված են երփներանգ, նուրբ շրջանակի մեջ, որից սկիզբ են առնում և լուսանցքի վրա ծավալվում բուսական փշանման զարդերը: Այս երևույթը բոլորովին նոր գեղարվեստական առանձնահատկություն է կիլիկյան մանրանկարչության և Միջերկրծովյան ավազանի երկրների արվեստում: Լուսանցքի վրա ծավալվող բուսական փշանման զարդերով մանրանկարներ այդ տարածքում ապրած որևէ ժողովրդի գրքարվեստի օրինակներից հայտնի չեն: Պատկերներին հաղորդվող այս շքեղությունը շատ համա-

---

[21] **Г. Бидерманн**, *Энциклопедия символов*, Москва, 1996, с. 69-70.

[22] Շարակնոց. Խնկի ծառին
Խնկի ծառին նման ես,
պտուղ դու բաղցրահամ ես,
զԲարի պտուղ բերեալ ես,
Աստուածածի՛ն, մեղա՛յ ինձ (Միջնադարյան անհայտ հեղինակ, «Տաղ Սուրբ Աստվածածնին», *Շարականների ընտրանի*, Երևան, 2004):

[23] **Լ. Ջահուկեան**, *Աւագ (Հայկական մանրանկարչութիւն շարքից)*, Երևան, 1984:

հունչ է դրանց հագեցված գունաշարի ընդհանուր տրամադրությանն ու բազմամարդ լարված հորինվածքի բնույթին, հատկապես «Ղազարոսի հարության» տեսարանում[24]*:*

Բուսական փշանման գարդերով շրջանակները հիշեցնում են ՄՄ 197 մատյանի ավետարանիչների դիմանկարները, որտեղ կա նույն երևույթը, բայց մի վերապահումով՝ համեմատվող ձեռագրի «Մուտքը Երուսաղեմ», «Մկրտության» նկարազարդումների միայն վերևի հատվածում են դրանք հանդիպում: Զորս կողմից բուսական նախշով եզերված շրջանակներում են ամփոփված միայն Հեթում Բ արքայի 1286 թ. ճաշոցի (ՄՄ 979) «Տեառընդառաջ», «Մուտքը Երուսաղեմ» տեսարանները, բայց այդտեղ, բացի բույսերից, հայտնվում են մարգարեների փոքրիկ գլուխներ:

Այս շրջանակները կիլիկյան մանրանկարչության նախորդ փուլերին բնորոշ չեն, և վերջիններիս ի հայտ գալը, ըստ Տ. Կույումջյանի, կապված է 13-րդ դարի չինական խեցեղենի հետ, որտեղ հայտնվում են նմանօրինակ ջրային բույսեր[25]*: Ավելի ուշ, նման շրջանակներ են հանդիպում գոթական արվեստում*[26]*:*

Այսպիսով, հարկ է ընդգծել, որ ՄՄ 9422 Ավետարանի «Ավետում» մանրանկարը ներկայացնում է կիլիկյան մանրանկարչության գեղարվեստական արտահայտչաձևի որակը, ինչպես նաև վկայում անանուն մանրանկարչի ստեղծագործական օժտվածության, մասնագիտական հմտության ու ընտիր ճաշակի մասին:

---

[24] Այդուհանդերձ, այս երկու նկարազարդումների շրջանակները տարբեր են. «Ղազարոսի հարությունը» ամփոփված է սպիտակ նախշերով ծածկված կապույտ շրջանակի մեջ, իսկ «Ավետումը»՝ թեմ տեղադրված գույնզգույն ուղղանկյուններից բաղկացած շրջանակի մեջ: Վերջինս հիշեցնում է Մատթեոսի դիմանկարի, ինչպես նաև Վասակ իշխանի Ավետարանի «Տեառնընդառաջի» և Վասակին իր որդիների հետ ներկայացնող պատկերի շրջանակների հարդարանքը: Այդպիսի գույնզգույն շրջանակի մեջ է ամփոփված նաև Կեռան թագուհու՝ 1272 թ. Ավետարանի «Տեառնընդառաջ» տեսարանը: **Т. Вельманс**, «Маньеризм и стилистические новшества в киликийской миниатюре в конце XIII века», *II Международный симпозиум по армянскому искусству*, Ереван, 1978, с. 4-7:

[25] **D. Kouymjian**, "Chinese Elements in Armenian Miniature Painting in the Mongol Period," *Armenian Studies / Études arméniennes: In Memoriam Haïg Berbérian*, Calouste Gulbenkian Foundation, Lisbon, 1986, p. 462.

[26] Օրինակ՝ ֆրանսիացի մանրանկարիչ Ժան Պյուսելի 1323-1326 թթ. ծաղկած Բելլվիլի Ժամագրքի (Բրեվիարիումի) մանրանկարներում (Փարիզի Ազգային գրադարան, lat. 10484, 2 vol.): Տե՛ս http://artpaintingartist.com/belleville-breviary-december-by-jean-pucelle/, http://dbpedia.org/page/Belleville_Breviary

SATENIK CHOOKASZIAN

THE ANNUNCIATION SCENE FROM GOSPEL MS M9422

Key-words: Cilician miniature painting, Cilician royal manuscript, Gospel Ms M 9422, Annunciation, Virgin Mary, Gabriel, Crusader art, influence of Chinese art.

The latter half of the thirteenth century was a time of extraordinary cultural flourishing for the Armenian Kingdom of Cilicia. One of the finest testaments to this golden age is the exquisite Gospel Ms M9422, one of the most beautiful royal and princely manuscripts from the 1280s. The miniature of the Annunciation within its pages is a masterpiece of Cilician book illumination, showcasing the professional skill and refined taste of the anonymous miniaturist. The image of the Virgin Mary radiates exceptional nobility. Her gentle tilt of the head to the right, graceful gaze, delicate hand movements, and overall composition imbue the miniature with remarkable charm. This head position closely resembles those in numerous 13th-century Crusader icons, in which Mary is often depicted with a similar inclination. This suggests that Cilician masters were well acquainted with Crusader artistic traditions.

The two central figures of the Annunciation in the M9422 Gospel are adorned with halos encircled by a border intricately woven from white, red, and blue stones—a motif that later appears in Italian, Cypriot, and Sinai icon art.

Delicate, plant-like decorations emerge from the frame of the Annunciation and extend gracefully into the margins. The prevalence of such ornamental frames in Cilician art was likely influenced by 13th-century Chinese pottery, which featured similar aquatic motifs. In later periods, these decorative elements resonate in Gothic art.

САТЕНИК ЧУГАСЗЯН

СЦЕНА БЛАГОВЕЩЕНИЯ ИЗ РУКОПИСИ № 9422 МАТЕНАДАРАНА

Ключевые слова: Киликийская миниатюрная живопись, киликийская королевская рукопись, Евангелие Матенадаран № 9422, Благовещение, Дева Мария, Гавриил, искусство крестоносцев, влияние китайского искусства.

Вторая половина XIII века ознаменовалась культурным расцветом Армянского Киликийского царства. Среди лучших образцов золотого века — Евангелие Матенадаран № 9422, одна из самых изысканных царских и княжеских рукописей 1280-х годов. В ней особенно примечательна миниатюра со сценой Благовещение – шедевр киликийского книжного искусства, свидетельствующий о профессионализме и утончённом вкусе анонимного миниатюриста.

Образ Девы Марии излучает исключительное благородство. Нежный наклон её головы вправо, грациозный взгляд, изящное движение рук и вся композиция в целом придают миниатюре особое очарование. Такой наклон головы напоминает иконописные образы XIII века, созданные крестоносцами, с художественными традициями которых киликийские мастера, очевидно, были хорошо знакомы.

Две центральные фигуры украшены нимбами, окружёнными сложной каймой, составленной из белых, красных и синих камней — мотив, который позднее появляется в искусстве Италии, Кипра и на иконах Синая.

Миниатюра обрамлена изящным растительным орнаментом, отростки которого распространяются на поля страницы. Появление таких орнаментальных рамок в киликийском искусстве, вероятно, связано с китайской керамикой XIII века, где можно встретить схожие водные мотивы. Позднее подобные декоративные элементы проникают в готическое искусство.

ԷՄՄԱ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ*

DOI: 10.57155/ILXS7587

ԿԵՌԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ 1272 Թ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՍԿՅԱ ԿՐԿՆԱԿԱԶՄԸ[1]

Բանալի բառեր՝ *կրկնակազմ, ավետարան, Կեռան Թագուհի, Երուսաղեմ, ոսկերչական արվեստ, խաչելություն, Աստվածամայր, պատկերագրություն, բարոկկո, փորագրարվեստ:*

Կեռան Թագուհու Ավետարանը (ձեռ. Եղմ. 2563, 1272 թ.) հայ մանրանկարչության գլուխգործոց է, որն առանձնանում է ոչ միայն 13-րդ դարի արվեստում, այլև հայ արվեստի ամբողջ պատմության մեջ: Այն զարդարող մանրանկարների որակն ու պատմական նշանակությունը, թերևս, քաջ հայտնի են յուրաքանչյուր հայագետի, ինչը չենք կարող ասել ձեռագրի ներկայիս դրվագված կրկնակազմի վերաբերյալ:

Կեռանի Ավետարանի կազմը 18-րդ դարի ոսկերչության բացառիկ նմուշ է: Այս փառահեղ արվեստի գործը ստեղծվել է 1727 թ. Երուսաղեմում և իր պատկերագրությամբ արտացոլում է Սուրբ քաղաքի կոսմոպոլիտ հասարակության մեջ ձևավորված արվեստի ավանդույթները: Ոսկե կազմը բաղկացած է երկու ուղղանկյուն փեղկից, որ գամված են Ավետարանի երկու երեսին: Այն ունի նաև արձանագրություն կրող ոսկե կռնակ, որի վրա սրտաձև եզրավորմամբ երեք ոսկյա ճարմանդ է ամրացված: Կազմարար վարպետը մետաղագործության համար օգտագործել է դրվագման (ռեպուսի) և փորագրման տեխնիկաները:

---

* Հայաստանի Ամերիկյան համալսարան, միջնադարյան պատմության և արվեստի պատմության դոկտոր, emmachookaszian@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 հունվարի, 2026, հոդվածը գրախոսելու օրը՝ 24 մայիսի, 2026:

[1] Սիրելի պապիկիս՝ Բաբկեն Զուգասզյանի հիշատակին՝ ում կիրքը լեզուների և մշակույթների հանդեպ հարստացրել է բազմաթիվ կյանքեր և խորը ոգեշնչում ծառայել ինձ համար: Այս հոդվածը նվիրված է նրա մնայուն ժառանգությանը, նրա իմաստությանը, բարությանը և տարբեր մշակույթներ կամրջելու նրա կարողությանը:

կազմի արտաքին քննությունից ելնելով, պետք է ենթադրել, որ դրա հիմքը պատրաստված է պղնձից, որն իր հերթին պատված է ոսկու շերտով[2]:

Վերին փեղկին խաչելությունն է, իսկ ստորին փեղկին՝ Տիրամայրը մանկան հետ (նկ. 1, 2)[*]: երկու տեսարաններն էլ ներառված են բարոկկո ոճի ծաղկային զարդանախշերով ձևավորված շրջանակներում: Ոսկե կռնակի վրա չորս ավետարանիչների դիմանկարներն են (նկ. 3), որոնց շուրջ եղած ուղղանկյունաձև շրջանակի մեջ պատվում է արձանագրությունը: Այստեղ կարդում ենք.

«ԿԱԶՄԵՑԻ ՍԲ ՈՍԿԻԱՊ[Ա]Տ Զ[Ա]ՐԴ[Ա]Ր[Ե]ՑԻ ԱՐՔ[Ա]Յ[Ա]Կ[Ա]Ն ՍԲ ԱԻԵՏ[Ա]Ր[Ա]ՆՍ Ի Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ ԳՐԻԳՈՐ ԵՎ Յ[Ո]Վ[Ա]ՆՆ[ԷՍ] ԵՎ ԱԲՐ[Ա]-ՀԱՄ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]Տ[Ա]Յ ԵՎ ԾՆ[Ո]Ղ[Ա]Յ Ն[Ո]Յ[Ա] և ՄԻ[Ա]Բ[Ա]ՆԻՑ ԵՎ ՄԵՐ ՈՂ[Ո]ՐՄՈԻԹԻ[ԻՆ] ՏՈԻ[Ո]Ղ[Ա]Յ և ԱՇԽԱՏՈՂ[Ա]Յ Ի ՍՄԱ ՅԵ[ՐՈՒ-ՍԱՂ]Է[Մ] Ի Ս[ՈՒՐ]ԲՆ ՅԱԿՈԲ Ի ԹՎԻՆ ՌՃՀԶ [1727] Յ[Ի]Շ[Ե]Յ[Ե]Ք Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ԱՄ[Ե]Ն»:

Արձանագրությունից տեղեկանում ենք, որ ձեռագիրը կազմել են 1727 թ. Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբաններ Գրիգոր, Հովհաննես և Աբրահամ վարդապետների պատվերով:

Պետք է ենթադրել, որ իր ստեղծման ժամանակաշրջանում՝ 1272 թ., կեռանի Ավետարանն ունեցել է նույնքան շքեղ ոսկյա կազմ, որը կորել է դեռևս մինչև ձեռագրի՝ 1441-ին առաջին անգամ Երուսաղեմում հայտնվելը: Հատկանշական է, որ 1441 թ. գրված հիշատակարանը (380բ) հայտնում է, որ այն գնել է Երուսաղեմի Մարտիրոս արքեպիսկոպոսը, արծաթյա կազմ պատվիրել ու ձեռագիրը նվիրել Սրբոց Հակոբյանց վանքին:

«Զվերջին ստացաւղս ս[ուր]բ աւետարանիս այս, զտ[է]ր Մարտիրոս ե[րուսաղէ]մայ արեպ[իսկոպո]ս յիշեցէք ի ս[ուր]բ աղաւթս ձեր որ գնեցի յիմ հալալ արդեամբքն զս[ուր]բ աւետարանս և արծաթեցի զինքն և դրի ինձ յիշատակ և իմ ծնաւղացն ի ս[ուր]բ Յակոբ ող[որմեա] Ք[րիստոս]: Եվ ով որ հանէ զինքն ի ս[ուր]բ Յակոբայ կամ ծախէ կամ գրաւ կնէ նա առնու զՅուդայի և զխաչահանուացն զմասն և բաժին: Կազմեցաւ ս[ուր]բ աւետարանս արծաթով ի թվ[ին] հայոց ՊՂ[1441] ի փառս ա[ստուծո]յ»[3]:

---

[2] Այս մասին են վկայում կազմի որոշ մասերում երևացող կարմրավուն հատվածները, որտեղ ոսկին թափվել է, և տակից երևում է պղինձը:

[*] Նկարներ 1, 2, 3-ը տե՛ս ներդիրում:

[3] Սույն հիշատակարանը, ինչպես նաև Կեռան թագուհու ավետարանի բոլոր մյուս հիշատակարանները, մանրամասն վերծանել և վերլուծել ենք տվյալ ձեռագրին նվիրված մենագրու-

Հետագա հիշատակարաններից, սակայն, պարզ է դառնում, որ 1509-ին ձեռագիրը Կոստանդնուպոլսում էր՝ ոմն արաբի ձեռքին, ումից այն գնվում է և որոշ ժամանակ հետո ուխտավորների ձեռքով վերադարձվում Երուսաղեմ: Այս ընթացքում Մարտիրոս արքեպիսկոպոսի պատվիրած արծաթե կազմն արդեն կորած էր, և պետք է ենթադրել, որ մինչ 1727 թ. կազմը պատվիրելը ձեռագիրը չի ունեցել որևէ այլ շքեղ կազմ:

Ոսկե կազմի երեսին տեսնում ենք հայկական ոսկերչության և մետաղագործության մեջ մեզ հայտնի «խաչելության» թերևս ամենագեղեցիկ պատկերներից մեկը: Հեղինակներին հաջողվել է այս ողբերգական տեսարանին հաղորդել մի առանձնահատուկ շքեղություն և պայծառություն, որի շնորհիվ պատկերը վիշտն արտահայտելու փոխարեն շեշտում է Հիսուսի հաղթանակը մահվան հանդեպ: Պատկերում բացակայում են Տիրամայրն ու Հովհաննեսը, որոնք սովորաբար ընդգծում էին դրվագի մինորային էությունը: Խաչի վրա տեսնում ենք գլուխը բարձր պահած, լույս ճառագող լուսապսակով Քրիստոսին: Վերջինիս մարմինը նվաստ և տանջված չէ, ինչպես դա սովորաբար նկատում ենք «խաչելության» այլ պատկերներում՝ արծաթագործության մեջ: Այն դրվագված է բավական բարձր ու հստակ ռելիեֆով: Վարպետները Հիսուսի միայնակ խաչված կերպարը տեղադրել են կարծես մի հաղթակամարի տակ, որը զարդարված է տերևներով ու ծաղիկներով և կանգնած է երկու հաստ սյուների վրա: Այն ունի ականթի տերևներով զարդարված խոյակներ և հստակ հիմքեր: Կամարի և խոյակի արանքում, ինչպես նաև սյուների հիմքերի տակ՝ շրջանակների մեջ, պատկերված են չորս ավետարանիչների խորհրդանիշները, որոնցից յուրաքանչյուրն իր առջև պահել է իր ավետարանը: Կամարի վերին երկու անկյուններում քերովբեներ են տեղավորված:

Տեսարանին էլ ավելի պայծառ մթնոլորտ են հաղորդում երկու արմավենիները՝ իրենց վրայից կախված մրգերով, որոնք երբևէ չենք հանդիպել խաչելության այլ տեսարաններում: Արմավենիների ի հայտ գալն այս տեսարանում թերևս այնքան էլ պատահական երևույթ չէ, քանի որ այդ ծառի և նրա պտուղների մասին հիշատակություն է հանդիպում Կեղծ Մատթեոսի ավետարանի

թյան մեջ: Տե՛ս **Է. Զուգասզյան,** *Կեռան թագուհու ավետարանը: Կիլիկիայի հայկական մանրանկարչության անցումը հետոռոմինյան փուլ*, Երևան, 2024, էջ 37-63, 290-297:

Քրիստոսի մանկության հետ կապվող դրվագում[4]: Ուշագրավ է նաև, որ ըստ Ղուրանի՝ Մարիամը Հիսուսին ծննդաբերել էր հենց արմավենու տակ[5]: Եթե հաշվի առնենք, որ մեր ձեռագրի կազմի «Խաչելությունը» փառավորում է Հիսուսի հաղթանակը մահվան հանդեպ, ապա արմավենիներն այստեղ պիտի խորհրդանշեն նրա «վերածնունդը» կամ երկրորդ գալուստը:

Եվս մեկ անսովոր մանրամասն պետք է համարել Հիսուսի մարմնի և խաչի արանքով անցնող, կարծես նրա մարմնին փաթաթված խաղողի ողկույզը՝ մանրամասն մշակված տերևներով և կախված խաղողներով, որը պատկերում Տ տառի ձև է ստանում: Խաչի ներքևի հատվածում տեսնում ենք բլուրներ և Ադամի կառափը, իսկ դրանցից վերև երևում են Երուսաղեմի եկեղեցիների գմբեթները: Հայ արվեստում մեզ ծանոթ են կամարի տակ պատկերված «Խաչելության» տեսարաններով արծաթե կազմեր[6], սակայն դրանցից ոչ մեկը չի ներկայացնում հաղթանակած Քրիստոսի պատկերը և չի արտահայտում այն պայծառությունը, որը տեսնում ենք այստեղ:

Արևմտյան նախօրինակի օգտագործումն ակնառու է ստորին փեղկի Տիրամորը Մանկան հետ պատկերող տեսարանում (նկ. 3): Տիրամայրը կանգնած է լուսնի մահիկի վրա, ինչպես հանրահայտ «Հայտնության կնոջ» պատկերագրության մեջ է ընդունված, որը ազդված է Հայտնության գրքի 12-րդ գլխից[7]: Սակայն մեր պատկերը միավորում է միաժամանակ արևմտյան երեք պատկերագրական տեսակ, որոնցից երկրորդը «Անարատ հղության կույսի» պատկերն է: Վերջինիս տարբերակիչ մանրամասնը ճառագող լուսապսակն է, որը պատկերվում է նրա ամբողջ մարմնի շուրջ՝ հիշեցնելով այրվող փառապսակ (մանդորլա): Մեր ձեռագրի կազմի վրա հստակ տեսնում ենք կրակի լեզուներ հիշեցնող ճառագայթները, որոնք շրջապատում են Տիրամոր մարմինն ընդգրկող փա-

---

4 **W. Schneemelcher** (ed.), *New Testament Apocrypha*, English translation edited by ***R. McL. Wilson***, Cambridge: James Clarke & Co, and Louisville: Westminster, John Knox Press, 1991, 1, p. 456.

5 **G**. **Parrinder**, *Jesus in the Qu'ran*, New York, Barnes and Noble, 1965, p. 77; **S.A. Mourad,** "From Hellenism to Christianity and Islam: The Origin of the Palm tree Story concerning Mary and Jesus in the Gospel of Pseudo-Matthew and the Qur'an," *Oriens Christianus*, vol. 86, 2002, pp. 206-216.

6 **D**. **Kouymjian**, "Catalogue of the Liturgical Metalwork, Part III. Silver Bindings," *The Catholicosate of Cilicia: History, Treasures, Mission*, ed. ***Seta Dadoyan***, Antelias, Lebanon, 2015, silver bookbinding N 47/3, pp. 218-249.

7 Տե՛ս Յայտն. ԺԲ 2-4, որտեղ տեսիլքում հղի կին է հայտնվում և մի հրեղեն վիշապ, որ սպասում է ծննդաբերությանը, որպեսզի կլանի մանկանը:

ռապսակը: Սակայն այս պատկերագրության մեջ սովորաբար ընդունված է տեսնել Տիրամորը միայնակ[8]*, մինչդեռ Կեռանի ավետարանի կազմին նրա գրկին Մանուկ Հիսուսն է: Արևմտյան արվեստին բնորոշ երրորդ պատկերագրությունը, որը միավորված է մեր կազմի տեսարանում, Մարիամին որպես «երկնային Թագուհու» ներկայացնողն է: Այս պատկերագրությունը, ի տարբերություն նախորդ երկուսի, սկզբնավորվել է դեռևս բյուզանդական արվեստում, սակայն մեր վարպետները վստահորեն օգտվել են արդեն արևմտյան արվեստի մեջ արմատավորված դրա պատկերագրական ձևից: Այս տեսարանում Մարիամը հաճախ է պատկերվում մանուկ Հիսուսին գրկած, և նրանք երկուսն էլ Թագակիր են: Տիրամոր ձեռքին երբեմն լինում է գավազան կամ սպիտակ շուշանների ճյուղ, իսկ մանուկը պատկերվում է օրբը (երկնային գունդը) ձեռքին: Մեր կազմի վրա տեսնում ենք թե՛ շուշանների ճյուղը և թե՛ օրբը, որտեղ շուշանները խորհրդանշում են Տիրամոր մաքրությունը, իսկ օրբը՝ Հիսուսի երկնային իշխանությունը: Միջնադարում շուշանները սկսում են համեմատել նաև միապետական իշխանության խորհրդանիշների հետ*[9]*, որն իր հերթին է՛լ ավելի է ընդգծում «երկնային Թագուհու» պատկերագրության իմաստը: Տիրամոր գլխավերևում տեսնում ենք երկինքը խորհրդանշող կիսաշրջանը, որից աղավնակերպ Սուրբ Հոգին իջնում է նրա գլխին: Ճառագայթող փառապսակի շուրջ պատկերված են տասնյոթ քերովբեներ, որոնք միախառնված են մանր դրվագված ամպերի հետ:*

Կեռանի Ավետարանի կազմի Տիրամոր պատկերը բացառիկ է իր պատկերագրությամբ և տարբերվում է հայ արվեստում հանդիպող այլ կազմերի վրա պատկերվող Տիրամոր ու մանկան պատկերներից: Հայտնության գրքի կնոջ պատկերագրությամբ Տիրամայրը մանկան հետ հանդիպում է նաև մեկ այլ կազմի վրա, որը Ս. Տեր-Ներսեսյանը թվագրում է 18-րդ դարով՝ այն համարելով Կեսարիայի արծաթագործության նմուշ: Վերջինս պահվում է Դուբլինի Ջեսթեր

---

[8] **E**. **Male**, *L'Art religieux après le Concile de Trente*, Paris, 1932, pp. 44-48; **K**. **Kunstle**, *Ikonographie der christlichen Kunst*, Freiburg im Breisgau, 1928, vol. I, pp. 646-58; **A**. **Jameson**, *Legends of the Madonna*, London, 1872, pp. 42-53; **S**. **Beissel**, *Geschichte der Verehrung Marias in den 16 und 17*, Jahrhunderten, Freiburg im Breisgau, 1910; **J**. **Sorabella**, "Venetian Color and Florentine Design," *Heilbrunn Timeline of Art History*, New York: The Metropolitan Museum of Art, 2000.

[9] **S. J. Boss**, *Empress and Handmaid: On Nature and Gender in the Cult of the Virgin Mary*. Cassell, 2000, pp. 47-53; **J. F. Hamburger**, *Nuns as Artists: The Visual Culture of a Medieval Convent*, University of California Press, 1997, pp. 134-137; **M. Pastoureau**, *Traité d'héraldique: Grands manuels Picard*, 1979, pp. 213-218.

Բիթի թանգարանում և 1816 թ. մի տպագիր Ավետարանի կրկնակազմն է[10]: Սակայն այս կազմի պատկերի դեպքում չենք տեսնում ճառագայթող փառապսակը, թագերն ու շուշանները, որոնք միավորում էին երկու այլ պատկերագրություններ մեր ձեռագրի կազմի դեպքում:

Լուսնի վրա կանգնած Տիրամայրն այս պատկերագրությամբ ներկայացվում է նաև Կեսարիայում պատրաստված այլ կազմերի վրա, սակայն առանց մանուկ Հիսուսի և երբեմն Սուրբ Երրորդության կողմից թագադրվելիս[11]: Լուսնի վրա կանգնած Աստվածամոր պատկերներ են հանդիպում նաև առանձին փակցված արծաթյա մանրամասնի տեսքով 19-20-րդ դարերի թավշե կազմերի վրա, ինչպես նաև Թոքատում պատրաստված վարագույրների նկարազարդումներում[12]: Արևմտյան այս պատկերագրությունը պետք է որ ներթափանցած լիներ հայ ոսկերչության մեջ փայտե փորագրությունների և տպագրությունների շնորհիվ, որոնք գալիս էին Եվրոպայից, մասնավորապես՝ Գերմանիայից ու Ֆրանսիայից: Կեռանի Ավետարանի կազմի հետ աղերսվող պատկերագրություն ենք հանդիպում Ամստերդամի Պետական թանգարանում (Rijksmuseum) պահվող Ֆլամանդացի փորագրիչ Ռաֆաել Սադելեր II-ի՝ 1613 թ. աշխատանքներից մեկում, որը պատկերում է թագակիր Տիրամորը Մանուկ Հիսուսի հետ լուսնի վրա՝ տեղավորված ճառագայթող փառապսակի մեջ և շրջապատված հրեշտակներով (նկ. 4):

Հայ փորագրարվեստում մեր ձեռագրի պատկերագրության հետ առավել մոտ զուգահեռներ ունի 1730 թ. Կոստանդնուպոլսում տպագրված՝ Գրիգոր Մարզվանեցու Հայսմավուրքի փորագրանկարներից մեկը (նկ. 5):

Կազմի երկու երեսների թեմատիկ պատկերները ներառված են բուսական և ծաղկային տարրերից հյուսված նրբագեղ շրջանակի մեջ, որն իր բարոկկո ոճով է՛լ ավելի է շեշտում կազմի պատկերների՝ եվրոպական արվեստից ոգեշնչ-

---

[10] **S. Der-Nersessian**, *The Chester Beatty Library: a Catalogue of the Armenian Manuscripts*, Vol. 1, Dublin, 1958, pp. 192-193.

[11] **Յ. Քիւրտեան**, «Կեսարիոյ ոսկերչական դպրոցին արծաթ կազմերը», *Հասկ Հայագիտական Տարեգիրք*, Ա., Անթիլիաս, Լիբանան, 1948, էջ 51-61, **S. L. Merian**, "Notes on Two Pairs of Armenian Silver Plaques from Kayseri in the Musée Arménien de France," *Manuscripta*, vol. 55.1 (2011), pp. 109-122.

[12] **N. Smbatyan**, "Some Iconographical Aspects of the Late Medieval Armenian Art on the Examples of the Altar Curtains from the Museum of the Armenian Church in Bucharest," *New Europe College Black Sea Link Program Yearbook*, 2014-2015, pp. 223-246.



Նկ. 4. Ռաֆաել Սադելեր 2-րդ, «Տիրամայրը մանկան հետ», 1613թ., Ամստերդամի պետական թանգարան (Riiksmuseum)



Նկ. 5. «Տիրամայրը մանկան հետ», 1730 թ. Գրիգոր Մարզվանեցու Կոստանդնուպոլսում տպագրված Հայսմավուրքի փորագրանկարներից

ված լինելու փաստը: Սակայն պետք է նկատել, որ կռնակին պատկերված Ավետարանիչների պատկերներն այնքան արևմտյան ազդեցություն չեն կրում, որքան երկու փեղկերինը: Եվ դա ունի հստակ պատճառներ, որոնց քիչ անց կանդրադառնանք:

Բացի կռնակի վրայի այս գրությունից՝ Կեռանի ավետարանում կազմի պատրաստման հետ կապվող երեք ուրիշ հիշատակարան կա: Ձեռագրի վերջում ունենք ևս երկու հիշատակարան՝ 381բ էջի վերջում և 382ա էջի սկզբում[13]*, որոնք երկուսն էլ գրված են 1727-ին: Դրանցից առաջինում ասվում է.* «Ի թվ[ին] հայոցս ՌՃՀԶ (1727թ.) ամին կ[ա]զմ[եց]աւ և ոսկիապ[ատ] զարդ[ա]ր[ե]ցաւ ս[ուր]բ կտ[ա]կ[արան]ս ա[ստուա]ծ[ա]յին ջանիւ և արդե[ա]մբ Գր[ի]գ[ո]ր և Յ[ո]վ[հա]նն[է]ս տուպ վ[ա]րդ[ա]պ[ետա]ցս

[13] **Ն. Ակրպ. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. 11, Երուսաղեմ, 1990, էջ 378-379:

զոր յիշել ձեզ զմեզ ի տ[է]ր աղ[ա]չ[ե]մք և զս[ուր]բ աւ[ե]տ[ա]ր[ա]նս խն[ա]մ[ք]ով պահել զի և դուք զվարձս ի տ[եառ]նէ առնեցեք և զկ[ա]զմ[ո]ղ սբ զՅ[ո]վ[հա]ննէ[ս] ծեր վ[ա]ռդ[ա]պ[ե]տն ի տ[է]ր յ[ի]շ[ե]ց[է]ք ամեն»:

Երկրորդ հիշատակարանում 382ա էջի սկզբում նույնը դարձված է հանգավորված չափածո.

«Ոսկիապատ զարդարեցաւ
Աւետարանս և կազմեցաւ,
Առդեամբք, ջանիւք, սիրով մեծաւ,
իմս Գրիգորի տըրուպ պետաւ,
Եւ ձայն եղբօրս բարեհամբաւ,
Այլև Յէննէ[14] ընդ յոգունս խըմբաւ,
Եւ յիշատակ յաթոռս եդաւ,
որ Տե[առ]նեղբօր գահ կոչեցաւ
տեսօղդ ըզսա փըղնուկ անձնկաւ:
Զմեզ յիշեցէք առ էնն անբաւ
ի թիւն Յա (= 301) ճառդ կատ[ա]րեցաւ[15]
ի փառս Փըրկչին որ է անզրաւ»:

Այս նույն ձեռագրով է գրված ևս մեկ հիշատակարան, որն առավել լավ է թաքնված ձեռագրի էջերում, և այն գտնելը որոշ ջանք է պահանջում: Այն 179ա էջում է՝ Մարկոսի Ավետարանի վերջում: Նոտրգրով գրված այս հիշատակարանը լույս է սփռում նախորդում հիշատակված անձանց ինքնության վրա: Այստեղ կարդում ենք.

«Շնորհիօ ամենաս[ուր]ը երորդութե[ա]ն և միոյ ա[ստուա]ծութե[ա]ն հոր և որդւոյ և հոգւոյն ս[ր]բոյ: Առ[ա]յ[ա]կ[ա]ն ս[ուր]ը և մաճուր

[14] Հավանաբար խոսքը Յովհաննէս անվան «Յ[ովհ]էնն[իս]է» ձևի մասին է, սակայն բնագրում այն չենք վերականգնում, քանի որ չափածոյի ռիթմը հենց երկվանկ բառ է պահանջում:

[15] Առտահայտությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է հենց 301 թ. հրիստոնեության ընդունմանը. տրամաբանական է ենթադրել, որ 301 թ., որը հաշվարկել էր դեռևս 10-11-րդ դարերում Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը և հետագայում երկրորդ անգամ շրջանառության մեջ էր դրել Միխայել Զամչեանը, արդեն հայտնի պիտի լիներ Գրիգոր Պատրիարքին: Տե՛ս **Ստեփաննոսի Տարօնեցւոց Ասողկան** *Պատմութիւն տիեզերական*, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 82-83, 345, **Մ. Զամչեան**, *Պատմութիւն Հայոց*, հ. Ա. Վենետիկ, Սբ. Ղազար, 1784, էջ 373, 384, 386-387, 393-394, 395, **Բ. Յարութիւնեան**, «Ե՞րբ է հրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուել պետական կրօն», *ՀԱ*, 2006, էջ 133-227:

Աւե]տ[ա]ր[ա]նս վերստին կազմեցաւ և ոսկիապատ զարդ[ա]ր[ե]ցաւ արդեամբ և գոյիւմ մեծաւ աշխ[ա]տութ[եամ]ք և ջանիւ հաւ[ա]տով յուսով և սիրով և յոյժ փափ[ա]գմամբ մերոյ նուաստ պետ[ո]ցս տրուպ սպ[ա]սաւ[ո]ր[ա]ցս ս[ր]բոյ տնօրին[ա]կ[ա]ն[ա]ց տեղեցս Ք[րիստոս]ի ա[ստծո]յ մերոյ որ Յե[ռուսաղե]մ և ա[ստուա]ծադիր ս[ր]բոյ աթոո[ո]յս տ[եառ]նեղբօր Գր[ի]գ[ո]րի և Յովհաննու պ[ա]տր[իա]րացս ս[ր]բոյ Ե[ռուսաղե]միս և Բիւզանդիոյ և կրկին եղամ յիշ[ա]տ[ա]կ ի մէջ ադինաս[ա]ր[ա]ս ս[ր]բոյ տ[ա]ճ[ա]րիս ս[ր]բ[ո]յն Յակ[ո]բ[ա]յ մեծի առաք[ե]լ[ո]ցն որդոյն Զեբեթայ և ս[ր]բ[ո]ցն Յակ[ո]բ[ա]յ արդ[ա]ր[ո]յ աթ[ո]ռոյս ամ[ենայն] հայ[ո]ց: Ի փրկութի[ւն] ի[ո]գ[ւ]ոյ մերոյ և ի[ո]գ[ետ]ր ծն[ո]ղիւն մերոյ տ[եառ]ն Վարդանայ, մեծի վ[ա]րդ[ա]պ[ե]տի Բաղ[ի]շ[ե]ց[ւ]ոյ մ[ա]րմն[աւոր] ծն[ո]ղ[ա]ց և համ[ե]ն[ա]յն զարմից մեր և յամ[ենայն] միաբ[ա]նից ս[ր]բ[ո]յ գահիս և ողորմութի[ւն] տուող[ա]ց և որ զաշխ[ա]տ[ա]նս ի սմա ունին և բովանդակ օրհնե[ա]լ ազգիս հայոց: Արդ արտասւօք խնդրեմք ի բարեմիտ ընթերց[ո]ղ[ա]ցդ զի ա[ստուա]ծ ողորմի ասիցէ մեզ և ամ[ենայն] վերոգրելոցս և սիրովն ա[ստուծո]յ հարկիւ մեծաւ պ[ա]տուիրեմք ձեզ զի շատ խնամով պահիցէք զա[ստուա]ծախօս զս[ուր]բ կտակ[արան]ս զզարդարե[ա]լս ոսկով ներոյ և արտաք[ո]յ զի զօրհնութի[ւն] տ[եառ]ն ժ[ա]ո[ա]նգիցէք վայելչապէս, իսկ թէ որ ագահ մտօք ձեռնամուխ լիցի ի ս[ուր]բ աւետ[ա]ր[ա]նս ծախ[ե]լ[ո]վ կ[ա]մ գրաւ դնել[ո]վ և կ[ա]մ չէ զզարդ սորա ֆակտեսցէ զներքին կ[ա]մ զարտ[ա]ֆի[ն]է այնպիսե[ա]ցն հոգի և մ[ա]րմին ֆակտեսցի և որոշեսցի յա[ստուծո]յ և ի կեն[ա]ցն յաւիտենից: Իսկ լաւ պահօղդ և պատուով խն[ա]մ[ո]ղդ զվարձս բ[ա]զ[ու]մս յաստ[ու]ծոյ առնացուք և արժ[ա]նի լինիջիք ամ[ենայն] օրհնութե[ան]ցն որ ի սմա գրե[ա]լք կան մի ըստ միոջէ: Այլև սրտի մտօք աղ[ա]չեմ յիշել ի տ[է]ր զպատուելի որդին իմ և զարենակից զՏարօնոյ սբ Կ[ա]ր[ա]պ[ե]տի առ[ա]ջնորդն զԱբր[ա]հ[ա]մ ա[ստուա]ծ[ա]բ[ա]ն վ[ա]րդապ[ետ]ն և զարհեպ[իսկոպո]սն և զաթոո[ա]կ[ա]լ ս[ր]բոյ գահիս զե[ռուսաղե]մցի Յովհաննէս մեծիմ[ա]ստ վ[ա]րդ[ա]պ[ետ]ն զվշտակիցքն մեր և զԹովմաս և զՅակոբ խոհեմ վ[ա]րդ[ա]պ[ետ]քն որ երեք եղբս որդիքս մեր ի մի[ւ]սին ձեռն[ա]դր[ա]ցն եպ[իսկոպո]ս ծ[ա]ո[ա]յք ս[ր]բ[ո]յ աթ[ո]ո[ո]յս զոր տէրն պ[ա]հ[ե]սցէ աջ[ա]ւ իւր[ո]վ: Եվ զսիրելի եղբայրն մեր զս[ուր]բ Յարութ[եան] րէիզն զծեր Յովհաննէս վ[ա]րդ[ա]պ[ետ]ն որ բազմաշ-

խ[ա]տնօf զսբ աւ[ե]տ[ա]ր[ա]նս գեղեցկ[ա]պ[է]ս կազմե[ա]ց: Եվ զջուղ[ա]յ[ե]ցի ս[ուր]բ եղբ[ա]ւրն ոսկերիչ զմ[ա]հ[տես]ի Ստ[ե]փ[ա]ն[ո]սն և զմ[ա]հ[տես]ի Գէորգն, ոռ զկողեր ս[ր]բ[ո]յ կտ[ա]կ[արան]իս յօրինն[ե]ցին: Եվ ա[ստուա]ծ ող[ո]ւմի աս[ե]սջիf ամ[ենայն] յ[ան]ցա[տրա]նցս և տ[է]րն ամ[ենեսեան] ի ձեզ ող[ո]ւմեսցի ամեն: Կ[ա]զմ[ե]ցաւ և զարդ[ա]ր[ե]ցաւ ս[ուր]բ աւ[ե]տ[ա]ր[ա]նս ի թվ[ին] ՌՃՀՋ (1727թ.) ամին ի ս[ուր]բ Յե[ռուսաղե]մ ի փառս ա[ստուծո]յ:

Գր[ե]ցաւ յիշ[ա]տ[ա]կ[ա]ր[ա]նս ձ[ե]ռամբ իմս Գր[ի]գ[ո]ր մեղ[ա]պ[ա]ւոտ վ[ա]րդ[ա]պ[ետ]ի յիշ[եա]լ ի տ[է]ր ի ե[ռուսաղե]մ»:

Հիշատակարանից պարզ է դառնում, որ կազմի վրա հիշատակվող Գրիգորը հենց Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակիրն է, որը նաև այդ երեք հիշատակարանների հեղինակն է: Ակնհայտ է դառնում նաև, որ կազմի վրա հիշատակվող Աբրահամ վարդապետը Գրիգոր Շղթայակրի արյունակից, Մշո Ս. Կարապետ վանքի առաջնորդ, Աբրահամ վարդապետն ու արքեպիսկոպոսն է, որ հետագայում հայոց կաթողիկոս է օծվել Աբրահամ Բ Խոշաբեցի անունով[16]: Հայտնի է նաև, որ վերջինս 1727 թ. ուխտագնացություն էր կատարել Երուսաղեմ[17], և հենց այդ ժամանակ էլ դարձել էր Կեռանի ավետարանի ոսկեպատ կազմի պատվիրատուներից մեկը: Կազմի վրա հիշատակվող երրորդ անձը՝ Հովհաննես վարդապետը, Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Թ Կոլոտ Բաղիշեցին (1715-1741) էր[18], որը երկու այլ վարդապետների՝ Թովմասի և Հակոբի հետ եպիսկոպոս էր ձեռնադրվել նույն օրը: Երուսաղեմի պատրիարքությունն այդ շրջանում ուղղակիորեն կապված էր Պոլսո պատրիարքական աթոռին:

Եվս մեկ շատ կարևոր տեղեկություն ենք իմանում կազմը պատրաստող վարպետների մասին: Ըստ այս հիշատակարանի՝ նրանք երկու ջուղայեցի ոսկերիչ եղբայրներ էին՝ մահտեսի Գևորգն ու մահտեսի Ստեփանոսը: Այս մանրամասնը գալիս է բացատրելու, թե ինչու ձեռագրի ոսկյա կողքի վրա եղած ավետարանիչների դիմանկարները եզրավորող աստիճանավոր կամարների ձևը

---

[16] Շնորհակալություն ենք հայտնում Կարեն Մաթևոսյանին այդ փաստի վրա մեր ուշադրությունը հրավիրելու համար: Տե՛ս **Մ. Օրմանյան**, *Ազգապատում*, հ. 2, մաս 3, 2 հրտ., Պեյրութ, 1959, էջ 2871-2882, **Հ. Ս. Անասյան**, *Հայկական մատենագիտություն*, հ. 1, Երևան, 1959, էջ 101-103:

[17] Նույն տեղում:

[18] **Բարգէն Ծ. Վ. Կիւլէսէրեան**, *Կոլոտ Յովհաննէս պատրիարք: Պատմագրական և բանասիրական ուսումնասիրութիւն*, Վիեննա, 1904:

(նկ. 3) ոչ մի կերպ չի հիշեցնում արևմտյան արվեստի մանրամասները. ջուղայեցի երկու ոսկերիչները մի վերջին մանրամասն փորձել են ստեղծել իրենց հոգեհարազատ արևելյան ոճով, և ձեռագրի կողքի ձևավորումները դրվագել են արևելյան արվեստում և ճարտարապետության մեջ այդքան սիրելի աստիճանավոր կամարների ոճով և նմանությամբ:

Այսպիսով, Կեռանի ավետարանի նոր կազմը, խորհրդանշելով երեք հոգևոր առաջնորդների բարեկամությունն ու նրանց միավորող հավատը, դառնում է հայկական, արևմտյան և արևելյան գեղարվեստական ավանդույթների բացառիկ համադրություն, որի շնորհիվ ձեռագիրը վերագտնում է իր հոչակն ու ամբողջականությունը:

EMMA CHOOKASZIAN

THE GOLDEN BINDING OF THE GOSPELS OF QUEEN KERAN 1272

Key Words: Cover, Gospels, Queen Keran, Jerusalem, Jewelry art, Crucifixion, Mother of God, Iconography, Baroque, Engraving.

The golden binding of Queen Keran's Gospels (Ms J2563, copied in 1272) is an Armenian goldsmithing masterpiece created in Jerusalem in 1727. It reflects the artistic traditions of the Holy Land's cosmopolitan society. The binding consists of two rectangular gold plaques, a gold-inscribed spine, and three heart-shaped clasps. The repoussé and carving techniques reveal that the base is copper coated in thick gold.

An inscription on the spine reveals that the binding was commissioned by the congregants of St. James Monastery: Patriarch Gregory the Chain-Bearer of Jerusalem, Armenian Patriarch Hovhannes IX Golod of Istanbul, and Archbishop Abraham II Khoshabets'i of Mush. Gregory's colophon further identifies the craftsmen as Mahdesi Gevorg and Mahdesi Step'an, two goldsmith brothers from New Julfa.

The upper plaque features an exceptional Crucifixion scene in which Christ appears triumphant rather than suffering. He stands under a decorated arch with palm trees and a vine, which symbolize rebirth. The lower plaque depicts the Virgin and Child and blends three Western iconographic types: the Woman of the Apocalypse, the Virgin of the Immaculate Conception, and the Queen of Heaven. In this unique

image, Mary stands on a crescent moon and is surrounded by a radiant mandorla and cherubs. She holds lilies and an orb.

The baroque floral frames of the binding highlight Western influences, while the stepped arches that frame the portraits of the Evangelists on the spine reflect Oriental aesthetics. The iconography likely stems from European engravings, particularly 17th- and 18th-century Flemish prints.

Before this binding, Queen Keran's Gospels had at least one other luxurious cover that was lost. Colophons suggest that it had a silver cover commissioned in 1441 that was later lost when the manuscript changed hands. Thus, the 1727 golden binding restored its splendor, creating a remarkable fusion of Armenian, Western, and Oriental artistic traditions.

ЭММА ЧУГАСЗЯН

ЗОЛОТОЙ ОКЛАД ЕВАНГЕЛИЯ ЦАРИЦЫ КЕРАН 1272 Г.

Ключевые слова: Оклад, Евангелие, царица Керан, Иерусалим, ювелирное искусство, распятие, Богоматерь, иконография, барокко, гравюра.

Золотой оклад Евангелия царицы Керан (рук. 2563 Иерусалима, 1272 г.) — шедевр армянского ювелирного искусства, созданный в 1727 году в Иерусалиме. Он отражает художественные традиции космополитического общества Святой Земли. Оклад состоит из двух прямоугольных золотых пластин, корешка с золотыми надписями и трех застежек в форме сердца. Использованные техники рельефной чеканки и гравировки указывают на то, что основа выполнена из меди, покрытой слоем золота.

Надпись на корешке сообщает, что заказчиками оклада были монахи монастыря Святых Иаковов патриарх Иерусалимский Григор Верижник, армянский патриарх Константинополя Ованес IX и архиепископ Абраам II Хошабеци из Муша. Колофон Григора также называет мастеров — двух братьев-ювелиров из Новой Джульфы, Геворга и Степана.

Верхняя пластина изображает уникальную сцену Распятия, где Христос представлен не страдающим, а торжествующим. Он стоит под украшенной аркой, рядом с пальмами и виноградной лозой, символизирующими возрож-

дение. Нижняя пластина содержит образ Богоматери с Младенцем, объединяющий три западных иконографических типа: Жену Апокалипсиса, Деву Непорочного Зачатия и Царицу Небесную. Богородица изображена стоящей на полумесяце, окруженной сияющей мандорлой и херувимами, держащей лилии и державу.

Богато украшенные барочные рамки оклада демонстрируют западное влияние, тогда как ступенчатые арки с изображениями евангелистов на корешке отражают восточные мотивы. Иконография, вероятно, восходит к европейским гравюрам, особенно фламандским эстампам XVII–XVIII веков.

До этого оклада у Евангелия королевы Керан был по меньшей мере один утерянный роскошный переплет. Колофоны свидетельствуют о серебряном окладе, заказанном в 1441 году, который был утрачен при смене владельцев рукописи. Золотой оклад 1727 года восстановил его былое великолепие, став уникальным синтезом армянских, западных и восточных художественных традиций.

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ*

DOI: 10.57155/JCSQ6551

ՆՈՐԱՀԱՅՏ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՄԵՐԻԿԱ ՄԵԿՆԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ (XVII Դ. ՍԿԻԶԲ – XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

Բանալի բառեր՝ *Նոր աշխարհ, Ամերիկա, Բրիտանիա, Լոնդոն, Վիրջինիայի գաղութ, Ջեյմսթաուն, Ջոն Մարտին Հայ, ծխախոտագործություն, շերամապահություն:*

2004 թ. հետազոտություններ իրականացնելով ԱՄՆ-ի Կոնգրեսի (US Library of Congress), ինչպես նաև 2006 թ. Բրիտանական (British Library) գրադարաններում, առիթ եմ ունեցել ուսումնասիրելու սկզբնաղբյուրային բացառիկ արժեք ու հետաքրքրություն ներկայացնող արձանագրություններ, որոնք լույս են սփռում Նոր երկրի գաղութային ժամանակաշրջանում տարբեր հանգամանքներում հիշատակված և մի շարք ասպարեզներում հաջողություններով աչքի ընկած առաջին հայերի մասին: Մանավանդ որ, մասնագիտական գրականության մեջ հայերը գնահատվել են որպես «Արևելքի անգլոսաքսոններ»[1]*:*

Հայը կոլումբոսյան ժամանակաշրջանի Ամերիկայում

Թեպետ բրիտանացի հայագետ Դեյվիդ Մարշալ Լանգը, անդրադառնալով Ամերիկայում առաջին հայերի հայտնվելու նախապատմությանը, նշել է, որ նրանք առնչություն չեն ունեցել հետզհետե անհետացող երբեմնի ացտեկների քաղաքակրթության հետ և ոչ էլ մասնակցել են դեպի Նոր երկիր Քրիստափոր Կոլումբոսի նավարկությանն ու 1492 թ. «Նոր աշխարհի» հայտնագործմանը, «...այդուհանդերձ, հայերի հետ [առնչվելիս] պետք է միշտ պատրաստ լինել անակնկալների»: Մի անակնկալի մասին նրան պատմել է ամերիկահայ պատ-

* ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., lira777@yahoo.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 հունվարի, 2026, հոդվածը գրախոսելու օրը՝ 8 մայիսի, 2026:

1 **V. M. Malcom,** *The Armenians in America*. Boston, Chicago, 1919, p. vii.

*մաբան, The Armenian Weekly պարբերականի և The Armenian Review գիտական հանդեսի խմբագիր Ջեյմս Հ. Թաշճյանը 1976 թ. դեկտեմբերի 15-ին Բոստոնից Լոնդոն՝ Դ. Մ. Լանգին հղած իր նամակում: Ըստ Փարիզի Նուբարյան գրադարանում պահվող XV դ. **մի հայ եպիսկոպոսի** գրած ձեռագրի՝ ինքը «հավանաբար, ուղեկցել է Կոլումբոսին դեպի Նոր երկիր նրա երկրորդ (1493-1496 թթ.) ճանապարհորդության ժամանակ»[2]: Այդուհանդերձ, այդ շրջանին վերաբերող տեղեկությունները ճշգրտման կարիք ունեն:*

Առաջին հայերը Նոր երկրում

Դեռևս XVII դ. սկզբից Եվրոպայից Հյուսիսային Ամերիկա ուղևորված վերաբնակիչների թվում կային սակավաթիվ հայեր: Բրիտանական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած հայերի մասին պահպանվել են հաճախ պատմական հավաստման կարոտ կցկտուր տեղեկություններ:

*Այսպես, ըստ ԱՄՆ-ի էթնիկ պատմության մասին ուսումնասիրություններով հայտնի ամերիկացի գրող, թարգմանիչ Լուիս Ադամիքի՝ 1607 թ. Լոնդոնի Վիրջինիա ընկերության հիմնած **Վիրջինիա գաղութը** նույն թվականին բնակեցվել է լեհ, գերմանացի և **հայ աշխատավորներով**[3]: Լ. Ադամիքն «Ազգերի ազգ» գրքում նշել է, որ նրանք եկել էին Նոր Անգլիայի ծովակալ, հետախույզ-քարտեզագիր, գաղութարար-կապիտան, Ջեյմսթաուն գաղութի հիմնադիրներից[4], ինչպես նաև Վիրջինիա գաղութի «պատվար ու փրկիչ» հանդիսացող քսանյոթամյա կառավարիչ (1608 թ. սեպտեմբեր 10-1609 թ. օգոստոս), Ջոն Սմիթի (1579/1580-1631 թթ.)[5] հետ՝ նրա հրամանատարության տակ Հունգարիայում չորս տարի թուրքերի դեմ կռվելուց հետո[6]:*

---

[2] **D. M.l Lang**, *The Armenians. A People in Exile*, London, Boston, Sydney, 1981, p. 120.

[3] **J. T. Adams**, *The Epic of America*. Boston, 1932, p. 27; **R. W. Gavian, W. A. Hamm**, *The American Story. A History of the United States of America*, Boston, 1945, p. 4; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States and Canada*, Boston, 1947, pp. 1-2; **L. Adamic**, *A Nation of Nations*, New York, London, 1945, p. 287; **J. M. Blum, B. Catton, E. S. Morgan, A. M. Jr. Schlesinger, K. M. Stampp, C. Vann Woodward,** *The National Experience. A History of the United States*, New York, Burlingame, 1963, p. 14.

[4] **J. Smith**, *A Desctiption of New England. 1616*, Lincoln, 2006, p. i. **J. H. Tashjian,** *The Armenians of the United States…*, p. 1.

[5] *Explore the History of Jamestown's Early Years*, https://historicjamestowne.org/history/pocahontas/john-smith/; **Ch. D. Warner,** *Captain John Smith, 1579-1631*, vol. I, New York, 1881.

[6] **J. T. Adams,** *The Epic of America…*, p. 27. **R. W. Gavian, W. A. Hamm**. *The American Story...*, p. 4. **L. Adamic,** *A Nation of Nations*, p. 287. **J. M. Blum et al.,** *The National Experience…*, p. 14.



Կապիտան Ջ. Սմիթ

Այդ մասին ոմն անգլիացի Ն. Սմիթը նրան նվիրված բանաստեղծության մեջ գրել է[7]*.*

«Շատ ցավ է տեսել [Ջոն Սմիթը] ի բարօրություն մեր թագավորության,

Անծանոթ երկրներում, ԹՈՒՐՔԵՐԻ և ռազմավարի շրջանում՝

Մեր սահմաններն ընդարձակելու ճանապարհին»[8]*:*

Հենվելով կապիտան Ջոն Սմիթի գրառումների վրա՝ Ադամիքը նշել է, որ վերջինս, շրջելով Եվրոպայով մեկ, լավ էր հասկացել հասարակ՝ աշխատավոր մարդու արժեքը: Ահա թե ինչու, Սմիթը «Ամերիկա է բերել շատերին՝ լեհերի, գերմանացիների, հայերի, քանի որ, ի տարբերություն Հարավի անգլիացի շատ գաղութարարների, որոնք մետաքս հագնող և աշխատանքից խորշող «թափառաշրջիկ պարոններ» էին, այս մարդիկ սովոր էին շարունակական ծանր աշխատանքի: Նրանց անգլերենը, եթե նրանք ընդհանրապես դրանով խոսում էին, տարիներ շարունակ Վիրջինիայում ապրելով հանդերձ, աղքատիկ էր, նրանց շարժուձևերը զուրկ էին փայլից: Սակայն կապիտան Սմիթի գնահատմամբ, նրանք հմուտ էին ձյութի, կուպրի, օճառի փոշու, ինչպես նաև ապակյա համրիչների պատրաստման գործում, որը հնդկացիների հետ առևտրում դրամի տեղ էր օգտագործվում»[9]*:*

Նույն փաստը հաստատել է նաև ամերիկահայ Ջեյմս Թաշճյանը[10]*:*

---

7 Անգլերենից թարգմանությունը մերն է:

8 **J. H. Tashjian**, *The Armenians of the United States...*, p. 2.

9 **L. Adamic**, *A Nation of Nations*, p. 287.

10 **J. H. Tashjian**, *The Armenians of the United States...*, p. 2. **L. Adamic**, *A Nation of Nations*, pp. 287, 288.

Կապիտան Սմիթը բարձր է գնահատել օտար աշխատավորներին Վիրջինիայի գաղութը փրկելու գործում: Երկար ժամանակ (1607-1619 թթ.) հայերն ու նրանց հետ ժամանած լեհ և գերմանացի աշխատավորները զրկված են եղել քաղաքական իրավունքներից, գաղութի քաղաքացիական գործերին մասնակցելուց, գտնվել են ստրկանման վիճակում և անգլիացիների աչքում դիտվել իբրև «ստորակարգ օտարականներ»՝ զուրկ քաղաքացիական, տնտեսական ու քաղաքական իրավունքներից:

Ամերիկացի գիտնականների վկայությամբ՝ հայերը «մի բուռ» լեհ, գերմանացի և իռլանդացի աշխատավորների հետ մասնակցել են «Ամերիկայում հասարակ մարդկանց իրավունքների ընդարձակմանն ուղղված քաղաքական գիտակցված առաջին ըմբոստությանը»: Ապստամբները պահանջել են «ձայնի իրավունք և լիակատար հավասարություն մյուս գաղութաբնակների հետ»[11]*:*

Ապստամբությունն ունեցել է «բարեհաջող ավարտ»: Աշխատավորների բողքն ուշադրության է արժանացել Ամերիկայում (Վիրջինիա գաղութ) հիմնված առաջին ներկայացուցչական ժողովի՝ խորհրդարանի նախատիպը հանդիսացող Ջեյմսթաունի քաղաքացիների տան կողմից: Ժամանակակցի հաղորդմամբ, «...որոշվել էր, որ նրանք (ապստամբները՝ Ք. Ա.) կատանան ընտրելու իրավունք և կդառնան նույնքան ազատ, որքան տեղի ցանկացած բնակիչ»[12]*:*

Այսպիսով, 1619 թ. ապստամբությունը հանդիսացել է նոր աշխարհում մարդու իրավունքների ոտնահարման դեմ մղված պայքարում տարբեր ազգերի ներկայացուցիչների միասնականության դրսևորման թերևս առաջին փայլուն օրինակը[13]*:*

*Ուշագրավ է նաև այն փաստը, որ, Թաշճյանը, վկայակոչելով Վիրջինիայի գաղութային հաշվետվությունները (Colonial Records of Virginia), նշել է, որ գաղութի 1620 թ. ննջեցյալների ցուցակում հիշատակվել են կապիտան Ջ. Սմիթի հետևորդներ **Զորոբաբելի (Zorobabel)** (կամ՝ Զոհրապ Աբել*[14]*) և **Ստեփանի** անունները, ինչպես նաև՝ Ջեյմսթաուն քաղաքի գերեզմանատանը՝ օտար, հավանաբար հայերեն գրերով գրված մի տապանաքար, սակայն դրանց հայկական ծագումը ենթադրական է:*

---


[11] **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 2-3; **L. Adamic,** *A Nation of Nations*, pp. 1, 287, 288. **D. M. Lang,** *The Armenians…*, pp. 120-121.

[12] **J. M. Blum et al.**, *The National Experience…*, p. 15; **L. Adamic,** *A Nation of Nations*, pp. 287, 288; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 3.

[13] **L. Adamic,** *A Nation of Nations*, pp. 1, 288.

[14] **D. M. Lang,** *The Armenians…*, p. 121.

Հենվելով օտար աղբյուրների վրա՝ Թաշճյանը եզրակացրել է, որ գիտնականների շրջանում «արդեն ընդունված փաստ է՝ նախքան 1618 թ. Վիրջինիայում հայերի գոյությունը»[15]:



Վիրջինիայի գաղութը (1607-1776 թթ.)

[15] **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 2, **Մուշեղ եպիսկոպոս**, *Ամերիկահայ տարեգոյցը*, Ա. տարի, Պոստոն, 1912, էջ 15:

Առաջին ծխախոտագործ հայը Վիրջինիա գաղութում և հպատակագրված օտարականն ամերիկյան մայրցամաքում

Ամերիկայի գաղութային ժամանակաշրջանի համար այդ վայրի ու դժնդակ տարիներին Վիրջինիայի գաղութ ոտք դրած հաջորդ հայի՝ ***Ջոն Մարտին Հայի (John Martin the Armenian)*** *մասին տեղեկանում ենք Անգլիայի Ջեյմս I թագավորի կողմից գաղութային Ամերիկայի հարավային մասում վերաբնակելի տարածք հռչակված Լոնդոնի Վիրջինիա ընկերության մեզ հասած որոշ փաստաթղթերից (The Records of the Virginia Company of London)։ Անգլոամերիկյան այդ փաստաթղթերում, հատկապես առևտրական գործարքներում, տեղ-տեղ հիշատակվել է «Ջոն Մարտին Պարսիկ» անունը (հավանաբար նկատի է առնվել XVII դ. սկզբին Շահ Աբասի օրոք նրա ստացած պարսկահպատակությունը), իսկ պաշտոնական քվեարկություններում որոշակիացվել է նրա բուն ազգությունը՝ «Մարտին Հայ» կամ «Մարտին Հայաստանցի»։ Ահա հին անգլերեն փաստաթղթերում նրա անունը գրվել է տարբեր ուղղագրությամբ՝ John Martin,*[16] *John Martin the Persian, Martin (a/the) Armeanean, Martin (the) Armenean, Martin [Martian ?] the Armeanian, Martin ye Armenia[n], Martin the Armenian*[17]*։*

Քանի որ այդ ժամանակաշրջանում ազգային պատկանելությամբ է պայմանավորվել մարդու սոցիալական դիրքն ու ազատություն ունենալու իրավունքը, Լոնդոնի Վիրջինիա ընկերության գրառումներում հիշատակվել է Ջոն Մարտինի պարսկահպատակությունը (John Martin the Persian), իսկ Անգլիայի քաղաքացիություն ստանալուց հետո գերազանցապես շեշտվել է նրա ծագումով հայ և կամ Հայաստանից լինելու հանգամանքը (John Martin the Armenian, Martin ye Armenia[n])[18]*։*

---

[16] **J. M. Blum et al.**, *The National Experience…*, pp. 13-14; **W. S.** *The Proceedings of the English Colonie in Virginia*, Oxford, 1612, p. 94; *Travels and Works of Captain John Smith. 1580-1631*, Ed. Edward Arber, Part I. Edinburgh, 1910, p. 390.

[17] **A. Brown**, *The First Republic in America. An Account of the Origin of this Nation*, Boston & New York, Cambridge, 1898, pp. 554, 656, 673; **V. M. Malcom,** *The Armenians in America*. pp. 51-55. **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History and Its Civilization*, USA, 1957, p. 167; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 3, 5; *The Records of the Virginia Company of London. 1606-26*, vol. IV, Documents II, ed. ***S. M. Kingsbury***, Washington, 1935, pp. 290, 291, 473, 477, 498, 617.

[18] **A. Brown**, *The First Republic in America. An Account of the Origin of this Nation*, Boston & New York, Cambridge, 1898, pp. 554, 656, 673; **V. M. Malcom,** *The Armenians in America*. pp. 51-55. **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History and Its Civilization*, USA, 1957, p. 167; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 3, 5; *The Records of the*

Թաշճյանի կարծիքով Ջոն Մարտինը կա՛մ Պարսկաստանի տիրապետության տակ անցած հայկական մի բնակավայրից էր և կա՛մ՝ Պարսկաստանի Սպահանի նահանգի Նոր Ջուղա քաղաքի հայերից:

Դեպի Նոր աշխարհ Մարտին Հայի ուղևորության դրդապատճառների մասին բավարար տեղեկություններ չկան: Հայտնի չեն նաև Նոր երկիր նրան բերած նավի անունը, ափ դուրս գալու ճշգրիտ օրը և այլ մանրամասներ: Պահպանված կցկտուր տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ նա Ամերիկա էր եկել 1618 կամ 1619 թթ.՝ որպես Վիրջինիա ընկերության Մեծ կանոնադրության (Great Charter) արմատական բարեփոխումներ իրականացնելու ծրագրով Ջեյմսթաուն ժամանած պլանտատոր, բրիտանական Վիրջինիա գաղութի կառավարիչ, կապիտան Սըր Ջորջ Յեարդլիի (1587/8-1627 թթ.) սպասավոր[19]:

Նոր երկրի առաջին ստրկավաճառ, նաև ոսկու և արծաթի հանք փնտրող արշավախմբի ղեկավար Յեարդլիին Անգլիայի Ջեյմս I թագավորը Վիրջինիա գաղութի կառավարիչ էր նշանակել երեք անգամ (1616 թ. նոյեմբեր-1617 թ. նոյեմբեր, 1618 թ. նոյեմբեր-1621 թ. նոյեմբեր, 1626 թ. մարտ 4 -1627 թ. նոյեմբեր 13), իսկ 1618 թ. նոյեմբերի 24-ին նա ստացել էր «Ասպետի» կոչում: 1619 թ. ապրիլի 18-ին, ժամանելով Ջեյմսթաուն, նա ձեռնամուխ էր եղել ֆինանսական ու քաղաքական դժվարություններ կրող Վիրջինիա գաղութը բարեփոխումների ենթարկելուն: Յեարդլին Վիրջինիայի ամենից խոշոր հողատերերից և հարուստ մարդկանցից մեկն էր:

Երևելի անգլիացի Յեարդլիի սպասավոր Ջոն Մարտինը եղել է Վիրջինիա գաղութի Ջեյմսթաուն բնակավայրի անդամ: Հավանաբար նրա մուտքն այդ գաղութ տարբերվել է գաղութի սպասավոր հանդիսացող մյուսներից: Վիրջինիա ժամանած հարուստ հողատերերը գալիս էին իրենց սպասարկող անձնակազմի հետ, քանի որ գաղութային ժամանակաշրջանի Ամերիկայում «հմուտ ձեռքեր բոլորովին չկային»: Նոր երկրի հարստություններն իրացնելու նպատակով խրախուսվել է աշխատավոր ուժի մուտքը, ուստի կարելի է ենթադրել, որ Ջոն

Virginia Company of London. 1606-26, vol. IV, Documents II, ed. ***S. M. Kingsbury***, Washington, 1935, pp. 290, 291, 473, 477, 498, 617.

[19] **V. Wertsman,** *The Armenians in America. 1618-1976. A Chronology & Fact Book*, Dobbs Ferry, New York, 1978, p. 1; **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 51; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, p. 165; **J. T. Adams,** *The Epic of America…*, pp. 28, 165; *Governor, Sir George Yeardley*, https://historicjamestowne.org/history/george-yeardley/?srsltid=AfmBOoq6fxg-lQQikrJqe74bAavrVaRGZHf8DEAw5-6RwOk92TjWA9Zf

Մարտինը Յեարդլիի վստահությունը վայելող արտոնյալ սպասավորներից էր, որը նրա մոտ ծառայել էր մինչև նրա Վիրջինիա ժամանելը[20]*:*

Միչիգանաբնակ պատմաբան Նազարեթ Մանկունին եզրակացրել է, որ XVII դ. սկսած, Արևմտյան Եվրոպայից Նոր աշխարհ մուտք գործած աշխատավորների գրեթե կեսը «պայմանագրված սպասավորներ» էին և որ նախքան Ամերիկա գալը, 1610-1612 թթ., Ջոն Մարտինը կամ «Հայ Մարտինը» պետք է որ Յեարդլիին ուղեկցած լիներ Եվրոպայում՝ Լեհաստանում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Անգլիայում[21]*:*

Ի դեպ, Ջոն Մարտինը Ջորջ Յեարդլիի երկարամյա ու հավատարիմ սպասավորներից էր, և նրա կարծիքը հաշվի է առնվել դեռ «իրավազուրկ» վիճակում՝ նախքան բրիտանական քաղաքացիություն ստանալը[22]*: Ջոն Մարտինի անունը բազմիցս հիշատակվել է Բրիտանական փաստաթղթերում, օրինակ՝ Վիրջինիայի գաղութային հաշվետվություններից մեկի 20 և 21-րդ կետերում, իսկ 21-րդ կետն ամբողջությամբ վերաբերվել է նրան: Լատիներեն և հին անգլերեն գրված 1621 թ. փաստաթղթում նշված է, որ հինգ և ավելի անհատ, այդ թվում՝ Ջոն Մարտինը, արդարադատությունից խուսափելով, փախել են իրենց երկրներից*[23]*:*

Շուտով Վիրջինիայի քաղաքացիների տունը որոշել է «արտոնել» գաղութի օտարերկրացիներին բրիտանական քաղաքացիություն ընդունել, և 1619 թ. Ջոն Մարտինը հազարից ավելի բնակիչ ունեցող Վիրջինիայում ստացել է այն՝ դառնալով ամերիկյան մայրցամաքում գաղութային ժամանակաշրջանի «առաջին հպատակագրված (naturalized՝ «բնականացված» – Ք. Ա.) անձը»: Որպես «ազատ մարդ»՝ նա դարձել է 95 ակր[24] *հողի տեր և զբաղվել Վիրջինիայում տարածված ծխախոտի եկամտաբեր մշակությամբ:*

Կարելի է եզրակացնել, որ ազատ գործելու արտոնությունները, որոնցից օգտվել էր Ջոն Մարտինը, հնարավոր էին դարձել նաև շնորհիվ նույն՝ 1619 թ. Ջեյմսթաունում մի խումբ օտար աշխատավորների ըմբոստ ելույթի, որի

---

[20] **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 51, **Ն. Լ. Մանկունի**, «Ամերիկահայ գաղութի պատմությունից», *ՊԲՀ*, 1962, № 1, էջ 94, **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 3-4.

[21] **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, էջ 94:

[22] **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 51.

[23] *The Records of the Virginia Company of London. 1606-26*, vol. III, Documents I, p. 423.

[24] 1 ակր [acre] = 4.060 մ^2:

հետևանքով ձեռք էին բերվել որոշակի տնտեսական ու քաղաքական իրավունքներ[25]*:*

Բրիտանական գրադարանում պահվող սկզբնաղբյուրներից պարզ է դառնում, որ Ջոն Մարտինը, Ամերիկայում շուրջ չորս տարի զբաղվելով ծխախոտագործությամբ, 1622 թ. իր աճեցրած «ծխախոտի ծանրոցով» վերադարձել է Անգլիա, որտեղ մաքսատանը նրանից, որպես ծնունդով օտարերկրացուց, կրկնակի հարկ է պահանջվել: Նա էլ դիմել է Լոնդոնի Վիրջինիա ընկերության դատարանին, որի պահպանված հաղորդագրությունները կարևոր տվյալներ են պարունակում Նոր երկրում «Ջոն Մարտին Պարսիկի» տնտեսական գործունեության մասին:

Վերահարկավորման մասին դատարան նրա ներկայացրած 1622 թ. մայիսի 8-ի խնդրագրում կարդում ենք[26]*. «Ջոն Մարտին Պարսիկը համեստ խնդրագիր է ներկայացրել Ընկերության բարեհաճությանը՝ դիմելով մաքսատուրքի իր ընկեր հողագործներին՝ իրեն ազատելու կրկնակի հարկ վճարելուց, ինչը նրանք իրենից պահանջում էին որպես օտարականից, չնայած նա ազատ մարդ էր դարձել Վիրջինիայում այն ժամանակվա կառավարիչ Սըր Ջորջ Յեարդլիի կողմից՝ գաղութի կնիքը կրող վկայականով: Նրա ազատությանը վերաբերող պատասխան էր եկել, ըստ որի, թագավորից բացի, ուրիշ ոչ ոք չէր կարող նրան դարձնել Անգլիայի ազատ բնակիչ, և Մաքսատնից պահանջվել է, որպեսզի հողագործներն իրենք այդժամ փոխանցում չանեն՝ հաշվի առնելով, որ նրանք արդեն իսկ ծանրոցը մուտք են արել իրենց գրքի մեջ և վճարել են ըստ այդմ: Հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչպես պետք է նա [Ջոն Մարտինը] ազատ արձակվեր, նրան հանգամանալից խորհուրդ է տրվել խնդրագիր ներկայացնել Լո. Թրիրին՝ փոխանցելով հիշյալ պարտադրող հայտարարությունը և հաշվի առնելով, որ նա [Ջոն Մարտինը] Վիրջինիայի ազատ մարդ էր և մտադիր էր դատավարությունից հետո կրկին վերադառնալ այնտեղ որոշակի թվով սպասավորնե-*

---

[25] **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 4; **M. G. Kelty,** *The Beginning of the American People and Nation*, Boston, 1937, p. 206; **J. M. Blum et al.** *The National Experience…*, p. 18; **V. M. Malcom,** *The Armenians in America*, pp. 51, 52; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, p. 165, **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, **էջ 95**, **E. Eggleston**, *The Beginners of a Nation*. New York, 1896, p. 26.

[26] Այս և հետագա բնագրերի գրվածքները հին անգլերեն են, առանձին դեպքերում՝ լատիներեն, տեղ-տեղ առկա են ուղղագրական և կետադրական անճշտություններ: **John Smith**. *A Desctiption of New England. 1616*, p. ii.

րով և ծխախոտի փոքր ծանրոցով, որը նա [այստեղ] ձեռք էր բերել ապահովելու համար իր կարիքները»[27]:

Ջոն Մարտինին հաջողվել է շահել դատը. նրան թույլատրվել է Անգլիայի քաղաքացիների վրա դրված սովորական հարկով իր ծխախոտի բաժինը ներմուծել Մայր երկիր[28]:

Այսպիսով, Ջոն Մարտինի գործի առիթով անգլիական դատարանը, առաջին անգամ լինելով, հստակեցրել է Մայր երկրի՝ Անգլիայի և «օտար» գաղութաբնակների միջև տնտեսական հարաբերություններն առհասարակ՝ խթանելով առևտրի հետագա զարգացումը:

1623 թ. Ջոն Մարտինը, կրկին վավերացվելով որպես բրիտանական քաղաքացի, ունեցել է դիրքի հետագա առաջընթաց. նա դարձել է Լոնդոնի Վիրջինիա ընկերության Մշտական կոմիտեի անդամ և քվեարկելու իրավունքով մասնակցել նրա բազմաթիվ կարևոր նիստերին, որոնց արձանագրությունները ևս պահվում են Բրիտանական գրադարանում: Այսպես, 1623 թ. հոկտեմբերի 20-ի և նոյեմբերի 12-ի, ապա 1624 թ. հունվարի 14-ի «արտակարգ» և կարևոր հանդիպումների ու քննարկումների արձանագրություններում Ջոն Մարտինը հիշատակված է իր ազգային պատկանելությամբ՝ որպես «Մարտին Հայ»[29]:

Ալեքսանդր Բրաունն իր «Առաջին Հանրապետությունն Ամերիկայում» գրքում Ջոն Մարտինի անվան կողքին հարցական նշանով արձանագրել է ազգանվան Մարթյան տարբերակը՝ Martin [Martian ?] the Armeanian՝ առանձնապես շեշտելով նրա իրական ազգանունը[30]: *Կարծում ենք, որ Ջոն Մարտինի իրական անուն-ազգանվան համար հնարավոր են նաև Հովհաննես Մարտիկյան կամ Հովհաննես Մարտիրոսյան տարբերակները:*

---

[27] **V. M. Malcom,** *The Armenians in America*, pp. 52, 53; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 4, 5; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, pp. 166, 167; *The Records of the Virginia Company of London. 1622-24*. vol. I, *The Court Book*, pp. 353, 633.

[28] *The Records of the Virginia Company of London. 1622-24*. Vol. II. The Court Book. Part B., pp. 13, 14; **V. M. Malcom,** *The Armenians in America*, pp. 53, 54.

[29] *Explore the History of Jamestown's Early Years*; **V. M. Malcom,** *The Armenians in America*, pp. 54-55; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 5; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, pp. 166-167.*The Records of the Virginia Company of London. 1606-26*; Vol. IV, pp. 290, 291, 473, 477, 498, 617; **A. Brown**. *The First Republic in America…*, p. 554.

[30] **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 55; **A. Brown**. *The First Republic in America…*, p. 554, **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, **էջ 94**:

1624 թ. Ջեյմս I թագավորի կողմից Լոնդոնի Վիրջինիա ընկերության լուծարումից հետո Ջոն Մարտինի մասին տեղեկություններ այլևս չեն եղել[31]*:*

Վերջերս «Ջեյմսթաունի վերահայտնագործում» ծրագրի հնագետներն իրենց հետազոտության առաջին իսկ տարում (2017-2018 թթ.) այդ տարածքում հայտնաբերել և լուսանկարել են XVII դ. առաջին քառորդի ծխամորճի գլանակի բեկոր, որի վրա առկա է արաբատառ գրություն: Ամերիկացի հնագետների գնահատմամբ, «Օսմանյան կայսրության ծխամորճի գլանակի մնացորդը» (հավանաբար նկատի ունի դրա վրա առկա օսմաներեն կամ պարսկերեն գրությունը – Ք. Ա.) կարող էր պատկանել 1618 թ. անգլիական Հյուսիսային Ամերիկայի այդ տարածք ժամանած «առաջին պարսիկ-ամերիկացուն»՝ Ջոն Մարտին «Պարսիկին», որն անգլիացի ստրկատերեր, ծխախոտի պլանտատոր ու վաճառական Ուիլյամ Փիրսի և Վիրջինիա գաղութի կառավարիչ Սըր Ջորջ Յեարդլիի մերձավոր գործակիցն էր[32]*:*



Ջոն Մարտին Հայի ծխամորճի գլանակի բեկորը՝
«Օհան Արմանի» գրությամբ (պարսկերեն կամ օսմաներեն)

[31] **John M. Blum et al.** *The National Experience…*, p. 18; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 5.

[32] Ուիլյամ Փիրս - անգլիացի ծխախոտի պլանտատոր և վաճառական, ստրկատեր: Ավելի մանրամասն տե՛ս **Brendan Wolfe**, *William Peirce*, www.encyclopediavirginia.org. *September 2018*, historicjamestowne.org.

Կարմիր կավից պատրաստված ծխամորճի գլանակի բեկորի վրա, մասնագետների վերծանմամբ, փորագրված է «Օհան Արմանի»[33] [اهن ارمنى]: *Այն վստահաբար պատկանել է Օհան(նես)-Հովհաննես-Ջոն Արմանի-Հային, այսինքն՝ այդ ժամանակ թերևս միակ հայազգի վիրջինիաբնակ ծխախոտագործ Ջոն Մարտինին:*

Ի դեպ, Վիրջինիա գաղութում ընդհուպ մինչև XIX դ. վերջը տարածված էր կավե ծխամորճը:

Հայերի նպաստը Վիրջինիա գաղութի շերամաբուծություն զարգացման գործում

Ծխախոտագործությամբ Վիրջինիան տնտեսական որոշակի բարեկեցության հասցնելուց հետո բրիտանացի նախաձեռնողները և գաղութի գործարարները բազմիցս փորձել են այն փոխարինել մետաքսի արտադրությամբ: Ուստի, շերամաբուծությունը մեծ կարևորություն է ներկայացրել բրիտանական իշխանության համար, մանավանդ որ բրիտանացի բարձրաստիճան պաշտոնյաներից և Լոնդոնի Վիրջինիա ընկերության անդամներից բացի, ոչ ոք իրավունք չուներ մետաքսյա հագուստ կրել: 1621 թ. «Լոնդոնից հրահանգված էր Վիրջինիայի խորհրդին, որ միայն խորհրդի անդամները և միայն մի քանի հարյուր հոգի մետաքս հագնելու իրավունք պետք է ունենան»: Այդ արգելքն ու միաժամանակ ընձեռված հնարավորությունն առիթ են դարձել, որպեսզի գաղութում մտածեին մետաքսի մշակությանը զարկ տալու մասին՝ չնայած այն ավելի աշխատատար էր, քան ծխախոտի արտադրությունը:

Թեև մետաքսի արտադրության մրցակցությունը խթանելու նպատակով Վիրջինիայի խորհուրդը 50 ֆունտ[34] *մետաքս արտադրողին խոստացել էր ծխախոտի առատ պարգև, այդուհանդերձ, ձեռնարկը ցանկալի արդյունք չէր տալիս*[35]*:*

Այսպես, Վիրջինիայի կառավարող խորհրդի անդամ (1654-1656 թթ., 1670-1675 թթ.) և Վիրջինիայի կառավարիչ (1655-1656 թթ.) Էդուարդ Դիգգեսը, որ վաճառականի որդի էր, նաև Լոնդոնի Վիրջինիա ընկերության փայատեր, մոտավորապես 1650 թ. գալով Վիրջինիա՝ 1.200 ակր հող էր գնել Յորքի, իսկ 1653 թ.՝ 3.000 ակր հող արտոնագրել Գլուցեսթերի կոմսություններում և աճեց-

---

[33] *September 2018*, historicjamestowne.org.

[34] Անգլիական 1 ֆունտը [pound] = 453,6 գր (0.45 կգ):

[35] **Ed. Eggleston,** *The Beginners of a Nation…*, p. 41. **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, էջ 95:

րել անուշաբույր ծխախոտի տեսակներ: Այն բարձր գին ուներ Լոնդոնի շուկաներում և նույնիսկ նրա մահից հետո հայտնի էր նրա անվան առաջին տառերով՝ «ԷԴ ծխախոտ» (Edward Digges – ED tobacco)[36]:

Դիգգեսը հռչակվել է նաև իր արտադրած նուրբ մետաքսով: Սկզբնական շրջանում նոր երկրում մետաքսի արտադրությունը՝ մետաքսի թրթուրների խնամքն ու թրթուրների սնուցումն ապահովող թթենիների աճեցումը ձախողված վիճակում էր, մինչև 1653 թ. Վիրջինիա գաղութի երևելի պուրիտան[37] *կառավարիչ, պարոն Դիգգեսն իր անձնական ջանքերով ու նյութական միջոցներով Օսմանյան կայսրությունից (հավանաբար՝ Զմյուռնիայից) բերել է տվել երկու հմուտ շերամապահ հայերի՝ հսկելու մետաքսի թրթուրների աճը, վերականգնելու Վիրջինիայի գաղութի շերամաբուծությունը և իրենց հմտությունները հաղորդելու տեղաբնիկներին*[38]: *Ի դեպ, այդ երկու գաղթական հայերը «մետաքսի թրթուրներ աճեցնելու իրենց հմտության և փորձառության համար մեծ*



Գաղութային ժամանակաշրջանի Ջեյմսթաունը

[36] **B. Tarter**, "Edward Digges (1621-1675)," www.encyclopediavirginia.org.

[37] Պուրիտանիզմ - XVI-XVII դդ. անգլիացի բողոքական գաղափարախոսություն, որը ձգտում էր մաքրել անգլիական եկեղեցին հռոմեական կաթոլիկ գործելաոճից՝ այն դարձնելով ավելի բողոքական:

[38] **Ed. Eggleston,** *The Beginners of a Nation…,* p. 42; **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 55; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 6; **D. M. Lang,** *The Armenians…*, p. 121.

հեղինակություն էին վայելում իրենց հայրենիքում»: Այդ հայերը խնամքով հետևել են Դիգգեսի շերամաբուծական տարածքում՝ Դենբիի, Բելֆիլդի (այժմ՝ Ուիլյամսբուրգ) և Ջեյմս գետի շրջակայքում (Վիրջինիայի գաղութ), բոժոժների հասունացման համար անհրաժեշտ թթենիների աճին[39]:

Ի դեպ Դիգգեսը, զբաղվելով մետաքսի առևտրով, շերամաբուծության ապարեզում հայերի հաջողությունների մասին տեղեկացել էր ժամանակին Ռուսաստանում Անգլիայի դեսպան իր հորից: Հայտնի է, որ շերամի հունդը Ռուսաստան էին բերում մեծ մասամբ Փոքր Ասիայի (Բուրսա, Ադաբազար) և Արևմտյան Հայաստանի (Խարբերդ, Տիգրանակերտ) հայերը: Այնպես որ, շերամապահ հայեր բերած էդուարդ Դիգգեսը արդեն 1654 թ. համարվել է Վիրջինիայում առաջնակարգ մետաքս արտադրող[40]:

Շուտով շերամապահական գործն այնքան ապշեցուցիչ հաջողության է հասել, որ այդ ձեռնարկին «փութաջան նպաստող», Դիգգեսի ընկեր, անգլիացի բանաստեղծ-շերամապահ Ջոն Ֆերրըր 1654 թ. 173 տողից բաղկացած ներբող է հյուսել՝ ձոնելով «ազնվագույն Պարոն Դիգգեսին՝ Թուրֆայից Վիրջինիա նրա երկու հայերի ժամանման կապակցությամբ» և գովերգելով մետաքսի արտադրության մեջ նրա նվաճումները[41]: *Այն տպագրվել է «Բարեփոխված Վիրջինիայի շերամորդը» (1655 թ.) վերնագրով հատորի մեջ և սկսվել է հետևյալ տողերով.*

«Այնտեղ, ուր թթուրն ու սնունդն ի բնե առատ են,
Այնտեղ է պետք հիմնել առևտուրը մետաքսի շուայլ:
Վիրջինիան երկու բանով է անցնում աշխարհին՝
Ճշմարիտ է սա՝ նախանձն ու չարը չեն կարող շահել»[42]:

---

[39] **P. A. Bruce**, *Economic History of Virginia in the Seventeenth Century*, vol. I. New York, London, 1896, p. 365; **V. Wertsman,** *The Armenians in America…*, p. 1, **Ն. Լ. Մանկուճի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, էջ 95:

[40] **N. Buxton, Rev. H. Buxton**, *Travel and Politics in Armenia*, New York, 1914, p. 218; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, p. 168, *Արշալույս պատկերազարդ տարեգիրք*, պատրաստեց *Արմենակ Մելիքեան*, Գ տարի, Ֆրեզնո, **1922**, էջ **45**, **Brent Tarter**, "Edward Digges (1621-1675)," www.encyclopediavirginia.org.

[41] **D. M. Lang,** *The Armenians…*, p. 121; *The Reformed Virginian Silk-Worm*, London, 1655, pp. 33-38; **V. M. Malcom,** *The Armenians in America*, pp. 55-56; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 6; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, p. 168; **R. Mirak,** *Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I*, Cambridge, Mass., 1983, p. 36.

[42] *The Reformed Virginian Silk-Worm*…, p. 33.

Թեև բանաստեղծությունը յուրատեսակ գովերգ է Վիրջինիայի բարգավաճման գործում ծանրակշիռ ներդրում ունեցած գաղութի կառավարիչ Էդուարդ Դիգգեսին և նրա գործընկերներին, այդուհանդերձ, ինչպես վերնագրում, այնպես և բանաստեղծության մեջ առկա են Օսմանյան կայսրությունից նրա բերած երկու հայերի աշխատասիրությունն ու նրանց ներդրումը գովերգող հիացական տողեր ևս.

«Սակայն ազնիվ *Դիգգեսը* հաղթանակ տարավ.
(Աղջնա՛կս, շերամի հունդերի պահանջը նսեմացրեց ձեռնարկը)
Նրա երկու հայերը Թուրքիայից ուղարկված
Այժմ իր բաջ ձեռնարկով են մեծապես զբաղված,
Եվ ունի նա բավական պաշար հաջորդ տարվան.
Տաս հազար ֆունտ մետաքս այնժամ ի հայտ կգա,
Եվ նրա արժանավոր գործերի համբավը երկինք կբարձրանա:
* *
Քաջ, խիզախ պարոն Սիթ Էյդը Ատծուց է ուղարկված,
Գործիր, շարունակիր, առաջ տար մտադրությունը մեծ»[43]:

«Բարեփոխված Վիրջինիայի շերամորդը» վերոհիշյալ գրքում Թուրքիայից Վիրջինիա երկու շերամապահ հայեր բերելու և նրանց հաջողությունների մասին գրվել է նաև հետևյալը. «Առարկությունը, կամ ավելի ճիշտ անհիմն ենթադրությունները այն մասին, թե թրթուրները վնասվում են Վիրջինիայի փոթորիկներից, բավարար կերպով պարզված է, ոչ միայն այն բանով, որ բնական թրթուրներն այդքան լավ ապրում և հիասքանչ կերպով բարգավաճում են ծառերի վրա, բայց նաև այս գարուն մեր թրթուրների վրա արված փորձերով: Երբևէ պատվի պիտի արժանանա Ազնիվ Պարոն Դիգգեսը (իր իսկ մեծ պատասխանատվությամբ). [նա] մարդիկ ուղարկեց Թուրքիայից երկու հմուտ հայեր բերելու և տաս փաունդ մետաքս ստեղծեց, որը, եթե հունդերը չխանգարեին, կլիներ մի քանի հազար փաունդ»[44]:

*Շերամապահ հայերից մեկի՝ **«Ջորջ-Գևորգ Հայի» [George the Armenian]** մասին տեղեկանում ենք 1656 թ. դեկտեմբերին Վիրջինիա գաղութի ժողովի (Assembly of the State of Virginia) գոհացուցիչ որոշումից: Այդ փաստը հի-*

[43] Նույն տեղում, էջ 38, **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 56:
[44] *The Reformed Virginian Silk-Worm...,* p. **26**.

շատակվել է նաև «Վիրջինիայի օրենքները» ընդարձակ կանոնադրական ժողովածուի մեջ, «Մասնավոր դեպքերի համար» բաժնի «Համագործակցության 1656-1657 թթ. դեկտեմբեր» ենթաբաժնում: Այսպես, «մետաքս արտադրելը խրախուսելու» համար «այդ Ջորջ Հայը, մետաքսի գործարքում իր ցուցաբերած աջակցության և նույնը շարունակելու նպատակով երկրում մնալու համար, ժողովի կողմից պարգևատրվել է չորս հազար ֆունտ ծխախոտով»: Սույն փաստը հիշատակել է նաև Վիրջինիայի պատմության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ, Վիրջինիա պատմական ընկերության թղթակից-քարտուղար Ֆիլիպ Ալեքսանդր Բրյուսը «Վիրջինիայի տնտեսական պատմությունը 17-րդ դարում» գրքում, ինչը վկայում է գաղութի համար կարևորություն ներկայացնող նախաձեռնության մեջ հայ հմուտ վարպետների ծանրակշիռ ներդրման մասին. «Ժողովը, հայ Ջորջին, որը, հավանաբար, Դիգգեսի՝ Վիրջինիա բերած երկու մարդկանցից մեկն էր, գաղութում մնալու և մետաքսի արտադրությանը նվիրվելու գործում համոզելու նպատակով, նրան տվել է չորս հազար փաունդ ծխախոտ»: Նշենք, որ, հակառակ գործադրած ջանքերին, սկզբնական շրջանում զգալի արդյունքների չհասած հուսահատված հայերը նույնիսկ ցանկացել են վերադառնալ[45]:

Սակայն շուտով, մետաքսագործության ասպարեզում հայերի արձանագրած հաջողությունների շնորհիվ, Դիգգեսը պաշտոնի բարձրացումներ է ունեցել՝ որպես «մետաքս ստանալու հուսադրող շահավետ նախագծի հեղինակի և խթանողի», ինչպես նաև մատուցած այլ «կարևոր ծառայությունների» համար[46]:

«Եթե հավատք ընծայենք [Վիրջինիա Ընկերության] զեկուցումին, Վիրջինիան մատակարարեց Զարլզ Ա-ի թագադրության պատմուճանը: Իսկ Զարլզ Բ-ի մետաքսագգեստը անտարակույս իր Վիրջինիայի տիրապետության մեջ մշակված խոզակներեն պատրաստված էին: Տիկս անունով Պարոն մը հայեր բերել տվավ Վիրջինիայի իր խոզակի արտադրության հսկելու՝ 1655 թ.», – ամերիկա-

---

[45] **V. Wertsman,** *The Armenians in America…*, p. 1; **W. W. Hening,** *The Statutes at Large*. Vol. I, New-York, 1823, p. 425; **V. M. Malcom,** *The Armenians in America*, p. 56; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 7; **D. M. Lang,** *The Armenians…*, p. 121; **H. B. Boghosian,** *Highlights of Armenian History…*, p. 169; **Ph. A. Bruce**, *Economic History of Virginia…*, p. 368, **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, էջ 95, **Մուշեղ Եպիսկոպոս**, *Ամերիկահայ տարեցոյցը*, էջ 15:

[46] **B. Tarter**, "Edward Digges (1621-1675)." www.encyclopediavirginia.org.

ցի պատմաբան, գրող էդուարդ էգլեսթոնի (1837-1902 թթ.) XIX դ. վերջին մատնանշած խոսքն է մեջբերել Ն. Մանկունին[47]:

Վիրջինիա գաղութում մետաքսագործությամբ զբաղվող «Ջորջ հային» հիշատակել է նաև ԱՄՆ ներգաղթած իռլանդացի պատմաբան Ջոն Դելի Բարքը, նշելով, որ Վիրջինիա գաղութում խրախուսվել են առևտուրն ու ձեռքի աշխատանքը, 1663 թ.՝ «ի գոհունակություն [գաղութի] ժողովի, քանի որ Ջորջ հայն արդարացրել էր Վիրջինիայում տաս փաունդ մետաքսի կծիկի արտադրությունը, հրամայված էր, որ, օրենքի համաձայն, նրան վճարվի այս տարվա գանձումից»[48]:

Այսպիսով, ինչպես նշել է Մուշեղ եպիսկոպոսը, Վիրջինիայում «...հայ միտքն ու ճարտարությունը կրցած է սատարել իր կազմութեան խանձարուրքին մէջ եղող Ամերիկեան մետաքսագործական ճարտարուեստին»[49]:

Ամերիկայի հնագույն շրջանին և Վիրջինիա գաղութի հիմնադրմանը վերաբերող պատմական և իրավական փաստաթղթերում ավելի հաճախ են նոր երկիր մուտք գործած առաջին երկու հայերի (Ջոն Մարտին Հայ և Ջորջ հայ) մասին հիշատակումները, մինչդեռ հետագա տարիներին եկած հայերի մասին՝ հատուկենտ: Դա բացատրվում է այդ շրջանում Ամերիկայի համար էական նշանակություն ունեցող ծխախոտագործության և մետաքսագործության ասպարեզներում նրանց վարած բարեհաջող տնտեսական գործունեությամբ:

Հայերի ներկայությունը ամերիկյան այլ գաղութներում (Մասաչուսեթս, Կարոլինա, Ջորջիա)

Հետագա տարիներին Ամերիկա եկած հայերի մասին պահպանվել են շատ սակավ, հաճախ էնթոգրաֆական տեղեկություններ: XVII-XVIII դդ. հայերը հիմնականում եկել են ինչպես Վիրջինիայում հաստատված հայերի ազդեցության շնորհիվ, այնպես էլ Մեծ Բրիտանիայի հետ առևտրական առավել գործուն հարաբերություններ ունեցող եվրոպական որոշ երկրներից (հատկապես՝ Հոլանդիայից), նաև՝ Հնդկաստանից: Այդ երկրներում ևս հայերը տակավին XVII դ. սկզբից ներգրավված էին հիմնականում առևտրական գործունեության մեջ և

---

47 **Ed. Eggleston,** *The Beginners of a Nation…,* p. 42, **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, **էջ 95**:

48 **John Burk**. *The History of Virginia, from Its First Settlement to the Present Day, Vol. II, Petersburg*, Virginia, **1805**, pp. **132**, **133**.

49 **Մուշեղ Եպիսկոպոս**, *Ամերիկահայ տարեցոյցը*, **էջ 15**, **N. Buxton, Rev. H. Buxton**, *Travel and Politics in Armenia*, p. 219:

ամենայն հավանականությամբ վերաբնակվել էին ամերիկյան նորաստեղծ տարբեր գաղութներում՝ Վիրջինիայից բացի՝ Մասաչուսեթսում, Հարավային Կարոլինայում և Ջորջիայում[50]*:*

*Այսպես, Դ. Մ. Լանգը նշել է, որ XVIII դ. Ամերիկայում հայկական նշանակալի գործունեություն հետքեր չեն հայտնաբերվել: Նման կարծիքին է նաև Ջ. Թաշճյանը, ըստ որի, երկար ժամանակ **Մասաչուսեթսի գաղութում** հայերի ներկայության մասին խոսելը կասկածներ է հարուցել: Այդուհանդերձ, նա հիշատակել է ամերիկյան Նոր Անգլիայի տարածքում գործող դատավոր, վաճառական, Մասաչուսեթս գաղութի կառավարչի խորհրդի անդամ, մի շարք աշխատությունների հեղինակ Սեմյուել Սյուալին [Samuel Sewall] (1652-1730 թթ.), որը 1674-1729 թթ. ներառող իր հանրահայտ «Օրագրում» (Diary)*[51] *հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել հավանաբար հայկական ծագման մի անձի մասին, որն եկել էր Նոր երկրի այդ պուրիտան գաղութը:*

*1682 թ. նոյեմբերի 15-ի՝ չորեքշաբթի օրվա իր գրառման մեջ նա խոսել է Քեմբրիջի եկեղեցի իր այցելության և այնտեղ՝ կրոնական ծառայության ժամանակ հանդիպած հունգարահայ համարվող **Ստեփան Զադորիի [Stephan Zadori]** (հավանաբար հայկական՝ Զադուրյան, Աստուրյան կամ Աստվածատուրյան ազգանունների տարբերակը) մասին, որը Նոր Անգլիայի տարածք էր այցելել նույն թվականին: Սյուալը մասնավորապես գրել է. «Սա առավել բարեպատեհ օր [է], և ձեռնադրությանը շատ ժողովուրդ [կա]: Ես գնացի և վերադարձա [եկեղեցի] ոտքով՝ Հունգարացի ՊՐ. ԶԱԴՈՐԻԻ ընկ[երակցությամբ], որը, ես գտա՝ հայ է [Arminian – sic?!]»*[52]*:*

Ստեփան Զադորին 1682 թ. հոկտեմբերի 10-ին Քեմբրբերիի արքեպիսկոպոսին հղած նամակում գրել է, որ մինչև Ամերիկա մեկնելն ինքը երկու տարի անցկացրել էր Անգլիայում և ցանկանում էր մեկնել Հունգարիա: Սակայն, ակնարկել է, որ «Հունգարիայի վերջին իրադրության պատճառով» խուսափել է վերադառնալ (նկատի ունի Բալկաններում և կենտրոնական Եվրոպայում թուրքական ռազմական գործողությունները): Ապա շնորհակալություն է հայտնել նույն թվականի մայիսի 29-ին իր հանդեպ ցուցաբերած բարեհաճ վերաբեր-

---

[50] **V. M. Malcom,** *The Armenians in America*, pp. 56-57; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 12.

[51] **D. M. Lang,** *The Armenians…*, p. 121; *Samuel Sewall Diaries. 1672-1729*, www.masshist.org.

[52] **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 7, 8; **V. Wertsman,** *The Armenians in America…*, p. 1.

մունքի համար: Ամենայն հավանականությամբ, արքեպիսկոպոսը նպաստել էր, որպեսզի Ստեփան Զադորին թույլտվություն ստանա այցելելու Ամերիկա, որտեղ նա մնացել էր վեց ամիս: Նամակից նաև տեղեկանում ենք, որ նա երեք ամսով «հյուրընկալվել էր» Նոր Անգլիայում և համոզվել, որ Մասաչուսեթսի գաղութաբնակները խորապես կրոնական են և հավատացյալ: Նամակի վերջում Զադորին հավաստիացրել է, որ ինքը «մինչև իր կյանքի վերջ [կմնա] Ջերդ Պայծառափայլության ամենից հավատացյալ հպատակը»[53]: Ճոխ լատիներենով գրված այդ նամակից և Սյուալի ակնարկներից կարելի է եզրակացնել, որ այն գրելու պահին քսաննիններամյա Ստեփան Զադորին «Պանոնյան[54] Հունգարիայից» էր և որոշակի համբավ ունեցող գիտնական պիտի եղած լիներ: Ամենայն հավանականությամբ, նա սերում էր Բագրատունյաց թագավորության (961-1045 թթ.) անկումից հետո Եվրոպա, մասնավորապես՝ Լեհաստան գաղթած հայերի սերունդներից[55]:

*Հայկական ծագումով անունների կարելի է հանդիպել նաև **Կարոլինայի գաղութի** վաղ շրջանի փաստաթղթերում: Ի դեպ, Կարոլինան ամեն կերպ խրախուսել է «օտար» գաղթականությունը: Հետևաբար ենթադրվում է, որ այնտեղ մեկնած հայերի մի մասը Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում տարածված այդ կոչերին արձագանքածներն էին: Գաղութի վաղ շրջանին վերաբերող «Հարավային Կարոլինա ուղարկված հոգևորականների հաշվետվություն» կոչվող փաստաթուղթը բացահայտել է վաղ շրջանում այնտեղ առնվազն մեկ հայի ներկայության փաստը: Առաջին հայ է համարվել պատվելի պարոն **Փիթըր Թուստյանը [Rev. Mr. Peter Tustian]** (հավանաբար՝ Պետրոս Դուստրյան)[56], որի մասին կարդում ենք. «1719 թ. Պատվելի Պարոն Փիթըր Թուստյանը հասարակության կողմից նշանակվել էր հոգևորական, սակայն, ժամանելով, նա երկիրը գտավ կուսակցական պառակտումներով այնքան խառնաշփոթ վիճակում, որ*

---

53 **V. Wertsman,** *The Armenians in America…*, p. 1; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, p. 8.

54 Պանոնիա - Հռոմեական կայսրության (27 թ. մ. թ. ա. - 476 թ.) գավառ, տարածք կենտրոնական Եվրոպայում, որն ընդգրկել է ժամանակակից Հունգարիան, արևելյան Ավստրիան, հարավարևմտյան Սլովակիան, հյուսիսային Սլովենիան, հյուսիսային Խորվաթիան, հյուսիսարևելյան Սերբիան, հյուսիսային Բոսնիան և Հերցոգովինան:

55 **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 8-9; **V. Wertsman,** *The Armenians in America…*, p. 1.

56 **J. H. Tashjian,** *The Armenians of the United States...*, pp. 9-10; **D. Humphreys,** *An Account of Missionaries, Sent to South Carolina*, vol. II, 1836, New York, p. 560.

շուտով տեղափոխվեց Մերիլենդ»: Թուսթյանը նշանակվել էր Հարավային Կարոլինայի Ս. Գևորգ թեմի հոգևորական: Եվ ինչպես Թաշճյանն է պարզաբանել, քանի որ հայը չէր կարող անգլիկան եկեղեցու հովիվ դառնալ, ուստի հնարավոր է, որ նա Անգլիա մեկնած վաղ շրջանի գաղթականի սերնդից էր, որն ամբողջովին անգլիացի էր դարձել՝ պահպանելով միայն անունը[57]*:*

*Հիշատակումներ կան նույն ժամանակ Կարոլինայում եղած այլ հայերի մասին: Այսպես, **Ջեյքբ Սատուրը [Jacob Satur]** (հավանաբար՝ Հակոբ Սատուրյան կամ՝ Աատուրյան, կամ՝ Աստվածատուրյան) եղել է նոր եկեղեցի հիմնադրելու հանձնախմբի պատասխանատու անձ, նաև պատվելի Թուսթյանի թեմի երևելի անդամ:*

*Ոչ անգլիական արյուն ունեցող գաղթականների համայնքներ հայտնաբերվել են Հյուսիսային Ամերիկայի առավելապես հարավային կողմի անգլիական գաղութներում: **Ջորջիա գաղութի** վաղ ժամանակաշրջանի մի շարք փաստաթղթերում հիշատակվում են հրեա և գերմանացի գաղթական խմբեր: Կրոնական փախստականների համար ապաստան հանդիսացած Ջորջիայի գաղութում պետք է որ հայեր եղած լինեին: Այսպես, գաղութի տարբեր փաստաթղթերում հիշատակվում է ոմն **Ստեֆըն Թարրյանի [Stephen Tarrian]** անունը՝ ուղղագրական տարբերակներով (Ստեֆըն Թարրյեն / Stephen Tarrien, Ստեֆըն Թերյեն / Stephen Terien)*[58]*: Հավանաբար դրանք Ստեփան Տերյան անուն-ազգանվան աղավաղված ձևերն են:*

Ջեյմս Թաշճյանի վկայությամբ՝ Ստեֆըն Թարրյեն կամ Ստեֆըն Թերյեն անունն առկա է «գաղութի հոգաբարձուներին» հղված՝ 1738 թ. դեկտեմբերի 9-ի խնդրագիր-նամակի տակ: Ստորագրողները, որոնք հանդես էին եկել որպես «Ջորջիա գավառի վերաբնակիչներ, ազատ հողատերեր և բնակիչներ», հոգաբարձուներից խնդրում էին իրենց հողատարածքների համար սահմանել «Անվճար սեփականության իրավունք կամ պարզ վճար: Բացառված չէ, որ այլ հայեր ևս եղած լինեն հիշյալ Ջորջիա գաղութում: Իսկ ուղղագրության տարբեր ձևերը կարող են վկայել, որ Ստեֆըն Թերյենը (Թարրյեն) չէր տիրապետում անգլերենին[59]*:*

---

[57] **D. Humphreys,** *An Account of Missionaries*…, p. 560; **V. Wertsman,** *The Armenians in America*…, p. 1; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States*..., pp. 9-10.

[58] **J. H. Tashjian,** *The Armenians of the United States*..., pp. 10-11.

[59] **V. Wertsman,** *The Armenians in America*…, p. 1; **J. H. Tashjian,** *The Armenians of the United States*..., pp. 11, 12.

Ստեֆըն Թարրյանի (Stephen Tarrian) անունը հիշատակվում է նաև «Ջորջիայի պատմական ընկերության ժողովածուների» № 35 հավելվածի «Փոքրինչ երևելի տղամարդ կոչված բողոքավորների ցուցակում», որտեղ նշվում է նաև 251 անձի անուն[60]: Հիշյալ անձի անվան Ստեֆըն Թարրյեն (Stephen Tarrien) տարբերակն արձանագրված է նաև 1738 թ. դեկտեմբերի 9-ին Ջորջիայի Սավաննա բնակավայրի մի շարք վերաբնակիչների, ազատ հողագործների, բնակիչների, ինչպես նաև 3 դատավորների կողմից (ընդհանուր առմամբ՝ 117 անձ) տեղի հոգաբարձուներին ուղղված երկարաշունչ նամակի տակ, որը վերնագրված է՝ «Հարգարժան հոգաբարձուներին Ամերիկայում Ջորջիա գաղութի հիմնելու համար»[61]:

Եզրակացություն

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ամերիկա գաղութում անգլիացի երևելի գաղութարար-վերաբնակիչ բարձրաստիճան պաշտոնյաների կողքին գրեթե միշտ եղել են հայեր, ինչպես նաև հոգևորականների շրջապանում:

Բրիտանական գաղութատիրության տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ ընդհուպ մինչև XIX դ. սկիզբ նորեկների, այդ թվում նաև հայերի, գրանցման վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել: Միայն 1820 թ. է, որ ԱՄՆ ներգաղթողներն արձանագրվել են ուրույն ձևով՝ ըստ իրենց գաղթած երկրների[62]: Ըստ Ն. Մանկունու հաշվարկների, 1610-1612 թթ. մինչև 1820 թ. նոր երկիր է մուտք գործել շուրջ 100 հայ[63]:

Այդուհանդերձ, այդ ժամանակաշրջանում Ամերիկա մուտք գործած վերոհիշյալ առաջին հայերով չի պայմանավորվել հետագա տարիներին հայկական տարբեր տարածքներից դեպի ԱՄՆ նպատակաուղղված տեղաշարժը. նրանք սոսկ գաղթականության հիմնական հոսքից դուրս գտնվող անհատներ էին:

---

60 *Non Sibi, Sed Aliis. Collections of the Georgia Historical Society*, vol. II, Savannah, 1843, pp. 155-158.

61 Նույն տեղում, էջ 217-220, 221-222:

62 **Ք. Ավագյան**, *Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.)*, Երևան, 2000, էջ 17, **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, էջ 95:

63 **Ն. Լ. Մանկունի**, *Ամերիկահայ գաղութի պատմությունից*, էջ 105:

Ի մի բերելով անգլիական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած առաջին սակավաթիվ անհատ հայերի մասին մեզ հասած սկզբնաղբյուրների սակավ, բայց արժեքավոր տեղեկությունները, կարելի է եզրակացնել, որ նրանց մեծ մասը տնտեսական ու պատմական հանգամանքների բերումով եվրոպական տարբեր երկրներում ցրված հայեր էին կամ նրանց օտարացած սերունդները, որոնք, առևտրական և այլ հանգամանքների բերումով առնչվելով Բրիտանիայի հետ, միմյանցից տարբեր, հիմնականում անհատական դրդապատճառներով անցել էին նոր վերաբնակվող գաղութ և ներգրավվել նրա տնտեսական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառներում: Ահա թե ինչու են նրանք մեծ մասամբ կրել օտարացած անուններ, ինչպես նաև պատկանել են քրիստոնեական տարբեր դավանանքների: Բայց և այնպես, բրիտանական և ամերիկյան գաղութային պաշտոնական փաստաթղթերում նրանց հայկական ծագման մասին երբեմն հանդիպող ակնարկները հավաստիացնում են այդ ժամանակաշրջանում Նոր երկրում օտար վերաբնակիչների ազգային պատկանելիության նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը՝ դրանով իսկ ձեռք բերելով ազգային ու պատմական որոշակի արժեք:

KNARIK AVAGYAN

NEWLY DISCOVERED SOURCES ON THE FIRST ARMENIANS TO ARRIVE IN AMERICA IN THE COLONIAL PERIOD (EARLY 17TH – FIRST HALF OF THE 18TH CENTURY)

Key-words: New World, America, Britain, London, Virginia Colony, Jamestown, John Martin the Armenian, tobacco dealing, silkworm breeding.

After studying the scanty information that has reached us about the first Armenians who left for America during the British colonial period, it is possible to conclude that the majority of them were Armenians scattered throughout Europe due to economic and historical circumstances, or their descendants, who, for commercial or other reasons related to Britain, moved to the new colony independently and mainly for individual reasons, becoming involved in various spheres of its economic and spiritual life. This explains why they mostly bore foreign names and had adopted different Christian traditions.

КНАРИК АВАКЯН

НОВЫЕ ИСТОЧНИКИ О ПЕРЕСЕЛИВШИХСЯ В АМЕРИКУ ПЕРВЫХ АРМЯНАХ В КОЛОНИАЛЬНЫЙ ПЕРИОД (НАЧАЛО XVII ВЕКА – ПЕРВАЯ ПОЛОВИНА XVIII ВЕКА)

Ключевые слова: Новая земля, Америка, Британия, Лондон, колония Вирджиния, Джеймстаун, Джон Мартин Армянин, табаководство, шелководство.

Изучение скудных, но ценных источников, хранящиеся в библиотеках Великобритании и США, приводит к выводу, что большинство первых армян на Новой земле были переселенцами из европейских стран или их утратившими национальную идентичность потомками, которые, в силу торговых и других обстоятельств имея связи с Великобританией, перебрались в новую колонию и вовлекались в различные сферы ее экономической и духовной жизни. Вот почему в большинстве они носили неармянские имена, а также принадлежали к различным христианским конфессиям.

ՄԵՐԻ ՔԵՇԻՇՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏԱԲԱՆ ՍԵՐԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ. «ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ»



Նկ. 1. ՄՄ 6248, 2ա
Սահակ Ծաղկարարի նկարած թռչնազարդ վարդափունջը իր ստեղծած ոսկե ներկով և գույներով



Նկ. 2. ՄՄ 6248, 3ա
Սահակ Ծաղկարարի աճեցրած հիրիկների փունջը ծաղկանկարի տեսքով



Նկ. 3. ՄՄ 6248, 88ա
«Հաշեա»
Սալբու ծառի ծաղիկներով և տերևներով շարան՝ ասեղնագործության համար



Նկ. 4. ՄՄ 6248, 75ա
Մեխակներից, վարդերից և բաբվարդերից, հիրիկներից և թռչնապատկերներից ստացած ծաղկաշղթա՝ ասեղնագործության համար




Նկ. 5. ՄՄ 6248, 79ա
Ծաղկաշղթաներից կազմված տառեր մանրանկարչության համար




Նկ. 6. ՄՄ 6248, 62ա
Ջարդանկար՝ հյուսված խաչապատկերից, ծաղիկներից և ծաղկաշղթաներից

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ 1275-1350 ԹԹ.



Գծապատկեր 1. 1275–1350 թթ. արտագրված ձեռագրերի բովանդակային համապատկերը



Գծապատկեր 2. Դրչության կենտրոնների ակտիվությունը 1275–1350 թթ.՝ ըստ պահպանված և ներկայումս անհայտ տեղորոշմամբ մատյանների բանակական ցուցանիշների

ՍԵՅՐԱՆՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՅՐԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ



Նկ. 1. Հայկական միթրա/խույր, 1753 թ., Աստրախան
Պայծառակերպություն



Նկ. 2. Հայկական խույր՝ վակասով և արտախուրակներով, 1734 թ., Սյունիք
Տերը չորեքկերպյան աթոռին, Աստվածածինը Մանկան հետ,
Քրիստոսն առաքյալների հետ



Նկ. 3. Հայկական խույր՝ արտախուրակներով, 1768 թ., Կոստանդնուպոլիս, Աստվածածինը Մանկան հետ, Հովհաննես Մկրտչի և Ստեփանոս Նախավկայի հետ, Խաչելություն, Ավետում



Նկ. 4. Հայկական խույր՝ գեղանկարչական յոտաներկ պատկերով մեդալիոնի մեջ, 18-19-րդ դդ., Կոստանդնուպոլիս, Գրիգոր Լուսավորիչը մկրտում է թագավորական ընտանիքը



Նկ. 5(1). Հայկական խույր՝ արծաթե վերադիր պատկերներով, 18-րդ դ. Հարություն



Նկ. 5(2). Խույրի արտախուրակները արծաթե վերադիր պատկերներով 18-րդ դ. Առաքյալներ Պողոս ու Պետրոսը



Նկ. 6(1). Հայկական խույր, 1657 թ.
Խաչելություն



Նկ. 6(2). Հայկական խույր, 1657 թ.
Հարություն



Նկ. 7. Խույր, 1653 թ., Լիմ, Վասպուրական
Ծնունդը որպես երկրպագություն Մանկանը մարգարեների հետ



Նկ. 8. Խույր, 18-րդ դ., Բուրսա
Կոստանդնուպոլիս
Դրախտի այգի, ածաթե խաչ



Նկ. 9. Հայկական խույր
1801 թ., Աշտարակ, Այրարատ
Խաչելություն



Նկ. 10. ՄՄ 1509, ժողովածու, 1685 թ.
վայրն անհայտ, թ. 82բ
Գրիգոր Լուսավորչի պատկերը



Նկ. 11. ՄՄ 423, ժողովածու, 1742 թ.
Կեսարիա, թ. 137բ
Գրիգոր Լուսավորչի պատկերը



Նկ. 12. ՄՄ 1512, ժողովածու, 1689 թ., Էջմիածին, թ. 78ա
Գրիգոր Լուսավորչի պատկերը

ՍԱԹԵՆԻԿ ՋՈՒԳԱՍՋՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԹԻՎ 9422 ՁԵՌԱԳՐԻ ԱՎԵՏՄԱՆ ՏԵՍԱՐԱՆԸ



Նկ. 1. ՄՄ 9422 Ավետարանի
առաջին խորանը



Նկ. 2. ՄՄ 9422 Ավետարանի
Ավետման տեսարանը



Նկ. 3. ՄՄ 9422 Ավետարանի
Ղուկաս ավետարանիչն ու Թեոփիլիոսը



Նկ. 4. ՄՄ 9422 Ավետարանի Ղազարոսի
հարության տեսարանը

ԷՄՄԱ ՉՈՒԳԱՍՉՅԱՆ

ԿԵՌԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ 1272 Թ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՍԿՅԱ ԿՐԿՆԱԿԱԶՄԸ



Նկ. 1. Կեռան թագուհու Ավետարանի կրկնակազմի վերին փեղկը «Խաչելության» տեսարանով



Նկ. 2. Կեռան թագուհու Ավետարանի կրկնակազմի ստորին փեղկը «Տիրամայրը մանկան հետ» տեսարանով



Նկ. 3. Կեռան թագուհու Ավետարանի կրկնակազմի կողմի վրա եղած ավետարանիչների դիմանկարները և արձանագրությունը

ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ*

DOI: 10.57155/FGCI9232

ՄԵԼՔՈՄ ԽԱՆԻ ԴԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Մելքոմ խան, հայ-իրանական գրական կապեր, պարսից գրականություն, Հակոբ Պարոնյան:*

Հազարամյակների պատմություն ունեցող հայ-իրանական մշակութային կապերը բազմաշերտ են: Դրանց յուրաքանչյուր փուլն արտացոլում է իր ժամանակաշրջանի հոգևոր, հասարակական-քաղաքական և պատմական իրականության համապատկերը: Հին և միջին դարերի շփումներն առավել հաճախ են գրավել գիտական հանրության ուշադրությունը և դրանց ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ արժեքավոր գործեր, մինչդեռ 19-րդ դարի կեսերից սկիզբ առած շրջանը որակապես տարբերվում է նախորդներից: Այն վերաբերում է Իրանից և Հայաստանից դուրս՝ Կոստանդնուպոլսում, իրանցի վտարանդի և արևմտահայ մտավորականների՝ նույն մշակութային միջավայրում ստեղծագործելուն: Այստեղ առանցքային է Մելքոմ խան անհատի գրական գործունեությունը, ով հնարավորություն ուներ անմիջականորեն հետևելու պոլսահայ գրական կյանքին: Նրա պիեսները և Լոնդոնում հրատարակած «Ղանուն» (Օրենք) թերթն ակնհայտորեն կրում են Հակոբ Պարոնյանի ստեղծագործության և արևմտահայ մամուլի ազդեցությունը:

Իսլամ ընդունած այս հայորդին իր երկատված ինքնությամբ յուրային էր երկու կողմի համար: 1861 թվականից հանգրվանելով Ստամբուլում՝ Մելքոմ խանը կամա-ակամա դարձավ իրանական և արևմտահայ գրական աշխարհների կամուրջը: Նրան բաժին էր ընկած իր դերն ունենալու նորացման ճանապարհը բռնած պարսից գրականության ոճի պարզեցման մեջ:

Դեռևս 16-րդ դարից թեմատիկ և գեղարտահայտչական միջոցների տեղապտույտի փուլում հայտնված պարսից գրականությունն արդիականանալու, զարգացման նոր ուղիներ գտնելու դժվար ճամփա էր անցնելու: 18-րդ դարում

* ԵՊՀ, ԳՍ ՀԱԻ, բ.գ.թ., դոցենտ, garnikgevorgian@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 հունվարի, 2026, հոդվածը գրախոսելու օրը՝ 2 ապրիլի 2026:

Սպահանում կազմավորված գրական խմբակների անդամները, իրենց որոնումներում այլ ելք չտեսնելով, հանգել էին 9-12-րդ դարերի խորասանյան անպաճույճ ոճին վերադառնալու գաղափարին: «Բազգաշթ-ե ադաբի» (Գրական վերադարձ) անվանումն ստացած այս շարժումը, բնականաբար, չկարողացավ հաղթահարել «հնդկական» կոչված մանվածապատ ոճը և չհասավ ցանկալի պարզությանը: Նորացման առաքելությունը հանձն առան 19-րդ դարի լուսավորիչ բարեփոխականները, որոնց գործունեության ճանապարհն անցնում էր Կոստանդնուպոլսով:

Մելքոմը մեկն էր Իրանում առաջադիմության ջահը պարզած այդ գործիչներից: Իրանահայ դպրոցներում, այնուհետև Փարիզի Մուրադյան վարժարանում ուսում առնելուց հետո նա անցել էր Փարիզի համալսարանական կյանքի և եվրոպական լուսավորիչների գաղափարների բովով: Մելքոմին սրտամոտ էին արևմտահայ այն մտավորականներից շատերի ստեղծագործական մեթոդները, որոնք ևս հետևում էին իր դավանած արժեքներին:

Թեև 19-րդ դարի սկզբի ռուս-պարսկական պատերազմներից հետո պարսից պետական և մտավորական մի շարք այրեր, այդ թվում և թագաժառանգ Աբբաս Միրզան, եռանդուն ջանքեր էին գործադրում Իրանում արևմտյան տիպի կրթական հաստատություններ հիմնելու և իրանցի երիտասարդներին եվրոպական համալսարաններ ուղարկելու ուղղությամբ, սակայն արևմտյան կրթություն ստացած իրանահայ անհատների առաքելությունն առայժմ անփոխարինելի էր պարսից պետության համար: Նրանց շարքում առանձնահատուկ դեր ունեին Մելքոմ խանը և Հովհաննես խան Մասեհյանը, որոնց գործունեությունը չի սահմանափակվում շահական պալատում թարգմանչությամբ կամ տարբեր երկրներում դիվանագիտական առաքելությամբ, այլ բեկում է մտցնում ինչպես Իրան-Արևմուտք, այնպես էլ հայ-իրանական գրական առնչությունների պատմության մեջ[1]*:*

Երկրի արդիականացման համար պայքարող իրանական մտավորականության մի հատվածը, հանդիպելով հոգևորականության և պահպանողական ուժերի դիմադրությանը, վտարանդվում է Օսմանյան կայսրություն: Նրանց կողքին հայտնված Մելքոմ խանն ուշի ուշով հետևում է թուրքական իշխանությունների հռչակած «բարենորոգումների» ծրագրին և նույնը հորդորում Իրանի շահին:

Կոստանդնուպոլսում Մելքոմը նաև ի մոտո ծանոթանում է արևմտահայ մամուլին և գրական կյանքի անցուդարձին: Հատկապես նրա պիեսներում և «Զանուն» (Օրենք) թերթում ակնառու է Պարոնյանի երգիծանքին հետևելու միտու-

[1] **F. Nowrayi**, *Mirza Melkom Khan Nazemoddowleh*, Tehran: Farangis, 1973, s. 15.

մը: Այստեղ նրա քննադատության սլաքն ուղղված է անցյալի արատավոր բարքերին կուրորեն կառչած շահական վերնախավին: Ժամանակավրեպ հինը մերժելու և ծաղրելու Մելքոմի մոտեցումը մեծ տարածում է գտնում իրանցի մտավորականների շրջանում: Եվ պատահական չէ, որ 19-րդ դարավերջի, 20-րդի սկզբի իրանական մամուլի հիմնական ուղղություններից է դառնում քննադատական երգիծանքը, բարեփոխումների քարոզը: Ըստ իրանցի հեղինակ Միր Հադի Հոսեյնիի՝ 1907-1911 թթ. Սահմանադրական հեղափոխության թե՛ չափածո, թե՛ արձակ գրականությունը ծառայում էր հեղափոխական, սահմանադրական գաղափարների տարածմանը[2]*:*

Մելքոմի թողած գրական ժառանգությունն ամբողջովին պարսկալեզու է, այդ թվում՝ բարեփոխական գրական-հրապարակախոսական բովանդակությամբ քննախոսություններ՝ «Դաֆթար-ե թանզիմաթ» (Գիրք թանզիմաթի մասին), «Քեթաբչե-ե ղեյբի» (Առեղծվածային գիրք), «Շեյխ վա վազիր» (Շեյխն ու վեզիրը), «Թեաթր» (Թատրոն) և այլն:

Թատերգության ասպարեզում հիշատակելի են նրա երգիծական պիեսները («Արաբստանի նահանգապետ Աշրաֆ խանի արկածները Թեհրանում», «Զաման խան Բերուջերդիի կառավարման եղանակը և նրա արկածները», «Պատմություն Շահ Ղոլի միրզայի Քարբալա գնալու և Քերմանշահում ունեցած արկածների մասին…»): «Արաբստանի նահանգապետ Աշրաֆ խանի արկածները նրա՝ Թեհրանում իջևանած ժամանակ» կատակերգությունում Մելքոմը կրկնում է սյուժետային նույն գիծը, ինչ տեսնում ենք Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» պիեսում: Այստեղ գլխավոր հերոսը Աբիսողոմ աղայի նման գավառից՝ Արաբստանից մայրաքաղաք եկած կալվածատեր-նահանգապետ է, որի միամտությունից օգտվելով՝ արքունական չինովնիկները կողոպտում են վերջինիս, իսկ պոլսահայ մտավորականներին Թեհրանում փոխարինում են պետական մանր-մունր պաշտոնյաներ: Նա երազում է հնարավորինս արագ հեռանալ Թեհրանից՝ ազատվելու մայրաքաղաքի «գայլերից»: Նույն պատկերի ականատեսն ենք լինում Մելքոմ խանի «Զաման խան Բորուջերդիի կառավարման եղանակը և նրա արկածները» կատակերգության և Հակոբ Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան» ու «Պաղտասար աղբար» պիեսները համեմատելիս: Նույնպիսի սիրային խարդավանքներ են ու մարդկային արատավոր հարաբերություններ: Մելքոմի բնութագրած հերոսուհի Քոքեբ խանումը ոչնչով չի տարբերվում Պարոնյանի պիեսների Անուշշից կամ Սոֆիից:

---

[2] **M. Hoseyni**, «Tanzpardazan-e mashrutekhah: memaran-e tarikh-e Iran-e jaded», *Zabanvaadabiat-e farsi*, sal-e 26, sh. 84, ss. 73-96. https://jpll.khu.ac.ir/article-1-3233-fa.pdf (20.03.2025).

Միրզա Ռեզա Նայինիի հրատարակած իրանական մշակութային առաջին պարբերականը՝ «Թեաթրը» (Թատրոն, 1908 թ.)[3], տեղեկություններ էր հրապարակում իրանական ու համաշխարհային թատրոնի կյանքից: Այն ևս ուներ երգիծական ուղղվածություն և կրկին Ստամբուլում հանգրվանած իրանցիների միջոցով անուղղակիորեն ազդված էր Հակոբ Պարոնյանի հրատարակած «Թատրոն» թերթից:

Արևմուտքի և Արևելքի միջև մշակութային հաղորդակցության խորացման գործում 19-րդ դարը հանգուցային է դառնում: Փոքր Ասիայում 12-րդ դարից սկիզբ առած և շուրջ վեց հարյուր տարի տևած իրանական գրական ավանդույթի գերակայության շրջանն ավարտվում է՝ տեղը զիջելով ֆրանսիականին: 1860-1870-ականներին այստեղ հրատարակվող և ֆրանսիական մամուլի նորմերին հետևող հայերեն և հայատառ թուրքերեն պարբերականներն այլևս կրկնօրինակման աղբյուր էին դարձել և՛ թուրք, և՛ իրանցի հրապարակախոսների համար:

Մելքոմի՝ 1890-1893 թվականներին Լոնդոնում հրատարակած պարսկալեզու «Ղանուն» (Օրենք) թերթի լեզուն իր ժամանակների համար արտասովոր պարզ էր: Իրանցի գրականագետ Մոհամմադ Թաբաթաբայինի, գրում է. «Սահմանադրական շարժման սկզբին այդ գաղափարներով տոգորված բազմաթիվ գրողներ սկսեցին հետևել Մելքոմի «Ղանուն» թերթի հոդվածների ոճին՝ փոխառելով նրա շարադրանքի սկզբունքները: «Սուր-ե էսրաֆիլ» (Էսրաֆիլ հրեշտակի փողը), «Հաբլ օլ մաթին» (Անխախտ կապեր, Ղուրան), «Թարաղղի» (Զարգացում), «Թամադդոն վա մաարեֆ» (Քաղաքակրթություն և լուսավորություն) և պարսկալեզու այլ պարբերականներ ուղղակի կամ անուղղակի կերպով հետևեցին Մելքոմի ոճին»[4]:

Թաբաթաբայինի շարունակում է միտքը և գրում. «Մելքոմի լեզուն թեև զերծ չէ ուղղագրական և կառուցվածքային որոշ վրիպակներից, սակայն պարզ է, մատչելի, գրավիչ և համարվում է այդ ժամանակների պարսից պարզ արձակի առաջատարը: ...Նրա ոճը պարսից արձակի վերափոխման գործում գրական առանձին դպրոց է համարվում: Բոլոր նրանք, ովքեր հավակնում են պարսից պարզ արձակի հիմնադիրները համարվելու, մեծ մասամբ հետևել են Մելքոմի արձակի ոճին»[5]:

---

[3] **F. Pasdar**, «Gahshomar-e teatr-e Iran ta ebteday-e dahe-e panjah», https://anthropologyandculture.com/ (15.03.2025).

[4] **M. Tabatabayi**, *Majmue-e asar-e Mirza Melkom Khan*, j, 1, Tehran: Elmi,1948, s. MB.

[5] Նույն տեղում:

Արձակագիր, հրապարակախոս Մասուդ Բորբորը «Մելքոմ խանի դերը պարսից արձակի վերափոխման գործում» հոդվածում, համեմատելով Ստամբուլում հրատարակվող «Ախթար» (Աստղ) և Մելքոմի «Զանուն» (Օրենք) թերթերի ոճերը, նկատում է. «Թեև «Ախթար»-ի ոճն Իրանում ընդունված ոճի համեմատ բարվոք է, սակայն նախադասությունները դեռևս երկարաշունչ են, խճճված և ծանր…, մինչդեռ «Զանուն»-ում դրանք ավելի կարճ են, իսկ խճճվածության մասին խոսք չկա»[6]:

Նույն կարծիքին է նաև Մեհրնուշ Մահբուդը. «Միրզա Մելքոմ խանի ոճը պարզ է, կոկիկ և սահուն: Դրանում Զաջարական շրջանին բնորոշ գարդաքանդակ ու խրթին արտահայտություններ չկան»[7]:

Իսկապես, Մելքոմ խանի երկերում գրեթե բացակայում են Զաջարական շրջանի պարսից արձակին բնորոշ մանվածապատ դարձվածքները: Նրա լեզուն պարզ է, անզարդ, հստակ, սեղմ և դիպուկ, ինչը շատերի համար դառնում է ընդօրինակման աղբյուր: Այս փաստը չի վրիպել նաև պարսից գրականության «վերջին դասական» Մալեք օշ Շոարա Բահարի աչքից, որն այս կապակցությամբ գրում է. «…Մելքոմն արձակում մի նոր ոճ նախաձեռնեց, որը կարելի է «մելքոմյան դպրոց» անվանել…»[8]:

Իրանցի գրականագետների նմանօրինակ կարծիքները գալիս են ապացուցելու, որ պարսից նոր արձակի և հրապարակախոսության պարզ ոճի ձևավորման գործում իր բարերար ազդեցությունն ունեցած Մելքոմ խանը թեև գրում էր պարսկերեն, սակայն մտածում էր մայրենի հայերենով: Նրա «անզարդ, հստակ, սեղմ և դիպուկ» արտահայտությունները խորթ են պարսից լեզվամտածողությանը և ակունք են առնում հայկական մամուլի ու գրականության լեզվաշխարհից:

Թեև այս շփումներն առանձին անհատի գործունեության արդյունք էին և համակարգային բնույթ չունեին, այնուամենայնիվ Մելքոմ խանին հաջողվեց արևմտահայ գրական միջավայրում և մամուլում ձևավորված որոշ ավանդույթներ փոխադրել պարսկալեզու գրական աշխարհ և ակամա դառնալ երկու ժողովրդի նորօրյա հոգեխառնվածքի մի մասնիկը:

---

6 **M. Borbor**, «Jaygah-e Mirza Melkom Khan dar degardisi-e nasr-e Farsi», https://osanschool.ir (14.07.2023)

7 **M. Mehrnush**, «Karname-e nanayeshnamenevisan, 5», http://bamdadtheater.blogfa.com/post/106 (11. 01.2025)

8 **E. Rayin**, *Zendegi va kusheshhay-e siasi-e ow*, Tehran: Kavian, 1350, s. 4.

GARNIK GEVORGYAN

THE ROLE OF MELKOM KHAN IN ARMENIAN-IRANIAN LITERARY RELATIONS IN THE NEW PERIOD

Keywords: Melkom Khan, literary relations, Armenian-Iranian, Persian literature, Hakob Paronyan.

The article discusses the renewal of Armenian-Iranian literary relations during the second half of the nineteenth century. During this time, literary exchanges occurred between the two peoples in Istanbul, the capital of the Ottoman Empire, through Western Armenian literary figures and Iranian intellectuals in exile. Melkom Khan played a key role in them. This Armenian convert to Islam also made significant contribution to the history of the Iranian Constitutional Movement and to Iran-West diplomatic relations. Thanks to his literary work, a new style in modern Persian prose began to emerge, which Malek-osh-Shoara Bahar calls the "Melkom School." According to Mohammad Tabatabayi, all those who consider themselves the founders of simple Persian prose largely followed Melkom's prose style. His plays and the London-published newspaper "Ghanun" (Law) clearly bear the influence of Hakob Paronyan's work and the Western Armenian press.

ГАРНИК ГЕВОРКЯН

РОЛЬ МЕЛКОМА ХАНА В АРМЯНО-ИРАНСКИХ ЛИТЕРАТУРНЫХ ОТНОШЕНИЯХ НОВОГО ПЕРИОДА

Ключевые слова: Мелком Хан, армяно-иранские литературные отношения, персидская литература, Акоп Паронян.

Статья посвящена новому периоду армяно-иранских литературных отношений во второй половине XIX века. В этот период литературные контакты между двумя народами осуществлялись в столице Османской империи, Стамбуле, через западноармянских литературных деятелей и иранских интеллектуалов-эмигрантов. Мелком-хан сыграл в них ключевую роль. Мелком, принявший ислам, также внес большой вклад в историю Иранского конституционного движения и дипломатических отношений Ирана с Западом. Благодаря его литературной деятельности по модернизации персидской прозы зародился новый стиль, который Малек-ош-Шоара Бахар называет «школой Мелкома». По словам Мохаммада Табатабайи, все те, кто считает себя основоположниками «простой» персидской прозы, в значительной степени следовали прозаическому стилю Мелкома. В его пьесах и издаваемой в Лондоне газете «Ганун» («Закон») явно чувствуется влияние творчества Акопа Пароняна и западноармянской прессы.

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՎԵԼՅԱՆ*

DOI: 10.57155/QMCL6452

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՅԱՌԻԿ *ԴԵՍՊԱՆԻ* ՀԵՏՔԵՐՈՎ. ՊՈՂՈՍ ԳՈՒՅՈՒՃՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Բանալի բառեր՝ *Օսմանյան կայսրություն, Հայոց ցեղասպանություն, աքսոր, ականատես-վերապրողներ, թուրքախոս արևմտահայեր, Արևելյան (Հայկական) լեգեոն, հայատառ թուրքերեն դեսպաններ, Կեսարիա, Կահիրե։*

Օսմանյան կայսրության ձուլողական քաղաքականության հետևանքով արևմտահայությանը պարբերաբար վիճակված էր ենթարկվել էթնիկ զտումների, դավանափոխության, ծանր հարկատեսակների, հարստահարումների, ինչպես նաև զրկվել մայրենի լեզվով հաղորդակցման հնարավորությունից։ Ոչ մուսուլման ժողովուրդներին միատարր դարձնելու օսմանյան վերնախավի հետևողական քայլերը նպատակ էին հետապնդում բնաջնջելու նրանց ինքնության՝ պետականության հիմքերին «վտանգ սպառնացող» դրսևորումները։ Օսմանյան կայսրության կենտրոնական և արևմտյան գավառներում բնակվող արևմտահայության մի զգալի հատվածի համար հայերենի բարբառների անդամահատման հաշվին թուրքերենն աստիճանաբար դառնում էր հաղորդակցության գերակա լեզու։ Դեռևս 14-րդ դարում սկիզբ առած հայատառ թուրքերեն գրականության ստեղծումն ուղղված էր արևմտահայության թուրքախոս դարձած հենց այդ շրջանակի ազգային և մշակութային ինքնության պահպանմանը։

Մեր ուսումնասիրությունը վերաբերում է Հայոց ցեղասպանության ականատես-վերապրող, Արևելյան (Հայկական) լեգեոնի զորական Պողոս Գույումճյանի՝ 1921 թվականին Կահիրեում հայատառ թուրքերեն (թուրքերենի կեսարիայի բարբառով) գրած նորահայտ դեսպանի քննությանը։

* ՌՀՀ արևելագիտության ինստիտուտ, պ.գ.թ., sergey.manvelyan@rau.am, հոդվածը ստանալու օրը՝ 17 հունվարի, 2026, հոդվածը գրախոսելու օրը՝ 8 մայիսի, 2026։

Արևելյան բանաստեղծության վիպական բնույթի այս գրական տեսակն ավանդաբար փոխանցվել է բանավոր ձևով և հայկական միջավայր ներթափանցել իրանական և օսմանյան դիվանի՝ պալատական պոեզիայի միջոցով: Ժամանակի ընթացքում, սակայն, դեսթանները գրի են առնվել, ինչպես օրինակ՝ Հայոց մեծ եղեռնի տարիներին իրենց կրած դժվարությունների ու տառապանքերի մասին պատմող արևմտահայ գաղթականների գրած թուրքալեզու դեսթանները:

Հայատառ թուրքերեն գրականության հետազոտող Հասմիկ Ստեփանյանը մատենագիտական տեղեկություններ է հաղորդում տարբեր հայաշատ գաղութներում տպագրված դեսթանների վերաբերյալ, ինչպիսիք են՝ Սարգիս Սերդարյանի «Դեսթան դժբախտության»[1], Հակոբ Պաղունու «Դեսթան 1915-1929 թվականներին հայ ազգին պատահած դժբախտության»[2], Մեննուշ Իմանյանի «Այնթապի դեսթանները»[3] և այլն[4]: Բանագետ Վերժինե Սվազլյանն իր բանահավաքչական աշխատանքների ընթացքում նույնպես անդրադարձել է այս ժանրին՝ հայրենադարձ ականատես-վերապրողներից գրի առնելով արևմտահայության հերոսամարտերին (Զեյթուն, Հաճն, Մուսա լեռ և այլն) և դերզորյան կոտորածներին նվիրված թուրքալեզու դեսթաններ[5]: Հայատառ թուրքերեն դեսթաններ է հրատարակել նաև Ստամբուլի «Արաս» հայկական հրատարակչությունը թուրք հասարակագետ Այհան Աքթարի խմբագրությամբ և առաջաբանով[6]: Հատուկենտ ժողովրդական և աշուղական բնույթի թուրքալեզու դեսթաններ կան նաև տարբեր հայրենակցական միությունների հրատարակած ուսումնասիրություն-հուշամատյաններում[7]:

---

1 **Ս. Սէրտարեան**, *Մի՛հնէթ տէսթանը*, Երուսաղէմ, 1927:

2 **Յ. Պաղունի**, *1915տէն 1929ա գատար էրմէնի միլլէթին ֆէլաքէթինին տէսթանը*, Հալէպ, 1929:

3 **Մ. Իմանեան**, *Այնթապ տէսթանլարը*, Հալէպ, 1931:

4 **Յ. Ա. Ստեփանեան**, *Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727-1968)*. եռալեզու հրատարակութիւն (հայ., թուրք., ֆր.), Ստանպուլ, 2005, № 1154, 1477, 1511, 1528, 1544, 1568, 1595, 1604, 1639, 1641, 1642, 1677, 1679, 1696 և այլն:

5 **Վ. Սվազլյան**, *Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը*, Երևան, 1994, էջ 154-162, **Վ. Սվազլյան**, *Հայոց ցեղասպանություն. ականատես-վերապրողների վկայություններ*, Երևան, 2001, էջ 588-597:

6 **A. Aktar**, *Ermeni evine figan kuruldu. 1915 destanları ve Halep*, İstanbul, 2020.

7 **Գր. Հ. Գալուստեան**, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն*, Նիւ Եորք, 1934, էջ 286-289, 535-555, **Ա. Ալպօյաճեան**, *Պատմութիւն հայ կեսարիոյ. տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն*, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1552-1581, **Գ. Ա. Սարաֆեան**, *Պատմութիւն Անթէպի հայոց*, հ. Բ, Լոս Անճելըս-Գալիֆորնիա, 1953, էջ 408-411:

Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողների թողած հայատառ թուրքերեն դեսթանների շարքում Պողոս Գույումճյանի դեսթանն առանձնանում է առաջին հերթին իր ընդարձակ ծավալով (110 տուն)՝ ի տարբերություն վերոհիշյալ մյուս տպագիր դեսթանների, որոնց տների թիվը չի գերազանցում 50-60-ը:

Տասնամյակներ շարունակ Պողոս Գույումճյանի ձեռագիր դեսթանը պահվել է իր ընտանեկան պահոցում[8]*: Դեսթանի գիտական հրատարակությունը հեղինակի կրտսեր որդու՝ Սիդնեյում բնակվող, մասնագիտությամբ փորագրիչ, դիզայներ Հակոբ Գույումճյանի և իր տիկնոջ՝ երգչուհի Արաքս Մանսուրյանի նախաձեռնությամբ և տողերիս հեղինակի թարգմանությամբ լույս է տեսել երկու անգամ՝ առաջինը՝ 2022 թվականին, Սիդնեյում, երկրորդը՝ 2023 թվականին, Երևանում: Մասնավորապես՝ վերջին՝ լրամշակված հրատարակության մեջ զետեղվել են ձեռագիր բնագրի նմանահանությունը և հայատառ թուրքերեն ձեռագիր բնագրից փոխադրությունը ժամանակակից թուրքերեն, թուրքերենից թարգմանությունը արևելահայերեն և ծանոթագրությունները, ինչպես նաև անգլերեն և արևմտահայերեն թարգմանությունները և լուսանկարներ*[9]*: Սույն դեսթանը կարոտ էր համակողմանի քննության, քանի որ գրքի առաջաբանը ներկայացված է բացառապես հեղինակի որդու խոսքով:*

Դեսթանում հեղինակն անդրադառնում է 1914-1921 թվականներին Կեսարիա քաղաքից մինչև Կահիրե ընդգրկող գաղթականի իր ուղուն: Հատկանշական են դեսթանում առկա հայերեն փոքրաթիվ բառերը, որոնք հրատարակության մեջ առանձնացված են շեղագիր տառատեսակով, ինչպես օրինակ՝ ***հայ,***

---

[8] Հեղինակի կրտսեր որդու որոշմամբ՝ այդ ընտանեկան մասունքը գրի լույսընծայումից հետո նվիրաբերվել է տողերիս հեղինակին:

[9] **Պ. Գույումճեան**, *Տառապանքիս ուղին՝ հաւատքի լոյսով*, կազմող՝ ***Յ. Գույումճեան***, հայատառ թրքերէն ձեռագիր բնագրէն փոխադրութիւնը ժամանակակից թրքերէն, թրքերէնէն թարգմանութիւնը արեւելահայերէն եւ ծանոթագրութիւնները՝ *Ս. Մանուէլեանի*, արեւելահայերէնէն թարգմանութիւնը անգլերէն՝ *Ն. եւ Յ. Գույումճեաններու*, անգլերէնէն թարգմանութիւնը արեւմտահայերէն՝ *Ն. Մկրտիչեանի*, Երեւան, 2023:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ զույգ հրատարակություններն իր ալեզարդ տարիքում խնամքով կազմել, էջադրել և ձևավորել է Հակոբ Գույումճյանը: Արևելահայերենի բաժինը ձևավորել է իր տղան՝ Ջոն Գույումճյանը: Գրքի շապիկի ետևում Հ. Գույումճյանի ձևավորմամբ տեղ է գտել իրենց տոհմական խորհրդանշանը՝ արևի ճառագայթներով եզերված մի ջրհոր՝ կենտրոնում Գույումճյան (թուրք. «**kuyucu**» [fույուջու] - ջրհոր պատրաստող վարպետ) ազգանվան «ԿԳ» անգլերեն և արևմտահայերեն սկզբնատառերով:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում հայատառ թուրերեն գրականության ուսումնասիրող, թուրքագետ Հասմիկ Ստեփանյանին՝ մեր ուսումնասիրությանն անդրադառնալու համար (տե՛ս **Յ. Ստեփաեեան**, *Հայատառ թրքերէն ձեռագրի հրատարակութիւն Սիոնիի մէջ. 1915ի տեղահանութեան զոհի տառապանքի «տեսթան»ը*, «Մարմարա» խաղաթական, հասարակական օրաթերթ, Իսթանպուլ, 2 Մարտի, 2026, էջ 2):

*կամավոր, քրիստոնեությանն առնչվող բառեր՝ **պսակ, Աստվածածին,** ամսանուններ՝ **օգոստոս, հոկտեմբեր,** և այլն: Դեսթանի կարևոր առանձնահատկություններից մեկը հեղինակի հետևողականությունն է իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությանը հավատարիմ մնալու հարցում: Այս սկզբունքի պահպանումը հնարավորություն է ընձեռում ճշգրտելու պատմական որոշ եղելությունների ժամանակագրական սահմանները՝ նպաստելով դրանց գիտական արժևորմանն ու համակարգված ուսումնասիրությանը:*

Պողոս (իսկական անունը՝ Գևորգ) Գույումճյանը ծնվել է 1893 թվականին (ամսաթիվն անհայտ է) Անկարայի վիլայեթի Կայսերի (Կեսարիա) քաղաքում (այժմ համանուն նահանգի կենտրոնն է): Նա ընտանիքի երրորդ զավակն էր, ուներ երկու քույր՝ Գյուլխադիր և Նարին: Վեց ամսականում խոլերայի համաճարակի պատճառով կորցնում է ծնողներին: Ընտանիքի բարեկամներից Շալճյան ամուսինները, որոնք անզավակ էին, որդեգրում են Գևորգին՝ նրան վերանվանելով Պողոս Շալճյան: Տարիներ անց պատանի Պողոսը հանկարծակի լսում է իր որդեգրման վերաբերյալ ծնողների գաղտնի զրույցը: Քսան տարեկանում նույն չարաբաստիկ խոլերայի հետևանքով նա կորցնում է նաև իր որդեգիր ծնողներին: Հետագայում՝ 1930 թվականի դեկտեմբերի 31-ին, երբ նա եգիպտական հպատակություն է ստանում, ականջալուր լինելով իր քույրերի խնդրանքին, վերականգնում է իր բուն ազգանունը՝ որպես Գույումճյան ընտանիքի միակ արու զավակ և պահպանում Պողոս անունը՝ ի հարգանս իր որդեգիր ծնողների:

Աքսորից առաջ Պողոսն ապրում էր Սեբաստիայի Զիլե (Զելա) քաղաքում, որտեղ խանութ ուներ: Տեղահանության վերաբերյալ լուրը նա գաղտնի ձևով իմանում է մի թուրք ոստիկանից, որը ճանաչում էր իր որդեգիր ծնողներին.

5.[10] **Ժամը հինգ անց կեսին մի սեռժանտ եկավ.**
– Քեզ փնտռում են, գլուխդ ազատի՛ր, փախչի՛ր:
Խնդրում եմ Աստծուն ինձ թռչուն դարձնի,
Թռչեմ գնամ ես իմ հայրենիք[11]**:**

Ոստիկանությունը հրահանգ էր ստացել բերման ենթարկել հայ տղամարդկանց:

[10] Այս և հաջորդ մեջբերվող բառատողերից առաջ նշված են դեսթանի տների համարները:
[11] Նկատի ունի Կեսարիան:

Պողոսն անհապաղ մեկնում է Կեսարիա, որտեղ հարևաններից մեկը նրան խորհուրդ է տալիս ամուսնանալ իրենց այրի հարևանուհու՝ տիկին Մաքրուհու ավագ դստեր՝ Սիրանույշի հետ՝ աքսորի ճանապարհին ստանձնելով նրա ընտանիքի պատասխանատվությունը.

16. Քահանան եկավ մեզ պսակադրելու,
Սկսեցին ժողովրդին տեղահանել,
Ոստիկանները սկսեցին տները խուժել:
– Աստված մեծ է, – ասի, – դու պսակն[12] առա:

Նրանց պսակադրության արարողությունը տեղի է ունենում 1914 թվականի օգոստոսի 18-ին պատմական շուկայի հարևանությամբ տեղակայված Սուրբ Աստվածածին եկեղեցում[13]:

Տեղական իշխանությունները հայտարարում են, որ հավատափոխության պայմանով հայ բնակչությունը կարող է խուսափել աքսորից: Սակայն Պողոսը մերժում է իսլամ ընդունելու առաջարկը և վարձելով Աբրազ անունով մի կառապանի՝ իր կնոջ, զոքանչի ու քենու հետ միասին բռնում է աքսորի ճանապարհը: Քաղաքի դատարկվելուց ընդամենը մի քանի օր անց տեղեկություններ են տարածվում այն մասին, որ Կեսարիայում հավատափոխ եղած հայերը նույնպես կոտորվել են:

Դիշերը ճանապարհին անհասկանալի ձայներ են լսվում. իրավիճակը պարզելու նպատակով կառապանը փորձում է ձիով շարժվել այդ ձայների ուղղությամբ, սակայն սաստիկ քամու պատճառով չի կարողանում անջատել ձիու սանձը կառքից: Այդ պահին Պողոսը միջամտում է և բռնելով սանձը մտքում աղոթում. «Յանուն Յիսուս Քրիստոսի», որից հետո հաջողվում է սանձն արձակել: Այնուհետև կառապանը, անվտանգության նկատառումներից ելնելով, իր մոտ գտնվող ատրճանակը հանձնում է Պողոսին և գնում դեպի լսվող ձայները: Պարզվում է, որ դրանք ճանապարհից ուժասպառ եղած հայ գաղթականների ձայներն են[14]:

---

[12] **«Պսակ»** բառը բնագրում գրված է հայերեն:

[13] Հայաթափումից հետո եկեղեցին լքվում է և որոշ ժամանակ օգտագործվում որպես մարզասրահ: Ավելի ուշ, Կայսերիի բաղաքային իշխանությունների որոշմամբ եկեղեցին վերանորոգվում է և 2020 թվականի հունվարից գործում է որպես բաղաքային գրադարան: 2022 թվականի սեպտեմբերի 21-ին տողերիս հեղինակը խորհրդանշական այցով եղել է գրադարանի վերածված այդ եկեղեցում:

[14] **Պ. Գույումճեան**, նշվ. աշխ., էջ 14, 15:

Պողոսը, որպես խոր հավատացյալ, գաղթի ողջ ճանապարհին ձեռքին է պահում հայատառ թուրքերեն Աստվածաշունչը[15]: Հ. Գույումճյանի վկայությամբ՝ նա, կյանքի վերջին ինն ամիսներին, անկողնուն գամված ընթերցում էր Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթաշարը, որը նրա համար «սփոփանք եւ հոգեւոր սնունդ» էր[16]: Հատկանշական է, որ դեսթանի քառատողերից շատերի չորրորդ տողում Պողոսը հաճախ դիմում է Աստծո ողորմածությանը, ինչպես օրինակ՝ «Տե՛ր, ողորմի՛ր Քո ծառաներին»[17], «Տե՛ր, ողորմի՛ր Դու այս ազգին»[18], «Փրկի՛ր մեզ, Աստվա՛ծ, թուրքի զուլումից»[19], «Տե՛ր իմ, օգնի՛ր բոլոր հայերին»[20], «Աստված լավ մարդու կարոտ չթողնի»[21], «Աստված մեծ է»[22] և այլն:

Կառապանից բաժանվելուց հետո Պողոսն իր նորաստեղծ ընտանիքի հետ ոտքով շարունակում է ճանապարհը՝ հասնելով Փոզանթը, այնուհետև Տարսոն, Օսմանիե և Քաթմայի անապատ: Այդ ընթացքում գաղթականների շրջանում խոլերայի համաճարակ է տարածվում.

---

[15] *Քիթապը Մուգատտէս եա՛նի ՚Ահտը ՚Աթիգ վէ ՚Ահտը Ճէտիտ* (ան ասըլ մուհաուէր պուլունտըղը ՚Իպրահիմ վէ Քիլտանի վէ Եունանի լիսանլարընտան պիք թէրճէմէ), Իսթանպօլ, Յակոբ Մատթէոսեան մաթպա՛ասը, 1915, 1177 սայֆա [*Աստվածաշունչ՝ Հին և Նոր կտակարաններ* (թարգմանություն եբայերեն, հաղիերեն և հունարէն բնագրերից), Հակոբ Մատթեոսյանի տպարան, 1915, 1177 էջ (առանձին համարակալված՝ 875, 273, 9 և չհամարակալված՝ ընդհանուր 20 էջ)]: Ըստ Հ. Ստեփանյանի՝ նույն թվականին հիշյալ հրատարակչությունում երկու Աստվածաշունչ է լույս տեսել, սակայն էջերի բանակական տարբերությամբ (տե՛ս **Յ. Ա. Ստեփանեան**, *Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727-1968)*, № 1466 ա, 1466 բ, էջ 339, 340): 2023 թվականին Հակոբ Գույումյանն այդ հաստափոր և մեծադիր Աստվածաշունչը նվիրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանին՝ հետևյալ մակագրությամբ. «Սիրով նվիրում եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանին հորս՝ Պողոս Գույումյանի Աստուածաշունչը, որն իր հետ անցել է Մեծ եղեռնի դժոխային ճանապարհը՝ Հակոբ Գույումյան, 31/07/2023, Սիտնի, Աւստրալիա» (տե՛ս *Քիթապը Մուգատտէս եա՛նի ՚Ահտը ՚Աթիգ վէ ՚Ահտը Ճէտիտ*, տիտղոսաթերթից առաջ գտնվող երկու չհամարակալված էջերից առաջին էջին): Հարկ է նշել, որ Պողոս Գույումյանի և իր ընտանիքի անդամների ծննդյան, մահվան, ամուսնության և այլ տվյալները վերցված են հիշյալ Աստվածաշնչի Հին և Նոր կտակարանների միջև համարակալում չունեցող «Թարիխի ՚ա՛իլէ. իզտիվաճ/թէվէլլիւտաթ/վէֆիյաթ» [«Ընտանեկան արձանագրություն. ամուսնություն/ծնունդ/մահ»] բաժնում իր և հաջորդ սերունդների առած նշումներից:

[16] **Պ. Գույումեան**, նշվ. աշխ., էջ 11:

[17] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 1, 2, 7, 8, 66:

[18] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 9, 19, 22, 23:

[19] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 11, 12:

[20] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 41-44, 46, 48, 50, 51:

[21] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 99, 100:

[22] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 16, 39, 45, 91, 103:

27. Քաթմայի անապատում խոլերա սկսվեց,
Անիծյալ գաղթականությունը մեր գլխին թթվեց,
Մի օրում վաթսուն հայ[23] մահացավ,
Տե՛ր ազատի՛ր մեզ այս ցասումից:

Պողոսին դժվարությամբ է հաջողվում փրկել ընտանիքը Քաթմայի անապատում մոլեգնող մահվան ճիրաններից և միաժամանակ հաստատվել Հալեպի մերձակայքում՝ վրանի տակ: 1914 թվականի հոկտեմբերի 3-ին նրանք, «վահշի» (թուրք.՝ «վայրի») արաբների օգնությամբ, վեց լիրայի դիմաց տեղափոխվում են Հալեպ: Քսանհինգ օր անց նրանք կրկին ճամփա են ընկնում դեպի Սեբիլի անապատ: Պողոսը շուտով դիմում է փախուստի՝ հասնելով Հալեպ, որտեղ գումար է վաստակում և, արաբ «սըմսարներին» (թուրք.՝ «ֆինանսական գործերով միջնորդ») կաշառելով, Սեբիլի անապատից իր ընտանիքը կրկին տեղափոխում Հալեպ, որտեղ նրանք մնացել են մինչև 1916 թվականի հունվարը.

41. Դուրս եկա տասնհինգ ամիս անց,
Մարմինս հալումաշ էր եղած,
Դեմիս գույնը դարձել էր դեղին,
Տե՛ր իմ, օգնի՛ր բոլոր հայերին[24]:

Ըստ երևույթին, Պողոսը միացել էր Սիրիայում և Լիբանանում ծայր առած արաբական ընդհատակյա ազգային շարժմանը և ներգրավվել Դամասկոսում կռվող զինյալների համար սննդի ապահովման գործում: Այդ նույն ժամանակաշրջանում Սիրիայում տեղակայված 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի որդեգրած հատուկ տնտեսական քաղաքականության հետևանքով նրա ենթակայության տակ գտնվող նահանգներում ավելի քան 300.000 մարդ սովամահ է լինում[25]:

46. Ձիվորների կեսը սովից մահացավ:
– Տարոսը մեզ, – ողջերն ասացին:
Մեռնողների կանայք այրի մնացին,
Տե՛ր իմ, օգնի՛ր բոլոր հայերին[26]:

---

[23] **«Հայ»** բառը բնագրում գրված է հայերեն:
[24] **«Հայ»** բառը բնագրում գրված է հայերեն:
[25] **Ռ. Կարապետյան**, *Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն*, Երևան, 2019, էջ 159:
[26] **«Հայ»** բառը բնագրում գրված է հայերեն:

Պողոսը, սովի չմատնվելու համար, մի օր ստիպված է լինում ծառի ճյուղ ծամել, մյուս օրը՝ խոտ խաշել, ջանալով պահպանել իր գոյությունը[27]*:*

1916 թվականի հունիսի 5-ին սկսված Արաբական ապստամբության ժամանակ անգլիացիների աջակցությամբ և Հուսեյնի ու նրա երեք որդիների հրամանատարությամբ, արաբներին հաջողվում է ջախջախիչ հարվածներ հասցնել օսմանյան բանակին և ձեռնամուխ լինել Սիրիայի ազատագրմանը:

Պողոսն իր զինակիցների հետ վեց ամսով տեղափոխվում է Ջարաբուլուս, որտեղ ականատես է լինում, թե ինչպես «խոզ թուրքերն առիթը բաց չեն թողնում» առևանգելու գեղեցիկ հայ աղջիկներին[28]*: 1917 թվականի սկզբին, անգլիացիների առաջխաղացման լուրը լսելով, մարթինի հրացանը ձեռքին՝ Պողոսը շուտով վերադառնում է Հալեպ: Քաղաքը վերջնականապես ազատագրվում է 1918 թվականի հոկտեմբերի 25-ին՝ Հալեպից հարավ՝ Խան Թումանի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտի արդյունքում.*

56. Սկսեցին ռմբակոծել Հալեպի ներսում,
Իմֆնաթիոներ են թռչում երկնքում,
Բոնակալ թուրքն աչիս փախչել է ուզում,
«Ալլա՛հ, Ալլա՛հ» կանչելով՝ թնդանոթն են առնակում:

58. Անգլիացիները եկան ու Հալեպ մտան,
Խեղճ գաղթականի վիճակը տեսան,
Հագուստ չունեին, հագուստ տվեցին,
Անգլիացին գաղթականների խաղցը հագեցրեց:

Պողոսը գրում է, որ այդ օրերին իր առողջական վիճակը կտրուկ վատթարացել էր՝ ծնկի վիրահատությունից հետո նա շուրջ երկու ամիս մնում է հիվանդանոցում[29]*: Շուտով Հալեպում, արաբների նախաձեռնությամբ սկսված անկարգությունների հետևանքով զոհվում է մոտ 600 հայ.*

65. Հալեպը մնաց անգլիացու ձեռին,
Արաբը հային նեղացրեց կրկին,
Խեղճ հայերի[30] վրա դանակ խաշեցին,
Տե՛ր Աստված, փրկի՛ր մեզ այս վիճակից:

---

[27] **Պ. Գույումճեան**, նշվ. աշխ., հետևյալ տունն է՝ 47:
[28] **Նույն տեղում,** հետևյալ տունն է՝ 51:
[29] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 60-63:
[30] **«Հայ»** բառը բնագրում գրված է հայերեն:

Այդ օրերին ավելի քան 4.000 հայ և շուրջ 600 սիրիացի զինվորագրվում են «Արևելյան (Հայկական) լեգեոնին», որը ստեղծվել էր Ֆրանսիայի Ռազմական նախարարության ղեկավարությամբ և նախատեսված էր Կիլիկիայի ու Սիրիայի ազատագրման նպատակով.

69. Ադանայում վրանի տակ մնացի,
Գաղթականները փայտ են կրում մեջիին,
Անիծյալ ֆրանսիացին անիծյալ օրերի,
Հայերը[31] ֆրանսիացուն կամա[վ]որ[32] գնացին:

70. Անտեր ենք, չունենք մեզ սատար,
Մեր սիրտն է արդեն ավեր ու ավար,
Վեց հարյուր հոգի մենք զոհ տվեցինք,
Տե՛ր, ողորմի՛ր բոլոր ծառաներիդ:

Պողոսը, իր հայրենակիցների մեծ մասի նման, դեռևս չթոթափած հայրենազրկման ցավը, խանդավառվելով ֆրանսիական իշխանությունների՝ Կիլիկիան ազատագրելու խոստմամբ, մասնակցում է «Արևելյան լեգեոնի» և թուրք-գերմանական բանակի միջև ընթացող մարտերին[33]: Նա նկարագրում է, թե ինչպես Ադանայում լեգեոնականները ձմռան ցրտին և անձրևի տակ հյուղակներ էին կառուցում, որտեղ ապաստանած հայ գաղթականները, ամռանը հաճախ մահանում էին՝ արևի տապից շնչահեղձ լինելով[34]: Իր կենցաղային տարրական կարիքները՝ սնունդը և տան վարձը հոգալու նպատակով Պողոսը ստիպված է լինում զբաղվել տարատեսակ աշխատանքներով, օրինակ՝ Ադանայի շրջակայքում բնակվող յորյուքներից[35] մածուն բերել և քաղաքում վաճառել կամ միրգ վաճառել[36]:

Շուտով Պողոսը փոստով նամակ է ստանում Կահիրեում հաստատված իր քրոջ՝ Նարինի ամուսնուց՝ Հակոբ Կյուրյուլյանից, որն իր փեսային կնոջ հետ

---

[31] **«Հայ»** բառը բնագրում գրված է հայերեն:
[32] **«Կամա[վ]որ»** բառը բնագրում գրված է հայերեն:
[33] **Նույն տեղում,** հետևյալ տներն են՝ 73-78:
[34] **Նույն տեղում**, հետևյալ տներն են՝ 71, 72:
[35] **Յորյուքներ՝** օղուզաթուրմենական ծագում ունեցող բոչվոր ցեղ: 11-րդ դարում Կենտրոնական Ասիայից գաղթել են Փոքր Ասիա և Բալկաններ: Այսօր էլ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Ապրում են վրանների տակ՝ հարթավայրերում կամ բարձրադիր վայրերում:
[36] **Նույն տեղում,** հետևյալ տներն են՝ 86, 87, 89:

միասին կանչում է եգիպտոս: Այս հրավերը դառնում է փրկության փարոս շուրջ յոթ տարի աստանդականի կյանքով ապրող երիտասարդ զույգի համար:

1921 թվականի օգոստոսին Պողոսը և նրա կինը Մերսինի նավահանգստից նավ են նստում և իննօրյա նավարկությունից հետո հասնում են Ալեքսանդրեթ, որը 1920 թվականից գտնվում էր Ֆրանսիայի մանդատին հանձնված Սիրիայի կազմում: Երկու օր «Ադանա» հյուրանոցում օթևանելուց հետո նրանք ճանապարհ են ընկնում Կահիրե, որտեղ Պողոսն անմիջապես ձեռնամուխ է լինում գրելու իր անցած ճանապարհի վերաբերյալ հիշյալ դեսթանը: Նա գրական ձիրքով օժտված անձնավորություն էր, ինչի վկայությունն են դեսթանի ազատ էջերին գրված մյուս հայատառ թուրքերեն և հայերեն չափածո գործերը:

Վերջապես, խաղաղության պայմաններում ծնվում են Պողոսի և Սիրանույշի զավակները՝ Հարություն (1922, Կահիրե – 2005, Սիդնեյ) և Հայկ (1924, Կահիրե – 2005, Կահիրե) Գույումճյանները:

1926-1932 թվականներին Կահիրեի հյուսիսում գտնվող Ջեզիրեթ Բադրան թաղամասում գործում էր Պողոսի նպարեղենի խանութը, որի ճակատին ամրացված էր եռալեզու (արաբերեն, ֆրանսերեն, հայերեն) ցուցանակ: Պողոսի ընտանեկան պահոցում պահպանված լուսանկարներից մեկի[37] շնորհիվ հայտնի է, որ ցուցանակին խոշոր տառերով գրված էին խանութի անվանումը՝ «Նպարավաճառ Արարատ», ինչպես նաև սեփականատիրոջ՝ Պողոս Գույումճյանի անվան սկզբնատառը և ամբողջական ազգանունը:

Պողոսն իր ընտանիքի ապրուստը հոգալու նպատակով անքուն գիշերներ է լուսացնում՝ թարմ սուրճը խարկելով, աղալով, այնուհետև փոքրիկ թղթե տոպրակների մեջ լցրած՝ ամբողջ օրը փողոցները շրջելով ու վաճառելով: Կարճ ժամանակ անց նա աշխատանքի է ընդունվում «Մաթոսեան Անանուն Ընկերութիւն» ծխախոտի տան մասնաճյուղում (կենտրոնատեղին՝ Ալեքսանդրիա), որը հիմնադրվել էր 1880 թվականին Կարապետ Մաթոսյանի կողմից և այդ շրջանում Կահիրեում առաջնային դիրք ուներ՝ աստիճանաբար իր մեջ ձուլելով ծխախոտի մյուս տները[38]: 1937 թվականին տեղի ունեցած հրդեհի հետևանքով գործարանը փակվում է, և Պողոսն աշխատանքի է անցնում 1924 թվականին Ղամրա (Համրա) թաղամասում հիմնված Թիթեղյա տուփեր պատրաստող նշանավոր Ջայլաքյան գործարանում[39], որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջին օրերը:

---

[37] **Նույն տեղում**, էջ 117: Լուսանկարում Պ. Գույումճյանը կանգնած է խանութի առջև:

[38] **Ա. Ալպոյաճեան**, *Արաբական միացեալ հանրապետութեան եգիպտոսի նահանգը եւ հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը)*, Գահիրէ, 1960, էջ 191, 192:

[39] **Նույն տեղում**, էջ 193:

1939 թվականի նոյեմբերի 18-ին անժամանակ մահանում է Պողոսի կինը՝ Սիրանույշը: 1941 թվականի ապրիլի 27-ին Պողոսն ամուսնանում է Կեսարիայից գաղթած Վերժինի (1906, Թալաս – 1988, Սիդնեյ) հետ, նրանց ամուսնությունից ծնվում է Հակոբ Գույումճյանը (1944, Կահիրե): Երեսունհինգամյա Վերժինն աքսորի և կոտորածի ժամանակ կորցրել էր իր ծնողներին՝ Արթին և Թագուհի Աճեմյաններին, ամուսնուն և դստերը:

Պողոսն իր մահկանացուն կնքում է 1963 թվականի ապրիլի 17-ին, 70 տարեկանում: Նրա մարմինն ամփոփված է Կահիրեի հայոց գերեզմանատանը:

Ամփոփում. *Պողոս Գույումճյանի հայատառ թուրքերեն դեսթանն ուշագրավ տեղեկություններ է պարունակում Կեսարիայի հայերի տեղահանման, հայ գաղթականության ընդհանուր վիճակի և գաղթակայանների, Արևելյան (Հայկական) լեգեոնի հայ կամավորների գործուն մասնակցության, եգիպտահայ համայնքում հայ գաղթականության ներգրավվածության վերաբերյալ: Խնդրո առարկա դեսթանի ուսումնասիրությունը լրացնում է Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողների գրավոր վավերագրերի շարքը: Այն արժեքավոր է նաև հայատառ թուրքերեն գրականության մեջ նմանատիպ հազվագյուտ դեսթանների բազմակողմանի՝ պատմական, լեզվաբանական և ազգային ինքնության ուսումնասիրության տեսանկյունից:*

SERGEY MANVELYAN

FOLLOWING THE TRACES OF A UNIQUE *DESTAN* IN TURKISH LANGUAGE IN ARMENIAN LETTERS: THE ODYSSEY OF BOGHOS KOUYOUDJIAN

Key words: Ottoman Empire, Armenian Genocide, exile, eyewitness survivors, Turkish-speaking Western Armenians, Eastern (Armenian) Legion, *destan*s in Turkish language in Armenian letters, Kayseri, Cairo.

This article is dedicated to the study of an epic poem (*destan*) written in Turkish language (Kayseri dialect) in Armenian letters in Cairo in 1921 by Boghos Kouyoudjian (1893, Kayseri – 1963, Cairo), an eyewitness survivor of the Armenian Genocide and a soldier in the Eastern (Armenian) Legion. The author provides chronological account of his exile from Kayseri to Cairo between 1914 and 1921 and the hardships he endured during that period. This poem differs from other accounts of the Armenian Genocide eyewitnesses, and is the longest of the rare Armenian-Turkish *destan*s known to us (consisting of 110 strophes). A scientific edition of the

destan was published in Sydney in 2022 and in Yerevan in 2023 on the initiative of the author's youngest son Jakob P. Kiujian. The Armenian translation was completed by me and the English translation by Jakob P. Kiujian. Kiujian's *destan* enriches our knowledge of Turkish language written in Armenian letters literature, and is also a first-hand documentary account of the Armenian Genocide written by a survivor.

СЕРГЕЙ МАНВЕЛЯН

ПО СЛЕДАМ РЕДКОГО АРМЕНОГРАФИЧЕСКОГО *ДЕСТАНА* НА ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ. ОДИССЕЯ ПОГОСА ГУЮДЖЯНА

Ключевые слова: Османская империя, Геноцид армян, ссылка, выжившие очевидцы, туркоязычные западные армяне, Восточный (Армянский) легион, арменографические дестаны на турецком языке, Кесария, Каир.

Статья посвящена изучению эпической поэмы (дестан) на арменографическом турецком диалекте Кесарии, в 1921 году в Каире Погосом Гуюджяном (1893, Кесария – 1963, Каир), очевидцем, пережившим Геноцид армян, солдатом Восточного (Армянского) легиона. Автор в хронологическом порядке описывает свой путь: депортацию из Кесарии в Каир в 1914-1921 годах и сопутствующие ей невзгоды. Эта поэма отличается от других документов письменного наследия очевидцев Геноцида армян и является самым большим (110 строф) среди известных нам и редко встречающихся арменографических дестанов на турецком языке. Научное издание дестана было осуществлено в 2022 году в Сиднее, а затем в 2023 году в Ереване, по инициативе младшего сына автора Акопа Гуюджяна; перевод на армянский язык выполнен мной, перевод на английский — сыном автора. Дестан Гуюджяна пополняет наши знания об арменографической литературе на турецком языке, а также является документальным письменным свидетельством о Геноциде армян из первых рук выжившего очевидца.

ՀԱՍՄԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

DOI: 10.57155/WHEY5554

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ» ԵՐԿԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Բանալի բառեր՝ *Միջին հայերեն, բժշկարան, Բաբկեն Զուգասզյան, բառապաշար, բժշկական տերմին, փոխառություն, նորակազմություն, նորիմաստ բառ, անստույգ ծագման բառ:*

*Միջնադարյան բժշկարանների շարքում առանձնանում է **«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»**[1] երկը՝ որպես ձիաբուծության և ձիաբուժության հարցերին նվիրված ձեռնարկ: Այն 13-րդ դարում (1296-1298) Սմբատ Թագավորի հրամանով Սիս մայրաքաղաքում կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը, որին ձեռագիրը շարադրելու հարցում օգնել է Թորոս քահանան: Սույն ձիագիտարանը փաստում է, որ Հայաստանը հնագույն ժամանակներից ի վեր ունեցել է ձիաբուծության հարուստ ավանդույթներ, որոնք շարունակել են զարգանալ նաև Կիլիկյան Հայաստանում[2]: Բացի այդ, իրավացիորեն նկատվել է, որ այս «բժշկարանը հայ-արաբական մշակութային կապերի դրսևորման առավել կարևոր երևույթներից է»[3], քանի որ, ինչպես իր թողած հիշատակարանում նշել է Ֆարաջը, աշխատանքը գրելու համար ինքն օգտվել է հնդկական և արաբական աղբյուրներից[4]:*

«Բժշկարան ձիոյ»-*ն մեզ հասել է միայն մեկ ձեռագրով և առաջին անգամ հրատարակվել է 1980 թ. բանասեր-արևելագետ Բաբկեն Զուգասզյանի աշխատասիրությամբ: Ձիաբուժական այս ձեռնարկը համարելով միջնադարյան Հայաստանի մշակութային կարևոր երևույթ՝ Զուգասզյանը գրքի ներածության մեջ*

---

* ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, բ.գ.թ., hasmiktadevosyan333@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 հունվարի, 2026 թ., հոդվածը գրախոսելու օրը՝ 31 մարտի, 2026 թ.:

1 *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար)*, աշխատասիրությամբ ***Բ. Լ. Զուգասզյանի,*** Երևան, 1980 (այսուհետև՝ ԲԶ համառոտագրությամբ, բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում):

2 **Ս. Վարդանյան**, *Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Երևան, 2000, էջ 128-130:

3 **Բ. Զուգասզյան, Ա. Տեր-Վահանյան,** «Բժշկարան ձիոյ» երկի նորահայտ արաբերեն թարգմանությունը», *ԼՀԳ*, 1985, № 11, էջ 63:

4 *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար)*, էջ 163:

մանրամասն անդրադառնում է հին և միջնադարյան Հայաստանում ձիագիտության անցած ճանապարհին, ժամանակագրական կարգով ներկայացնում է ձիագիտության վերաբերյալ հայ մատենագրության մեջ պահպանված վեց բնագրերը, դրանք համեմատում Ֆարաջի բժշկարանի հետ, այնուհետև համառոտ տալիս է գրքի կառուցվածքը, խոսում է նաև երկի լեզվի մասին՝ փաստելով, որ թե՛ բառապաշարը և թե՛ «ձեռագրի մեջ արտացոլված լեզվական բազմաթիվ այլ երևույթներ հարստացնում են մեր գիտելիքները միջին հայերենի վերաբերյալ և հաստատում վաստակաշատ գիտնականի եզրակացությունը, որ հիրավի մեր առջև ունենք «նյութով և գրության պատվական» մի հուշարձան»[5]: Շատ արժեքավոր է հատկապես Ջուգասզյանի կազմած և բնագրի վերջում զետեղված բառարանը, որտեղ հրատարակվող երկն ընթերցողին մատչելի ու հասկանալի դարձնելու նպատակով աշխատասիրողը բացատրել և անհրաժեշտության դեպքում նաև ստուգաբանորեն ներկայացրել է բնագրում առաջին անգամ գրավոր վկայված բազմաթիվ բառեր[6] փոխառություններ, հայերեն կազմություններ, ինչպես նաև ուղղագրական աննշան տարբերություններով և բարբառային տարբերակներով ձևերը:

«Բժշկարան ձիոյ»-ի հրատարակումից 25 տարի անց ավստրիացի հայագետ Յ. Դում-Թրագութը առանձին գրքով հրատարակել է բնագրի գերմաներէն թարգմանությունը[7]: Ֆարաջի գիրքը համարելով ամենահին լիարժեք պահպանված հայկական ձիագիտական աշխատանքը՝ հայագետը կարևորում է վերջինիս նշանակությունը ոչ միայն հայ, այլև կովկասյան ձիագիտական գրականության մեջ[8]: Բնագիրը գերմաներեն թարգմանելուց բացի, Յ. Դում-Թրագութը հանգամանորեն անդրադառնում է ձիաբուժարանի ստեղծման ժամանակին, աղբյուրներին, նախորդ մշակումներին, ձեռագրի նկարագրությանը, անասնաբուժական միջոցներին ու ձիաբուծությանը, ինչպես նաև ձեռագրի լեզվին՝ միջին հայերենի առանձնահատկությունները տեսնելով լեզվի բոլոր մակարդակներում[9]: Թարգմանությունը լրացված է ընդարձակ բազմալեզու բառարանով, որտեղ յոթ իմաստային խմբերով ներկայացվում են բժշկարանում կիրառված բառերը,

---

5 Տե՛ս նույն տեղում, էջ 29:

6 Վ. Համբարձումյանի հաշվումներով բառարանը պարունակում է բնագրում կիրառված 925 բառ. *տե՛ս* **Վ. Համբարձումյան,** «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար) աշխատասիրությամբ Բ. Լ. Ջուգասզյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 273 էջ», *ՊԲՀ*, 1981, № 1, էջ 278:

7 **J. Dum-Tragut,** *Kilikische Heilkunst für Pferde, Das Vermächtnis der Armenier, Kommentar. Überzetzung-Glossar,* Hildesheim-Zürich, New York: Georg Olms Verlag, 2005.

8 Նույն տեղում, էջ 20:

9 Նույն տեղում, էջ 17-75:

համեմատվում են դրանց գերմաներեն համարժեքները, լատիներեն տերմիններ-ը և արաբերեն, պարսկերեն կամ այլ լեզուներից ծագող արմատները[10]:

Բժշկագիտական կարևոր հուշարձան լինելուց բացի, ԲՁ-ն արժևորվում է որպես միջին հայերենի՝ մասնավորապես կիլիկյան նորմավորման շրջանի[11] հուշարձան և կարևոր սկզբնաղբյուր միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից: Վերջինս ըստ Աճառյանի «գանձարան մ'է հայերէն անասնաբուծական և անասնաբուժական բառերու, այնպէս որ գրքիս լիակատար ուսումնասիրութիւնը պիտի տայ թէ՛ ընդարձակ տեղեկութիւններ գիտութեան մասին և թէ՛ բազմաթիւ հայերէն նոր բառեր մեր բառարանի համար»[12]:

Մխիթար Հերացու հետևությամբ բժշկարանը շարադրված է ժողովրդին հասկանալի լեզվով՝ կիլիկյան միջին հայերենով, և նրա բառապաշարը, մասնավորապես՝ բժշկական տերմինները, ինչպես նաև քերականական իրողություններ ընդհանրություն են ցուցաբերում Մխիթարի լեզվի հետ: Սակայն այս երկում արձանագրված են բազմաթիվ նոր բառեր, որոնք գործածվում են առաջին անգամ կամ ունեն եզակի վկայություն: Ըստ Բ. Ջուգասզյանի՝ այս երկում կիրառվել է «մեր բառարաններին անծանոթ 105 հայերեն բարդություն և 146 փոխառյալ բառ»[13]: Դրանց մի ստվար մասը կազմում են բժշկական բառապաշարի միավորները՝ կազմախոսական բառեր, ախտանուններ, բուսանուններ, դեղանուններ, նաև ձիերին առնչվող բառեր: Պետք է նկատել, որ իբրև միջինհայերենյան սկզբնաղբյուր՝ ԲՁ-ի բառապաշարը միայն մասամբ է արտացոլված «Նոր հայկազեան բառարան»-ում, Հրաչյա Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում, և հիմնականում ընդգրկված է միայն «Միջին հայերենի բառարան»-ում[14]: Ուստի՝ միջին հայերենի համակողմանի ուսումնասիրության տեսանկյունից հատկապես կարևորում ենք սույն բժշկարանի բառապաշարի ամբողջական վերհանումն ու քննությունը:

Սույն ուսումնասիրության մեջ ԲՁ-ի միջինհայերենյան բառաշերտը, ըստ ծագման դիտարկելով, առանձնացրել ենք չորս խումբ՝ փոխառություններ, նորակազմություններ, բառիմաստի նոր դրսևորումներ և անստույգ ծագում ունեցող բառեր:

---

[10] Որոշ բառերի համար Դում-Թրագութի առաջարկած բացատրություններն ու ստուգաբանական դիտարկումները կներկայացվեն ստորև:

[11] **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987, էջ 26:

[12] Հ. Աճառյան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի*, Վիեննա, 1910, էջ 137:

[13] *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար)*, էջ 27:

[14] **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Երևան, 2009 (այսուհետև՝ ՄՀԲ):

*1. **Փոխառություններ**։ Ինչպես և բնորոշ է միջնադարյան բժշկարաններին առհասարակ, ԲՋ-ի բառապաշարի անքակտելի մասը ևս բժշկական տերմինի արժեք ունեցող փոխառյալ բառեր են՝ ախտանուններ, կազմախոսական բառեր, բուսանուններ, ինչպես նաև՝ ձիանուններ ու ձիերին առնչվող այլ բառեր։ Դրանք մեծամասամբ արաբերեն և իրանական ծագման բառեր են, ինչպես նաև մի քանի հին ֆրանսերեն ձիագիտական տերմին և երկու թուրքերեն բառ։ Ինչպես վերն ասացինք, փոխառությունները վկայված չեն ավելի վաղ գրված բժշկարաններում, կիրառվել են հիմնականում ԲՋ-ում. մի քանիսն ենք միայն երկու դար անց գտնում Ամիրդովլաթ Ամասիացու բժշկարաններում։*

*Արաբական բժշկագիտության աղբյուրների օգտագործմամբ պայմանավորված՝ փոխառյալ բառերի գերակշիռ մասը կազմում են **արաբական փոխառությունները** կամ արաբերենի միջնորդությամբ այլ լեզուներից անցած բառերը (մեր հաշվումներով՝ 84) ինչպես՝* ահնաֆ / հանաֆ *(89)՝ «ծուռ ոտք» (< արաբ.* **حَنَفَ** *ḥanafa՝ «ծռվել, թեքվել»,* **أحنف** *aḥnaf՝ «ծուռ ոտքով, ներս թեքված ոտքով»),* բայտար *(114)՝ «անասնաբույժ» (< արաբ.* **بَيْطَرَ** *bayṭara՝ «պայտել, անասունների բուժումով զբաղվել»,* **بَيْطَار** *bayṭār, «պայտող, անասնաբույժ),* գոռոփ *(92)՝ «աչքի անկյունները» (< արաբ.* **غَرَبَ** *ġaraba՝ «մայր մտնել, հեռանալ, անհետանալ»,* **غَرْب** *ġarb՝ «կողմ, եզր, անկյուն, վերջնամաս, ծայր, արևմուտք, հոսք», հոգն.,* **غُرُوب** *ġurūb, որից՝ հվնբ. «աչքի անկյուններ, արցունքի ելքեր»),* զաոզուի *(56)՝ «պսպղուն բծերով ձի» (< արաբ.* **زُرْزُور** *zurzūr՝ «սարյակ»,* **زُرْزُرِيّ** *zurzūrī՝ «սարյակի պես խայտաբղետ, բծավոր»),* ընթիշար *(98)՝ «ոտքերի երակների հիվանդություն» (< արաբ.* **نَشَرَ** *našara՝ «տարածել, սփռել»,* **اِنْتِشَار** *intišār՝ «տարածում, սփռում», բժշկական իմաստով՝ «երակների ուռչում, տարածում»),* թավասուֆ *(140)՝ «գրաստների հիվանդություն» (< արաբ.* **تَوَسُّف** *tawassafa՝ «կեղևոտել, թեփոտել»,* **تَوَسُّف** *tawassuf՝ «մաշկի կեղևոտում, թեփոտում, ճաքեր առաջանալը»),* խումահ *(101)՝ «ծնկից իջնող ուռուցք» (< արաբ.* **خَمَعَ** *ḫamaʿa՝ «կաղալ, կաղ լինել»,* **خُمَاع** *ḫumāʿ՝ «ծնկի կամ ոտքի խոց, կաղություն առաջացնող հիվանդություն»),* խուման *(102)՝ «գրաստների հիվանդություն» (< արաբ.* **خَنَّ** *xanna՝ «քթի մեջ խոսել, ռնգախոսել»,* **خُنَّان** *xunān «քթին ախտահարող գրաստների հիվանդություն, հարբուխ»),* համր *(106)՝ «գրաստների՝ շատ գարի ուտելուց առաջացող հիվանդություն» (< արաբ.* **حَمِرَ** *ḥamira՝ «կարմրել»,* **حمر** *ḥamar՝ «մարսողական խանգարումներով տառապող», ձիերի դեպքում կապված է չափից շատ գարի ուտելու հետ),* ճարատ *(100)՝ «ձիու ծնկների ուռուցք» (< արաբ.* **جَرَدَ** *ǧarada՝ «մերկացնել, կեղևազրկել, մաշել»,* **جَرَد** *ǧarad՝ «մերկություն, կեղևազրկվածություն, թեփոտ մակերես», որից էլ՝ հվնբ, «հոդային ախտ, ծնկի ուռուցք»),* մամիրան *(168)՝ «կանթեղախոտ» (< արաբ.* **مَامِيرون** *māmirūn, պրսկ.* **مامیران**

māmīrān՝ *«կանթեղախոտ, chelidonium»),* մուհաճալ *(57)՝ «սպիտակաոտք ձի» (< արաբ. حَجَلَ* ḥağala՝ *«կապել, ոտքը նշան անել»,* مُحَجَّل muḥağğal՝ *«սպիտակ նշաններով (ոտքերի վրա),* մդէտ *(160)՝ «շնախոտ» (< արաբ.* مَدَّ madda՝ *«ձգել, երկարացնել»,* مَدِيد madīd՝ *«երկարած, ձգված» (բույսի ձգվող, սողացող բնույթից), պրսկ.* مديد madid*),* նազար *(103)՝ «արագաշարժ ձի» (< արաբ.* نَظَرَ naẓara՝ *«նայել»,* نَاظِر nāẓir՝ *«ուշադիր, սրատես»,* نزار nazzār՝ *«արագաշարժ, եռանդուն»),* նատիֆ *(132)՝ «օճառախոտ» (< արաբ.* نَظَفَ naẓafa՝ *«մաքրել, լվանալ»,* نَظِيف naẓīf՝*«մաքուր, մաքրող». իմաստը կապվում է բույսի օճառային հատկության հետ),* շահրի *(52)՝ «ազնվացեղ սև գրաստ» (< արաբ.* سَهَرَ šahara *«հայտնի լինել, աչքի ընկնել»,* سَهْرِيَّة šahriyya՝*«հայտնի, նշանավոր ցեղի, ազնվազարմ»),* շուռնախ *(117)՝ «վերք, ճեղքվածք» (< արաբ.* شَرْنَقَ šarnaqa՝*«կտրել, ճեղքել»,* شَرْنَقَة šarnaqat՝*«ճեղքված, թարախոտ վերք»),* պաճար *(101)՝ «փորը ուռած» (< արաբ.* بَجِرَ bağira՝ *«մեծ փոր ունենալ, որովայնը ուռչել»,* بَجَر bāğir՝ *«փորի ուռածություն»),* ջանդիաննէ *(103)՝ «բոգ, օձի սխտոր» (< արաբ.* جَنْتِيَانَا ğantiyānā՝ *«կծվիկ,* Gentiana*»,* պրսկ. جَنْتِيَانِه ğentiyāne՝ *նույնը),* ռայսայ[15] *(131)՝ «սմբակները քայքայող հիվանդություն, որ առաջանում է քարին խփվելուց, կամ այլ պատճառներից» (< արաբ.* رَهَصَ rahaṣa՝*«սեղմել, ճնշել, փշրել»,* رَهْصَة rahṣa(t)՝ *«սմբակի վրա վերք, ճնշումից առաջացած վնասվածք»),* սուլախ *(163)՝ «աչքի կոպի բշտիկ» (< արաբ.* سلق salaqa *«ուռչել, տաքանալ»,* سلاق sulāq՝*«աչքի կոպի բշտիկ, գարեհատիկ»),* համնայ *(143)՝ «տեսողության մթագնում» (< արաբ.* كَمِنَ kamina՝ *«թաքնվել, մթնել, ծածկվել, աներևույթ դառնալ»,* كَمْنَة kumna(t)՝ *«տեսողության մթագնում, աչքերի առաջ խավար») և այլն:*

Արաբերենից հետո զգալի թիվ են կազմում նաև ***իրանական փոխառությունները*** *(մեր հաշվումներով՝ 24), որոնք բույսերի, դեղերի և հիվանդությունների, նաև ձիերի տարատեսակների անուններ են, ինչպես՝* բահրակ *(183)՝ «անասնակերի բաժին» (< պհլ.* بهراک bahrak, *նոր պրսկ.* بهره bahre՝ *«բաժին, մաս, բաժնեմաս»),* գորգզան *(82)՝ «գայլի վագր ունեցող ձի» (< պրսկ.* گرگزن gorgzan՝*«գայլի ձևով վազող», կազմված* گرگ gorg՝ *«գայլ» +* زدن zan<zadan՝ *«հարվածել, շարժվել, վազել գնալ»),* զրնճուխ *(160)՝ «կինուբարիս, քիմիական նյութ» (< պրսկ.* زنجفر zanjafr՝ *«կինուբարիս, կարմրագեղ»),* խարիճն *(60)՝ «մոխրագույն ձի» (< պրսկ.* كرنگ korang՝ *«կարմիր ձի»),* շրէշ *(160)՝ «շուշանազգի բույս» (< պրսկ.* سريش seriš՝ *«շուշանազգի սոսնձային արմատ ունեցող բույս, շրեշ»),* չալ *(57)՝ «խայտագույն» (< պրսկ.* چال čāl՝ *«բիծ, խայտ», որից՝ «խայտաբղետ, բծավոր, խառնագույն»),* պատխունամ *(118)՝ «վատ*

[15] Բառը քննագրի բովանդակության ցանկում (էջ 40) հանդիպում է *աասհար* ձևով, որը արաբերեն رَهَصَ rahaṣa-ի ընթերցումն է հակառակ կողմից, տե՛ս *Բժշկարան ձիոյ*, էջ 232:

հիվանդություն» (< պրսկ. بدخونام bad-xunām՝ *«խունամ հիվանդության վատ տեսակը»՝ թերևս կազմված պրսկ. بد* bad՝ *«վատ» + արաբ. خُنَان* xunān՝ *«գրաստների մոտ հանդիպող հիվանդություն»),* ռէչ *(54)՝ «ատամնաշար» (< պրսկ. ڕ* raǧ՝ *«շարք»),* սամանդ *(59)՝ «սև բաշով և պոչով խարտյաշ ձի» (< պրսկ. سَمَنْد* samand՝ *«դեղնավուն, խարտյաշ ձի»),* սիսլախ *(91)՝ «կրակոտ, կայտառ, դյուրաբորբոք ձի»*[16] *(հավանաբար < պրսկ. سیس* sis՝ *«արագաշարժ, ճարպիկ ձի»*[17] *+ -ڵێ-*lāx *ածանց),* սպունկգուռ *(158)՝ «շնախաղող» (հմմտ. պրսկ. سگ انگور* sagangur՝ *«շնախաղող», կազմված է* sag՝ *«շուն» և* angūr՝ *«խաղող» արմատներից),* տորվանտակ *(145)՝ «նորահաս միրգ» (< պհլ. ترونداک* turwandak, *նոր պրսկ. ترونده* tarwanda՝ *«թարմ, նորահաս միրգ», կազմված է* تر tor *«թարմ, նոր» արմատ +* وند vand *ածանց (ունեցող, բերող) +* ـک a(k) *ածանց),* ֆարաֆ *(109)՝ «հյուսվածքների քայքայումով հիվանդություն, քոս» (< պհլվ.*garak, *նոր պրսկ.* گر gar, گری gari՝ *«քոս», նաև՝ «մաշկի բորբոքում, խոցոտում, քայքայում»),* ֆառայ *(83)՝ «խոտի ցողուն» (<պրսկ.* پره parra՝ *«շյուղ, ծեղ, կողմ, ծայր, բարակ հատված, որից՝ «բույսի ցողուն») և այլն: Նկատենք, որ ի տարբերություն արաբերեն բառերի՝ պարսկական փոխառություններից երեքը՝ շրէշ, չալ, սիսլախ, պահպանվել են հայերենի բարբառներում*[18]*, ընդ որում նկատենք, որ սիսլախ-ը տարբեր բարբառներում չորս ածականական իմաստ ունի՝ «բոյով-բուսով», «զարդարված ու կոտրատվող (կին)», «կայտառ, առույգ», «համարձակ»*[19]*: Շրէշ և չալ բառերը նշված իմաստներով ամրագրվել են նաև արդի հայերենի բառապաշարում*[20]*:*

ԲՋ-ում կիրառվել են նաև ***հին ֆրանսերեն*** *երեք՝* urou *(98)՝ «ձիու սրունքի վրայի կարծր այտուց» (< հին ֆր.* suros < sur os *«ոսկրի վրա»),* տուբեթ *(55)՝ «ձիու ճակատի մազափունջ» (< հին ֆր.* toupet՝ *«փոքր մազափունջ»),* ֆրացին *(119)՝ «ձիու խոց» (< հին ֆր.* farcin, *միջն. լատ.* farcinum՝ *«ձիերի խոցային վարակիչ հիվանդություն, գեղձախտանման խոց»)և* ***թուրքերեն*** *երկու՝* մօրմուր *(112)՝ «արենախոտ» (< թրք.* mirmur / *օսմ.* میرمور mirmūr՝ *Lythrum*

---

[16] ՄՀԲ-ն բառի համար նշում է «կրակոտ, դյուրաբորբոք, դյուրագրգիռ (ձի)» նշանակությունը՝ հավանական համարելով պարսկերեն *sis* հիմքը (էջ 701), Ջուգասզյանն այն անստույգ նշանակության է համարում (էջ 236), Յ. Դում-Թրագութը, նկատի ունենալով բառի պարսկական *sis* հիմքը, այն կապում է ձիու գունավորման, բծավոր լինելու հետ և նկարագրում է ձիու մի տեսակ, որի մռութը, աչքերի շուրջը և հետնամասը պատված են խոշոր բծերով կամ կետերով (էջ 277), սակայն բառը պարսկերենում ունի հենց արագաշարժ, ճարպիկ ձի նշանակությունը, հղումը՝ ստորև:

[17] Տե՛ս https://vajehyab.com/?q=%D8%B3%DB%8C%D8%B3&d=

[18] Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 4, Երևան, 2007, էջ 285, 365, հ. 5, Երևան, 2008, էջ 388:

[19] Տե՛ս նույն տեղում, հ. 5, Երևան, 2008, էջ 331:

[20] Տե՛ս **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Երևան, 1976, էջ 1120, 1153:

salicaria L., *«արենախոտ»),* սաղրի *(88)՝ «գրաստի կամ ձիու գավակ» (< թրք.(օսմաներեն)* **سقرى** saqrī, *պրսկ.* **سغرى** sāğrī՝ *«գավակ, ձիու հետին վերին մաս») բառեր: Ֆրանսերեն* galop՝ *«քառասմբակ» բառով բժշկարանում -ել բայական մասնիկով կիրառվել է* կալօպել *(96)՝ «քառասմբակ վազել» բայը:*

2. Նորակազմություններ: Օտար տերմինների կողքին աչքի են ընկնում նաև հայերեն համարժեք բառերի կիրառությունները: Ինչպես միջնադարյան մյուս բժշկարանների, ԲՋ-ի հեղինակը ևս ձգտել է օտար բժշկական տերմինները բացատրել միջին հայերեն նոր կազմություններով, որոնք էլ գործածել է փոխառություններին զուգահեռ, ինչպես՝ ներթաֆ *(<արաբ.* **كَتِف** katif *«ուս, թիկնոսկոր», որից էլ՝ «թիկնոսկրի ցավ» բժշկական իմաստը) –* բէցցավ՝ *«թիկնոսկրի ցավ» (110),* տայար *(< արաբ.* **دعر** da῾ar՝ *«փչացում, նեխում», որից էլ՝ հվնբ. «բերանի ախտ, բերանաբորբ» իմաստը) –* բեռանցաւ *(148),* տարֆա *(< արաբ.* **طَرْفَة** ṭarfa՝ *«ծայր, հատված», որից էլ՝ «աչքի եզրային հատվածում առաջացող փոքր արյունազեղում, արյունոտ բիծ») –* զարկ՝ *«հարվածի հետևանքով աչքի արյունազեղում» (149),* ֆրացին *(< հին ֆր.* farcin՝ *«ձիերի խոցային հիվանդություն) –* ձիախոց *(119) և այլն:*

Բժշկարանն աչքի է ընկնում հայերենի բառակազմական գրեթե բոլոր միջոցներով կազմված բառերի առատությամբ: Նորակազմությունների ստեղծման գործում, ինչպես և միջնադարյան բժշկարաններում առհասարակ, ակնառու է ժողովրդական մտածողության ազդեցությունը, ինչպես՝ այգոյհոտ *(61)՝ «խաղողի վազի էտած մատները»,* աւաղութիւն *(45)՝ «նիհարություն»,* գազանաո *(143)՝ «գազանի կծած»,* դեղնխուռնկ *(111)՝ «հնդկական քրքում»,* ծուծոսկր *(58)՝ «ծուծ պարունակող ոսկոր»,* կոճբուխ *(100)՝ «կոճից ելած՝ ածած»*[21]*,* հավնդեղ *(118) «հավանի մեջ շինած դեղ»*[22]*,* նեղհրել *(77)՝ «սեղմել»,* ոռաղի *(112)՝ «ուղիղ աղիք»,* պճկոոմ *(50)՝ «ուսագլուխ»,* բաւիրաւն / բաւիրկոտ *(94)՝ «սայթաքող, քիթ-բերանի վրա ընկնող» և այլն:*

ԲՋ-ում գերակշռում են իսկական բարդությունները: Նոր ախտանունները հիմնականում կիրառվել են գոյական *(կենդանանուն, մարմնամաս) +* ցաւ *կազապարով*[23]*, որտեղ ցավ-ը հիվանդություն է նշանակում, ինչպես՝* արծվե-

---

[21] ՄՀԲ-ն բառն իբրև անստույգ է ներկայացնում (էջ 381): Դում-Թրագութի մեկնաբանությամբ սա կոճի շրջանում առաջացող մաշկային փոփոխություն է, որը կարող է համապատասխանել ճաճերին, ամառային վեռերին կամ *հեբրանոմատոզ* հիվանդությանը. տե՛ս **J. Dum-Tragut,** նշվ. աշխ., էջ 226:

[22] Ըստ ՄՀԲ-ի՝ անստույգ նշանակության սպեղանի է (էջ 412):

[23] Կենդանիների անվանումներով բաղադրված ախտանունների մասին առավել մանրամասն տե՛ս **Հ. Թադևոսյան,** «Կենդանիների անվանումներով ախտանունները «Բժշկարան ձիոյ» երկում (XIIIդ.)», *Արդի հայերենագիտության խնդիրներ, գիտական հոդվածների ժողովածու,*

ցավ *(138)՝ «ջրգողություն»*, ըղտացավ *(126)՝ «գրաստների մկանային հիվանդություն»*, մկնացավ *(39)՝ «ռևմատիզմ»*, նիպեթցավ *(101)՝ «թիակոսկրի ցավ»*, պախրեցավ *(112)՝ «տավարի վարակիչ հիվանդություն»*, սմբակցավ *(42)՝ «սմբակի վերք»*, սպիտակցավ *(139)՝ «մաշկը սպիտակելու հիվանդություն»*, ֆուտկցավ *(137)՝ «քուռակների գեղձախտ»*:

Իսկական բարդությամբ կազմել են նաև այլ ախտանուններ՝ բեւեռհաս *(90)՝ «սմբակները քայքայող հիվանդություն»*, ձիախոց *(119)՝ «ձիու քոս» և այլն*:

Նոր ախտանուններ են գործածվել նաև -ութիւն *ածանցով, ինչպես՝* արմուհություն *(73)՝ «կծանութիւն»*, աւաղութիւն / ավղութիւն *(45)՝ «նիհարութիւն»*, բերնցաւութիւն*(41)՝ «բերանի ցավ կամ խոց»*, խումրութիւն *(112) (արաբ.* خُمَار xumār *«գինի» + ութիւն)՝ «ջերմություն, գլխացավ»*, հարունութիւն *(արաբ.* حَرُوْن harūn *«կամակոր» + ութիւն)՝ «ձիու կամակորություն» (78)*, մկնացաւութիւն *(115)՝ «ռևմատիզմ»*, շողություն *(50, 51)՝ «ջերմություն»*:

Իսկական բարդությունների շարքում զգալի թիվ են կազմում -բերան, -գլուխ, -թև, -ծայր, -մէջ, -ող, -փող, -տակ, -տեղ *բաղադրիչներով կազմախոսական նոր բառերը, ինչպես՝* անդմմէջ *(55)՝ «աճուկ, երանք»*, բէճգլուխ *(101)՝ «ուսագլուխ»*, երկթև *(90)՝ «երակաթև»*, ծնաբերան *(51)՝ «արգանդի բերան»*, ծղատակ *(46)՝ «բազկոսկրի ներքևի մասը»*, կոճբերան *(47)՝ «վեգի դուրս ցցված մասը»*, ձվատակ *(151)՝ «ձվարանի ներքևի մասը»*, մազբերան *(90)՝ «մազի ծռված մասի ծայրը»*, մազծայր *(55)՝ «մազի ծայր»*, մազտակ *(55)՝ «մազի տակի մասը»*, պախցտեղ *(88)՝ «ձիու գլխի առաջամասը՝ սանձատեղ»*, սմբակբերան *(89)՝ «սմբակի ծայրամասերը»*, տոշգլուխ *(138)՝ «ձիու առնանդամի գլուխը»*, տոշփող *(113),՝ «ձիու առնանդամի միզանցքը»*, ֆաշտեղ *(95)՝ «ձիու փորքաշի հարած տեղը»*:

Իսկական բարդությամբ կիրառվել են նաև ձիերին առնչվող բառեր, ինչպես՝ գոռտնփոխ *(90)՝ «սմբակի միջի մասի փոփոխումը»*, դեկնախայտ *(56)՝ «դեղնագույն»*, եզնագաւակ *(93)՝ «եզի պես լայն ու տափակ գավակ ունեցող գրաստ»*, խոզմազ *(158)՝ «խոզի մազ»*, խոյամիթ *(45)՝ «խոյի նման քիթ ունեցող»*, մազկեր *(158)՝ «կոշտ մազ»*, մշկաբաշն *(59)՝ «սևավուն բաշ»*, մշկագոյն *(60)՝ «սևավուն մաշկի գույն»*, նօսրասմբակ *(89)՝ «նուրբ սմբակ*

Երևան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, էջ 81-95: http://language.sci.am/sites/default/files/hasmik_tadewosyan.pdf, նաև՝ **H. Tadevosyan, V. Khachatryan**, "Lexical analysis of disease names based on zoonyms in medieval Armenian medical books," *Lege artis. Language yesterday, today, tomorrow,* Trnava: University of SS Cyril and Methodius in Trnava, X (2), p. **150-167**. DOI: https://doi.org/**10.34135**/lartis.**25.10.2.09**

ունեցող», սպնախայտ *(59)՝ «ոսպանման»,* տափիիթ *(45)՝ «տափակաքիթ»,* ցռէշ *(55)՝ «վայրի էշ»:*

Նշված կազմություններից ամրագրվել են երեքը՝ դեղնախայտ, խոյամիթ *և* մազկեր *բառերը, ընդ որում վերջինը՝ այլ «մազերի հիվանդություն» իմաստով*[24]*:*

Հայերենաստեղծ բուսանունները կամ դեղանունները հանդիպում են ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական բարդությունների ձևով. խոզկաղնի *(104)՝ «կաղնու պտուղը»,* կանիփայտոիզ *(115)՝ «գերչակ»,* ջրկոտեմ *(123)՝ «խաչածաղկավոր բույս»,* սպիտկդեղ *(123)՝ «սպիտականերկ»,* կոռի ագի *(107)՝ «կարիճատուտ»,* մաեեմա տակ *(115)՝ «խնկողկուզակ»: Նշված բուսանուններից չորսը՝* խոզկաղնի, կանեփայտոիզ *(տզկանեփատ),* ջրկոտեմ, սպիտկդեղ, *պահպանվել և ամրագրվել են արդի հայերենի բառապաշարում, իսկ* կոռի ագի*-ն և* մաեեմա տակ*-ը ամրագրվել են «կարիճատուտ» և «մարեմխոտ» տարբերակներով*[25]*:*

Ածանցմամբ, բացի վերը նշված -ութիւն *ածանցից, ավելի քիչ նոր բառեր են գործածվել, ինչպես՝* ազկ**իկ** *(70)՝ «ընտիր ցեղից, տոհմիկ»,* կտր**ուած** *(159)՝ «կտրված, վիրավոր տեղը»,* շ**եղի** *(100)՝ (շեք+ելի), «երկու սրունքների միջև եղած արանքը»,* փրփ**իչ** *(155)՝ «օճառախոտ»,* ֆայլ**աւն** *(80)՝ «հանդարտ քայլվածքով ձի»:*

ԲՋ-ում կիրառվել են նաև զգալի թվով բայեր (պարզ և բարդ), որոնք կազմվել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ հիմքերից՝-ել / իլ բայածանցի միջոցով, ինչպես՝ անկածնիլ *(76)՝ «տկարանալ, ուժից ընկնել»,* աղփրթել *(76)՝ «սանձարձակ դառնալ»,* գահըլնալ *(106)՝ «թուլանալ» (արաբ.* **كاهل** kāhil, *պրսկ.* **كاهله** kahela՝ *«ծույլ, դանդաղկոտ» +նալ),* գաւկել *(69)՝ «հեծնել»,* գորզզալ *(80, 48)՝ «գայլի պես վազել» (պրսկ.* **گرگ** gurg *«գայլ» +* **زنه / زنه** zana *«կերպ, ձև» +ալ),* խումրնալ *(79)՝ «հոգնել, վրդովվել» (արաբ.* **خمار** xumār՝ *«թմրածություն, թուլություն» + նալ),* կալօպել / կալօփցնել *(ֆրանս.* galop *«քառասմբակ» + ել /ցնել) (89, 96)՝ «քառասմբակ վազել / վազեցնել»* բեռնվախ լինել *(72)՝ «բերանից ինչ-որ վախ զգալ»: Ուշագրավ է, որ ԲՋ-ում վկայված բայական կազմությունների մի զգալի մասն ունի ժողովրդախոսակցական բարբառային բնույթ, ինչպես՝* անցմնցել / անցմնեցնել / անցմնցեցել / անցմցեցնել (68, 107)՝ *«քայլեցնել ձիուն»,* զըլմփիլ *(76)՝ «գլխիվայր ընկնել»,* թաղթփֆիլ *(68)՝ «իրեն թափ տալ»,* ժօճտալ *(74)՝ «երերալ»,* ծմալ *(126)՝ «տնքալ անասունի» և այլն: Դրանց շարքում առանձնանում են նաև* -ատ, -տ, -ռ, -ոտ *բազմապատկական ածանցներով կազմված*

[24] **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 289, 593, 952:
[25] Նույն տեղում, էջ 589, 1440, 1250, 1325, 705, 979:

բայերը, որոնք արտահայտում են գործողության սաստկություն կամ կրկնակիություն և, որպես կանոն, ունեն ժողովրդախոսակցական և բարբառային երանգավորում, ինչպես՝ գըռտատել *(88)՝ «գրգռել, բորբոքել» (աղիների մասին),* դարձվռռտել *(111)՝ «այլակերպվել»,* թարխռել *(139)՝ «թարախակալել»,* խոցռել *(101)՝ «խոցոտել»,* շողռտել/շողռել *(41, 87)՝ «ջերմել» և այլն:*

3. ***Նորիմաստ բառեր****: ԲՋ-ում հանդիպում են նաև գրաբարյան բառերի վերաիմաստավորմամբ առաջացած նոր կիրառություններ: Դրանք առօրյա-խոսակցական այն բառեր են, որոնք հիմնականում նմանության զուգորդությամբ[26] կիրառվել են բժշկական տերմինի նշանակությամբ: Մեր ուսումնասիրության շրջանակներում քննվել են միայն այն իմաստային նոր դրսևորումները, որոնք ամենայն հավանականությամբ առաջին անգամ հանդիպում են հենց այս բժշկարանում: Նշենք նաև, որ վերջիններս հիմնականում տեղ չեն գտել բացատրական բառարաններում, բացի ՄՀԲ-ից:*

Անդամ *գոյականը, որ գրաբարում ունի «մարմնի մաս» և «մարմին» իմաստները, ԲՋ-ում կիրառվել է նաև իբրև կոնկրետ մարմնի մաս՝ «ազդր, ազդրոսկր». «Եւ ագետկուցն միսն, որ կայ յետև անդմացն, նա լինի հաստ և պինդ» (47): «Կենդանու ազդր» իմաստը կա Ղարաբաղի և Նոր ջուղայի բարբառներում[27], իսկ արդի հայերենի բառապաշարում ամրագրված է «արտաքին վերջույթ» նշանակությունը[28]:*

Բոլոր *բառը «շրջան, պտույտ»[29] իմաստի ընդլայնմամբ բժշկարանում գործածվել է «ձիու վրա տեղ-տեղ շրջանաձև ոլորված մազեր» նշանակությամբ: Պետք է նկատել, որ նշված իմաստով բժշկարանի ցանկում կիրառվել է նաև* պտույտ *գոյականը, իսկ գլուխներում՝* բոլոր-ը. *«Վասն պտուտնոյ, որ ի մազն լինի» (38): «Յաղագս բոլորնոյն, որ կենայ ի գրաստն» (55):*

Դուռն *գոյականն իբրև «կաթնատամ» է կիրառվել. «Դուռնքն սկսնու ի սևնալ» (53): «Եւ առջի ակռայքն, որ բուսնի քուռկին, նա դրունքն է» (54):*

Ծնծոռ *գոյականը, որ միջնադարյան բժշկարաններում հանդիպում է «կատիկ», «գավակ» իմաստներով[30], ԲՋ-ում գործածվել է «կրունկների դուրս ցցված կլոր մասը» նշանակությամբ. «Եւ կոճացն ներքի դեհին լայնքն և կըրնկացն մեծութիւն ու երկու խնձորքն կըրնկացն ի դուրս և սմբակացն մեծութիւն սիրուն է» (46-47):*

---

[26] **Է. Աղայան**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, 1984, էջ 79:

[27] *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 1, Երևան, 2001, էջ 56:

[28] **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, էջ 51:

[29] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1836-37, հ.1, էջ 500:

[30] **Նոռայր Բյուզանդացի,** *Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց* (***Մարտիրոս Մինասյանի*** հրատարակությանը), Ժնև, 2000, էջ 296:

Կերիչ / ուտիչ *ածականը կիրառվել է գոյականական «արյունոտ խոց» իմաստով. «Վասն կերիչ ցաւն, որ է դաշտիկ» (39)։ «Յաղագս ուտիչ ցաւու» (116)։ «Այլ դեղ ուտչի և այլ խոցերոյ» (117)։*

Հովութիւն *բառը, որ գրաբարում «զովություն» իմաստն ունի*[31]*, ԲՋ-ում գործածվել է որպես հիվանդություն՝ «ցրտառություն, գայլցավ», բայց բառարաններում գրանցված չէ, բացառությամբ ՄՀԲ-ի.*

«Վասն գայլցաւի, որ է հովութիւն» (39)։ «Պատճառքն լինի ի հովէ և ի քրտնելոյ» (120)։

Ճաղ *վրացերենից փոխառված գոյականը, որը Աճառյանը վկայված է համարում 15-րդ դարից*[32]*, ԲՋ-ում կիրառվել է «սրունքի երկու ոսկորները՝ ոլոք և նրբոլոք» իմաստով. «Եւ կայ, որ խլի բազկին ճաղն։ Եւ ոմանք մի ասցել են, թէ չէ այն բազկին ճաղն, ապա այն երակ է ու ի դուրս կու գա» (99)։ Նկատենք, որ* ճաղ*-ի բալոր նշանակությունները պահպանվել են հայերենի բարբառներում, իսկ հիշյալ իմաստն ունեն Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառները*[33]*։*

4. ԲՋ-ում կիրառվել են նաև մի շարք ***անստույգ ծագում ունեցող բառեր***[34]*, որոնք հիմնականում արձանագրված են միայն «Միջին հայերենի բառարան»-ում, ինչպես՝* աղվանեղի *(105),* աղվանաղի *(137)՝ «թերևս աղավնիճ»,* գում *(111)՝ «ճահճային կնյուն»*[35]*,* ըռիալան[36] *(107)՝ «ինչ-որ հիվանդություն», որն ըստ բժշկարանի առաջանում է շատ ջուր խմելուց,* խոյլ *կամ* խուլ *(12)՝ «մնթուր, խլածաղիկ»,* յազար[37] *(99)՝ «անասունների ինչ-որ հիվանդություն, որն ուղեկցվում է վերջույթներում ջերմությամբ»,* յազր *(101),* յիշոgf *(126)՝ «ձիերի սպեղանի՝ հայկավից պատրաստված»,* նոոսֆունկան[38] *(143),* սնուկ, սունակ *(58բ)՝*

---

[31] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, էջ 123:

[32] **Հ. Աճառյան,** *Հայերէն արմատական բառարան*, հ. 3, Երևան, 1977, էջ 178:

[33] *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 3, Երևան, 2004, էջ 364:

[34] Այս խմբում ընդգրկել ենք այն բառերը, որոնք Բ. Զուգասզյանի կազմած բառարանում ներկայացվում են իբրև մեր բառարաններին անծանոթ՝ հիմնականում անստույգ նշանակության բառեր, որոնց ծագումը հստակ չէ, և ՄՀԲ-ն ևս չի նշում:

[35] Այս բառը գրանցված չէ ՄՀԲ-ում, Զուգասզյանն այն բացատրում է իբրև «ճահճային կնյուն», որի արմատները եղեգնանման են, համապատասխանում է արաբերեն օթխորին. տե՛ս *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԴ դար)*, էջ 187:

[36] Յ. Դում-Թրագութը հնարավոր է համարում, որ բառը կապված լինի արաբերեն روي *rawiya*՝ «հագենալ ջրով» կամ ريان *rayyā(n)*՝ «լիովին ջրված, թրջված», «կշտացած (ջրից)» բառերի հետ, ինչի հիման վրա այն կարող է մեկնաբանվել որպես **ջրային կոլիկ՝ ջրից առաջացած աղիքային ցավ. տե՛ս J. Dum-Tragut,** նշվ. աշխ., էջ 224:

[37] Յ. Դում-Թրագութը գերմաներեն թարգմանության մեջ *յազարը* ներկայացնում է որպես *phlegmone* (բջջանքի սուր թարախային բորբոքում) և նշում, որ ծագումով, հավանաբար, կապված է պարսկերեն آذر *ādar*՝ «կրակ» բառի հետ. տե՛ս նույն տեղում, էջ 228:

[38] Թե՛ Բ. Զուգասզյանի կազմած բառարանում և թե՛ ՄՀԲ-ում անստույգ նշանակությամբ բառ է ներկայացվում, իսկ Յ. Դում-Թրագութի բառարանում բացատրվում է որպես «սպունգ»,

«անստույգ հիվանդություն», **սուղաէ** *(107)՝ «անորոշ խոտ»,* **սպավայ** *(42),* **տակշուր** *(87)՝ «հվնբ. գրաստներին սպասարկող անձ»,* **տայխաւն** *(99)՝ «հվնբ. ոտքերի հիվանդություն»*[39]*,* **տուպիա**[40] *(114),* **համախ**[41] *(100),* **ֆուռճայ** *(119) և այլն։*

Ամփոփելով նշենք, որ «Բժշկարան ձիոյ»-ն՝ որպես միջինհայերենյան սկզբնաղբյուր, աչքի է ընկնում միջին հայերենին բնորոշ բազմաթիվ փոխառյալ, նորակազմ, նորիմաստ, ինչպես նաև անստույգ ծագման բառերով, որոնք չեն հանդիպում նախորդ դարաշրջանի բժշկարաններում։ Դրանց մի մասը՝ հիմնականում նորակազմ բառեր, պահպանվել է արդի հայերենի բառապաշարում։

HASMIK TADEVOSYAN

THE *MEDICAL BOOK FOR HORSES* AS A SOURCE FOR MIDDLE ARMENIAN

Key words: Middle Armenian, medical book, Babken Chugaszyan, vocabulary, medical term, loan-word, neologism, new lexical meaning, word of unknown origin.

Medical Book for Horses is a 13th-century Middle Armenian handbook dedicated to horse breeding and treatment. Only one manuscript of the work has

---

որը ծագում է արաբերեն سفنج *safanǧ* բառից, ներկայացվում են նաև լատիներեն (spongia) և գերմաներեն (*Schwamm*) զուգահեռները՝ հաստատելով դրանց նույնականությունը. տե՛ս նույն տեղում, էջ 260:

39 Ըստ Յ. Դում-Թրագութի՝ սա հոդերի հետ կապված հիվանդություն է (բոնիկ հոդաբորբ), որը, հնարավոր է, ծագումնաբանորեն կապ ունի արաբերեն طحن *ṭaḥan* (աղալ, մաշել) արմատի հետ: Այն նկարագրվում է նաև որպես «ուղտերի հիվանդություն». տե՛ս նույն տեղում, էջ 231:

40 Ըստ Բ. Զուգասզյանի՝ անստույգ նշանակությամբ բառ է (էջ 242): ՄՀԲ-ն, հղելով *տուպլէ* բառին, այն համարում է անորոշ ծագման՝ *«եղջերային ուռուցք»* իմաստով (էջ 766): Ըստ Յ. Դում-Թրագութի՝ անհայտ այս բառը կոկորդի շրջանում առաջացող թարախակույտի տեսակ է, որը, հնարավոր է, կապ ունի պարսկերեն طبی *tibī, tubī* (*ուռուցք, էլուստ, ուռած գոյացություն*) բառի հետ: Իբրև հնարավոր բժշկական համարժեք նշվում է *պարոտիտը* (հարականջային գեղձի բորբոքում), հատկապես՝ թքագեղձի ծորանի լայնացմամբ ուղեկցվող ձևը. տե՛ս նույն տեղում:

41 ՄՀԲ-ն բառի համար հղում է արաբերեն *ըռքապի*-ին (էջ 797), որն էլ ծնկի հետ կապված հիվանդություն է մատնանշում. *«Եւ կայ ցաւ, որ ասեն իր ըռքապի, որ թարգմանի ի հայն քամախ յևելված, որ իջնու ի յակն ի ծնկացն հաստ»* (ԲՁ 100): Ժ. Դում-Թրագուռը, հիմնվելով տեքստի տվյալների վրա, ենթադրում է, որ խոսքը ծնկի շրջանում առաջացող փափուկ ուռուցքի մասին է՝ *նախածնկային բուրսիտ (bursitis praecarpalis)*: Այլ կերպ՝ *«քամախ»-ը* կարելի է հասկանալ որպես *ծնկի «չրակալած ու բորբոքված պարկիկ»,* որն առաջացնում է ուռուցք և ցավ: Ըստ նրա՝ բառի ստուգաբանությունն անորոշ է. հնարավոր է դրա կապը պարսկերեն کمه *kamē* և օսմանա-թուրքերեն قمه *qama* ՝ բառերի հետ՝ *«ծնկի ցավոտ վնասում»* իմաստով. տե՛ս նույն տեղում:

survived; it was first edited in 1980 by the philologist and orientalist Babken Chugasyan. This medical book serves as an important source for the study of the Middle Armenian language, examining lexical items characteristic of the period, either first attested in this work or exhibiting unique usage. A significant portion of the material consists of medical vocabulary, including anatomical terms, names of diseases, plants, and medicinal substances, as well as terms related to horses. These lexical items fall into one of four groups: loan-words, neologisms, new words with new lexical meaning and words of unknown origin. Some of them, primarily neologisms, have been preserved and incorporated into the Modern Armenian vocabulary.

АСМИК ТАДЕВОСЯН

«ЛЕЧЕБНИК ЛОШАДЕЙ» КАК ИСТОЧНИК ПО СРЕДНЕАРМЯНСКОМУ ЯЗЫКУ

Ключевые слова: Среднеармянский язык, лечебник, Бабкен Чугасзян, лексика, медицинский термин, заимствование, неологизм, новое лексическое значение, слово неизвестного происхождения.

Произведение «Лечебник для лошадей» — руководство на среднеармянском языке по коневодству и ветеринарной медицине, составленное в XIII веке. Труд дошёл до нас лишь в одной рукописи и впервые был опубликован в 1980 году востоковедом Бабкеном Чугасзяном. Эта медицинская книга служит важным источником для изучения среднеармянского языка: в статье рассматриваются лексические единицы, характерные для данного периода, а также те, что либо впервые засвидетельствованы в этом произведении, либо имеют уникальное употребление. Значительную часть материала составляют слова, относящиеся к медицине: анатомические термины, названия болезней, растений, лекарственных средств, а также слова, относящиеся к лошадям. Эти слова классифицируются по четырем группам: заимствования, неологизмы, слова с новым лексическим значением и слова неизвестного происхождения. Некоторые из этих слов, в основном неологизмы, сохранились и закрепились в лексике современного армянского языка.

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Ներկայացվող հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 40.000 նիշը՝ ներառյալ բացատները, հրապարակումներինը՝ 80.000 նիշը:
2. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:
3. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն) և ռուսերեն՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:
4. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:
5. Հայերեն հատուկ անուններն ու եզրերը լատինատառ տառադարձելիս հետևել Library of Congress Romanization Table-ին՝

ա – a	բ – b	գ – g	դ – d	ե – e	զ – z	է – ē	ը – ě	թ – t‘	ժ – zh
ի – i	լ – l	խ – kh	ծ – ts	կ – k	հ – h	ձ – dz	ղ – gh	ճ – ch	մ – m
յ – y	ն – n	շ – sh	ո – o	չ – ch‘	պ – p	ջ – j	ռ – ṛ	ս – s	վ – v
տ – t	ր – r	ց – ts‘	ւ – w	փ – p‘	f – k‘	և– ew	օ – ō	ֆ – f	

6. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.
   ա. Գրերի և պարբերականների վերնագրերը գրել *շեղատառ* (italic):
   բ. Հոդվածների (և գրերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:
   գ. Շարերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
   դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
   ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ ճանաչելի ձևով այն համառոտել:

զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է)։ Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները։

է. Սրանց գումարվում է *ԲՄ*-ում ավանդական դարձած՝ **հեղինակի անունը թավ** (bold), իսկ ***խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ*** (bold + italic) գրելու պահանջը։

Օրինակներ՝

Դավիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները ***Ս. Ս. Արևշատյանի***, Երևան, 1960, պրակ ԺԷ., էջ 132։

Paul J. Alexander, "Medieval Apocalypses as Historical Sources," *American Historical Review*, 73, 1968, p. 998։

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Ազուանից աշխարհի* (*ՄՀ*[1], Ժե. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437

Philonis Alexandrini *Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca*, ed. ***F. Petit*** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978

7. Հաճախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում։

8. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան)։

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք)։

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն)։

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն)։

Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան)։

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության։ Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits* (Coulie – 2002), http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf)։

---

[1] = Մատենագիրք հայոց։ Այլ հանրահայտ հապավումներ են *ՊԲՀ* = Պատմաբանասիրական հանդես, *ԲՄ* = Բանբեր Մատենադարանի, *ՀԱ* = Հանդէս ամսօրեայ, *ԼՀԳ* = Լրաբեր հասարակական գիտությունների, *ԲԵՀ* = Բանբեր Երևանի համալսարանի, *REArm* = Revue des Études Arméniennes։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Կարեն Մաթևոսյան
«Հաւաքարան անուանց կաթողիկոսաց» աշխատությունը որպես Աղթամարի պատմության սկզբնաղբյուր 5

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ջահարիա եպս. Բաղումյան
Կիրակոս Երզնկացու ծիսականոնական թուղթը և ժամանակի հոգևոր-քաղաքական խնդիրները 30

Մերի Քեշիշյան, Մերի Մարտիրոսյան
Արվեստաբան Սերիկ Դավթյանի անհայտ ուսումնասիրությունը. «Սահակ Ծաղկարար» 72

ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սարգսյան
Հովհաննես Երեցի ձեռագրական և գեղարվեստական ժառանգությունը 105

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԲԱԲԿԵՆ ԶՈՒԳԱՍՉՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-18, 2023

Հայարփի Հակոբյան
Միջնադարյան հայկական ձեռագրային մշակույթը Վանա լճի ավազանում 1275-1350 թթ., Մաս Ա 122

Ժերար Դեդեյան
Հայկական անդրադարձները երեք մոգերին (Ֆրանսերեն) 140

Սեյրանուշ Մանուկյան
Հայկական խույրերի գեղարվեստական պատկերը 152

Սաթենիկ Զուգասզյան
Մատենադարանի թիվ 9422 ձեռագրի Ավետման տեսարանը 163

Էմմա Զուգասզյան
Կեռան Թագուհու 1272 թ. Ավետարանի ոսկյա կրկնակազմը 173

Քնարիկ Ավագյան
Նորահայտ սկզբնաղբյուրներ գաղութային ժամանակաշրջանի Ամերիկա մեկնած առաջին հայերի մասին (XVII դ. սկիզբ – XVIII դ. առաջին կես) 186

Գառնիկ Գևորգյան
Մելքոմ խանի դերը նոր շրջանի հայ-իրանական գրական առնչություններում 209

Սերգեյ Մանվելյան
Հայատառ թուրքերեն մի նորահայտ բացառիկ դեսթանի հետքերով. Պողոս Գույումճյանի կյանքի ոդիսականը 215

Հասմիկ Թադևոսյան
«Բժշկարան ձիոյ» երկը որպես միջինհայերենյան սկզբնաղբյուր 227

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ 240

CONTENTS

HISTORY

Karen Matevosyan
The Collection of Names of the Catholicoses as a Source on the History of Akhtamar *5*

PUBLICATIONS

Bishop Zacharia Baghumyan
The Liturgical-Canonical Letter of Kirakos of Erznka and Spiritual-Political Issues of the Time *30*

Meri Keshishyan, Meri Martirosyan
Art Critic Serik Davtyan's Unknown Work: "Sahak Tsaghkarar" *72*

MANUSCRIPT STUDY

Anush Sargsyan
The Manuscript and Artistic Heritage of Yovhannēs the Priest *105*

INTERNATIONAL CONFERENCE DEDICATED TO THE 100TH ANNIVERSARY OF BABKEN CHOOKASZIAN, NOVEMBER 17-18, 2023

Hayarpi Hakobyan
Medieval Armenian Manuscript Culture in the Lake Van Region, 1275–1350 ..... *122*

Gérard Dédéyan
Regards Arméniens Sur les Rois Mages *140*

Seyranush Sos Manukyan
Artistic Image of Armenian Miters *152*

Satenik Chookaszian
The Annunciation Scene from Gospel Ms M9422 ..... *163*

Emma Chookaszian
The Golden Binding of the Gospels of Queen Keran 1272 ..... *173*

Knarik Avagyan
Newly Discovered Sources on the First Armenians to Arrive in America in the Colonial Period (Early 17th – First Half of the 18th Century) *186*

Garnik Gevorgyan
The Role of Melkom Khan in Armenian-Iranian Literary Relations in the New Period *209*

Sergey Manvelyan
Following the Traces of a Unique Destan in Turkish Language in Armenian Letters: the Odyssey of Boghos Kouyoudjian *215*

Hasmik Tadevosyan
The Medical Book for Horses as a Source for Middle Armenian *227*

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Карен Матевосян
«Сборник имен католикосов» как источник по истории Ахтамара *5*

ПУБЛИКАЦИИ

Епископ Захария Багумян
Литургико-каноническое послание Киракоса Ерзнкаци и духовно-политические проблемы эпохи *30*

Мери Кешишян, Мери Мартиросян
Неизвестное исследование искусствоведа Серик Давтян: «Саак Цахкарар» *72*

КОДИКОЛОГИЯ

Ануш Саргсян
Рукописное и художественное наследие Иерея Ованнеса *105*

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ, ПОСВЯЩЕННАЯ 100-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ БАБКЕНА ЧУГАСЗЯНА, 17-18 НОЯБРЯ, 2023

Айарпи Акопян
Средневековая армянская рукописная культура в регионе озера Ван, 1275-1350 гг. *122*

Жерар Дедеян
Представления армян о трех Волхвах *140*

Сейрануш Сосовна Манукян
Художественный образ армянских митр *152*

Сатеник Чугасзян
Сцена благовещения из рукописи № 9422 Матенадарана *163*

Эмма Чугасзян
Золотой оклад Евангелия царицы Керан 1272 г. *173*

Кнарик Авакян
Новые источники о переселившихся в Америку первых армянах в колониальный период (начало XVII века – первая половина XVIII века) *186*

Гарник Геворкян
Роль Мелкома Хана в армяно-иранских литературных отношениях нового периода *209*

Сергей Манвелян
По следам редкого арменографического Дестана на турецком языке. Одиссея Погоса Гуюджяна *215*

Асмик Тадевосян
«Лечебник Лошадей» как источник по среднеармянскому языку *227*

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
Հատոր **41**

BULLETIN OF MATENADARAN
Volume **41**

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
Том **41**

Ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանզադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմաճեանի
Շապիկին՝ Թոչնազարդ վարդափունջ, Սահակ Ծաղկաբար, ՄՄ 6248, 2ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Տեխնիկական խմբագիր՝ Մարիամ Բրուտյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում, Երևան, Ներսիսյան 1
Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 15.5, տպաքանակ՝ 150

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտի հրատարակչություն, Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com
Ամսագրի թվային տարբերակը՝
banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/



ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.matenadaran.am